

# «ԱՐԱՐԱՏ»-ի ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

## Բ

(ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՅԱՐ)

ԱՇԽԱՏԱՎԱՐԴԱՐԱՎԱՐ

ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱԾԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխատասիրել և ներածությունը գրել է  
ՊԵՏՐՈՍ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ



Ս. ԷՂՄԻԱԾԻՆ - 2007

ՀՐԱՄԱՆԱԴ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ**

ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տպագրվում է մեկենասությամբ՝

THE HERITAGE OF THE JOURNAL “ARARAT”

II

ASHOT HOVHANNISYAN

THE SCIENTIFIC-HISTORICAL STUDY

ST. ETCHMIADZIN - 2007

НАСЛЕДСТВО ЖУРНАЛА “АРАРАТ”

II

АШОТ ИОАННИСЯН

ИСТОРИОГРАФИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

СВ. ЭЧМИАДЗИН – 2007

By order  
**of His Holiness KAREKIN II**

Supreme Patriarch and  
Catholicos of All Armenians

По благословению  
**Его Святейшество ГАРЕГИНА II**

Верховного Патриарха и  
Католикоса Всех Армян

*Printed by donations of*

*Спонсор издания*



ՀՏԴ 941(479.25)

ԳՄԴ 63.3 (2Հ)

Հ 854

### ՅՈՎՐԱՍՆԻՍՅԱՆ ԱՇԽԾ

Հ 854 Պատմագիտական ուսումնասիրություններ.- Ս. Էջմիածին: Մայր Աթոռ Ս. Էջմիածին – 2007, 208 + 2 էջ ներդիր:

Նշանավոր պատմաբան Աշոտ Յովհաննիսյանի պատմագիտական երկերի սույն ժողովածուն ամփոփում է 1914-1916 թթ. ընթացքում «Արարատ» ամսագրում լույս տեսած վեց ուսումնասիրություններ: Յավելվածներում տրվում են այդ տարիների ընթացքում գրված, սակայն 1921-1922 թթ. լույս տեսած երկու ուսումնասիրություններ ևս: Ներկայացված աշխատությունները կարևոր ներդրում են հայագիտության բնագավառում և չեն կորցրել իրենց այժմեականությունը:

Յասցեագրվում է հայագետներին և ընթերցող հանրությանը:

ԳՄԴ 63.3(2Հ)

ISBN 978-99930-75-66-0

© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2007 թ.

## ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

«Արարատ» -ի հայագիտական մատենաշարով Ս. Էջմիածնի հրատարակչական բաժինը լույս է ընծայում իր հերթական հատորը, որն ամփոփում է ճանաչված պատմաբան ու հասարակական-քաղաքական գործիչ Աշոտ Գարեգինի Հովհաննիսյանի՝ «Արարատ» ամսագրում լույս տեսած ուսումնասիրությունները:

Ս. Գ. Հովհաննիսյանը իրավամբ համարվում է XX դարի ամենանշանական հայ պատմաբաններից մեկը: Ապրելով ու ստեղծագործելով XX դարի հանգուցային ու հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող մի պատմաշրջանում՝ Ս. Հովհաննիսյանը ամենագործուն անմիջական մասնակցություն է ունեցել այդ իրադարձություններին. գրչով ու խոսքով, գրքով ու կյանքով, իր բազմաթիվ ուսումնասիրություններով արտահայտել է ժամանակի ոգին ու արձագանքել դրանց: Անշուշտ, ունեցել է խոտորումներ ու սայթաբումներ, հիմնականում ժամանակաշրջանով բացատրվող վրիպումներ, վիճահարույց, երթեմն դեկլարատիվ տեսակետներ, սակայն մի բան նրա մեջ մնացել է անաղարտ՝ անհուն սերը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հանդեպ, հավատը նրա լավագույն ապագայի նկատմամբ, որի համար նա չխնայեց ջանք, եռանդ, առողջություն, ժամանակ, կրեց նվաստացումներ, ենթարկվեց բռնությունների ու հալածանքների ճաշակեց Գուլակի սահմոկեցուցիչ իրականությունը: Անդառնալի, դառնակսկիծ իրողություն է նրա քսանամյա պարտադրված բացակայությունը հայ իրականությունից, մշակույթից ու պատմագիտությունից: Միայն կարելի է ենթադրել, թե ի՞նչ կորուստներ է ունեցել մեր գիտական կյանքը: Սակայն այն, ինչ արեց Ս. Հովհաննիսյանը կյանքի վերջին՝ ոչ լրիվ 20 տարիների ընթացքում, սիրանք էր, Քաղաքացուն ու Գիտնականին բնորոշ փայլուն, անօրինակ սիրանք:

Աշոտ Հովհաննիսյանի գիտական ճանապարհը սկսվում է XX դարասկրի Էջմիածնից, Գևորգյան ճեմարանից, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գրադարանից ու ճենագրապահոցից: Այստեղ է, որ վերջնականապես ճենագրություն են պատմաբանի նրա ճաշակը, նախասիրությունները, ծրագրում ապագա նտահղացումների եզրերն ու ասելիքը:

Աշոտ Գարեգինի Հովհաննիսյանը ծնվել է 1887 թ. հունիսի 17-ին Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքում<sup>1</sup>: Սկզբնական կրթությունը

<sup>1</sup> Ս. Գ. Հովհաննիսյանի կենսագրական տվյալները վերցրել ենք նրա «Խնքնակենսա-

ստացել է հայրենի քաղաքի վարժարանում, ապա ընդունվել ու բարձր առաջադիմությամբ ավարտել տեղի ռեալական ուսումնարանը (1906): Ա. Հովհաննիսյանի պատաճեկության ու երիտասարդության տարիներին Շուշին հակամետ հասարակական-քաղաքական հոսանքների, գաղափարական ներիակ խմբավորումների մի ուրույն կենտրոն էր: Այստեղ աչքի էին ընկնում Գարրիել Կաֆյանի և նրա հետևորդներ Բարսեղ Զարարյանի և Մարտիկ Սարուխանյանի հնչակյան պրոպագանդիստական խմբակը, ապա Հայ հեղափոխական դաշնակցության անվանի մարտիկների մի աստղաբոյլ՝ Եզրո Առուստամյան, Թուման Թումյան, Նիկոլ Միքայելյան, Մարգար Ժամհարյան, Մարգիս Հովհաննիսյան (Արամ Մանուկյան) և ուրիշներ: Վերջապես, զգալի ներկայություն ուներ սոցիալ-դեմոկրատական հոսանքը, որի հետևորդներից էին Բոգդան Կնունյանցը, Սաքո Համբարձումյանը, Ալեքսանդր Բեկառյանը, Խվան Մելիք-Հովսեփյանը, Սիմոն Ավանեսյանը, Սահակ Տեր-Գարրիելյանը, Խսահակ Դովլարյանը, Վլադիսլավ Կասպարովը և ուրիշներ: Ա. Հովհաննիսյանը անվերապահորեն կանգնեց վերջին հոսանքի դիրքերի վրա: 1905 թ. Վլ. Կասպարովի և դասընկերոջ՝ Հ. Գյուլիքլիսյանի հետ դեկավարել է ռեալական դպրոցի աշակերտական դասադրությունը և գրել հակացարական բովանդակություն ունեցող թոռուցիկներ, որոնցում պահանջ է ներկայացրել ուսումնարանում պարտադիր դարձնել հայոց լեզվի դասավանդումը<sup>1</sup>:

1906 թ. սեպտեմբերին մեկնել է Գերմանիա, ուր ընդունվել է Ենայի համալսարանի փիլիսոփայության բաժինը: Այս համալսարանը Եվրոպայի լավագույն ուսումնական հաստատություններից էր: Բավական է նշել, որ այստեղ են դասավանդել Ֆրիդրիխ Շիլերը, Յո. Գ. Ֆիխտեն, Ֆ. Շելլինգը, Գ. Վ. Հեգելը: Այն շրջանում, երբ Հովհաննիսյանը սովորում էր Ենայում, համալսարանն ուներ 1200 ուսանող, որոնց մեջ քիչ չին նաև ազգությամբ հայեր: Համալսարանական դասընկերներից էր իր հայրենակիցն ու աշակերտակից Հայկ Գյուլիքլիսյանը<sup>2</sup>: Համալսարանում նա ունենալի է պրոֆեսորներ Ռայնին (ընդհանուր մանկավարժություն), Հարմսին (տնտեսագիտություն), Օստոն Լիբմանին (փիլիսոփայություն), Ռուդոլֆ Եյկենին (փիլիսոփայության պատմություն), Է. Հեկելին (քնակիլիսոփայություն) և այլոց: Ուսումնառությունից գատ բուռն մասնակցություն է ունեցել ուսանողական միությունների

գրությունից» և Կոմունիստական կուսակցության անդամի հաշվառման բարտից (տես ՀՀ Ազգային արխիվ, ֆ. 1021, գ. 22, գ. 670, թթ. 8-10, 46, 47):

<sup>1</sup> Ա. Հովհաննիսյան, Հուշեր և բնութագրումները, Երևան, 1969, էջ 81:

<sup>2</sup> Ա. Հովհաննիսյան, Կես դար անց. Ենայի համալսարանի հոբելյանի առքիվ, տես «Սովետական Հայաստան», 1958, 9 հոկտեմբերի:

աշխատանքներին: 1906 թ. վերջերին Ա. Հովհաննիսյանը անդամակցում է ՌՍԴՌԿ արտասահմանյան կազմակերպությանը<sup>1</sup>:

Գերմանիայում համալսարանական կրթություն ստացած մյուս ուսանողների հետևությամբ Ա. Հովհաննիսյանը ստվորում է ոչ թե մի, այլ մի քանի համալսարաններում: Ենայից հետո ուսումնառությունը շարունակել է Հալեի համալսարանի տնտեսագիտություն (1907-1909) և Մյունիսինի համալսարանի փիլիսոփայության (1910-1913) ֆակուլտետներում: 1913 թ. ավարտելով Մյունիսինի համալսարանը և նոյն թվականի մարտի 8-ին մեծ հաջողությամբ պաշտպանելով «Israel Ory und die Armenische Befreiungsidee» խորագիրը կրող ատենախոսությունը, Ա. Հովհաննիսյանը ստանում է փիլիսոփայության դրկտորի աստիճան: Նրա պաշտոնական ընդդիմախոսները եղել են պրոֆ. Հայգելը և պրոֆ. Գրաուերը:

Նոյն թվականին Ա. Հովհաննիսյանը վերադարձել է հայրենիք և ծննդավայրի հոգևոր սեմինարիայում անցել աշխատանքի որպես գերմաններնի և ընդհանուր ազգաց պատմություն առարկաների ուսուցիչ (1913-1914): 1914 թ. սեպտեմբերին Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի առաջարկությամբ տեղափոխվել է Վաղարշապատ և նշանակվել Գևորգյան ճեմարանի քաղաքատնտեսության, լատիններնի, գերմաններնի և ընդհանուր ազգաց պատմություն առարկաների դասախոս: Ճեմարանում աշխատելու տարիներին (1914-1917) այստեղ էին դասավանդում նաև Ստ. Մալխասյանը (նաև տեսուչն էր), Ավ. Տեր-Պողոսյանը, Գ. Եպ. Հովսեփյանը, Գր. Ղափանցյանը, Պ. Մակինցյանը և ուրիշներ: Ա. Հովհաննիսյանը հատկապես մտերմանում է վերջինիս հետ: Բուն դասախոսական աշխատանքին զուգընթաց նրանք գործուն մասնակցություն են բերում ճեմարանի գիտամանելավարժական կյանքին, մասնավորապես ուսումնական ծրագրերի ստեղծմանը<sup>2</sup>: Բացի այդ, Ա. Հովհաննիսյանը ճեմարանի լսարանական բաժնի սաների շրջանում զբաղվել է մարքսիզմի քարոզությամբ, ստեղծել ընդհատակյա մարքսիստական խմբակ, որի անդամներից էին Անաստաս Միկոյանը, Աղասի Խանջյանը, Ս. Դանիելյանը, Արամ Շահգելյյանը և ուրիշներ:

Նրանցից շատերը հետագայում դարձան Խորհրդային Սիոնիթյան և Խորհրդային Հայաստանի ականավոր պետական-քաղաքական, կուսակցական գործիչներ:

<sup>1</sup> ՀՀ Ազգային արխիվ, ֆ. 1021, գ. 22, գ. 670, թ. 46:

<sup>2</sup> Ա. Հովհաննիսյան, Հուշեր և խոհեր Պողոս Մակինցյանի մասին, տես «Տեղեկագիր», ՀՀ ԳԱ ակադեմիայի (հասարակ. գիտ.), 1964, № 7:

Գևորգյան ճեմարանի ուսումնասեր մթնոլորտը նպաստավոր եղավ նաև ապագա պատմաբանի գիտական բուռն հետաքրքրություններին ինչ-որ չափով հագուրդ տալու ուղղությամբ: Պարապմունքներից ազատ համարյա բոլոր ժամերին նա օրնիբուն աշխատում էր Մայր Աքոռի հարուստ գրադարանում և ձեռագրապահոցում, թերթում-ուսումնասիրում փաստաթղթերի ու վավերագրերի եզակի հավաքածուները: Նրա հետաքրքրությունների ծիրից ներս էին գտնվում հայ միջնադարի ազգային-ազատագրական պայքարի հարցերն ու մելիքական տոհմերի պատմությունը: Էջմիածնական տարիներին է, որ նա «Արարատ» ամսագրի էջերում տպագրում է հայագիտական իր առաջին ուսումնասիրությունները, որոնք աչքի էին ընկնում ոչ միայն ասելիքի թարմությամբ, այլև ուղենչում էին ապագա հետազոտողներին, թե որ բնագավառում կարող են նպաստ բերել հայ պատմագիտությանը:

Ա. Հովհաննիսյանի գործունեությունը ճեմարանում ընդհատվեց 1917 թ. Փետրվարյան հեղափոխության և դրան հետևող քաղաքական բուռն իրադարձությունների հետևանքով: Ճեմարանը դադարեցրեց իր պարապմունքները, սաներն ու ուսուցիչները ցրվեցին: Ա. Հովհաննիսյանը հովիսին վերադարձավ Շուշի, ուր մինչև նոյն թվականի վերջերը խմբագրում ու իրատարակում է «Նեցուկ» թերթը: 1917 թ. վերջերին՝ Ստ. Շահումյանի հրավերով տեղափոխվում է Բաքու, որտեղ գործուն մասնակցություն է ունենում տեղի քաղաքային խորհրդի, ապա Բաքվի խորհրդային իշխանության (Կոմունա) աշխատանքներին: Հայտնի հեղափոխական Ն. Ն. Կոլեսնիկովայի հետ գլխավորում է Բաքվի խորհրդի ժողովրդական կրթության բաժինը: Եղել է նաև նոյն խորհրդի կուլտուր-լուսավորական բաժնի վարիչ, խմբագրում բոլշևիկյան «Բանվորի խոսք» թերթը:

Բաքվի կոմունայի անկումից հետո Ա. Հովհաննիսյանը առժամանակ տեղափոխվում է Աստրախան, որտեղ խմբագրում է «Կարմիր բանվոր» թերթը, քաղաշխատանք կատարում «Բվան Կոլեսնիկով» շոգենավի վրա: 1918 թ. վերջերին նա տեղափոխվում է Մոսկվա, ուր աշխատանքի է անցնում Ռ-ՍՖՍՀ Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատի Հայկական գործերի կոմիսարիատում, այստեղ գլխավորում գրական-իրատարակչական բաժինը: Մեկ տարի անց տեղափոխվում է Ռ-ՍՖՍՀ Լուսավորության ժողովրդական կոմիսարիատ՝ նշանակվում Հայկական բաժնի վարիչ: Միաժամանակ Հայ ժողովրդի պատմություն է դասավանդում Ն. Մառի նախաձեռնությամբ վերաբացած Լազարյան ճեմարանի բարձր լսարաններում<sup>1</sup>:

<sup>1</sup> Ա. Հովհաննիսյանին շնորհվել է Լազարյան ճեմարանի պրոֆեսորի կոչում:

1920 թ. գարնանը Լուսժողկոմատի կողմից գործուղվում է Դռնի Ուստով, ուր խճագրում է «Քանվորի կոխվ» թերքը և կուսակցական ու խորհրդային աշխատանք կատարում հայ ազգաբնակչության շրջանում<sup>1</sup>:

1920 թ. օգոստոսին Ա. Հովհաննիսյանը որպես Բ. Լեզրանի գլխավորած ՈՍՖՍՀ դիվանագիտական միսիայի անդամ, ժամանում է Երևան՝ մասնակցում Հայաստանի Հանրապետության կառավարության հետ տարվող բանակցություններին<sup>2</sup>, որոշակի դեր կատարում Հայաստանի խորհրդայնացման գործում: Հայաստանի խորհրդային առաջին կառավարության կազմում նա զբաղեցրել է Լուսավորության ժողովրդական կոմիսարի պաշտոնը: Հատկանշական է, որ նա է դեկրետներ ստորագրել հայոց լեզուն հանրապետության պետական լեզու ճանաչելու, անգրագիտությունը վերացնելու, պետական հրատարակչություն կազմակերպելու, Երևանի համալսարանի կազմակերպման, կուլտուրապատմական ինստիտուտի ստեղծման և այլնի վերաբերյալ<sup>3</sup>: Նրա գործադրած ջանքերի շնորհիվ է, որ Հայաստան են վերադառնում զիտուրյան, մշակույթի, գրականության, բազմաթիվ գործիքներ: Ապա հոգ է տարել նրանց աշխատանքի տեղավորման և կենցաղային, նյութական քիչ թե շատ տանելի պայմաններ ստեղծելու ուղղությամբ:

1922 թ. հունվարին կայացած Հայաստանի կոմունիստական կուսակցության առաջին համագումարում Ա. Հովհաննիսյանը ընտրվել է Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղար: Ըուր վեց տարի զբաղեցնելով այդ հույժ պատասխանատու պոստը (մինչև 1927 թ. օգոստոսը) նա հսկայական մասնակցություն է ունեցել հանրապետության կյանքի բոլոր բնագավառներում՝ ժողովրդական տնտեսության վերակառուցման, ժողովրդական կրթության ու լուսավորության, արդյունաբերության, գյուղատնտեսության, զիտուրյան ու մշակույթի կազմակերպման ու զարգացման աշխատանքներին: Միաժամանակ զբաղվել է նաև գիտական, հրապարակախոսական ու դասախոսական աշխատանքներով: 1921 թ. ապրիլին պրոֆեսորի պաշտոնով նա հրավիրվել է Երևանի պետական համալսարան որպես «Լենինիզմի պատմություն» (այնուհետև՝ «Մարքսիզմ-լենինի-

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ Ազգային արխիվ, նույն տեղում, գ. 670, թ. 46թ, հմմտ. թ. 10:

<sup>2</sup> Այդ բանակցությունների մասին հետաքրքրությունից գուրկ չեն Ա. Հովհաննիսյանի հուշերը՝ «Վերիհշումներ Հայաստանի սովետացման նախապատմությունից» (տե՛ս «Լենինյան ուղինվ», 1970, № 11, էջ 35-43):

<sup>3</sup> “Культурное строительство в Советской Армении” (1920-1940 гг.). «Документы и материалы», տե՛ս «Բանքեր Հայաստանի արխիվների», 1974, № 2, փաստաթղթեր թիվ 2, 3, 4, 51, 64, 65, 85, 87, 115 և այլն:

նիզմի պատմություն») և «Հայ ժողովրդի պատմություն» առարկաների դասախոս<sup>1</sup>: 1925 թ. պատմական-հասարակական բաժնի գծով նա ընտրվել է Խորհրդային Հայաստանի Գիտության և արվեստի ինստիտուտի իսկական անդամ: Այդ շրջանում նա Ե. Չարենցի, Ա. Մովլյանի, Պ. Մակինցյանի և այլոց հետ, խմբագրել է «Նորք» գրական, գիտական ու քաղաքական հանդեսը (1922-1927), այստեղ տպագրել է 10-ից ավելի ուսումնասիրություններ<sup>2</sup>:

Ա. Հովհաննիսյանը խորհրդահայ պատմագրության հիմնադիրներից է: Ժամանակի ոգուն հարազատ ու քաղաքական նպատակառուղղվածությամբ են տոգորված այդ շրջանում նրա հրատարակած ուսումնասիրություններից շատերը, ինչպես օրինակ՝ «Դաշնակցության իդեոլոգիայի ընթացիկ կուրսը» (1923), «Հայաստանի հեղափոխության հույսն ու հոկտեմբերը» (1923), «Դաշնակցությունը և պատերազմը» (1924), «Գաղութահայ խնդիրները» (1925), «Համազգային կրիզիս» (1926), «Դաշնակցության սոցիալական ծագումը» (1927) և այլն: Անկախ այս աշխատություններում տեղ գտած անընդունելի, վիճարանական ակնհայտ դրույթների, պետք է շեշտել, որ դրանք ժամանակաշրջանը ներկայացնող պատմական խոր վերլուծություններ են, ուսումնասիրություններ, որոնք իրենց կարևոր ընդհանրացումներով անհրաժեշտ ու պարտադիր պայման են ժամանակաշրջանի պատմությունը ճիշտ հասկանալու և ուսումնասիրելու համար:

1927 թ. օգոստոսին Ա. Հովհաննիսյանը ազատվել է զբաղեցրած պաշտոնից և տեղափոխվել Լենինգրադ: Մեկ տարի Մ. Ե. Սալտիկով-Շետրիմի անվան գրադարանում աշխատելուց հետո տեղափոխվել է Մոսկվա՝ այստեղ աշխատել Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի կարինետի վարիչ (1928-1931), ԽՍՀՄ Ազգությունների ինստիտուտի փոխտնօրեն (1931-1934), Նյութական մշակույթի պատմության պետական ակադեմիայի մոսկվյան բաժանմունքի տնօրեն (1934-1935), ԽՍՀՄ ԳԱ պատմության ինստիտուտի փոխտնօրեն (1935-1937):

1937 թ. հուլիսին նա հեռացվել է զբաղեցրած պաշտոնից, ապա անհիմն մեղադրանքներով ձերբակալվել: Հինգ տարի Մոսկվայի և Երևանի բանտերում տառապելուց հետո՝ 1941 թ. աքսորվել է Կոմի ԱՍՍՀ-ում գտնվող Գուլագի ճամբարներից մեկը, որտեղ զբաղվել է անտառահատությամբ, այնուհետև աքսորվել է Տաշկենդի մարզի Յանգի-

<sup>1</sup> Տե՛ս Լ. Պ. Ղարիբջանյան, Երևանի պետական համալսարանը (1919-1930 թթ.), Երևան, 1994, էջ 94, հմմտ. էջ 102, 195:

<sup>2</sup> «Նորք» հանդեսի և այստեղ Ա. Հովհաննիսյանի ծավալած գործունեության մասին տե՛ս Հ. Ֆեկրիանի «Նորք» հանդեսը» [«Էջեր հայ ժողովրդի պատմության և քանասիրության» (Հոդվածների ժողովածու), Երևան, 1971, էջ 298-339] հոդվածը:

յուլ քաղաքը: 1943 թ. բույլատրություն է ստացել վերադառնալ Հայաստան, սակայն առանց Երևանում բնակվելու իրավունքի: Բնակության վայր ընտրելով Վանաձորը, պայմանագրային հիմունքներով աշխատակցել է Գիտությունների ակադեմիայի գրականության և պատմության ինստիտուտներին (1943-1954):

Ա. Հովհաննիսյանը հնարավորություն ունեցավ անմնացորդ իրեն նվիրել գիտությանը միայն 1954 թվականի հուլիսից, երբ իրավունք ստացավ բնակվելու Երևանում: Այդ պահից մինչև կյանքի վերջին օրը նա աշխատել է Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում որպես ավագ գիտական աշխատող (1954-1961), իսկ 1961 թվականից՝ նույն ինստիտուտի նոր պատմության բաժնի վարիչ: 1955 թ. նրան շնորհվել է պատմական գիտությունների դրկտորի գիտական աստիճան, 1956 թ. արժանացել է պրոֆեսորի կոչման: 1960 թ. նա ընտրվել է Հայաստանի Գիտությունների ակադեմիայի խոկական անդամ, իսկ 1961 թվականին շնորհվել է Գիտության վաստակավոր գործիք կոչում: 1967 թվականին՝ ծննդյան 80-ամյակի առթիվ, պարզեատրվել է Լենինի շքանշանով:

Գիտական, կուսակցական-քաղաքական, հասարակական բազմազբաղ ու բազմաբնույթ գործունեությունը չի խանգարել, որ Ա. Հովհաննիսյանը քաղաքի նաև հրապարակախոսությամբ, աշխատակցի մամուլի բազմարիվ օրգանների, իսկ մի քանիսն էլ խմբագրի: Ա. Հովհաննիսյանը գործուն թղթակցել է իր ժամանակի պարբերական մամուլին, ինչպես օրինակ՝ «Նեցուկ» (Ծուշի), «Բանվորի խոսք» (Բարու), «Կարմիր դրոշակ» (Մոսկվա), «Կարմիր բանվոր» (Աստրախան), «Բանվորի կոլիվ» (Դոնի Ռոստով), «Կոմունիստ» (Երևան), «Խորհրդային Հայաստան» (Երևան), «Ավանգարդ» (Երևան), «Սարտակոչ» (Թիֆլիս), «Մաճկալ» (Երևան), «Գրական թերթ» (Երևան), «Հայրենիքի ձայն» (Երևան), «Յարյա Յուսուս» (Թիֆլիս) և այլ թերթերին, «Արարատ» (Էջմիածին), «Կոմունիստ» (Երևան), «Նորք» (Երևան), «Իստորիկ-մարքսիստ» (Մոսկվա), «Հայաստանի աշխատավորուիի» (Երևան), «Խորհրդային գրականություն» (Երևան), «Լենինյան ուղիով» (Երևան), «Տեղեկագիր» (Երևան), «Պատմա-բանափրական հանդես» (Երևան), «Բանքեր Երևանի համալսարանի» (Երևան), «Բանքեր Հայաստանի արխիվների» (Երևան), «Вопросы истории» (Մոսկվա) և այլ ամսագրերին: Նրա խմբագրությամբ են լույս տեսել Ուսասատանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության (բոլշևիկների) Ծուշիի կոմիտեի «Նեցուկ» (1917) և Բաքվի կոմիտեի «Բանվորի խոսք» (1918) շաբաթաթերթերը, Ուսասատանի կոմկուսի Ուստուվ-Նախիջևա-

նի կազմակերպության հայկական սեկցիայի օրգան «Բանվորի կրիվ» եռօրյա թերթը (Նոր Նախիջևան, 1920), Հայկոմկուսի կենտրոնական օրգան «Կոմունիստ» օրաթերթը (Երևան, 1920-1921) և «Նորք» գրական, գիտական ու քաղաքական հանդեսը (Երևան, 1922-1927): Նա անուրանալի դեր է խաղացել Գիտությունների ակադեմիայի «Պատմաբանասիրական հանդեսի» հիմնադրման ու կայացման գործում (1958):

Ա. Հովհաննիսյանը զգալի ավանդ ունի գիտական կադրերի պատրաստման ու դաստիարակման գործում: Նա իր շուրջն է համախմբել երիտասարդ, խոստումնալից պատմաբանների մի հիանալի խումբ և ստեղծել ուրույն դպրոց, որ հայտնի է «Հովհաննիսյանական դպրոց» անվանումով: Այդ դպրոցին էր վիճակված շարունակել ու զարգացնել իրենց մեծ ուսուցչի ավանդները, հայ պատմագիտությունը հարստացնել նոր ձեռքբերումներով ու նվաճումներով:

Աշոտ Գարեգինի Հովհաննիսյանը վախճանվել է 1972 թ. հունիսի 30-ին Երևանում: Հայաստանի կառավարության որոշմամբ նրա աճյունն ամփոփվել է գիտության և մշակույթի նշանավոր գործիչների քաղաքային պանթեոնում:

\* \* \*

Մեծ և բազմակողմանի են Ա. Գ. Հովհաննիսյանի գիտական հետաքրքրությունները: Խոր գիտելիքները, լեզուների փայլուն իմացությունը, տիտանական աշխատասիրությունը, վիրխարի երուդիցիան հնարավորություն են ընձեռել հրապարակ իջեցնել հայոց միջնադրյան, նոր և նորագույն պատմաշրջանների բազում խնդիրների նվիրված երկասիրությունները: Նա նաև հիանալի գրականագետ էր, գրականության պատմության պատմաբան ու տեսաբան, քաղաքական հրապարակախոսության աշքի ընկնող ներկայացուցիչ:

Թեև բազմաժանր ու բազմաբնույթ է Ա. Հովհաննիսյանի պատմագիտական ժառանգությունը, սակայն պայմանականորեն այն կարելի է ստորաբաժանել երեք մեծ բնագավառների՝ 1. հայ ազատագրական շարժում, 2. Միքայել Նալբանդյանի կյանքն ու գործը և 3. հայ հասարակական-քաղաքական հոսանքների, ազգային-քաղաքական կուսակցությունների գործունեություն և գաղափարախոսություն: Չնայած կատարված ստորաբաժանմանը, նկատելի է երեք բնագավառների ընդհանուր հոգեհարազատությունն ու ընդհանրությունը և հեշտությամբ կարելի է դրանք խմբավորել միևնույն բնագավառի՝ հայ ազատագրական պայքարի մեջ:

Հայ ազատագրական պայքարի գաղափարախոսության և հայերի քաղաքական կողմնորոշման (օրիենտացիա) հարցերը կարևոր տեղ են գրավել ոչ վաղ անցյալի հայ պատմական գրականության մեջ: Ս. Հովհաննիսյանը առաջիններից էր, որ քննարկման առարկա դարձրեց այդ խնդիրները: Հատկապես հատկանշական է «Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը» ուսումնասիրությունը<sup>1</sup>: Փաստական հարուստ նյութերի վերլուծության հիման վրա պատմաբանն այստեղ հանգել է հետևյալ որոշակի եզրակացության: «Նյութերի անմիջական քննությունը հնարավորություն տվեց լիովին հերքել հայ-ռուս օրիենտացիայի ծագման մասին տիրող տեսությունը»<sup>2</sup>: Օրիենտացիայի խնդիրն պատմաբանն անդրադարձել է նաև տարիներ անց շարադրած «Հայերի ռուսական կողմնորոշման նախապատմությունից» ծրագրային աշխատությունում<sup>3</sup>: Այստեղ հեղինակն արդեն հստակեցնում-խմբագրում է վերը արտահայտած իր տեսակետը և ավելի որոշակիորեն է արտահայտվում հայ ազատագրական մտքի վերադիրքավորման ինչպես ժամանակաշրջանի, այնպես էլ պատճառների վերաբերյալ՝ այդ երևույթերը աղերսելով Իսրայել Օրու անվան հետ, որը հրաժարվելով արևմտաեվրոպական կողմնորոշման ուղիներից և դիմաշրջվելով դեպի Մոսկովյան պետություն, իր ժողովրդի քաղաքական ազատագրման ծրագիրը կապեց «փաստապես միայն Ռուսաստանի միջամտության հետ»: Տվյալ խնդիրների հետ սերտ աղերսակցություն ունեն նաև պատմաբանի «Հակոբ Զուղայեցու մի գրությունը ռուս արքունիքին»<sup>4</sup>, «Պետրոս դիՍարգիս Գիլանենց»<sup>5</sup> և այլ ուսումնասիրություններ:

Ս. Հովհաննիսյանի ազատագրական շարժման նախասիրած պատմական գործիչը Իսրայել Օրին է: Հայ ազատագրական պայքարի այս աննկուն նվիրյալին է նվիրված նրա գիտական առաջին երախայրիքը<sup>6</sup>:

Թեմայի ընտրությունը պատահական չէր: Իսրայել Օրու կյանքն ու գործը նրան հետաքրքրել է դեռևս աշակերտական նատարանից: Այդ մասին պատմաբանը հիշում է. «Չորրորդ դասարանի աշակերտ էի, երբ հափշտակությամբ կարդում էի Ըաֆֆու և Լեոյի գրվածքները: Շատ հավանեցի վերջինիս «Հայկական տպագրությունը», որի ազդեցությունը մեծ է»<sup>7</sup>:

<sup>1</sup> Էջմիածին, 1921:

<sup>2</sup> Անդ, էջ VI:

<sup>3</sup> «Պատմա-քանասիրական հանդես», 1958, № 1, էջ 65-109:

<sup>4</sup> «Արարատ», 1915, № 9-10, էջ 775-781:

<sup>5</sup> Էջմիածին, 1916:

<sup>6</sup> Aschot Johannissian, Israel Ori und die Armenische befreiungsidee, München, 1913.

յամբ ընկա Էզօ-ի նշանավոր ռուսերեն ժողովածուի<sup>1</sup> հետքի վրա: Վերջինիս մտառու ուսումնասիրությունը հետագայում ինձ մղում տվեց զրելու ին համալսարանական դիսերտացիան»<sup>2</sup>: Խոսքը 1913 թ. Մյունիստնում լրիս տեսած «Israel Ori» աշխատության մասին է: Հետագայում նա այդ թեման այլևս չլրեց: Էջմիածնական տարիներին գրած «Հայուս օրինատացիայի ծագման խնդիրը» աշխատությունը շարադրելիս Մոսկվայի Հին վավերագրերի պետական կենտրոնական արխիվում հայտնաբերել է քազմաքիվ արժեքավոր վավերագրեր, որոնցից յոթը վերաբերում են Օրին գործունեությանը: Դրանք նա հրատարակեց այդ աշխատության հավելվածում: Արդեն վաճաճորյան մեկուսացման տարիներին՝ 1947-1948 թվականներին, նա Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի հանձնարարությամբ շա- րադրում է «Խսրայել Օրին և նախորդները» աշխատությունը, որ ամփոփում է տարիների իր կուտակած ողջ նյութը և ստեղծում մի ընդհանրացնող աշխատություն: Տակավին անտիա մնացած այդ մենագրությունն է, որ հիմք դարձավ հայ ազատագրական պայքարի պատմությանը նվիրված իր կապիտալ մենագրության համար: 1955 թ. Վերջերին այդ մենագրության մի մասը նա պաշտպանել է որպես դրամուական դիսերտացիա, իսկ ամբողջ աշխատանքը, որ ամփոփված է երկու գրքի մեջ, լրիս տեսավ «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» խորագրի ներքո<sup>3</sup>:

Առաջին մասում, որ կրում է «Հայ ազատագրական լեգենդը» վերտառությունը, քննարկվում է հայ ազատագրական մտքի զարգացման ընթացքը՝ վաղ միջնադարից մինչև XVII դար: Այստեղ լայնորեն հետազոտվել են քաղաքական ձգտումների առանցք կազմող տեսիլներն ու գուշակությունները, ներկայացվել են ազատագրական գաղափարաբանության պատմական միջավայրն ու զարգացման ընթացքը: Երկրորդ մասում հեղինակն անդրադարձել է XV-XVII դարերի հայ-արևմտաեվրոպական բանակցությունների պատմությանը, մասնավորապես կանգ է առել հայերի քաղաքական կողմնորոշման հիմնախնդրի պարզաբանման վրա: Վերջապես շարադրել է Խսրայել Օրու գործունեությունը, տվել նրա կյանքի և գործունեության քննական պատկերը: Աշխատանքը գրված է մեծ թվով հայերենի և օտար սկզբնադրյուրների հիման վրա, որոնց մնշող մեծամասնությունը հայտնաբերել է հեղինակը և դրանք դրել շրջանառության մեջ: Ա. Հովհաննիսյանի «Դրվագները» գնահատ-

<sup>1</sup> Գ. Էզօ, Сношения Петра Великого с армянским народом, СПб., 1898.

<sup>2</sup> Ա. Հովհաննիսյան, Հուշեր և քննություններ, էջ 80:

<sup>3</sup> Գիրք առաջին, Երևան, 1957: Գիրք երկրորդ, Երևան, 1958:

վել են որպես հայ պատմագիտության նշանակալից արժեքներից, որպես մնայուն գործ, որ պատիվ է բերում ոչ միայն հեղինակին, այլ բռվանդակ մեր պատմագիտությանը<sup>1</sup>:

Իսրայել Օրու գործունեությանը Ա. Հովհաննիսյանը անդրադարձել է նաև XVIII դարի առաջին երեսնամյակի հայ-ռուսական հարաբերություններին նվիրված փաստարդերի ժողովածուի ընդարձակածավալ առաջարկանում<sup>2</sup> և այլ ուսումնասիրություններում: Արժեորելով Իսրայել Օրու դերը հայ ազատագրական պայքարը իրատեսական գետնի վրա դնելու ուղղությամբ, միաժամանակ հեղինակը բացահայտել է Ռուսաստանի արևելյան քաղաքականության հիմնական ուղղվածությունը և ցույց տվել, որ տվյալ պատմաշրջանում հայ ազատագրական պայքարը շահավետ էր Ռուսաստանի՝ կովկասյան քաղաքականության դիտանկյունից, ուստի և այն արժանացել է համապատասխան դրական վերաբերմունքի: Հայ ազատագրական պայքարի առանձին հարցեր քննարկել են նաև Հակոբ Անասյանի «17-րդ դարի ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում» ուշագրավ մենագրությանը (Երևան, 1961) նվիրված ընդարձակ գրախոսականում<sup>3</sup>, «Հայ ժողովովի պատմություն» ակադեմիական բազմահատորյակի 4-րդ հատորի՝ «Հայ ազատագրական շարժումը իրանական տիրապետության և թուրք զավթիչների դեմ XVIII դարի առաջին կետում» բաժնում<sup>4</sup> և լույս տեսած այլ գրախոսականներում: Ուշագրավ է հատկապես «Դավիթ Բեկի գլխավորած Ղափանի ապստամբությունը» հոդվածը<sup>5</sup>, որտեղ ընթերցողին է ներկայացնում ազատագրական պայքարի առաջնորդի միանգամայն նոր կերպարը: Դավիթ Բեկը Օրիի գործի շարունակողն է, սակայն փարված ոչ թե բանարարության, այլ պրակտիկ պայքարի գաղափարին: Հայ ազատագրական պայքարի հետ են աղերսվում նաև գաղափարական այն հոսանքները, որոնք փորորկեցին միջնադարյան Հայաստանի իրականությունը, խռովեցին Հայոց եկեղեցու անդրբը: Խոսքը աղանդավորական շարժումներից բռնդրակյան շարժման մա-

<sup>1</sup>Գրախոսությունները տես՝ **Բ. Առաքելյան**, «Պատմա-բանասիրական հանդես», 1960, № 1, էջ 236-248, **Ա. Գալստյան**, «Սովետական Հայաստան», 1958, 8 հովիսի, **Վ. Հակոբյան**, «Տեղեկագիր», ՀՀ ԳԱ ակադեմիայի (հասարակ. գիտ.), 1962, № 9, էջ 83-88 և այլն:

<sup>2</sup>Ա. Յօաննիսյան, Историческое введение, тես՝ «Армяно-русские отношения в первой трети XVIII века», сборник документов, том II, часть I, Ереван, 1964, стр. V-XCIX. Ի դեպ, Ա. Հովհաննիսյանի խմբագրությամբ է լույս տեսել նաև սույն ժողովածուի երկրորդ մասը (том II, часть II, Ереван, 1967):

<sup>3</sup>Տես՝ «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 1, էջ 235-248:

<sup>4</sup>«Հայ ժողովովի պատմություն», հատ. 4, Երևան, 1972, էջ 81-175:

<sup>5</sup>Տես՝ «Բանքեր Երևանի համալսարանի», 1970, № 1, էջ 96-111:

սին է, որին պատմաբանը նվիրել է առանձին հոդվածներ<sup>1</sup>: Անշուշտ, մերժելի է հեղինակի այն պնդումը, թե իբր քննդրակեցիների շարժումը եղել է հեղափոխական և ունեցել է դրական նշանակություն: Ա. Հովհաննիսյանը չի ցանկացել նկատել, որ այս և նման այլ շարժումներ իրենց հակաեկեղեցական շեշտված ուղղվածությամբ քուլացնում էին ոչ միայն եկեղեցու դիրքերը, այլև հայ հասարակության քարոյական-քաղաքական միասնությունը, որն այնքան կարևոր էր այն ժամանակներում: Հետաքրքրությունից զուրկ չէ նաև Հովսեփի Էմինին նվիրված պատմաբանի հրապարակումը<sup>2</sup> և ազատագրական պայքարի մանրամասներին աղերսվող այլ ուսումնասիրություններ:

Հայ ազատագրական պայքարի պատմությանը նվիրված Ա. Հովհաննիսյանի ուսումնասիրությունները վճռորոշ դեր և նշանակություն ունեցան թեմայի հետագա, համակողմանի ուսումնասիրության համար: Հայ պատմագիտությունը ձեռնամուխ է լինում ազատագրական պայքարի բոլոր դրվագներին ու էտապներին նվիրված ուսումնասիրությունների ստեղծմանը, ուսումնասիրություններ, որոնց համար որպես չափորոշիչ ու զգերազանցված արժեք մնում են վաստակաշատ պատմաբանի համբավավոր «Դրվագներ»:

Հայ ազատագրական մտքի պատմության հետ սերտորեն աղերսվում են նաև Ա. Հովհաննիսյանի՝ Միքայել Նալբանդյանի կյանքին ու գործունեությանը նվիրված ուսումնասիրությունները, որը պատմաբանի գիտական նախասիրությունների երկրորդ բնագավառն է: Պատմաբանի և գրականագետի իր փայլուն կարողությունները Ա. Հովհաննիսյանը դրսուրել է Միքայել Նալբանդյանին նվիրված 15-ից ավելի ուսումնասիրություններում: Դեռևս 1935 թ. նրա խմբագրությամբ լույս է տեսել Մ. Նալբանդյանի անտիպ երկերն ամփոփող հատորը<sup>3</sup>: 830 էջ կազմող այս հրատարակությունում Նալբանդյանի երկերը կազմում են ընդամենը 200 էջ, մենացած 600 էջը կազմողի ու խմբագրողի ծանոթագրություններն են, որոնցից շատերը միանգամայն նոր և թարմ խոսք էին ականավոր հեղափոխական-դեմոկրատի ու գրողի կենսագրության և ստեղծագործությունների վերաբերյալ: Նալբանդյանագիտական իր երկարամյա այրադրումներ նա ամփոփեց «Вопросы национальности в пуб-

<sup>1</sup> **Ա. Խօաննիսյան**, Движение тондракитов в Армении, тես “Вопросы истории”, 1954, № 4, տես նաև **Ա. Հովհաննիսյան**, Սմբատ Զարեհավանցին, նրա ժամանակը և ժամանակակիցները, «Բանքեր Սատենադարանի», № 3, 1956, էջ 7-30:

<sup>2</sup> **Ա. Հովհաննիսյան**, Էղմոնդ Բըրկը Հովսեփ Էմինի մասին, տես «Տեղեկագիր», ՀՀ ԳԱԱ ակադեմիայի (հասարակ. գիտ.), 1960, № 12, էջ 61-65:

<sup>3</sup> **Միքայել Նալբանդյան**, Անտիպ երկեր: Խմբագրություն և կոմենտարներ Աշոտ Հովհաննիսյանի, Երևան-Սոսկվա, 1935:

լիցիստիկե Միկաելա Հալբանդյանա» մենագրության<sup>1</sup> մեջ և «Նալբանդյանը և նրա ժամանակը» երկհատորյակում<sup>2</sup>: Վերջին աշխատանքը մեծ հետաքրքրություն առաջացրեց. քննադատությունն այն որակեց որպես նալբանդյանագիտության ամենանշանակալից ձեռքբերումը և հայ գրականագիտությունն ու պատմագիտությունը հարստացնող աշխատանք<sup>3</sup>: Նալբանդյանին նվիրված այս երկհատորյակը նշանավոր գրողի սույն կենսագրականը չէ, այն XIX դարի կեսերի հայ հասարակական-քաղաքական կյարի, մասնավորապես հասարակական հոսանքների պատմության մի ուրույն հանրագիտարան է, ուր փաստական հարուստ պատմական ֆոնի վրա վերլուծության է ենթարկվել հայ հասարակական կյանքի, այդ թվում և արևմտահայ<sup>4</sup>, բոլոր կողմերը: Ինը՝ Ա. Հովհաննիսյանը այս երկհատորյակը համարում էր իր լավագույն աշխատությունը և, ինչպես վկայում է Կ. Խուդավերդյանը, նա ցանկանում էր այն թարգմանել ռուսերեն: Այդ նպատակով է, որ նա կրճատել է մենագրության ծավալը, կատարել լրացումներ և ուղղումներ, նախապատրաստել թարգմանության համար, սակայն «գիտնականի ցանկությունը մինչև այժմ չի իրականացվել»<sup>5</sup>:

Ա. Նալբանդյանին նվիրված սույն մենագրության հետ մերձավոր աղերս ունեն Ա. Հովհաննիսյանի՝ հայ հասարակական-քաղաքական հոսանքների, ազգային-քաղաքական կուսակցությունների գործունեության ու գաղափարախոսության հարցերին նվիրված ուսումնասիրությունները, որոնք ել ամբողջության մեջ կազմում են նրա գիտական հետաքրքրությունների երրորդ բնագավառը: Այս ուղղությամբ նա կատարում է զգայի աշխատանք, որոնք ամփոփվում են «XIX դարի 50-60-ական թվականների արևելահայ հասարակական-քաղաքական հոսանքները» («Պատմա-քանասիրական հանդես», 1965, № 4, 1966, № 1), «Արևելահայերի մասնակցությունը Ռուսաստանի և Անդրկովկասի հեղա-

<sup>1</sup> Երևան, 1955.

<sup>2</sup> Գիրք 1, Երևան, 1955: Գիրք 2, Երևան, 1956:

<sup>3</sup> Տե՛ս Ս. Սիսիբարյանի («Գրական թերթ», 1956, 7 հունիսի), Ա. Հայրապետյանի («Սովետական Վրաստան», 1956, 4 մարտի), Վ. Պարսամյանի («Սովետական Հայաստան», 1957, 7 մարտի), Ս. Մազմանյանի («Սովետական գրականություն», 1957, № 1, էջ 152-160), Գ. Ստեփանյանի («Լեմինյան ուղիով», 1957, № 2, էջ 116-124), Ա. Ասարյանի («Տեղեկագիր», ՀՀ ԳԱ ակադեմիայի (հասարակ. գիտ.), 1958, № 6, էջ 101-113) և այլոց գրախոսությունները:

<sup>4</sup> Արևմտահայոց պատմության ուսումնասիրության բնագավառում Ա. Հովհաննիսյանի կատարած աշխատանքի վերլուծությունը տե՛ս Է. Ա. Կոստանդյան, Աշոտ Հովհաննիսյանը և արևմտահայության պատմության ուսումնասիրության մի քանի հարցեր, տե՛ս «Լրաբեր» ՀՀ ԳԱ ակադեմիայի (հասարակ. գիտ.), 1998, № 2, էջ 34-42:

<sup>5</sup> Կ. Ա. Խուդավերդյան, Աշոտ Հովհաննիսյան (Ծննդյան 100-ամյակի առթիվ), տե՛ս «Պատմա-քանասիրական հանդես», 1987, № 3, էջ 21:

փոխական շարժումներին» (նոյն տեղում, 1968, № 1), «Հնչակյանների կազմավորման գաղափարական արմատները» (նոյն տեղում, 1968, № 2), «XIX դարի 80-ական թվականների առաջին կեսի արևելահայ ազգային նարողնիկական խմբակները» («Բանքեր Հայաստանի արխիվների», 1968, № 2), «Արևելահայ լիբերալիզմի և նարողնիկության ներհակությունները իննունական թվականների սկզբներին» (նոյն տեղում, 1969, № 2) ուսումնասիրություններում: Նշվածներն իմի բերելով, Ա. Հովհաննիսյանը 1960-ական թվականների վերջերին շարադրում է «Ուրվագծեր XIX երկրորդ կեսի արևելահայ հասարակական հոսանքների և ազգային քաղաքական կուսակցությունների պատմության» մենագրությունը, որը, սակայն, ցավոք, կյանքի իրավունք չստացավ: Հայաստանի կոմկուսի այն ժամանակվա դեկավարությունը արգելեց մենագրության հրատարակությունը, որը, ինչ խոսք, եթե լույս տեսներ, կլիներ միանգամայն նոր մեկնարանություն և կարող էր չափազանց կարևոր դեր խաղալ այդ հարցերի հետագա գիտական մշակման գործում:

Փաստորեն սրանով իմնականում ամփոփվում են Ա. Հովհաննիսյանի կողմից հայ ազատագրական պայքարի բազմադարյան պատմության (IV-XIX դարեր) հիմնական փուլերի մանրամասների վերհանումն ու իմաստավորումը: Սակայն լայն հետաքրքրությունների տեր պատմաբանը միաժամանակ գրադարձել է նաև այլ խնդիրների ուսումնասիրությամբ:

Ա. Հովհաննիսյանը զգալի ավանդ ունի հայ գրականության պատմության առանձին հեղինակների ու հարցերի ուսումնասիրության բնագավառում: Նշելի են հատկապես Մեսրոպ Մաշտոցին նվիրված հոդվածն՝ ու Ֆրիկի կյանքին ու ստեղծագործությանը անդրադարձող նրա մենագրական ուսումնասիրությունը<sup>1</sup>: Վերջին աշխատությունում հեղինակը բացահայտել է նշանավոր տաղերգուի ապրած դարաշրջանի տնտեսական ու սոցիալական հարաբերությունների ամբողջ պատկերը և այդ ֆոնի վրա դիտարկել «Նրա տաղերի, նրա արտահայտած տրամադրությունների ու ապրումների սոցիալ-պատմական իմաստը»<sup>2</sup>: Նմանօրինակ մեկ այլ ուսումնասիրություն է XVII դարի վերջերի հայ մատենագիր Զաքարիա Ագուեցուն նվիրված էտյուդը, որը, նկատենք, առաջիններից մեկն էր այդ ժամանակներում քիչ հայտնի հեղինակի

<sup>1</sup> Ա. Հովհաննիսյան, Մաշտոցյան գրերի պատմական նշանակությունը, տե՛ս «Պատմաբանական հանդես», 1962, № 2, էջ 3-14:

<sup>2</sup> Ա. Հովհաննիսյան, Ֆրիկը պատմաքննական լույսի տակ, Երևան, 1955:

<sup>3</sup> Վ. Բ. Բարխուդարյան, Աշոտ Հովհաննիսյան, «Պատմա-բանասիրական հանդես», 1977, № 3, էջ 51:

մասին<sup>1</sup>: Առանձնակի ուշադրության են արժանի Խ. Աբովյանին նվիրված մենագրությունը<sup>2</sup>, Ստ. Նազարյանցին<sup>3</sup>, Ռաֆֆուն<sup>4</sup>, Հովհ. Թումանյանին<sup>5</sup> և այլոց վերաբերող նրա գրականագիտական հետազոտությունները:

Ա. Հովհաննիսյանը զգալի աշխատանք է կատարել նաև «Հայ ժողովի պատմություն» ակադեմիական ուժիատորյակի ստեղծման գործում: Նա եղել է բազմահատորյակի խմբագրական կոլեգիայի, ինչպես նաև 5, 6-րդ հատորների խմբագրության անդամ, 7-րդ հատորի գլխավոր խմբագիր: Բացի այդ, 4, 5 և 6-րդ հատորներում բազմաթիվ գլուխներ ու բաժիններ պատկանում են նրա գրչին: Ա. Հովհաննիսյանը զգալի մասնակցություն է ունեցել նաև «Հայաստանի կոունիխստական կուսակցության պատմության ուրվագծեր» կոլեկտիվ մենագրության ստեղծման աշխատանքներին<sup>6</sup>: Աղբյուրագիտական ու բնագրագիտական տքնածան աշխատանքի արդյունք է նրա խմբագրությամբ ու մասնակցությամբ լույս տեսած այնպիսի կապիտալ ժողովածու, ինչպիսին է «Հայերեն ձեռագրերի ԺԵ դարի հիշատակարաններ»-ի գույք հատորները<sup>7</sup>: Մրանց պետք է ավելացնել նաև այն տասնյակ գրքերը, որ լույս են տեսել նշանավոր պատմաբանի խմբագրությամբ: Այդ գրքերի հաջողության գործում անկասկած է դրանց խմբագրի տքնածան ու հետևողական մանրակրկիտ աշխատանքը:

Անգնահատելի է Ա. Գ. Հովհաննիսյանի աշխատությունների գիտական արժեքը հայ ժողովրդի պատմության և մասնավորապես ազատագրական պայքարի ու գաղափարախոսության ուսումնասիրության բնագավառում: Կեսդարյա (պարտադրված քսանամյա ընդհատումով)

<sup>1</sup> **Ա. Գ. Իօաննիսյան**, Դելա և Ճն Զաχարիա Ակուլիսկոց, տե՛ս «Իստորիկ-մարքուսիստ», Մ., 1937, № 1, ստ. 139-152.

<sup>2</sup> **Ա. Հովհաննիսյան**, Խաչատոր Աբովյան, Երևան, 1933: Անշուշտ, սույն մենագրության մեջ Ա. Հովհաննիսյանի զարգացրած որոշ տեսակետներ տուրք էին ժամանակի գաղափարախոսության մեջ տիրապեսող գրեհիկ մտայնությունների: Նկատի ունենք Խ. Աբովյանին որպես «հետադիմական գաղափարախոս», «ցարիզմի նվաճողական քաղաքականության գովերգու», իսկ Ստ. Նազարյանցին, Ռ. Պատկանյանին և Ռաֆֆուն որպես «մարտական, ուզմաշունչ ազգայնականներ» որակելլ և այլն: Նման որակումներից զերծ չէին այդ տարիներին գրված նրա այլ երկասիրություններ և մասնավորապես «Գրական նկատողություններ» հոդվածաշարը (տե՛ս «Խորհրդային գրականություն», 1934, № 3-4; 1935, № 1):

<sup>3</sup> **Ա. Հովհաննիսյան**, Ստեփանոս Նազարյանցի գրական արխիվը, տե՛ս «Տեղեկագիր», ՀՀ ԳԱԱ ակադեմիայի (հասարակ. գիտ.), 1955, № 3, էջ 45-53:

<sup>4</sup> **Ա. Հովհաննիսյան**, Գրիգոր Արծրունու և Ռաֆֆու գաղափարական ներհակության ակունքը, տե՛ս «Բանքեր Երևանի համալսարանի», 1968, № 1, էջ 15-31:

<sup>5</sup> **Ա. Հովհաննիսյան**, Հովհաննես Թումանյան, տե՛ս «Նորք», 1923, Գիրք 2, էջ 316-320:

<sup>6</sup> Երևան, 1963: Երկրորդ հրատարակություն, Երևան, 1967:

<sup>7</sup> Հատ. Ա (1601-1620 թթ.), Երևան, 1974: Հատ. Բ (1621-1640 թթ.), Երևան, 1978:

գիտական գործունեության ընթացքում հրապարակ է իշեցրել շուրջ 150 ուսումնասիրություններ, որոնցից շատերը դարձել են հայ պատմագիտության նվաճումներից և կարևոր նշանակությամբ մնայուն ու պատվավոր տեղ են ապահովել իրենց հեղինակին հայ պատմագիտության անդաստանում: Դիշտ է նկատված, թե «նրա կյանքը գիտությանը և ժողովրդին բոլորանվեր ծառայելու ուսանելի օրինակ է»<sup>1</sup>:

\*\*\*

Այսու Մայր Արքո Ս. Էջմիածնի հրատարակչական բաժինը ընթերցողների ուշադրությանն է ներկայացնում 1914-1916 թթ. ընթացքում «Արարատ» ամսագրում տպագրված երիտասարդ Ա. Գ. Հովհաննիսյանի պատմագիտական աշխատությունները, ինչպես նաև Էջմիածնական տարիներին գրված, սակայն 1921-1922 թթ. նույն Էջմիածնում լույս տեսած երկու ուսումնասիրություններ ևս, ընդամենը՝ ուր աշխատություն: Գևորգյան ճեմարանում աշխատելու շրջանում, ամառային բոլոր արձակուրդներին Ա. Հովհաննիսյանը մեկնում էր Մոսկվա, ուր շարունակում էր պրատումները տեղի արխիվային հաստատություններում՝ Էջմիածնական իր ուսումնասիրությունները համապատասխան ուսուական վավերագրերով հարստացնելու համար: «Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը» ուսումնասիրությունը գրելիս՝ 1915 թ. ամռանը, ինչպես հենց ինքը՝ Ա. Հովհաննիսյանն է հավաստում, շարունակել է աշխատանքը Ռուսաստանի արտաքին գործոց նախարարության արխիվում: Բնական է ներադրել, որ այս, ինչպես նաև մյուս ուսումնասիրությունը, նախատեսված էր հրատարակել «Արարատ» ամսագրում, սակայն 1919 թ. ամսագրի հրատարակությունը դադարեց: Դրանք թեև լույս են տեսել 1921-1922 թթ. ընթացքում, սակայն արդարացի կլինի ու բնական այդ ուսումնասիրությունները ևս գետեղել «Արարատ»-ի հայագիտական ժառանգություն հանդիսացող նրա սույն հատորում, թեկուզ և «Հավելվածներ»-ի ներքո:

Հասորում գետեղված աշխատությունները դասավորել ենք Ժամանակագրական կարգով: Նյութերը լույս են տեսնում նոյնությամբ, միայն խիստ անհրաժեշտ կետադրական, ուղղագրական ու տեխնիկական միջամտություններով: Տեքստում ուղիղ փակագծերում [ ] կատարված հավելվածները պատկանում են մեզ:

#### ՊԵՏՐՈՍ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

<sup>1</sup> «Աշոտ Գարեգինի Հովհաննիսյան». Սովետական Հայաստանի ականավոր գիտնականները, № 14: Ներածականը՝ Վ. Ա. Դիլոյանի, Երևան, 1973, էջ 35:

<sup>2</sup> Ա. Հովհաննիսյան, Հուշեր և բնութագրումներ, էջ 125:

## ԺԳ ԴԱՐԻ ՄԻ ՈՒՂԵՒՈՐԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՑ ՄԱՍԻՆ

*Burchardus de Monte Sion՝ այսպէս է կոչւում այդ ուղևորը,*  
*հայ բանասէրների շրջանում շատ ծանօթ դէմքերից չէ: Դոմինի-*  
*կեան այդ վանականի անունը, որքան ինձ է յայտնի, առաջին և*  
*վերջին անգամ անցողակի յիշել է մեզանում Հայր Ղ. Ալիշան<sup>1</sup>:*  
*իւր ըստամենայնի պակասաւոր ցուցակի մէջ Կ. Կոստանեանց<sup>2</sup> չի*  
*մտցնում նաև այդ ուղևորի անունը, թէև վերջինս, որպէս Հայոց*  
*երկրի հին այցելուներից և նկարագրողներից մէկը՝ նա անցել է*  
*Կիլիկիա Լեռն Գ-ի ժամանակ [1260-1289], ըստ երևոյթին 1284*  
*թուականի գարնանը, զուրկ չէ որոշ հետաքրքրութիւնից: Եւ ու-*  
*րովհետեւ իրեն ժամանակակից Վիլեբրանդտի, Ռուբրուքի, Մար-*  
*կօ Պոլօի և այլոց պէս այս ուղեգիրը ևս կարող է որոշ արժէք ու-*  
*նենալ Հայոց անցեալով հետաքրքրողների համար, աւելորդ չը*  
*պէտք է համարուի նրա «Նկարագրութեան» լատին բնագրից<sup>3</sup>*  
*ըստ կարելոյն բառացի փոխագրութեամբ քաղել այստեղ Հայե-*  
*րին վերաբերող հատուածները:*

---

«Եղայ նաև Հայաստանի և Կիլիկիայի թագաւորի մօտ: Կա-  
յին նրա մօտ նաև քանի մի թաթարներ: Միւսները սակայն բոլո-  
րը, որ ծառայողների թուին էին պատկանում, քրիստոնեաներ  
էին, թուով մօտ 200 հոգի: Տեսայ սրանց եկեղեցի շտապելիս, պա-  
տարագին ներկայ գտնուելու, ծնկաչոք և ջերմեռանդութեամբ  
աղօթելու: Եւ որտեղ ես և իմ ընկերը հանդիպում էինք նրանց,  
շատ պատւում էին մեզ գլխարկ վերցնելով, յարգանքով խոնար-  
հուելով ու ողջունելով մեզ. մեր ողջոյնի պատասխանից յետոյ  
էին միայն բարձրացնում նրանք իրենց գլուխները»:

«Հայոց, ինչպէս և վրաց, եկեղեցու գլուխը կոչւում է կաթո-  
ղիկոս: Նրա մօտ<sup>4</sup> մնացի 14 օր: Կային նրա հետ արքեպիսկոպոս-

<sup>1</sup> Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, եր. 223, 341:

<sup>2</sup> Հմմոն. Կ. Կոստանեանց, Հայագիտութիւնն Արեմտեան Երոպայում, Թիֆլիս, 1910:

<sup>3</sup> «Descriptio Terrae Sanctae». Peregrinatores Medii aevi guattuor. ed. F. C. M. Lauent, Lipsiae, 1864, iu 4<sup>0</sup>.

<sup>4</sup> Իմա՞ կարողիկոսի՝ Յակոբ Ա Կայեցու [1268-1286] մօտ:

ներ և եպիսկոպոսներ, վանահայրեր և ուրիշ շատ եկեղեցականներ: Իւր նիստ ու կացով, հագուստով և խօսակցութեամբ նա այնքան ինքնայատուկ էր, որ նմանը չեմ տեսել ո՛չ կրոնաւորների, ո՛չ էլ աշխարհականների մէջ: Կարող էք հաւատալ, եթէ ասեմ, որ նրա հագած բոլոր շորերը իմ հաշլով ոչ մի դէպքում հինգ սօլիդ ստերլինգից<sup>1</sup> աւել չէին արժենայ, թէև նա ունէր խիստ ամուր մի դղեակ, մեծ եկամուտ և անբաւ հարստութիւն: Գործ է ածում նա ոչխարի մորթուց պատրաստած մի լայնաթև վերնազգեստ (*pellicius*)՝ կոշտ, կարմրագոյն, միանգամայն կեղտուտ ու անմաքուր և ապա հնացած և գրեթէ մաշուած մի ներքնազգեստ (*tunica*): Բացի այդ նա կրում էր սև ուսապանակ (*scapulare*, հմմտ. *Scapulaire*) և սև թիկնոց (*pallium*)՝ աժան և կոպիտ գործուածք:

Հայոց և Կիլիկիայի թագաւորին տեսայ իւր բոլոր իշխանների և յաճախ իւր նախածին որդու<sup>2</sup> հետ խոնարհութեամբ ու մեծ յարգանքով նստած նրա ոտերի առջև, ամենայն երկիւղածութեամբ Տիրոջ խօսքը լսելիս: Կաթողիկոսը իւր բոլոր հոգեորականների հետ պահում էին քառասնորդը (*quadragesima*) հացով և ջրով, նմանապէս և թագաւորը իւր բոլոր իշխաններով, բացառութեամբ Աւետեաց օրուայ, երբ իմ ներկայութեամբ կաթողիկոսը թոյլ տուեց նրան ձուկ ուտել և գինի խմել: Այդ օրը ներկայ էի պատարագին, որ տեղի ունեցաւ նոյն կաթողիկոսի, թագաւորի և թագուհու ներկայութեամբ: Արարողութիւնը կատարվում էր մեծ երկիւղածութեամբ: Պէտք է ասել, որ նրանց քահանաներն ու եպիսկոպոսները զգեստաւորւում են մերոնց պէս: Պատարագի ժամանակ պատրաստում են բաղարջ, կարդում են միենոյն խօսքերով միենոյն թերթերն ու Աւետարանը, երգում են միենոյն «Սուրբ-սուրբ», «Հայր մեր», «Գառն Աստուծոյ» սկսուածքները, սակայն իրենց բարբառով և գրքերով, որովհետև նրանք ունեն նաև իրենց առանձին լեզուն և գրականութիւնը: Կաթողիկոսը ինքը և միւս բոլոր նուիրապետները կուսակրօն են. չի կարելի գտնել ամբողջ արևելքում նուիրապետներ ինչ ազգից էլ դրանք չը լինեն, որ կուսակրօն չը լինէին: Եւ պէտք է ասել, որ բոլոր կուսակրօնները վայելում են այստեղ մեծ յարգ ու պատիւ: Ստորին հոգեորականութիւնն ու քահանաները չունեն սակայն ոչ մի իշխանութիւն և աշխարհականներից էլ բանի տեղ չեն տրւում. ե-

<sup>1</sup> Ըստ հրատարակչի այդ գումարը համարժէք է «4 քալեր և 25 գրոշ արծաթի»:

<sup>2</sup> Յետազայի Հերում Բ [1289-1301] թագաւորի:

կեղեցական ծէսեր կատարելուց զատ, նրանք այլ պաշտօն չունեն: Վերջացնելով գիշերուայ ժամասացութիւնը անցնում են առաւոտեան ժամասացութեան. առաւոտեան ժամասացութիւնից յետոյ չեն քնում, այլ եկեղեցում նստած ուսուցանում են ժողովրդին մինչև արևածագը և ապա մատուցանում են առաջին պատարագը կամ թէ սա տեղի է ունենում երրորդ ժամի մօտերքը, եթէ օրը տօնական է: Ոչ մի բան չէ վայելում հեղինակութիւն, եթէ թոյլ չէ տրուած վարդապետից (*verthabite*), բոլոր քահանաները ամուսնացած են և թոյլ էլ չի տրուում որ և է մէկին պաշտօն կատարել, եթէ ամուսնացած չէ: Երկուշաբթիից մինչ ուրբաթ (քահանաները) երբէք պատարագ չեն մատուցանում, եթէ տօն չկայ, այլ ազատ են ամուսնական պարտականութիւններ կատարելու (*vacant amplexibus*): Շաբաթ և տէրունական օրը տեղի է ունենում շատ շքեղ պատարագ: Կնոջ մահուանից յետոյ քահանան կրկնամուսնութեան իրաւունք չէ վայելում ու չը պէտք է բերէ ուրիշ կին: Եթէ նա չնանայ կամ անհաւատարիմ գտնուի, զրկւում է պաշտօնից և պէտք է թողնի եկեղեցին, որպէս զի սա չը պղծուի: Եթէ երէցկինն անհաւատարիմ գտնուի, քահանան կարող է պաշտօնագուրկ լինել ու հեռացուել եկեղեցուց, երէցկինը սակայն քթատւում է, իսկ այն տղամարդը, որ կենակցել է նրա հետ ենթարկւում է ամորձատման, եթէ նոյն իսկ նա ամուսնացած էլ լինի: Այսպիսի մի դէպք տեղի ունեցաւ իմ ներկայութեամբ: Քահանայի մահուանից յետոյ նրա կինը չը պէտք է մարդու գնայ, եթէ օրինազանց լինի՝ կայրուի, սակայն եթէ պոռնկանայ՝ ոչ մի վատ բան չի պատահի նրան: Կայ նրանց մօտ նաև մի նոր կանոն, առաքեալների հետևողութեամբ քահանայացուն պէտք է ամուսնանայ կոյսի հետ: Հայ և վրաց քահանաները տարբերում են աշխարհականներից նրանով, որ սպիտակ կտաւէ կտորով փաթաթում են իրենց պարանոցն ու վիզը:

Այն գողերը, որ ամենաթեթև գողութիւնն ունեն արած կամ այն ոճրագործները, որ թեթև ոճիրն ունեն կատարած, ամորձատւում են, որպէս զի հայրերի ոճրագործութիւնները ընդօրինակող զաւակներ չը ծնեն: Այն երկոյթը, որ այստեղ պոռնիկներ այնքան շատ կան, թւում է ինձ, ունի իւր պատճառը, այստեղ շատ ներքինիներ կան, որոնք բոլորը ծառայում են որպէս ստրուկ ազնւուհիներին. Հայոց թագուհին, այն ժամանակ երբ ես նրա մօտն էի, ունէր, կարծեմ, աւելի քան 40 ներքինի: Առանց թագա-

ւորի յատուկ թոյլտուռթեան ոչ մի տղամարդ չի կարող մտնել թագուհու մօտ: Թագուհու մօտ գնացողը պէտք է յիշատակութեան արժանի մի բան նուիրի այն ներքինուն, որ նստում է նրա առաջ: Նոյնը տեղի է ունենում և բոլոր ազնուհիների նկատմամբ, լինեն դրանք ամուրի թէ ամուսնացած:

«Թագաւորական տան անդամները, իշխանները և բոլոր ազնուականները սիրով են լսում Աստուծոյ խօսքը: Դրա համար է, որ իւրաքանչիւր օր ժամը 3-ին մի վարդապետ կամ վանական գալիս է թագաւորի ու իշխաններից իւրաքանչիւրի ամրոցը. դրանց մօտենում է միշտ իշխանը ինքը, մենակ կամ թէ զաւակների ու տնեցիների հետ ի միասին: Վանականները դնում են առաջները որ և է մի գիրք և կարդում նրանց ներկայութեամբ ռամկօրէն (*in vulgari*)՝ որովհետև ուրիշ լեզու չը գիտեն, կամ թէ բացատրում նրանց դոցա բնագիրը, և, եթէ աշխարհականները որ և է տեղ կասկած ունեն, առաջադրում են հարցեր և ստանում վանականներից դրանց մեկնաբանութիւնը սրբոց ցուցմունքների համաձայն: Ես հարցրի վանականներից իսկ, թէ սրանցից նրանք ո՞րի ուսմունքներին են ամենից շատ հետեւում: Ասացին, որ գլխաւորների շարքին են դասում Յովհան Ուկեբերանին, Գրիգոր Աստուածաբանին և Կիւրեղ Ալէքսանդրիացուն: Թէ՛ հոգեւորականները և թէ՛ աշխարհականները եկեղեցում պահում են իրենց շատ վայելուչ ու ոչինչ չեն անում այնտեղ բացի աղօթելուց, երգելուց և այն բոլորից, ինչ պիտի կատարեն ըստ օրինաց: Երբէք չէք տեսնի մէկին ծիծաղելիս եկեղեցում կամ ոչ լուրջ վերաբերմունք ցոյց տալիս:

Պատարագի խորհուրդը կատարում է նրանց մօտ ամենայն ջերմեռանդութեամբ: Սկիհը պահում է սեղանի ձախ կողմը, սրա համար պատի մէջ յատկապէս պատրաստած մի տեղ: Պատարագի ժամանակ մետաքսէ աղլուխով ծածկած սկիհը բարձրացնում է սարկաւագը և բուրփառարկու կիսասարկաւագի (*subdiaconus*) առաջնորդութեամբ ու երկու մոմակալների ուղեկցութեամբ շրջում է սեղանով դէպի աջ կողմը, ապա եպիսկոպոսը երկիւղածութեամբ առնում է այն և մատուցանում իւր պատարագը մերոնց պէս: Երկու հոգի վառած մոմերով կանգնում են պատարագչի յետեւ *infra canonem* և դրանց մօտ՝ երկու բուրփառարկու սպիտակ շապիկներով: Երկու սարկաւագ կանգնում են սեղանի անկիւններում, աջից և ձախից, իրարու վրայ դրած ափերով, ջերմօրէն աղօթելով, երեսները դէպի Քրիստոսի մարմինը դարձրած փոխէ-

փոխ քանի մի խիստ երկիւղած մեղեղիներ երգելով։ Այս բոլորը տեսնել ու լսել անկասկած չափազանց ախորժելի է։

Շատ ուրիշ բաներ ևս տեսայ այն երկրում, ինչպէս աշխարհականների նոյնպէս և հոգեորականների մէջ, խիստ օրինակելի և որոնք սակայն մեր երկրում հազիւ կարող էին իրագործելի թուալ»։

## ՆՈՐ ՆԻՒԹԵՐ ՀԱՅ-ՌԻՆԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Հայ ունիտորների գրական վաստակը մեծ չէ ընդհանրապէս: Եթէ մի կողմ թողնենք նրանց անպէտք թարգմանութիւնների երկար շարքը, բաւական է յիշել երկրայելի ինքնուրոյնութեան հետքեր կրող մի քանի կրօնական-դաւանաբանական գրութիւններ և գժուարամարս լատինաբանութեան մէջ խրուած մի երկու քերական փորձեր, մենք սպառած կը լինենք գրեթէ այն ամբողջ գրական ժառանգութիւնը, որ մնացել է մեզ այդ հայրերից: Արուեստի և բովանդակութեան տեսակէտից խեղճ բաներ են յատկապէս նաև այն մի երկու գրութիւնները, որոնք մնացել են մեզ, որպէս նմուշներ հայ ունիտորական-պատմագրութեան, այսպէս օրինակ, հներից Ներսէս Պալիանցի, իսկ նորերից Ստեփանոս Ռոշքայի ժամանակագրութիւնները, եթէ կարելի է առհասարակ այս երկու հայրերին ևս հայ ունիտորների շարքը դասել:

Եւ սակայն ԺԴ-ԺԸ դարերի մեր ինքնուրոյն պատմական գրականութիւնը այնքան կարիք ունի նոր լրացումների, որ պէտք է միայն ցաւել, որ մինչ այժմ դեռ տպագրութեան չեն յանձնուած պատմական այդ և նման նիւթերը: Անցեալի այդ մնացորդները կարեոր են և մի այլ տեսակէտից. Հայ ունիտորական գրականութիւնը, չը պէտք է մոռանալ այդ, մի մասն է կազմում հայ ու օտար գրողներից հեղինակած այն եւրոպական աղբեւրների, որոնք առնչութիւն ունին հայ ունիտորական շարժման հետ: Եւ որովհետև հէնց եւրոպական այդ գրականութեան մէջ է, որ գունեղ արտայայտութիւն են գտնում Հայոց պատմական կեանքի այլ և այլ կողմերը, անհրաժեշտ է լրացնել ըստ կարելոյն նաև այդ գրականութեան բացերը, տպագրութեան տալով հայ ունիտորական պատմագրութեան դեռևս անյայտ մնացած նշխարները:

Ներկայիս ես բաւականանում եմ միայն տպագրութեան յանձնել իմ սեփականութիւն կազմող մի ձեռագրից Ժէ դարու երկու ծանօթ ունիտորների՝ Հայր Յակոբ Յիսուսի և Հայր Մատթէոս Յովանիսեցու թողած պատմական արժէք ունեցող երկու անձանօթ գրութիւնները: Յիշածս ձեռագիրը բովանդակում է՝

**ա.** Ներսէս Պալիանցի թարգմանած Ֆրատեր Մարտինոսի ժամանակագրութիւնը (pp. 1r-53v, 59r-275 r.):

**բ.** Թարգմանչի կազմած հայ թագաւորների և կաթողիկոսների գաւագանագիրքը (pp. 275v-316v.):

**գ.** Մատթէոս Յովանիսեցու յիշատակարանը պարսկական դեսպանութեան և Նախիջևանի կաթոլիկ վանքերի մասին (pp. 53v-55v.):

**դ.** Պօղոս Գ պապի կոնդակը՝ «Յաղագս արհեպ սաց Հայոց» (pp. 57r-58r.):

**ե.** Յակով Յիսուսի ժամանակագրութիւնը (pp. 316v-318v.):

**Զեռագրի հանգամանքները.** կազմ՝ տախտակեայ Հին կաշեկազմ, վիճակ՝ լաւ, նիւթ՝ թուղթ, մեծութիւն՝ 25×21, թերթ՝ 318, գիր՝ բոլորագիր: Յիշատակարան՝ «ԱՌԴ՝ աղաչեմ զձեզ սրբազն ք հլք, և դպիրը նորեկք, որք հանդիպիք դոյզն տրածիս, յիշել մաղթեմ զմեղամած գծող գրոյս զապահասար դպիրս, և զեղրալոյն իմ հոգևոր, զյովիաննելսան, և այլ զաշակերտսն իմ, գրիգորն, և զպօղոսն և միքայելն, որ բազում աշխատեցան, ընդիս, ձեռնտու լինելով յա մ իրաց, միով ողորմահի, և դուք յիշել լիշիք, ի ք սէ» (p. 58r.): Գրութեան տեղը և ժամանակը՝ անյայտ: Եթէ սակայն ենթագրենք, որ ձեռագրիս «գծողը» և թ. 55v. յիշւող «Ֆ՝ Բաղդասար... գեղջէն Կէծկոյ, նոր ընձայ, որ այժմէ ի միասին Գրիգոր վը դտին» նոյն անձնաւորութիւններն են, ապա կարող ենք եզրակացնել, որ ձեռագիրը գրուել է «ի վանս Կէծկոյ» 1670-ական թուականներին: Այն հանգամանքը, որ ձեռագրի վերջում կցուած է Կէծկոյ վանքում կազմուած մի ժամանակագրութիւն, աւելի ևս հիմք է տալիս պնդելու այդ ենթագրութեան վրայ:

## Ա

### ՀԱՅՐ ՅԱԿՈԲ ՅԻՍՈՒՍԻԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

**Հայր Յակոբ Յիսուսի մասին շատ քիչ բան գիտենք:** Զեռագրի մէջ նա իրեն անուանում է «տ ը յակոբ յ ի որդի եար աղիզի, ազգ՝ գարբնեցի, ի գեղջէն կէծկոյ»: 1636 թուին Օգոստի-

նոս Բաջեցին մեկնելով Լեհաստան նշանակում է նրան ժամանակաւոր «վերախնամօղ կ բգիս միաբանողաց և աջորդ ժղովրդենն» (p. 318v.) 1650-ական թուականներին նա յիշւում է Նախիջևանի գաւառահայերի շարքում<sup>1</sup>: Հայր Օգոստինոս Բաջեցու մահուանից յետոյ Հայր Յակոբը ժողովրդի և եկեղեցականների կողմից ընտրւում է նրա տեղը: «Բայց մինչ սորա պատրաստութիւն տեսանելն, որ դիմեսցէ ի Հռոմ առ ի հաստատել՝ տէր Պօղոս Փիրօմալքալայ Բրէզ օրհնեալ լինի Աղէքսանդր հայրապետէն արհիեպիսկոպոս Նախիջևանայ»<sup>2</sup>: Զեռագրի մէջ յիշւում է Հայր Յակոբի 1631-1636 թուականներին կատարած ճանապարհորդութիւնը դէպի Հնդկաստան, ուր նա եւրոպական գաղթականների շրջանում՝ Նախիջևանի հայ կաթոլիկ համայնքների օգտին ժողովում է «բ զմ ապրանք, բ ճ, թ մն, շուռջար, վաճի թէ փողէ» (p. 318r.): Հայր Անտոն Նազար Ապրակունացու հետ դարձեալ ժողովարարութեան նպատակով 1643 թուականին ուղեղորւում է դէպի Ամերիկա և, հովանաւորուած սպանական կառավարութիւնից, միաբանութեան օգտին մի մեծ գումար է ժողովում<sup>3</sup>, որ յետոյ նրա և Հայր Պօղոս Պիրոմալի մէջ մի շարք վէջերի առիթ է տալիս<sup>4</sup>:

Հայր Յակոբ Յիսուսիի անուան հետ, որքան յայտնի է, գրական երկեր չեն կապուած: Նրա ստորև բերած ժամանակագրութիւնն էլ գրական ոչ մի արժանիք չունի: Այստեղ նա միայն ժամանակագրական կարգով ի մի է հաւաքում մի շարք կցկտուր տեղեկութիւններ, որոնք գլխաւորապէս ժեղիկ դարերի պարսկատաճկական պատերազմների շուրջն են պտտում: Վերջում գտնում ենք մի քանի տեղեկութիւններ կէծկոյ վանքի մասին:

**Յամի տն, ո՞նի, ի սամիսոն քղք, որ է մերձ ծովին պոնդոսի, կրակ անկաւ, և զք դքն առ հասարակ այրեց ծայրէ ի ծայր:**

<sup>1</sup> Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 388:

<sup>2</sup> Ք. Պատուանեան, Նշխարք մատենագրութեան հայոց, Ս. Պետերբուրգ, 1884, էջ 24:

<sup>3</sup> Ըստ Ալիշանի, 25.000 դոկատ, ibid, էջ 396՝ ըստ Bedik-ի, «Cehil Sutun»՝ 16.000 իմպերիալ, p. 378-379:

<sup>4</sup> Ղ. Ալիշան, ibid, ծանօթութիւն: Հայր Կոնսես Գալանոս յիշում է Հայր Օգոստինոս Բաջեցու արևելեան և արևմտեան Հնդկաստանում կատարած ճանապարհորդութիւնների ու ժողովարարութիւնների մասին («Սիաբանութիւն հայոց սթեղեցւոյն Հռովմայ», Հռովմ, 1690, I, 525): Գալանոսի տուած այդ տեղեկութիւնները ուրիշ տեղ չենք գտնում: Արդեօք նա չէ՝ շփորում Հայր Օգոստինոս Բաջեցուն Հայր Յակոբ Յիսուսիի հետ:

Դ բձլ ի նոյն ամին ունկարաց կայսըն կոտրե՞ց զթուրքն որէ  
քրիչչին և կոտորե՞ց ի զօրաց թուրքին հ ո, մ դ:;  
ո դճ, կը թվին ապրիլ, ժ է, զատիկ գիշ"րն ցուրտ ար ր զայ-  
գիսն տարաւ զմ"տն և զծ"ռն,  
հթ, թվին կարկուտ երեկ մայիս ամսոյ ի, ի դ, զայգի և զցո-  
րե"ն զամէնն բնաջինջ արար,  
ձ ա, թվին դ բձլ ցուրտ ար ր, զայգիսն տար"ւ,  
ո շխ ե, թվին թոթուռն երեկ, մորեխն երեկ, զուշն վ ր էր,  
մահն երեկ պատե՞ց ժանկ երեկ դախլն փչացոյց:  
Յամի տ ն, ո դճ, կ է, թվին ջանչանշայ իմիրգէն, գնաց ի հա-  
սան բէկին յ ն, և սպանաւ ի ձեռն հասան բէկին, հասան ալին  
մակուայ բերդումն բանդի էր դուս էրեկ և թգ րց մեր մ չ"ւ,  
ը, ամիս, յետ էնդոր հասան փատի շահն էրեկ, հասան ալին  
սպանէց, զմեր մ ս էառ և թգ րց, կ ը թվին,  
հ զ, թւին հասան բեկին գն "ց զգրաստուն, թալանէց ու ան-  
թիւ անձինք կոտորէց և գերի ար ր.  
հ է, թւին մեռ ւ իւր մահուամք սօլտանն թգ րէց,  
ձ ա, թվին, յաղուպ բէկն կոուեց"ւ զսօլտանն սպանէց, և  
ինքն թգ րց,  
դ, թվին գնաց ի դար պաղն մայրն և իւր եղբայրն մահաղեղ  
արբուցին յաղուր բէկին նա՛ իմացաւ, մօրն և իւր եղբօրն յուսա-  
յի բէկին մահաղեղէն խմեցոյց ի միասին մեռ"ն, ի դարաբ"զն, սո-  
վի խալիլն էառ զյաղուփ բէի որդին զբայն սանդուրն և  
թգ րցոյց, և բզ մք ի թգ րկն ցեղիցն սպանէց, նուէմ բ"ր ամսոյ  
ի վերջքն. մեծամեծ պարընէքն յամէն յաղաց ն, խալիլ բէկին, նա՛  
գարունքն գնաց ի յե... ֆոռակ շահ ալին վ ր սպանէց գնա, և  
զուղուուր մահմատի որդին,  
զ ա, թվին անդի դը ձւ ի վանայ ն սուլէյման բէկին վ ր,  
սուլէյմանն սպանէց զն ա, օգոստոս ամսոյ ի մուտն էառ զբայն  
սաղուրն և դը ձւ ի թօրէզ ըուըստամ իմիրգէն բերդումս բանդի  
էը. զբ թվին, իբրահիմ իմիրգէն, բ զմ զօրօք էրեկ, մայ"ս ամսոյ ի,  
ժ է, զըստամ իմիրգէն հանեց և գնաց սուլէյման բէկին վ ր,  
սլէյմանն փախ"ւ ի քուրդստան, և սպանաւ ի ձեռն դանայ խ"լի  
որդոյն նուրալի բէկին. հուսէին ալի բէկն էառ զբայն սաղուր ի-  
միրգէն, գն"ց ի շրվան, ձմեռն եկաց ի տեղն, գարունքն ելաւ ի  
շրվանա, և էրեկ ի բազարչայն. սախտալի բէկն գնաց կովեց"ւ,

յաղթէց ուղբայն, սաղուրն բռնէց, ո՞դ՞ճ, զ՞գ, թվ " տարաւ ի թարվէզ խեղդեցին.

ո դճ, զէ, թվին ուղուրլու մահմատին որդին, սօլթան ահմատն, ստըմբօլ էր դուս էրեկ, ըռստամն գնաց դէմ, կուիլ չկարաց, եթող փախե"ւ ախլցխայ, անդից էրեկ ի դաճարին հեծէլն ժղ վէց սօլթան ահմատն էրեկ ի թարվէզ, ըռստամն էրեկ ի վր ջուղու դաշտումն կովեցան, ըռստամն յաղթվեցաւ, սպանաւ բ զմ զօրօք, ահմատն գնաց ի թարվէզ սկսաւ մեծ պարնէքն բռնիլ, իպայ սօլթանն փախեաւ, դիմաց էր աղատունն, ահմատն հետևն գնաց, ի պէն յետ դր ձւ ահմատն ըսպ"նէց ձմեռն, զուռուստամի որդին զալւանդի միրգէն երեր ի թարվէզ թ գր եղիր, գարունն որ ելաւ, ոդ ճող թվին յաղուալ բէկին որդին մուրաստ խանն շամախի էր հեծել ար ը էրեկ ալւանդին վր. նախչւանայ գետումն կուեցան, ալւանդին զմուրաստ խանն բռնեց իդիր բերդում, զպայանդուր, լաթիւ բէկն իւր որդովն իդիր ի մեր բերդում. մին տարին անցաւ աւդուլ բաղրն էրեկ բերդիս հէսար, բերդի մը դն զլաթիւ բէկն հանէց զնդանէ վէրեկին, զաւդուլ բաղրն բռնեցին դրին բերդումն, լաթիւ բէկն գն "ց զիպայ սօլթանն սպանէց, էրաղատանն, զալւանդին էառ ու իրեր ի թախթն.

ո դճ զթ, ջահանշափ միրգին տղէն գանջայ իրեաց, հեծէլ ժ զվէց, ո շ թվին նա ի գանջոյ իրեկ, ալւանդին թարվիզոյ, զօչ դաշտումն ճակատ"ցան ջահանշին տղէն եթող փախե"ւ:

ո չ թվին սովին շամախի ի առ, զշրվանչէն սպանէց, աշունքն երեկ շարուր զալւանդն փախուց զհեծելն կոտոր"ց, ձմեռն գնաց ի թարվէզ, գարունքն գնաց ալւանդին վր, ալւանդին խոյս իրեդ իրեկ թարվէզ, շահն էլ յետ դ րձ ւ ի թարւէզ, ալւանդին էլ յետ փախ"ւ ի դիարբէկ մէռաւ:

թվին ո ե ճ, հ ե, շահ թահմազն զհուր ելաւ, շահ իսմայիլն դահ դահ բերդումն բանդի էր, դուս էրեկ ելաւ ի թաղթն, մէկ տարի թգր ուի ար ը, զհուր իշուղաբանտայ փաթշահն ելաւ ի թ"ղթն, գ, տարի սով ընկաւ, գ, տարէն յետն մահ երեկ, մահէն յետն էլ սով եկաւ, ապրիլ, ը, կարմիր կ րկին ցուրտ ար ը, այգին ծառն տունկն զամէն տարաւ. ~

թվին, ո ե ճ, ձ ե, ամիր համզէն թախտ ելաւ, գ, տարի փաթշահութիւն արէց:

թվին ո ո, ի է, մաթէոս եալ սն միրանշեցի վաղջանեցաւ, յուլիս, ժ գ:

թվին ո՞ո ի՞թ, և օգոստոս ամսի ը՞տ ր օգոստինոս ազգէն բաջեցի պուտաղի որդի ընտրել արքեալ ս նախչուանա երկրին, գնաց մեծն ի հ ոմ օրհնց ւ ուրբանոս հայրապետէ, ը , եր"դ, դ ըճւ ի վիճակս նախչւանայ:

թվին ո՞ո ա, ապրիլ ամսի, ա , մտաւ յե՞ս, ապրիլ ամսի թ՝, ցուրտ ար"ւ, ծ"ոռումանի ցուրտ տար"ւ, ոչինչ եմիշ չմնաց:

թվին ո՞ո ա, ես տ ր յակոր յ ի, որդի եար ազիզի, ազգ"ւ դարբնեցի, ի գեղէն կէծկո՛, ա ռքցայ ի հնդկաց ~ ն, վ ս ողորմուե շրջեցա՛ ի ք դքն գլխաւոր, գուա մանիլա՛. չին քօչի, դ"րձայ ա յ ողորմու բն ի գւ ոս երրնջակ, բ զմ ապրանք, բ ճ թ մն, շուռոջառ, վաճի թէ փողէ բերի, էր թիվն, ո ո լզ, դեկտ"մբ", ի ե մտա տ ւն:

Այս ամի խոնդքարն էրեկ երևան, էառ, մուլթուզայ փաշէն եթող բերդումն ինքն գնաց թարվէզ, անդի դ ըճ ւ իւր ~ ն :

Այս ամի լէհաց թգ ըն դէսպան առ քց մօտ շահ սաֆին. շահ սաֆին պարոն տ ր օգոստինոս արքե պսն առքց լեհաց ~ ն մօտ թգ ըն, ըստանիսլաւ, զիս, յակորս յ ի ընթրեց, վերայինամօղ կ րգիս միաբանողաց ու աջորդ ժ զրդենն:

Այս ամի մուլթուզայ փաշէն գերացուց գ"ւոս, գ ճ ի գերի ապարաներո գնաց և ... ամ սպանածն տարածն, օլքէս դուս ելաւ, ո եճ ջան

դ ըճլ այս ամի շահ սաֆին էրեկ գնաց ըերդին վ ր, գ, ամիս նստաւ, մարտի ժ ե օրն երիշ ելաւ բերդին վ ր, սիր հաճին առին մարտի, ի բ, բերդն առին, մուլթուզա փաշէն մեռ"ւ, շխիջան փաշէն, իբրահիմ փաշէն, մէկմուն փ"շ և այլ բ զմ փաշունէք, և զէիմնի բռնէց, ողորկէց դահ դահ դահէն, մուրատ բէկն, թահմազ զուլի խանն, որ բերդն տւէլին, դօնմիշ ելան հետ խոնթքարին գնացին, շահն երբ յետ դր ձւ, օլքէս գնաց գանկատ մախսուտ սուլթանէն, մինչեւ արտաւէլ այն տեղն սուլթանու ին կտրեցին, սուլթանու ի տվին իւր տէին իմամ զուլի բէկին,

տ ր Պօղոս,  
(կարմիր թանաքով)

թվին ո՞ո է, մարտ ամսոյ առ ջի օրն, սկիզբն արինք վանաց սրբատան, յետքի դարն կտր"ցինք ընձան շինեցինք բզմ աշխատ"ցանք ի վ ր հէսարին և ընձանին: նախ ես տ ր յկ բս յ ի

վրխնամող կրգիս, ես տը մաթէոս, ես տը ջվանս շահբունեցի, ես տը մաթոսս աւագ սարկւ գ, ես տը մաթէոս կիսասարկ աւագ, ես տը գրիգորս, ես տը թումէս, ես Փ. Կօնֆէրս խ"չատուրս, և վանքի միաբանս. բ զմ աշխատ ցաք ձեռօք մօրօք, ով ոք տեսնու կմ կր դայ մի հայր մեղայիւ զմեզ յիշէ. և ինքն յիշել լիցի իք սէ, սափարն որ բազ(?) վան էր մոյն, նա եղ խ"ռատն, տը յակոբ էր. և ամիրն:

## Բ

## ՀԱՅՐ ՄԱՏԹԷՈՍ ՑՈՎԱՆԻՍԵՑՈՒ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Երբ Հայր Պօղոս Պիրօմալ Նախիջևանի գաւառում մեծ խոռվութիւնների տեղիք տալուց յետոյ 1664 թուին հարկադրում է իւր պաշտօնը թողնել, եկեղեցական և աշխարհական ժողովը առաջադրում է նրա փոխարէն Հայր Մատթէոս Յովանիսեցու (Avanicensis) թեկնածութիւնը։ Հաստատութեան գործը գլուխ բերելու ու արքեպիսկոպոսական աստիճան ստանալու համար Հայր Մատթէոս պէտք է մեկնէր Հոռոմ։ Հայոց համայնքների ի վերուստ յաճախակի արհամարուած ընտրական իրաւունքները վերականգնելու և պաշտպանելու նպատակով, Վատիկանի գիւանատնից Հայր Մատթէոս 1666 թուի ապրիլին հանել է տալիս Պօղոս Գ պապի հայերին «յաղագս արհեպիսկոպոսաց Հայոց» ուղղած այն կոնդակը, որի օրինակը պահուած է ձեռագրի մէջ։ Սոյն կոնդակի վրայ հիմնուած, սրբազան ժողովը կայացած ընտրութիւնը համարում է վաւերական և 1668 թուի մայիսի 14-ին Հայր Մատթէոս Նախիջևանի գաւառի արքեպիսկոպոսութեան պաշտօնն ու կոչումն է ստանում<sup>1</sup>։ Նախ քան իւր վերադարձը Հայր Մատթէոս կաթոլիկ աշխարհի քաղաքական շրջաններում ևս սկսում է միջնորդութիւններ յարուցանել ի նպաստ հայ կաթոլիկ համայնքների. նրա այդ միջնորդութիւնների նպատակն էր՝ եւրոպական ազդեցութեան միջոցով թեթևացնել հարկերի ու պարտքերի այն ծանրութիւնը, որի տակ հիւծուում էին կաթոլիկ հայերը և վերականգնել այն մի քանի վաղեմի արտօնութիւնները, որ վայելում էին նրանք պարսից պետութեան սահմաններում։

<sup>1</sup> Ձ. Պատկանեան, ibid, էջ 24-25; Ղ. Ալիշան, ibid, էջ 398:

«Ոչ միայն հաւատացեալների դաշտերն ու խաղողի այգիները, այլ և վանքերի ու եկեղեցիների սրբազան անօթներն էին գրաւ դրւում հերձուածողների կամ անհաւատների մօտ: Նոյնիսկ կրօնաւոր հայրերն էին հարկադրուած լինում ուրիշ բանուորների հետ հաւասար վարձով (*pro pari mercede cum aliis operariis*) աշխատել դաշտերում ու այգիներում, որպէս զի ստիպուած չը լինեն նաև իրանց եկեղեցական պաշտօնը թողնել, կամ՝ կեանքը կորցնել»<sup>1</sup>: Այսպէս է նկարագրում իրերի դրութիւնը ժամանակի հայ միսիոնարներից մէկը՝ Հայր Պետրոս Բեղիկ: Նախիջևանի գաւառահայրերը, ինչպէս արդէն Հայր Յակոբ Յիսուսի օրինակից գիտենք, աշխատում էին բարուքել եկեղեցու և նրա սպասաւորների այս վիճակը նաև ժողովարարութիւնների միջոցով. կաթոլիկ Եւրոպայում և նրա գաղութներում այդ ուղղութեամբ նրանք ունենում էին երբեմն յաջողութիւնը<sup>2</sup>: Սակայն չարիքի դէմ կոռւելու համար կաթոլիկ հայրերը դիմում էին նաև աւելի արմատական միջոցների: Յարգելով Հռոմի միջնորդութիւնը, արդէն իսկ ժամանակ չահամայէլ Ա Նախիջևանի կաթոլիկ գիւղերին մի շարք արտօնութիւններ է տալիս. այդ գիւղերը նոյնիսկ տարեկան տուրքից (*contributio annua*) են ազատ յայտարարուում: Բայց յաջորդ շահի օրօք կառավարութեան դէպի կաթոլիկ համայնքները ունեցած բարեհաճ տրամադրութիւնը փոխւում է հիմնովին. պետական հարկերի իրաւունքը (*jus regium tributorum*) նորից է տարածում Նախիջևանի գաւառի վրայ և նոյնիսկ յետադրձ ոյժ ստանում՝ կարգադրուում է ժողովել նաև այն հարկերը, որոնցից Նախիջևանի համայնքները ազատ էին կացուցանել նախորդ շահի տուած արտօնութեան համաձայն<sup>3</sup>: Կեանքի և գոյքի ապահովութիւնից զրկուած, պարտքերի ու հարկերի ճնշումից նեղուած, հաւատափոխութիւնը շատերի համար փրկութեան միակ խարիսխն էր թւում այս տխուր օրերին. իսլամի հետեղները ազատուում էին գլխահարկի ծանրութիւնից ու իմամ Զափարի անունով յայտնի ծառանդական իրաւունքով նախատեսնուած արտօնութիւնը վայելում:

Սակայն քրիստոնեաների մահմետականացումը երբէք էլ ձեռնտու չի եղել իսլամի խելահաս քաղաքագէտներին: Շահ Աբ-

<sup>1</sup> P. Petrus Bedik, Cehil Sutun, p. 378.

<sup>2</sup> Ibid, p. 365.

<sup>3</sup> Ibid, p. 366.

բաս Ա. Հրաման է արձակում ի նպաստ Նախիջևանի համայնքների, որով նա կարգադրում է «վերստին եկեղեցու գիրկը հրաւիրել նրանց, որոնք յետ կը կանգնեն կաթոլիկութիւնից» (qui abjuret la foy catholique): Իսկ եթէ նրանք կը կամենան յամառել իրանց սխալանքի վրայ՝ զրկել նրանց այն արտօնութիւնից, որ ունին նրանք առաջ (եթք նրանք կրօնափոխ էին եղել)՝ խլելու և իւրացնելու այն բոլոր կայքը, որ կը գտնէին նրանց ընտանիքում<sup>1</sup>: Այս շահի օրօք կաթոլիկ համայնքների վիճակը սկսում է կրկին բարելաւուել: 1604-1605 թուականի մեծ գաղթի ժամանակ կաթոլիկ հայերը, շահի հրամանով, տեղահան չեն արւում<sup>2</sup>, իսկ, Հայր Անտոնինուս Թանիի վարած բանակցութեան հետևանքով, յետագայում կաթոլիկ համայնքները «խաս» են արւում, այսինքն՝ համարւում «ենթակայ յատկապէս և անմիջապէս շահին, ազատ իւրաքանչիւր այլ մասնաւոր իշխանի իրաւասութիւնից»<sup>3</sup>: Շահը «արգելում է արտակարգ տուրքեր (tributs extraordinaires) վերցնել կաթոլիկներից, պատուիրելով հարկահաններին բաւականանալ միմիայն նրանով, ինչ վերոյիշեալ կաթոլիկները սովոր էին վճարել մինչ այդ, առանց որ և է յաւելման, ինչ պատրուակով էլ չը կատարուի այդ»<sup>4</sup>. և միայն այն դէպքում, եթք համայնքները թերանում են իրանց տուրքերը ժամանակին արքունիք հասցնել, կարգադրում է «մալուջահաթն» կրկնակի վերցնել. (Ճեռագիր, էջ 54, v.):

Ծնորհիւ հայ կաթոլիկ գիւղերի գլուխն անցած հայրերի ապիկարութեան և համայնքների մէջ առաջացող ներքին տարածայնութիւնների, Նախիջևանի հայերը չկարողացան սակայն օգտագործել իրանց այդ արտօնութիւնները<sup>5</sup>: Ծնտեսական այն ընդհանուր տագնապի շրջանում, որով պէտք է անցնէր Պարսկահայստանը շահ Աբբաս Ա-ից յետոյ, ծանր պարտերի մէջ խրուած հայ կաթոլիկ համայնքները ևս շարունակում էին ենթարկուած լինել զրկանքների ու հարստահարութեան: Ուստի և, կամենալով վերստին ապահովել իրանց հին արտօնութիւնների գործադրութիւնը, նրանք պատուիրում են Հայր Մատթէոս Յովանիսեցուն

<sup>1</sup> P. Raphael du Mans, Estat de la Perse en 1660, publié par Ch. Schefer, Paris, 1890, pp. 322-323. Վերոյիշեալ իրամանը մեր աղբիրի մէջ թիրիմացարար վերագրում է շահ Աբբաս Բ-ին:

<sup>2</sup> Զ. Պատկանեան, ibid, էջ 7. P. Fr. Antoine de Gouea, Relation des grandes guerres et victoires obtenues par le roi de Perse Cha-Abbas, etc. Rouen, 1646, p. 374.

<sup>3</sup> «Cehil Sutun», p. 385, հմն. մեր ձեռագրի p. 54 v.

<sup>4</sup> P. Raphael du Mans, ibid.

<sup>5</sup> «Cehil Sutun», p. 385.

Եւրոպայի կաթոլիկ պետերից այդ իմաստով յանձնարարականներ ձեռք բերել Պարսկաստանի նոր գահակալ շահ Սուլէյմանի անունով։ Այդ նպատակով, դեռ ևս իւր հաստատութիւնից առաջ, 1667 թուին, դիմում է Հայր Մատթէոս Փարիզ և ստանում Լիւդովիկոս ԺԴ-ից 23-ն յունիսի թուակիր մի նամակ ուղղած շահին։ Շնորհակալութիւն յայտնելով Նախիջևանի գաւառում ապրող կաթոլիկներին կառավարութեան ցոյց տուած հովանաւորութեան համար, Լիւդովիկոսը յոյս է յայտնում, որ նոր շահը ևս իւր «Հօր» օրինակին (նամակի մէջ պատմական անունների և փաստերի շփոթութիւն կայ) կը հետևի, որը իրանից կամ իր տան անդամներից բացի, ոչ ոքի չէր կամենում նոյն իսկ վստահանալ Նախիջևանի գաւառի կառավարութիւնը<sup>1</sup>։

Ինչպես տեղեկանում ենք թէ մեր ձեռագրից (Էջ 53 ր., Էջ 54 ր.) և թէ այլ աղբիւրներից<sup>2</sup>, Հայր Մատթէոս պարսից շահի անունով իր հետ յանձնարարականներ է վերցնում նաև Կլեմենս թղապալից, Ֆլորենցիայի մեծ դքսից և Վենետիկի հասարակապետութիւնից<sup>3</sup>։ Այսպիսով դեսպանի ու պապական նուիրակի շնորհք ստանալով, Հայր Մատթէոս 1669 թուին վերադառնում է Նախիջևանի գաւառը, իսկ այստեղից, նոյն տարին անցնում է Սպահան՝ իր վրայ դրած յանձնարարութիւնները կատարելու։

Ձեռագրի մէջ Հայր Մատթէոս տալիս է իւր այդ առաքելութեան բաւականին մանրամասն նկարագիրը։ Սպահանում, ինչպէս երեսում է թէ այդտեղից և թէ կողմանակի աղբիւրներից, Հայր Մատթէոս լաւ ընդունելութիւն է գտնում։ յարգելով եւրոպական հովանաւորների միջնորդութիւնը, շահ Սուլէյմանը վերականգնում է կաթոլիկ հայերի արտօնութիւնները և խոստանում է թեթևացնել նրանց հարկերը<sup>4</sup>։ Եւ իրօք այս դեսպանութեան հետևանք է համարում Հայր Բեղիկ այն, որ «մի քանի տարուց ի վեր»,՝ հեղինակը գրում է 1678 թուականին,՝ Նախիջևանի գաւառը կրկին է «խաս» արուել, «որի շնորհիւ այս գաւառի հպատակները արտօնութիւն են վայելում» իրենցից ունենալու երկրի կա-

<sup>1</sup> P. Raphael dn Mans, ibid.

<sup>2</sup> Ջանլուկա Ալեքսանդր, ibid, էջ 25. «Cehil sutun», p. 439 և շար.։

<sup>3</sup> Այս յանձնարարականների բովանդակորինը մեզ ծանօթ չէ։ Գիտենք միայն, որ հասարակապետութեան ուղարկած գորոթեան մէջ առաջարկ է եղել դաշնակցելու ընդհանուր քշնամնու՝ Թիւրքեայի դեմ, «Cehil sutun» ibid, նոյնպիս առաջարկ արուած է եղել ըստ երևոյթին և Կլեմենս թ-ի նամակի մեջ, հմմտ. Դ. Ալիշան, ibid, էջ 399։

<sup>4</sup> Դ. Ալիշան, ibid.

*ռավարիչներ» (ut ex suis habeant Principales in dominino directores). Համայնքներն են «իրարու մէջ բաժանում և հաւաքում տարեկան հարկերն ու թագաւորական տուրքերը» (ipsique inter se tributa et jura Regis annua exigant atque congregent) ու յանձնում կենդրոնական գանձարանին դրա համար նշանակուած օրը. ուշացնելու դէպքում հարկադրում են «դինարին մի դինար տուգանք վճարել» (incurrant paenam Dinare du dinar)<sup>1</sup>:*

Իւր ձեռագիր յիշատակարանի երկրորդ մասում Հայր Մատթէոս հաղորդում է մեզ այն բոլոր հոգեոր հայրերի անունները, որոնք իր առաջնորդութեան ժամանակ սպասաւորում էին Նախիջեան գաւառի վանքերում ու եկեղեցիներում: Եթէ նրա այս տեղեկութիւններին կցելու լինենք այն բոլոր տուեալները, որ գտնում ենք ժամանակակից Հայր Պետրոս Բեղիկի աշխատութեան մէջ հայ կաթոլիկ եկեղեցական համայնքների նկատմամբ<sup>2</sup>, կարող կը լինենք բաւականին ստոյդ գաղափար կազմել 1670-ական թուականների Նախիջևան գաւառի մասին:

«Մեք նուաստա տ ն մաթէոս արհի եպսկ պս, ընտ ըլ ի վիճակս եպիսկոպոսաց ի ք հյից և ժ զվրդոց, ընկալաք շնորհք ե պսուե ի մեծն հ ոմ, ի ս բ եկ դցոյն սանդա մարիամ մայջօր, ի ձեռնէ բարձրագոյն տ ն կարդինալիս պիլօնայ և արհի եպ սէն ջէնուայ ք դքէն և սրբազան հ"յրապ"տին կլէմէնթոսի, թ , եր"դի, պուաք շնորհք դէսպանուե, զն դրձ, գ , կոնդակսով (sic!), հետ բ զւմ աղերսիւ նաև հրովարտաք ֆրանցիոյ թ գրին ի լվզի. նա և ոէպուալիկայ գրանդուկին, և յուղի անկե"լ եկաք հասաք ի վիճակս մեր նախիջևան, թ վ ո ոկ թ լսի, ժ , մնացաք տեղս գե ամիս և աստ ի չուել հասաք ի ք դքն թ"րվէզ, և տեսաք զմանսուր խանի որդի թահմազ խանն, և ցոյց տուաք զաղերսս և զհրովարտաքս թագաւորացն քրս"տոնէից, և ետ մեզ խանն ը մէջմանդար, աւրուս խ հասաք իսպրհան, և եկն իսպրհան դէսպան առ քլ ի կազմիր թ գրէն լէհացոց, որ անունն կոչի բուղդան բէկ, և ետուն բնակուի մէջ ք դքին իսպրհան, և եկն մէջմանդ"ր պաշի, որ անունն կոչի ուսուփ բէկ, և ետուն բնակուի սարահ մի, ի մէջ Զուղայոյ ք դքին, որ կոչի սարահ խօճայ սիլէյմանին, և տային մեզ օրբստօրէ ուօծիկ թ գրէն շ"հ սիլէյմանի որդի շահ ապազեն, (sic! փոխանակ «շ"հ ապազի որդի շահ սիւլէյմանէն») օրն դ , մառչիլ, մնացաք մինչև դ ամիս վ ս իւր նց տօնին, ուա-

<sup>1</sup> «Cehil Sutun», p. 432

<sup>2</sup> Անդ, էջ 380 և շար.:

մազանին, և սոյն պլուրն ռամազանին հրաւիրեցին մեզ առ թ գրն և մտաք առ թ զըն հետ դէսպան բուղդան բէկին, թ գրին լէհացոց, որ էր թիւն ո ո հ. փ տրվ՛րի, ժ բ և մեծ՛ւ պատուով ընկալաւ զմեզ թ գրին, և տուաք զնա մենին և զախերսն, որ առաք ել էր սրբ զն փափէն, և տեսաք անհամար զրդ բք, ոսկէ քաշրէ ականէ և պատուկ նէ որոյ էր անթիւ և անասելի, և յետ ա ամսին մարտի ժ ա որ էր ա լրն իւր նց նաւուղղին, հրաւի՛րցին խրախու ին, սոյն օրս եղե մաժլիս և խրախու ի ի այլաղափումն, տեսաք զմաժլիշն և զմեծու ին, որ աւելի էր քան զառջինն տասնապատիկ, և մնացաք մինչև չոր՛դ սահաթն, հետ թ գրին. և յետ սորա, է, եր՛դ օրն հրաւիրե ց, զիս թ գրին մեծ վազիրն, որէ շխալի խանն: և ա մ զոր ինչ հրամայ լէր մի ըստ միոջէ ծանուցաք և արդ տուաք թ գրին վ ս ֆուանկի գեղորէից, նախ գիւղաք դքին աբարաներոյ, երկ՛դ գիւղն ճահկայ, եր՛դ գիւղն շահ բունոյ, չոր՛դ գիւղն աբբակունոյ, ե, եր՛դ խօշկաշինոյ, զ, եր՛դ գիւղն սալի թաղոյ, է, եր՛դ գիւղն քռնայ, ը, եր՛դ գիւղն դարաղուշ, որ պատրի անդոնիս թանի վրդ պտ, ֆուէրէնթինոյ. յառաջմէ խաս էր արարեր: խազնին, շահապազ թ գրն ժ մկովն, խնդրուածով ֆրանցիոյ թ գրին և ինքերաթօր կայսերին, ուաղամ որ տուեր էր վ ս գեղորէից, թէ ը ստ ժ մկին բերենք ոչ մալուջահաթն կրկնապատիկ լիցի, յետ սորա լաւ կառաւարում չեն գիտացեր որ խասա՛ դաւթարումն զաւթ չեն արեր, բարաթ էին արարեր գեղորէից վերայ ո գճկ ե, թուման, վ ս այս ծանրու ես արդ տուաք թ գրին, թէ ժ զրդն կուցրուէ, կ"րող չեն վճարել, և թ գրն անցաւ այս դրամիցս, բաշխէց վ ս պատուոյ փափին կլէմէնդոս, թ, եր՛դի: երկ՛դ արդ տուաք թգրին, վ ս եկ զցե "ց. և ուաղամ ետուր մեզ թէ ուր կամիցեն շինել եկ զցիս ոչ ոք մեծամեծ կարող չեն խօսել, ըստ կամաց թ գրին ք"րստոնէից, նա և ուաղամ ետ գեղորէից, ոչ ոք իշխանք կարենան ո՛չ համարձակ ձեռն արկել ի վ ր գեղորէից, բայց միայն ինքն թ գրն ...ցէ դատաստան և այլ իրաւունս, թ վ փրկչին ո ո հ մ"րտի, ժ ա, ապր"լի, ի, խալաթ եկաւ մեզ, ի թ գրէն ... ցաք խալաթն գնացաք մօտ թագ ւրին, իւ ընց զուրբան բայրամին, մեծ ուրախու ի արարին, և յանձնեցին մեզ նամէքն պատասխան թագաւորացն, զ, նամայ, և լ թուման ինամ մեզի, և լ է, թ մն մեր խարճն, և պատուէր ետ թ գրն, բ, հաւատարիմ ք հյ ի կարգէն ս բ դօմինիկոսի, զի տարցեն զնամէքն առ թ գրն քր"ստոնէից, և ուաղամ ա"րը

ի վր շամախի խանին, որ սոք առ քսցէ ի վր մա(ս)կովայ, որք են անուանք կրգ ւրացն, մերոց, տը ազարէն ի գիւղէն ճահկայ, և տը անդոն ի գիւղէն աբրակունոյ, և ֆր գրիգոր ի գիւղէն շահըունոց, թվուո չ յուն"սի, ի դ, դուրս եղանք ըսպհանայ, որ էր ը մեզ, ք, ք հյ, տը բէնէթ աբարանէրոյ և տը անտոն աբրակունաց, թվուո հ, յ վլ"սի, ի դ, մտաք ի վիճակս մեր նախիջեան, և աթուանիստ գիւղաք դքն աբարանէր. թվ, ու ո հ, օգոստոսի, ժ, տը ազարէն և տը անդոնն զն պրհ եղաք, դէպ շամամախի:

Թվ ու ո կթ, երբ հասաք ի վիճակս մեր, ի թիւ արկաք կ րգւրք սր դօմինիկոսի, նիս ի վանս աբարաներոյ, տը պ"տրոս պրեգիկաթօր ջէնարալ, տը բ"թողիմէոս որդի ահլիմանի, տը բէնէթ, բէկի որդի որ այժմ սինդիք, տը միքայէլ լէքթօլ որդի աւանիսի, որ է վարժել ա ծաբ"նու ե, ի ք դքն նապօլի, տը բարդօղիմէոս լէքթօր, ջանի որդի, որ է վարժել ա ծաբանու ե, ի քաղաք(ք)ն նապօլի, տը զուկաս լէքթօր, էվատի որդի, որ է վարժել ա ծաբանու ե, ի ք դքն նաբօլի, և այժմ է ի ք դքն հ ոմ, մինսինարիօ հայոց, տը թումայ դադումեցի, վարժել ի ք դքն բէնէվէնդ, որ այժմ է իսպանիայ երկիրն, տը աւգուստին բանեցի, նորընձայ. ի թոռն ագուստնոս արք եպիսկոպոսին, տը պ"ղոս որդի սաւարչի, որ այժմ է ի վարժարան ա ծաբ"նու ե, ի ք դքն ֆուէրէնցայ, յերկիրն գրանադուկին, որ է եղբօր որդի մաթէոս արք ե պսին, կօնֆէրքն, ֆր խաչատուր որդի միսիթարին, ֆր գրիգոր որդի ամիրջանի, նորամուտքն որ են ի վանս աբարաներոյ, ֆր յակոբ սալթաղցի, ֆր գրիգոր աբրագունեցի, ֆր ովանես աբարան"րոյ, ֆր մաթոս աբարաներոյ:

Ի վանս քոնայ, ֆր դօմինիկոս, ոօզաքի, պրէդիկաթօր ջէնարալ ի գիւղէն խօշկաշինոյ, որ այժմ է վիք"ր կ րգի գաւառիս, ֆր դօմինկ ս:

Ի վանս խօշկաշինոյ, նիս տը թումայ լէքթօր, վարժեալ ի համալսարն (sic!) ա ծաբ"նու ե, ի ք դքն նապօլի, որ այժմ է միւսինար առքլին առ քլ ի ալիկօրնայ ի քղ քէն խօշկաշինոյ:

Ֆր դօմինիկոս պրէդիկաթօր ջէնարալ ի գ ւղն գանձակոյ, ֆր պօղոս խօշկաշինոյ կօնթէրսքն. ֆր գրիգոր խօշկաշինոյ, ֆր անդրէս խօշկ շնյ:

Ի վանս աբրակունաց, նախ ֆր միքայէլ պրէդիկաթօր ջէնարալ, աբրկ լնց, ֆր անդոն աբրկ նց որ այժմէ ի պարսից թ գրն դեսպան ա ոքլ առ թագ ւրէրն քր"ստոնէից, նորընձայ, ֆր թա-

թէսս ապրկ նց, նորընձայ, ֆ ր, պ"տրոս ապրկ նց որ այժմ է ի յուսումն ֆօռլքնցայ:

Ի վանս ճահուկ, ն իս ֆ ր ազարիայ ճահկոյ, պրէդիկաթօր ջէ-նարալ, որ այժմ է դեսպան առաքե լ պարսից թ գրէն ի միասին, հետ ֆ ր անդոնին աբրկ նց առ թգ րն քր ստոնէից, ֆ ր պողոս ճահկոյ, յազգէն զումրենց, ֆ ր թումայ ճահկոյ նորընձայ, ֆ ր աթանազիոս ճ հ նորընձայ ի վանս բու(նայ) ֆ ր ըստէֆան սպա-սա(ւոր) վանից շահբունայ նորընձայ, ֆ ր մանուել շ հը ւնցի նո-րընձայ, ֆ ր գրիգոր ք հնյ որ այժմ է գնաց լ հետ ֆ ր ազարին ճահկոյ առ ի վարժել ա ծաբանու ի:

Ի վանս ղարաղուշոյ, ֆ ր յակոր անդրիասի որդի ղարաղու-չոյ, ֆ ր ղուկաս նովիցի ղարաղուչոյ:

Ի վանս կէծկոյ, ն իս ֆ ր գրիգոր ա ծաբ նու ե, վր դպտ վար-ժեալ ի համալսարան (*sic!*) ս բ թօմի ի մեծն հ ոմյ, որ այժմ է մեծն ի հ ոմ, ֆ ր բաղդասար նոյն գեղջէն կէծկոյ, նորընձայ, որ այժմէ ի միասին գրիգոր վր դտին, ֆ ր անդ րս նոյն գեղջէն:

Արդ անուանք վրդ պտց ք հից և կ րգւորաց, թ վ մրդ զու ե տ ն, ո ո հ գ, յ ւնվրի ժ դ ի ժ մկս ծայրագոյն և սրբ զն հայր պտի տ ն կլէմէնդոս, ժ , ե "րդի, և ի ընդհանրկն ջէնարալ կ"րդին ս բ դօմինկ սի, տ ն թօմաս րեկօբեռթի, և վիճակիս ն խի-ջեանոյ, արհիե պս տ ն մաթէսս յովանիս"ցի, ի գիւղաք դքէն աք"րնէրոյ, այսուհետեւ պատուիրեմ ա մ կր գւցց, որ գան ի կրգի ս բ դօմինկ սի, շարդ րացեն ի պ"տմագրումս ե կլքն առ ք ս, այս-քան բաւեսցի»:

## ՅԱԿՈԲ Դ ԶՈՒՂԱՅԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԵՒ ՏԱԾԿԱՀԱՅ ՆՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

1662 թուին Լեհաստանի հայերին ուղղած մի կոնդակի մէջ Յակոբ Զուղայեցին [1655-1680], ժամանակի կաթողիկոսը, գրում է. «Եւ մանաւանդ քան զնուիրակութիւնն կրկնակի օգնութիւն իմն կու խնդրեմ ի ձէնջ. քանզի յոյժ բազմացեալ է պարտքն ի վերայ սուրբ տանս, այս քան՝ զի պարանոցաթաղ կեամք ի մէջ պարտուցն ... Եւ դարձեալ կրկին թախանձանօք խնդրեմ ... զի փութանակի գործառնութիւն դորին, խօսքը նուիրակի մասին է, - օգնական և թելադիր լինիջիք, զի մի՛ յետասցի, և տոկոսն ի վերայ պարտուցն բարդեսցի, զի կամքն մեր այս էր, զի բոլոր տունս Յունաց ի դա էաք յանձնեալ, հանդերձ երեք վարդապետօք, զի նուիրակեսցեն. այլ վասն պարտուցն որ կարի նեղացուցին զմեզ, երկու երեք նուիրակ այլ առաքեցաք յամենայն կողմանս, զի մինչև Յայտնութիւն աւարտեսցեն... Այլ և խնդրեմ զի ամենայն ինչ լիապէս հոգասջիք, թէ Հոգեբաժին, թէ Քառասնից, թէ յիշատակ, լիապէս ընդ իւրաքանչիւր պարտիք հատուցանել. զի սրտին սէրն ի ձեռացն տուրքն կու երեկի»<sup>1</sup>: Այս տողերը բաւականաչափ բնորոշում են այն դերը, որ պէտք է կատարէր նուիրակութիւնը Ժէ դարի Էջմիածնական ֆինանսների կանոնաւոր շրջանառութեան համար: «Ի բնէ է ամենայն ազգ Հայոց՝ ուր և իցէ, - պարսից շահին ուղղած այս խօսքերը ժամանակակիցներից մէկը դնում է նոյն կաթողիկոսի բերանում, - թէ՛ յաշխարհին Օսմանցւոց, թէ ի Ֆուանգաց, թէ Հնդկաց, թէ՛ Մոսկովաց, և ուր և գտանի յազգէն Հայոց, ամենեքեան հնազանդին Էջմիածնի՝ որ է ի ներքոյ տէրութեան քում. և ըստ օրինաց մերոց հարկս տան բնակչաց Էջմիածնին, և նոքա զարքունական հարկն տան»<sup>2</sup>: Նեղուած այն պարտքերից ու հարկերից, որ ծանրանում էին Էջմիածնի վրայ, Յակոբ Զուղայեցին առանձին եռանդ է գործ դնում կարգի բերելու նրա խախուտ տնտեսութիւնը և այդ նպատակով սկսում է լայն չափերով շահագործել այն եկամտային

<sup>1</sup> Ղ. Ալիշան, Կամենից, Վենետիկ, 1896, եր. 258:

<sup>2</sup> Չաքարիա Մարկարագ, Պատմագրութիւն, Վաղարշապատ, 1870, Բ, եր. 81. Այս շրջանի պարսկահայ հարկերի ու հարկահանորթեան եղանակի վրայ կանգ ենք առել մեր «Israel Ory und die armenische Befreiungsdees» (München, 1914), վերնագրով լոյս տեսած ուսումնասիրութեան մէջ (եր. 59 եւ շար.): Հմմտ. նաև մեր յօդուածը «Արարատի» սոյն տարուայ յունուարի համարում, եր. 62 եւ շար.:

աղբիւրները, որ սկիզբ էին առնում յատկապէս տաճկահայ նուիրակութեան իրաւունքից: Ժամանակակից մի վկայութեամբ նրա օրօք նուիրակների իւրաքանչիւր շրջագայութիւնից յետոյ Օսմանեան պետութիւնից Պատրկաստան էր մտնում աւելի քան 10.000 դահեկան<sup>1</sup>: Եկեղեցական այս հասոյթները առևտրական հիմունքներով էին ստացւում. Հաւատացեալների «նուիրաքերութիւնը» հատուցում է գտնում նուիրակների վայելած մեռոնաբաշխութեան իրաւունքի մէջ<sup>2</sup>: Օգտուելով այդ մենաշնորհից ու պատրուակ բերելով էջմիածնի վրայ ծանրացող պարտքերը, նուիրակները բռնի միջոցներով սկսում են խիստ բարձրացնել մեռոնի գինը. Նրանք նոյն իսկ իրաւունք են համարում ձեռնամուխ լինել տաճկահայ վանական ու եկեղեցական կալուածներին ու շարժական հարստութեանը. «ուտեն և ըմպեն և կողոպտեալ զնոսա առաքեն յաշխարհն Պարսից». գանձած գումարների մի խոշոր մասը նուիրակները յաճախ վատնում են անձնական նպատակների համար. ժողովրդի վրայ պարտականութիւն է ընկնում հոգալ նրանց ու նրանց ուղեկիցների ու ձիերի բոլոր պէտքերը. սակայն նրանք երբեմն աւելի շատ էին պահանջում, քան հարկաւոր էր նրանց բնական պէտքերի բաւարարման համար. «անիրաւութեամբ յափշտակեն զգառս և զոչխարս, իւղ և մեղը, և զայլ ամենայն ուտելիս և ըմպելիս». կղերի ու ժողովրդի բողոքները ապարդիւն էին անցնում. շատերին սպասում էր պատիժ ու բանադրանք միայն<sup>3</sup>:

Այսպիսի պարագաներում է, որ տաճկահայոց շրջանում հետզհետէ հասունանում ու արձագանք է գտնում էջմիածնի գերիշխանութիւնը սահմանափակելու կամ նրանից միանգամայն ազատագրուելու միտքը<sup>4</sup>: Իրանց անջատողական ձգտումներն ի-

<sup>1</sup> Տեր-Յովիաննեսեան Աստ. եպ., Ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղէմի, Երուսաղէմ, 1890, Ա, էջ 384:

<sup>2</sup> «Բոնի միուրիւն Հայոց Լեհաստանի ընդ Եկեղեցւոյն Հռովմայ», իրտ. Կ. Եզեանի, Ս. Պետերբուրգ, 1884, եր. 6, 44, 144 եւ շար. 146 եւ շար. «Ծողակար», Ա, եր. 57 եւ 59, յոդ. Մ. Վ. Նշանեանի «Օրագրութիւն Երեմիա Շելսափ Քեօմիրճեանի». յետին Ժամանակների հմք. հմմտ. Սիմեոն Կաքողիկոս, Զամբո, Վաղարշապատ, 1875, եր. 44 եւ շար., 78 եւ շար. 83. «Ղիւան հայոց պատմութեան», Գ, 797 եւ շար. 807 եւ շար. Մ. Պ. Թաղիդեանց, Շանապարհորդութիւն ի Հայս, Կալկարա, 1847, հ. 1, եր. 240 եւ շար.:

<sup>3</sup> Ս. Տեր-Յովիաննեսեան, անհ, Ա, եր. 554 եւ շար., 381 եւ շար., Մ. Զամշեան, Պատմութիւն Հայոց, Գ, Վենետիկ, 1786, էջ 692 եւ շար.:

<sup>4</sup> Առաքել Դարիքծեցի, Պատմութիւն, Գ տպ., Վաղարշապատ, 1896, եր. 242 եւ շար. Զաքարիա Սարկ., Բ եր. 27 եւ շար., 75 եւ շար. «Թուղթ Սիմեոն կար. առ Փիլիպոս ս.

ըագործելու նպատակով՝ [տաճկա]հայերը դիմում էին տաճիկ կառավարութեան աջակցութեանը. կառավարութիւնը պետական շահերի հետևողութեամբ միայն խրախուսել կարող էր այդ շարժումը. նուիրակները, այսպես էին տրամաբանում սրանց խելահաս հակառակորդները, մեծ քանակութեամբ կանխիկ դրամ են հանում երկրից ու այդպիսով արգելք լինում հայերին կանոնաւոր կերպով վճարելու տէրունական խարաջը. Էջմիածնի միջոցով թիւրքիայի հայերը փաստօրէն պարսից հարկատուների պաշտօն են կատարում. օսմանեան դրամով պարսիկները զինում են թիւրքերի դէմ<sup>1</sup>: Կասկածելի թուացող նուիրակներին թիւրքերը խիստ հարցաքննութեան են ենթարկում. սրանք էլ աշխատում էին հաւատացնել, որ իրանք՝ հեռու քաղաքական դիտաւորութիւններից՝ սոսկ առևտրականի պաշտօն ունին. «Ես, ասում է նուիրակներից մէկը, իւղավաճառ եմ, ո՞վ ոք գնէ յինէն իւղ՝ դրամով գնէ, և ո՞վ ոք ոչ գնէ, ոչ տայ դրամ»<sup>2</sup>: Նման սրտաբացութիւնը սակայն միշտ էլ չէր փրկում նուիրակներին. դեռ ևս ԺԶ դարում են յիշւում սրանց դէմ ուղղուած հալածանքի ծանր դէպքեր. «Հայոց նոր վկաներից» վարքագրութիւնը զերծ չէ նմանօրինակ նահատակների կասկածելի սխրագործութիւններից<sup>3</sup>: Ժէ դարի կիսերին հայերը իրանք են բազմիցս դիմում սուլթանին, խնդրելով դուրս քշել նուիրակներին օսմանեան պետութեան սահմաններից. Մեհէմմէտ Դ անսալով այդ դիմումներին՝ հրաման է արձակում ամենուրեք՝ վերջ տալ նուիրակների անկարգութիւններին և արգելել մեռոնի բաշխումը նրանց, որոնք չեն ներկայացնի դրա համար յատուկ կայսերական թուղթ<sup>4</sup>: Բայց այս միջոցն էլ չէ օգնում ըստ երևոյթին. մի քանի տարի յետոյ հայերը խնդրում են կարգադրել՝ «զի ... միայն հաճութեամբ ազգին բերցեն զՄիւռոնն և գնահատեցեն ձեռամբ վաճառապետին, որպէս այլ կարասիք, որքմտանեն ի սահմանէն պարսից, և ըստ այնմ բաժանեսցեն զայն, զի մի լիցի բոնութիւն»<sup>5</sup>:

Եջմ. կաթ.», իրտ. Յուսիկ արքեպ., Վաղարշապատ, 1904, եր. 78 եւ շար. «Ծողակար», Ա, 61, «Չամբո», եր. 93 եւ շար.:

<sup>1</sup> Chardin, Voyages en Perse, et autres lieux de l'Orient, etc. ed. par L. Langlès. Paris, 1811, h. II, եր. 243, Չարքարիա Սարկ., անդ, Բ, 27. Տե՛ր-Յովիաննենեան, անդ, 565, եւ 581 շար.:

<sup>2</sup> Չարքարիա Սարկ., անդ, 28:

<sup>3</sup> Տե՛ս Հ. Մանանդեան եւ Հր. Աճառեան, Հայոց նոր վկաներ, Վաղարշապատ, 1902 (Ժողովրդ. իրտ.), Բ, 17 եւ շար. Դ. Ալիշան, Կամենից, եր. 16:

<sup>4</sup> Ա. Տե՛ր-Յովիաննենեան, անդ, եր. 555:

<sup>5</sup> Անդ, եր. 589:

**Ժողովրդի** ու կառավարութեան այս ընթացքը ճարպկօրէն օգտագործում է յատկապէս Երուսաղէմի պատրիարքը՝ Եղիազար Այնթապցին։ Նշանակալից է, որ նա դեռ ևս 1661 թուին էջմիածին անունով մի եկեղեցի է հիմնում Երուսաղէմում ու այս խորհրդանշանով կարծես իւր հեռաւոր նպատակները դրսեորում։ Կաշառքի և ընծայաբերութիւնների օժանդակութեամբ նա առաջ է մղում հետզհետէ էջմիածնից անջատուելու ծրագիրը ու 1664 թուին յատուկ Հրովարտակով հաստատուում տաճկահայոց անկախ և ընդհանրական կաթողիկոսի նորահնար պաշտօնի մէջ։ Երուսաղէմի վրայ պիտի ծանրանար տարեկան 15.000 ստակ պետական տուրք. դրա փոխարէն Եղիազարը այժմ կարող էր վերապահէլ իրան նաև մեռոն օրհնելու ու ձրիաբար բաշխելու իշխանութիւն։ մեծ եպարքոսը կուսակալների միջոցով արգելում է էջմիածնի նուիրակներին մուտք գործել Տաճկաստան<sup>1</sup>։

Եղիազար Այնթապցու այս ձեռնարկը մեծ հարուած է հասցնում էջմիածնի իրաւասութեանն ու նիւթական բարեկացութեանը. և որովհետև հէնց նուիրակների միջոցով էին ստացում այն կանխիկ դրամները, որ պէտք է անցնէին պարսից պարտատէրերի ու հարկահանների ձեռքը, նուիրականութեան խնդիրը սպառնում էր բարդանալ քաղաքական և դատաստանական ծանր հետևանքներով։ Այս գիտակցութիւնը հարկադրում է էջմիածնի սրբագործուած իրաւունքների պաշտպաններին միջոցներ ձեռնարկել չքացնելու տաճկահայ կաթողիկոսութեան ուրուականը։ Այդ իմաստով էլ թ. Դուան հետ բանակցութիւններ են սկսում նախ Մարտիրոս Կաֆացին և ապա էջմիածնի կաթողիկոսը՝ Յակոբ Դ Զուղայեցին։

Բանակցութիւնները տասն և հինգ տարուայ տեղութիւն են ունենում<sup>2</sup>։ Թիւրքիայի և յատկապէս Կ. Պոլսի հայ հասարակութիւնը պառակտուել էր երկու զօրեղ կուսակցութիւնների. «Կէսքի կողմն էջմիածնի էին, մանաւանդ նոքա՝ որք եկեալ էին ի քաղաք անդր յաշխարհէ Մեծին Հայոց և պարսից, որք և կոչէին ա-

<sup>1</sup> Ա. Տէր-Յովհաննէսեան, անդ, եր. 563 եւ շար. Մ. Չամչեան, անդ, Գ., 697, 699 եւ շար. Զաքարիա Սարկ, անդ, Բ, 72. «Չամբո», եր. 259:

<sup>2</sup> Մ. Չամչեան, անդ, հ. Գ, եր. 697-718: Մ. Չամչեանը իր աշխատութեան այս մասերը կազմելին օգտուել է ըստ Երեւոյթին Երեմիա Շելափի Քեօմիւրենանի անտիպ Ժամանակութիւնից։ Չամչեանից աւելի ճիշտ տեղեկութիւններ է տալիս այդ բանակցութիւնների նավին Տէր-Յովհաննէսեան, անդ, եր. 563 եւ շար., Վերջինս օգտուել է նաև մի շարք կարեւոր վաւերաբերից։

ըևելցիք, և կէսք՝ մանաւանդ թէ յոլովք՝ ի կողմն Եղիազարու, և սոքա էին բնակը ք դքին՝ ժողովեալ անդր ի սահմանաց Փոքուն Հայոց և Հոռոմստանու, և կոչէին Հոռոմցիք: Ակսան ապա այս երկու դասք մաքառիլ ընդ միմեանս, և անգունել զիրեարս, սոքա, զնոսա արևելցի և յակոբեան կոչելով, և նոքա զսոսա՝ Հոռոմցի և Եղիազարեան ձայնելով»<sup>1</sup>: Կոռուող բանակները փոփոխակի յաջողութեամբ կաշառում էին պետական ազգեցիկ պաշտօնեաներին ու սրանց գրաւելով իրանց կողմը աշխատում էին կայսերական մի հրամանի սահմանածը ջնջել տալ դրան հետեւող մի այլ հրամանի զօրութեամբ: Այս միջոցով 1664-1679 թուականների ընթացքում Յակոբ Դ մի քանի անգամ կարողանում է «վերականգնել» Էջմիածնի իրաւունքները, ինչպէս և Եղիազար Այնթապցուն է յաջողուում տաճկահայոց ընդհանրական կաթողիկոսութեան ու Երուսաղէմի պատրիարքութեան համար մի քանի անգամ հաստատութեան թուղթ (պէրաթ) ձեռք բերել: «Ահա ձեզ ամենեցուն յայտնի եղև, այսպէս է գրում Յակոբ Զուղայեցին 1671 թուին Լեհաստանի հայերին ուղղած իր մի կոնդակում, - թէ որքան վիշտ և նեղութիւն յամենայն դիմաց պատեաց զմեզ՝ վասն ի միջոյ բառնալոյ զանկարգութիւն Եղիազարին, և զպարտ վճարելոյ. Եօթն տարի է որ ի սուրբ աթոռոյս Հեռացեալ՝ աւր ըստ աւրէ հաշիմք և մաշիմք ի տառապանս, և ոչ կարեմք աստի ելանել, զի մի կաշառօք աւերեսցին զուղղեալն մեր, այլ սիրով շահեսցուք զնոսա»<sup>2</sup>: Կաթողիկոսը շնորհիւ այս բանի ընկնում է ծանր պարտքերի տակ. «Ես չը գիտեմ, ասում է Շարդէնը, թէ որքան փող է իսկապէս ծախսել կաթողիկոսը այս գժբախտ գործի վրայ, ոմանք այդ ծախսերի գումարը բարձրացնում են մինչև 800.000 լիրա: Գիտեմ միայն, որ նա 500.000 լիրա պարտք ունի վերցրած Պոլսում, որ և ծախսել է իւր գեղեցիկ նպատակի համար»<sup>3</sup>: Մի քանի տարի Թիւրքիայում դեգերելուց յետոյ, ինչպէս վկայում է մի ուրիշ ժամանակակից՝ Լակրուա, Կ. Պոլսի ֆրանսիական հիւպատոսարանի քարտուղարը, կաթողիկոսը ստանում է վերջապէս խաթթի չէրիք՝ շոայլելով ընծաներ, «որոնց համար նա ի հաշիւ Նոր-Զուղայի կայսերական մաքսատնից 80.000 դուռուշ (piastres) պարտք է վերցնում»<sup>4</sup>: Այս խնդրի վերաբերմամբ հայկական

<sup>1</sup> Ա. Չամչեան, անդ, հ. Գ, եր. 700 եւ շար.:

<sup>2</sup> Ա. Ալշան, Կամենից, եր. 264:

<sup>3</sup> Chardin, անդ, II, 247:

<sup>4</sup> De la Croix, Etat present des nations et eglises Grecque, Armenienne, et Maronite en Turquie, Paris, 1715, եր. 167 եւ շար.:

աղբիւրների տուեալներն էլ են մեծ չափերով տարբերւում իրարից. ըստ Զամշեանի կաթողիկոսը պէտք է վճարած լինի թիւրք պաշտօնեաներին 30 քսակ արծաթ (1 քսակը = 500 դահեկան և մոտ 2333 գրանս. լիրա)<sup>1</sup>, մինչդեռ ընդհակառակը ժամանակակից մելիքների մի չափազանց ուռցըրած վկայութեան համաձայն՝ նրանք կաթողիկոսի պարտքերի համար 2000 քսակ արծաթ են վճարել<sup>2</sup>: Եթէ հաւատանք Շարոէնին, 1673 թուականին կաթողիկոսը յայտարարած պէտք է լինի պարսից արքունիքին, «որ ինքը Տաճկաստանում 70.000 լիրայից աւել պարք չունի, և որ իւր գլխաւոր պարտատէրերը գտնուում են Պարսկաստանում»: Կաթողիկոսի մի հակառակորդը զեկուցանում է սակայն, «որ նա սուլթանի հպատակներին 300.000 լիրա է պարտական»<sup>3</sup>: Այս յամենայն դէպս խոշոր պարտքերը ստիպում են կաթողիկոսին շրջաբերական գրութիւններով դիմել հանգանակութեան. բայց այս միջոցն էլ դրական հետեանք չի տալիս. Պարսկահայաստանում նրա շրջաբերականներն արձագանք չեն գտնուում լայն չափերով. Հայ վանականները, գաւառապետներն ու տանուտէրերը՝ ձանձրացած կաթողիկոսի պարբերական ժողովարարութիւններից ու օգտուելով Երևանի խանի դէպի նա բռնած թշնամական ընթացքից, եջմիածնում իսկ մի առ ժամանակ առաջ են քաշում Ոնոփրիոս վարդապետի հակաթոռ կաթողիկոսութիւնը<sup>4</sup>:

Նեղուած այսպիսի պայմաններից՝ Յակոբ Զուղայեցին չի տատանուում օգնութիւն հայցել կաթոլիկ միսսիօնարներից ու նրանց եւրոպական հովանաւորներից. յարակից պարագաներում նա մի քանի անգամ դաւանաբանական խնդիրների շուրջն է բանակցութիւններ վարում Հռոմի հետ<sup>5</sup>: Եւ սակայն բոլոր այս փորձերն անցնում են ապարդիւն ու տաճկահայ նուիրակութեան խնդիրը լուծուում է միայն Յակոբ Զուղայեցու մահուանից յետոյ,

<sup>1</sup> Մ. Զամշեան, անդ, Գ, 714:

<sup>2</sup> Գ. Էզօվъ, Сношенија Петра Великаго съ армянскимъ народомъ, СПб., 1898, док. № 2.

<sup>3</sup> Chardin, անդ, IX, 104, Զաքարիա Սարկ. Երեւանի խանի մասին մի տեղ յիշում է. «Եւ ինքն ժողովեաց զամենայն փարքամ եւ մեծատուն մարդիկ, եւ էաո ի նոցանէ. Ո-Յ քուման դրամ (= 58.500 լիրա. - Ա. Յ.) եւ պատճառ եղ՝ թէ աթոփին պարտն տամք, եւ յետոյ ձեզ հասուցեն Եշմիածնի նասողը»: Անդ, Բ, եր. 78:

<sup>4</sup> Chardin, II, 248, 295 եւ շար., 550 շար. IX, 99 եւ շար., Զաքարիա, անդ, Բ, 76 եւ շար. 85 շար.:

<sup>5</sup> Տե՛ս, «Reponse generale au nouvelle livre de M. Claude», Paris 1671, եր. 284 եւ շար.: Chardin, III, 146 եւ շար. Bedik, «Cehil Sutun», 352 եւ շար., «Israel Ory etc», 43 եւ շար.:

երբ՝ «Սօղոսն ի Պօղոս փոխեցեալ» Ամենայն Հայոց կաթողիկոս է ընտրւում նրա գօրեղ հակառակորդը՝ Եղիազար Այնթապցին [1681-1691]. Էջմիածնի իրաւասութիւնը վերականգնվեց սրանով իւր իշխանութեան վաղեմի սահմաններում<sup>1</sup>:

Յակոբ Դ. Զուղարեցու մի շրջաբերականի մնացորդները

Ստորև գետեղուած հատուածներն ընդօրինակում ենք Էջմիածնի Մատենադարանի № 2693 գրչագրի կազմին կպցրած պահպանակներից<sup>2</sup>: Ամբողջ գրութիւնը ամփոփուած է եղել Երկար փաթեթի մի երեսի վրայ, որ յետոյ, գործադրուելով որպէս պահպանակ, պէտք է կտոր կտոր արուէր: Մկրտան անհետացրել է այսպիսով գրութեան սկզբի և միջին տողերից մի քանիսը, իսկ վերջից՝ ստորագրութիւնը: Տեղ տեղ կտրտուած են նաև հատուածների ծայրերը, կամ թէ տողերն ընդհատում են շնորհիւ կազմի վրայ ամրացրած մեխերի, որոնցով պահւում են գրչագրի փականները: Մակայն հարեանցի իսկ ծանօթանալով ընթեռնելի տողերի հետ, դժուար չէ համոզուել, որ գործ ունենք Յակոբ Դուղայեցու 1667 թ. մարտի 22-ին Կ. Պոլսում գրած մի շրջաբերական կոնդակի հետ: Հատուածների մէջ կարելի է գտնել մի քանի մանրամասնութիւններ նուիրակութեան խնդրի շուրջը: Վերջում պարտապաններից նեղուած կաթողիկոսը բացայայտում է երկար գրութեան կարճ իմաստը՝ «լիալիր և ա ծատուր ողորմութիւն խնդրեմ ա մ իրաց և յայտնապէս. զտասանորդն պահանջեմ ի ձէնջ»:

«... գալ առ ինքն աղաղակ, յայնժամ հրամայեաց թ՝ գրն փութանակի տանել զմեզ առ դայմաղամ փաշան. առ ի հասու լինել զմեր ո պութ ե հասաս ... ինձ թալհիս անէ հրամայեաց ստէպ ստէպ. Յայնժամ առեալ տարան զմեզ առ դայմաղամ փաշան և մինչ գնայեաք ի ճանապարհին, մի ի ծառայից ե(ԿՅ) ա(Ղ) մեզ փութացուցանելով ի հրամանէ թ՝ գրին. և յորժամ հասաք մեք առ դայմաղամն և մինչդեռ խօսէաք ընդ նմա՛. եկն նախ. երկ"րդ եր-

<sup>1</sup> «Զամբռ», եր. 239:

<sup>2</sup> Գրչագիր Ներսէս եպ. Տարտնացու «Մեկնութիւն Սաղմոսաց», մեծաղիր, բուղթ, բուլրագիր, տեղն ու ժամանակն անյայտ. հաւանօրէն ԺԷ-ԺԸ դարերի գործ:

բորդ չորրորդումն անգամ ի վ՝ ը միմիանց մարդ առաքեաց առ ի ստէպ փութացուցանել և երագ երագ հասանել ի վ՝ ը իրին և թալ-Հիս անել. իսկ յորժամ ... ան թահլիսն առ թ՝ գրն. Յայնժամ իսկապէս վերահասու եղաւ զմե... ան օտար երկրէ գալն և այնքան վնաս և զլու... լն մեզ, և այն ժ ե ո (ըստա)կ պէտիաթ միրի լինել որ ոչ է եղեալ յերբէք ըստ իւ րնց թագաւորու թե ժամանակն. և ոչ գտաւ ի տիւանն և ոչ ի տէֆտէրխանան, Յայն(ծան ո)ղորմեցաւ և քաղցրացաւ թ՝ գըն ի վ՝ ը մեր ըստ խնամոցն ա յ, և բարձեալ միրի կապեալ ժ ե ո ըստակ պէտիածն. և ետ հէթալիշէրիֆ պինտ և հ(աստ)ատուն իւր բարձր հրամանաւն, և ոչ լինել պահանջել բնաւին իսկ, և ինք իւր բարձր իշխանութեամբն երեզ տեղիս գծագրեաց ի մէջ հէթափ չէրիֆ... այն պէտիաթ, ժ ե ո, ըստակ միրին բարձի և ըռէֆտ արարի. և ո պ եղեալ է յառաջմէ նոյնպէս հաստատ մնայ. Եւ արդ ով սիրելի որդիք իմ զի...ն շնորհ և բարերարութ՝ ի յ այ է և ոչ ի մարդկանէ, ո պ ասէ սողոմոն սիրտք թ՝ գրաց ի ձեռն ա յ են, այոյ և տեսաք այժմ ստուգապէս. բայց զայս խնդրեմ ի ձ(էնց ո)վ սիրելիք միաբան ա մքն ի ձեռս վեր կալուցէք առ ա ծ, և ասացէք ա ծ թ՝ գրն անփորձ և անսասան պահեսցէ, յերկար կեանք և ժամանակ պարզենացէ, միշ(տ և լ)անապազ ուրախութ ը և ցնծութ ը պահեսցէ ամէն. Ապա ո՞վ սիրելիք եթէ այն պէտիաթն որ մնացեալ էր ի վ՝ ը ո ք աթոռոյն եղ մյ. զինչ լինելոց էր հալ և ճարն ս ք (բոյ Եր)ուսաղէմայ. ի ձեռս անիրաւ սկագլիսաց հայոց, որ զս ք մեռոնն և զս ք լուսաբուխ գերեզմանն, ի վ՝ ը միմիանց եղեալ միրի էին կապեալ. ժ ե ո, ըստակ, յետ ... ինչ տարու. ճ անգամ, ճ ո ըստակ լինելոց էր, որ ամէն տարեց տարի առաջնորդն փոփոխէր և զմիրին աւելնոյր օրըստորէ յափշտակելով ի ձեռաց միմեանց. չա(ո և ան)իրաւ սկագլուխքն հայոց և բարթէր պարտն ի վ՝ ը պարտուց. և լինէր ս ք աթոռն յ Ե զմ գերի և ծառայ, ի ձեռս պարտատիրաց. և յետ ն ը յայտնի է թէ զինչ լի(Անլո)ց էր զայն աթոռն յ Ե զմ, և յայն ժամ յետին վայն և զթշուառութ ի պատէր ազգս հայոց. Եւ արդ ով ոք, ք ։ ս ք աթոռքն ս ք Ե զմ և ս ք էջմիածին ի միմիանց բա(ծանէ) բաժանեսցի ինքն ի շնորհացն ա յ. զի որ աւերումն կամեսցի աւերեսցի իւր բաժին արքայութ ի. և տուն ն ը աւերակ դարձցի. իսկ որ քակումն կամեսցի, քակ(...) ուկրն ի մարմնոյն և մարմինն ի յոսկերացն. և որ պակասութի կամեսցի պակասեսցի

աչքն ի լուսոյ և կեանքն ի կենաց, և ոչ կարիցէ տեսանել զճշմարիտ լոյս(Ա) և յաւուրն դատաստանի:

Եւ արդ ով սիրելիք իմ և ա հնեալ ժողովուրդք յա յ. ահա՝ և ձեզ զեկուցաւ ծայրաքաղ և համառօտարար զմինն ի բազմացն. Ահա՝ այժմ ձեր աչքն ի լոյս և ձեր ականջն աւետիս որ այն ո ք աթոռն յԵ զմ, ազատեցաւ ի հարկէ և ի նոր պէտիաթէ: ողորմութք և շնորհօքն ա յ, և եղե ազատ կեալ ո պ էր ցառաջն: Արդ ով սիրելիք զայս գրելս մի ոք ի պարծանս մեր կարծեսցէ որ խօսիմս, այլ ի շնորհաց ք ի ծանիցէ. ո պ գրէ առաքեալն պօղոս թէ տ ը է ... յաջողէ զգործս կամելն և առնելն. Յայտ լիցի սիրելի որդւոցս ի գալն մեր այս երկիրս յաղագս այս գործոյս. երբեմն ես ինքնին տրտնջէի, երբեմն մերայինքն և (Եր)բեմն օտարքն» այլ և այլ մտածէաք իբրև ոչ յաջող և անպատշաճ գալն ոչ էր ըստ մեր տկար կարծեացն... Այլ ի խնամոցն ա յ էր որ յա մ աներեռյթէ և... ևս գործեալ առաջի իւր պարզապէս փայլէ. Աստ երկեցաւ յայտնապէս շնորհն յա յ, որ ի գալն մեր և ի ժամանելն աստ առաջնորդութենէ և ի տնատվութ (ն ո)գոյն սրբոյ երկեցաւ, և այժմ իմացաք հաւաստի և ստուգապէս. եթէ իմ ոչ էր եկեալ աստ. զայն անշիջանելի հուրն ոչ շիջանէր, և զանբուժելի ցաւն ոչ փարա(ա)էր, ո պ յայտնի իսկ է գիտողաց, որ անհնարին է յուրմեք մի իր ինչ կապեալ միրի բանին. բառնալ բնաւին կամ վերցնել. մինչեւ ի մի ըստակն և իբնիոնն, բայց ի թ գի...ր միայն հրաման ն ը է, և նա՛ միայն է կարող և հրամայող, բառնալոյ և շնորհելոյ, ո պ արար մեզ քաղցրութք և ողորմութքն ա յ, վ ո զի նա՛ միայն է տ ը և թ գր ա մի. այլ (ն)ք ոչ չունի (sic!) հրաման այս գործ առնելոյ՝ բայց միայն ի թ գրէն. և այս մեր բանն և գործն երկու կերպիւ եղե. նախ որ պետիաթ էր. և ոչ ի սկզբանէ եղած էր. երկրորդ որ նոր էր և ոչ անցեալ ժամանակ ինչ ի միջոց զոր չարն տնկեաց և սահմանեաց ըստ իւր չար բարուցն. և ըստ իւր չար խորհրդոցն տ ը ա ծ լիցի վրէմինդ .....  
..... ջ ևս էր մեծ խղճմտանք և տարտ, որ ի ձեր ժամանակէն մնայր չարեաց սերմն. փառք և գոհութիւն, ա յ, ձեր ականջօքն լուաք և ձեր բարի աչօքն տեսք. ազատ(ութիւն) յերկոցունց ո ք աթոռոցն, ո պ որ յառաջն էր. նոյնպէս և մեզ եղե ազատութիւ խղճմտանաց: Որովհետև տ ը գթացաւ և քաղցրացոյց զսիրտ թ գրին, որ (ն)բարձ զմիրին և զգիրն ջնջեաց. այսուհետև թէ մեռանիմ դուք ողջ և առողջ կենայք: Դ ըձլ հոգեոր որդիք իմ զձեր բնական սէրն զոր ի նախ-

նեաց հետէ ունիք (ա)ու երկու ս բ աթոռոցն պարտիք հաստատուն և անքխզելի պահել. ոչ թէ վ ս մարդոյ էք սիրող. այլ ս բ աթոռոցն վ ս հաստատութե հաւատոյս և հոգւոց փրկութի ձեռոյ. իսկ որք... (սպաս)աւորք և առաջնորդ լինին ս բ աթոռոցն ըստ իւր(աշանց)իւր գործոյն առնելոց են արդարադատէ յ այ իսկ դ(ութ պարտիք հանապազ ար(ծ)արծել զձեր սէրն. զինչ պաշտօն և պտ ըդ մատչի ի ս բ աթոռուն ձեզ և ձեր ննջեցելոցն մասն և բաժին լիցի ամէն: Այլև ցանկալիք իմ և ըլձալի(թ) հոգւոյ իմոյ, և ա հնեալ (զա)րմ և զաւակ ս բ մօրն լուսոյ. զի գրէ երեգտասասն առաքեալն պողոս ասելով ահա՛ օր փրկութի ահա՛ ժամանակ ընդունելի. մի և մի իւիք տայցէք զպատճառն... մի արատեսցի պաշտօնն. և արդ ի նոյն գրելոյն միշտ ընդ ձեզ տեսանի անցումն կենաց մերոց յարակայ. և այժմ հրաւիրէ մեզ առ ի նկրտումն անանցին անճառելոյն (Դ) պ ճառէ նոյն ինքն զմայլմամբն ասելովն, զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ. և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ. զայն պատրաստեաց սիրելեաց իւրոց որ յոյժ ցանկալի և կարի փա(փ)աքելի տեսանի. ահա՛ և այժմ յայտնեցաւ ձեզ. ա մ իր և բան մեր. զոր կարճ ի կարճոյ և համառօտարար զեկուցմամբ ծանուցաք ձեզ հազարն և բիւրն միով իւիւ, ապա (ա)յս, բ տարի է որ այս ա ծասաստ բարկութի և էջ ի վ ր տանս հայոց. զի թէ որքան տագնապ վիշտ և նեղութի կրեցաք մեք մերայնովք միայն ա յ է գիտելի. և թէ որքան փող (Ա) դրամ վատնեցաւ և դրուեցաւ աստ և անդ, զի ոչ կա՛ թիւ և ոչ չափ, ո պ յայտնի է ձեզ այսպիսի իր ի դուռս արքունեաց. այսքան ծախս ծախեցաւ. հազիւ (Բ)ազիւ զերծեալ ազատեցաք զայն բ ս բ աթոռն ի գերութենէ և ի ծառայութենէ. ո պ գրեցաք ի վերոյ. վ ս որոյ գոչէ առաքեալն ի սմին ժամու այսու իրաց. ահա՛ օր (բա)րկութեան, և օր ազատութե. զի ով ոք այսօր որ ձեռնտու և յօժանդակ լինի ըստ յայսմ գործոյ ըստ իւրաքանչիւր չափու, այ...ն նմանէ կոստանդիանոսի և տ ը ...ա տայ ս բ թ գրաց. ո պ ն ք որ նորափոր հիմամբ հիմնարկեալ շինեցին, և այժմ դուք հանգոյն ն ց, նորա կերտութ բ կառուցա(Աէք ս թ) աթոռքն. և ս բ զօրաբարէլին ... (զ)աւերն տաճարին և զքակումն նորին կրկնակի շինեալ. նորոգեցաւ յայժմ և դուք ըստ նմին քառակի նոր ն(որո)գեալ կառուցանէք, յիշատակ ձեր (Ա) ձեր ննջեցելոցն. Եւ արդ սիրելիք իմ ի մ ը, և ես նոթեանս (?) յայտնապէս աղերսելով բողոքեմ առ ձեզ. և իսկապէս զեկուցանեմ որ և ես ի ձէնչ յայժմոյս

լիալիր և (ա՞ծ)ատուր ողորմութի՝ խնդրեմ ա՞մ իրաց և յայտնապէս. գտասանորդն պահանջեմ ի ձէնջ. որ մինչ ի յուստերաց և դստերաց որ ըմբուն և պատշաճ վարկանեմ ... նչ ցայս վ ս ազատութե ս բ աթոռողն. զի ա մէ հարկիւ և պաղատանօք լի և կատարեալ ողորմութի՝ խնդրեմ. ըստ ա մի չափու մինչ ի այրիս և ի որբս ժտեմ. զի և ն ք (նա)սն և բաժին ընկալցի (sic!) ի նոյն շնորհաց և ի պարգևաց ո պ ի վերոյ ճառեցաւ. Եւ աստ ոչ առ ի մեծատուն և աղքատ. կամ որբ և այրի. քանզի ամենեքեանքս (ա)արտական եմք հոգով և մարմնով այն բ ս բ տանն: Իսկ թէ որքան ուխտ և խոստմունք ունիք թէ հոգւոյ և թէ մարմնոյ այսուու ամանակի (sic!) ամէնն շնորհեցէք այն ...անց որ կարի հարկաւոր և պատշաճաւոր ժամանակի եթէ քառասնից և ժամուց մատաղի և ընծայ և վ ս կենդանեաց և ննջեցելոց խոստմունք զոր (Ա)ոստացեալ ունիք ի սէրն այ, խնդրեմ զամենն շնորհել ողորմութի՝ ս բ աթոռոցն թերես լինի ազատութի՝ և թեթեութի ինչ այնքան պարտուցն: Այլ և զայս (ա)ատուիրելով պատուիրեմ ձեզ սիրելեացդ իմոց. զի յորժամ տաք և նուիրէք զձեր տուրք և ողորմութի. զամենն ի գիր և տէֆտէրս առջիք ամենեքեանդ թէ շատ և թէ սակաւ թէ որքան և իցէ մինչև զկէս ըռուպն և ի մի ըստակն զամէնն տէֆտէր արարէք թէ քաղաք և թէ գիւղ, և թէ այլ ինչ տեղիք որ լինի զի իւրաքանչիւր (Ա)եղւոջ տէֆտէր արասցէ երեք մինն առ մեզ առաքեցէք մինն ընդ ձեզ պահեցէք, և միւն տացէք յայնմ որ զողորմութի ժողովէ. և ամեն ոք ող ողորմութի շնորհեն ըստ չափոյ իւ ընց գրեսցեն և զանուն իւ ընց. և ծնօղացն և զտեղոյն և զքաղաքին. որով կոնդակաւ դրոշմեալ արձանասցի մնալով յ շտկ յ ւտնկն ի մէջ այն բ . ս բ տանն որ հնպ զ ի մէջ պտ րդի և ի մէջ պաշտման յշ տկի. որ մասն և բաժին լինի կենդանեաց և հանգուցելոց. և զձեզ առ հասարակ ամենեքեանդ արժանաւորս արասցէ երանաւէտ ձայնին որ ասէ եկայք ա հնեալք հօր իմոյ ժառանգեցէք զանըսպառ ուրախութի որ է ա հնեալ յւ տնս ամէն: Գրեցաւ ա հնութե նամակս թվին ՌՃՇ և վեց, մարտի ամսոյ, ի բ ի մայրաքաղաքն կոստանդնուպոլիս, ընդ հովանեաւ ս բ լուսաւորիչ եկեղեցւոյ»:

## ՅԱԿՈԲ ԶՈՒՂԱՅԵՑՈՒՄԻ ՄԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ

### ՌՈՒՍ ԱՐՔՈՒՆԻՔԻՆ

Ոռուս արքունիքի հետ ունեցած Յակոբ Զուղայեցու առնչութեան մասին մինչ այժմ մեզ յայտնի տեղեկութիւնները չեն բղխում անմիջական աղբիւրներից: Կաթողիկոսի մահից շատ յետոյ, 1699 թուին, Սիւնեաց մելիքների անունից Եւրոպա ուղարկուած մի շարք գրութիւններից քաղում ենք, որ 1678 թուի էջմիածնի գաղտնի խորհրդակցութեան միջոցին ընտրուած աշխարհական պատուիրակները, պարսկահայերի ազատագրման գործը գլուխ բերելու նպատակով Եւրոպայում կատարելիք շրջագայութեան ընթացքում, պէտք է անցնէին Ռուսաստան՝ ցարից աշակցութիւն հայցելու: Ռուսաստան դիմելու նպատակով, հայ մելիքները, Յակոբ Զուղայեցու և երեք եկեղեցական պատուիրակների ուղեկցութեամբ անցնում են Կ. Պոլիս, սակայն այստեղից, ինչինչ պատճառներից գրուած, ստիպում են կրկին դառնալ իրանց երկիրը<sup>1</sup>: Փոքր ինչ աւելի ուշ, 1701 թուին, երբ Արևմտեան Եւրոպայի հետ հայ մելիքների սկսած բանակցութիւններն արդէն ծայր էին տուել հիանթափութեան, իսկ միւս կողմից՝ հետզհետէ սկսում էր արմատանալ այն հայեցքը, թէ պարսկահայերի փրկութեան խարիսխը պէտք է Ռուսաստանում որոնել, իսրայէլ Օրին, մելիքների հաւատարմատարը, կցում է վերը բերած վկայութեանը մի նոր յայտարարութիւն. 1678 թուին էջմիածնում ընտրուած աշխարհական պատգամաւորները, պնդում է հայ դիւնագէտը, հայերի ազատագրութեան գործը պէտք է նախ Ռուս թագաւորին յանձնարարէին. այդ իմաստով հայոց ժողովի կողմից կնիքներով վաերացրած ինքնագիր թուղթ պէտք է ներկայացնէին մոսկովեան կառավարութեանը: Արևմտեան Եւրոպա՝ Հռովմէական կայսրին, հայ պատուիրակները դիմելու էին Մոսկուայում մերժում ստանալու դէպքում միայն<sup>2</sup>: Այստեղ յայտնած միտքը լրացնելու համար է կարծես, որ 1703 թ. 27-ն մայիսի թուակիր մի գրութեան մէջ նոյն մելիքները, շրջելով փաստերի յաջորդակա-

<sup>1</sup> Г. Էզօվъ, Сношениј Петра Великаго съ армянскимъ народомъ, 1898, № 6, հմնտ. №№ 5 և 44:

<sup>2</sup> Անդ, № 44:

նութեան կարգը ընթացիկ դէպքերի սահմանում, գրում են Պետրոս Մեծին. «Մեք գըեր էաք եփրատօրին և լէքտօր փալաթինին, որ աղաչեն առ քո թ գրութե դ, նոքա ևս մեր աղ չնցն լսած է և քո թ գրութե դ գրած է, եթէ նոցա և եթէ մեր աղչնցն լսեր ես և առեր ես յանձդ որ ազատես զմեզ որ լինիք մեծ ուխտիւք հաւտրիմ ծառայք քո բարի հ բմնին նիրքե և բարուդ բարի և հակ ոկիդ հակ ոկ»<sup>1</sup>:

Ծանրանալով այս վկայութիւնների վրայ մի այլ տեղ, դրանց պատմական ստուգութիւնը ենթարկել էինք կասկածանքի. մի կողմից ի նկատ առնելով այդ ու յարակից ցուցմունքների ընդհանուր յատկութիւնը՝ յերիւրել փաստերը քաղաքական երերուն պայմանների պահանջով, իսկ միւս կողմից մեկնելով ժէ դարի հայ-ոռուսական յարաբերութիւնների ընդհանուր բնոյթից, հաւանական չէինք համարել, որ դեռ ևս Յակոբ Զուղայեցու ժամանակ հայերը լուրջ ակնկալութիւններ ունենային մոսկովեան թագաւորութիւնից. ամենից քիչը հաւանական էր թւում մեզ այն, որ հայերը իրանց քաղաքական բաղդը կարող էին առանց արտաքին հարկադրանքի այդքան վաղ կապել բացառապէս Ռուսաստանի հետ. Օրիի այլ պայմաններում տուած ցուցմունքները, ունենալով նրա յետագայ վկայութիւններին հակառակ իմաստը, կարող էին ծառայել որպէս մեր կասկածանքն արդարացնող լրացուցիչ հանգամանքներ միայն<sup>2</sup>:

Այդ կասկածանքը կարծես խոստանում է փարատել յետնադարեան լատիներէնով գրած մի թուղթ, որ գտանք Արտաքին գործոց նախարարութեան Մոսկուայի գլխաւոր դիւնում աշխատելիս միայն վերջերս. բայց և անկախ սրանից՝ այդ գրութիւնը ներկայացնում է խոչոր արժէք, որպէս հայ-ոռուսական յարաբերութիւններից բղխող մինչ այժմ յայտնի քաղաքական փաստաթերից հնագոյնը:

Ամբողջ գրութիւնը, որի փոքր ինչ եղծուած բնագիրն ու մեր ձեռքով կատարուած թարգմանութիւնը բերում ենք ստորե, գետեղուած է հասարակ թղթի մեծագիր մի երեսի վրայ. գրուած է վարժ շղագրով, առանց ոլորագծերի ու զարդագրերի: Թուղթն ուղղած է մոսկովեան ցարին (*imperator=կայսր=կեսար = ցար*), որի անունը չի յիշւում սակայն. նշանակուած չէ նոյնիսկ գրու-

<sup>1</sup> Դ. ԷՅՈՎՅ, № 98:

<sup>2</sup> Հմմտ. մեր «Israel Ory und die armenische Befreiungsidee», եր. 59 եւ հետ., 85 եւ հետ.:

թեան տեղն ու թուականը. բարեբաղդաբար գրուածքը վաւերացրած է կարմրագեղ կնքով, որի մակագրութիւնը՝

«Յ Ի Ք Ի Ծ Ռ Յ Յ Կ Թ Ղ Կ Ս Ա Մ Հ Յ Յ Թ Վ Ո Յ ».

մատնում է մեզ գոնէ դիմողի անձնաւորութիւնը. կնքի տարեթիւը՝ 1655, ցոյց է տալիս միայն խնդրարկուի կաթողիկոսութեան առաջին տարին ու կապ չունի գրութեան ժամանակի հետ: Կարելի է ենթադրել, որ մեր ձեռքը հասած թուղթը հայերէն բնագրի հետ ուղարկուած թարգմանութիւնն է. հակառակ դէպքում նա աւելի պատշաճ ձև կունենար. հաւանական է նաև այն, որ այդ թարգմանութիւնը պատրաստած լինի այն կաթոլիկ քառողիչների ձեռքով, որոնց հետ սերտ առնչութիւն ունէր Յակոբ Զուղայեցին 1670-ական թուերին: Այդ ժամանակաշրջանում եւրոպական արքունիքների հետ հայերի քաղաքական վիճակի բարւոքման խնդրի շուրջը բանակցել կամ թղթակցել է նա մի քանի անգամ<sup>1</sup>, աչքի առաջ ունենալով այդ մասին մեզ մատչելի բոլոր գրական յիշատակութիւնները, մենք հնարաւորութիւն չունենք, յենուելով դրանց վրայ, որոշել պատմական այն վայրկեանն, երբ Յակոբ կաթողիկոսը կարող էր անհրաժեշտ նկատել կամ հնարավորութիւն ստանալ ուսւ կառավարութեանը դիմելու: Գուցէ կարելի լինէր նոյնացնել այդ գրութիւնն այն կնքուած թղթի հետ, որի մասին յիշում է Օրին, եթէ իր համեստ քաղաքական ակնկալութիւններով նա էջմիածնում մշակած ծանրակշիռ քաղաքական ծրագրից տարրեր իմաստ չունենար: Արդէն իսկ ստուգուած պէտք է համարել, որ էջմիածնի խորհրդակցութեանը մասնակցող մելիքներն ու նրանց ցուցմունքով գործող կաթողիկոսը քաղաքական ազատագրումն ամենից առաջ կապում էին հայ-վրացական ապստամբութեան և այդ ապստամբութիւնը ղեկավարող կաթոլիկ Եւրոպայի աջակցութեան հետ: Եթէ սակայն ըստ էութեան քննելու լինենք մեզ հասած գրութիւնը, կը տեսնենք, որ այստեղ քաղաքական ձգտումներն այդքան հեռու չեն հասնում: Յիշատակելով այն նիւթական ու բարոյական զրկանքները, որոնց ենթարկւում են Պարսկաստանի հայերը, կաթողիկոսն աղերսում է ցարին՝ ի նպաստ վերջինների իր դեսպանների բերանով միջնորդել պարսից մօտ. գնահատելով պարսից կառա-

<sup>1</sup> Հմմտ. անդ. եր. 43 եւ հետ.:

վարութեան վրայ ունեցած ռուս դիւանագէտների ազդեցութիւնը՝ կաթողիկոսը յոյս ունի, թէ նրանց միջնորդութիւնը կարող է բարերար հետևանքներով անդրադառնալ հայոց վիճակի վրայ: Եւ միայն այսքանը: Ինքնին դժուար էլ է ենթադրել, թէ 1678 թուին, ծրագրած ապստամբութեան նախօրեակին, հայերը յոյս կարող էին դնել դիւանագիտական ազդեցութեան վրայ. նշանակում է, ներկայ դիմումը արուած պէտք է լինի այդ ժամանակից աւելի վաղ: Ի դեպ, Էջմիածնում կայացած խորհրդակցութեան թուականը ևս կարօտ է ստուգութեան: Էջմիածնի խորհրդակցութեան մէջ արծարծուած քաղաքական ծրագրի հիմնական մտքերին հանդիպում ենք դեռ Հայր Պետրոս Բեդիկի աշխատութեան մէջ, որ յոյս տեսաւ Վիեննայում 1678 թուին<sup>1</sup>, Պարսկաստանից Հայր Բեդիկը մեկնած պէտք է լինի դեռ 1676 թուին. Վիեննայում հանդիպում ենք նրան յամենայն դէպս դեռ 1677 թուին: Մի ուրիշ ժամանակակից՝ Ռիկօ, գտնուելով 1678 թուին Հռոմում, լսել էր կաթողիկոսի գլխաւորութեամբ Եւրոպա մեկնող Հայ պատուիրակների վերաբերմամբ ողջ Եկեղեցական Պետութեան մէջ այդ ժամանակ արդէն տարածուած լուրի մասին<sup>2</sup>: Աւելի կարևոր են սակայն Յակոբ Զուղայեցուն վերաբերող այն մի քանի հակիրճ տողերը, որ գտնում ենք Զաքարիա Ագուլեցու օրագրութեան մէջ. «Թվին Ռձիջ (1677) յունիսի մէջ Երևան(ի)... խանիցն փախաւ գնաց վրացտուն»<sup>3</sup>: ... «1128 (1679) ումն Էջմիածնայ Միքայէլ աթոռակալ վարդապետն եկաւ Գողթան տունն նվիրակ, այս գ ամ է, որ Էջմիածնայ նվիրակ չէր եկած, քանզի Յակոբ կաթողիկոսն այս բ ամ է, որ Էջմիածնայ Աէֆի-ղուլի-խանի ձեռացն փախաւ-գնաց վրացտուն, վրացտան վերայ գնաց խորմացտուն»<sup>4</sup>: Էջմիածնի խորհրդակցութիւնը պէտք է որ տեղի ունեցած լինի կաթողիկոսի Վրաստան մեկնելուց անմիջապէս առաջ. նշանակում է՝ ոչ ուշ քան 1677 թուի յունիսի մէկը: Վրաց իշխանաւորների հետ համերաշխ գործակցութեան ծրագրի մշակելու, այլ և Էջմիածնի պարտքերը վճարելու մասին հոգ տանելու նպատակով՝ կաթողիկոսը մի առ ժամանակ պէտք է որ մնացած լինի Թիֆլի-

<sup>1</sup> P. Petrus Bedik, Cehil Sutun, էր. 541 և հետ., 552 և հետ.:

<sup>2</sup> M-r le Chevalier Ricaut, Histoire de l'Etat présent de l'Eglise Greque et l'Eglise Armenienne (trad. de l'angl.), Middelbourg, 1692, p. 422.

<sup>3</sup> «Զաքարիա Ագուլեցու օրագրութիւնը», էր. 64: ԺԷ դարի ցարդ չը հրատարակուած ժամանակագրողի այս գործը սիրալիր կերպով մեր տրամադրութեան տակ դրեց պ. Լէօն:

<sup>4</sup> Անդ, էր. 75:

<sup>5</sup> Դ. Էզօվե, անդ, №№ 42, 120:

զում<sup>1</sup>: Հաւանական է, որ հայ պատուիրակները թիւրքիայի ներքին նահանգներում ևս ուշացած լինեն, քան որ, ինչպէս գոնէ Զամչեանն է վկայում, կաթողիկոսը Կ. Պօլիս հասաւ միայն 1679 թուի դեկտեմբերին<sup>2</sup>: Կ. Եզեանի հրատարակած ժողովածուի մէջ մի քանի անգամ հանդիպող այն վկայութիւնը թէ Էջմիածնի խորհրդակցութիւնը կայացել է 1678 թուին, թւում է թէ ելնում է մօտ քառորդ դար յետոյ փաստն արձանագրող մի ընդհանուր աղբիւրից. ուստի և չի կարող նա լինել միանգամայն վատահելի:

Ինչպէս էլ սակայն սահմանելու լինենք ներկայ գրութեան հանդէս գալու ժամանակը, նրա պատմական բովանդակութիւնը հազիւ թէ կարող է տեղիք տալ տարակուսանքի. նա նորից առիթ է տալիս մեզ պնդելու այն կարծիքի վրայ թէ ժէ դարում «Հայկական հարցի» մասին վճռական խօսքը դեռ չէր պատկանում մոսկովեան ցարին. Հայաստանի քաղաքագէտները կարող էին մտածել ուսւ դիւանագէտների բարեացակամ միջնորդութիւնների մասին միայն: Հայ մեսիանական գաղափարը դեռ չէր թևակուխել զարգացման այն օրհասական շրջանը, որտեղ հիւսիսից արշաւող ծիրանաւորը հմայում է անձկութեան մէջ դեգերող հոգիները որպէս մի նոր փրկիչ:

(Մ. Գ. Ա. Մ. Ի. Դ. Դъла արմանскія. 1724, марта 12. № 2, л. 6-7)

### Invictissime Imperator

*Post humillimas pedibus Magestatis Vestrae Serenissimae inclinationes, post innumerias ad Deum optimum maximum pro incolumentate Regiae Vestrae personae orationes, pro quiete foelicitate nec non victoriarum continuation totius Regni prae res, pro destructione eversione et totali profligatione inimicorum Crucis ad Deum ab ecclesia nostrae armena sup(p)licationes fusas, Imperatoriae Serenitati nec non consuetae erga extraneos sed tamen domesticos fidei*

<sup>1</sup> «Եւ կացեալ անդ աւուրս ինչ, եւ սակաւ ինչ վճարեաց ի պարտուցն», Զաքարեայ Սարկասագ, Պատմագրութիւն, Բ, 91:

<sup>2</sup> Մ. Զամչեան, Պատմութիւն Հայոց, Գ, 718:

*benignitati confidens suplex accedo et quemadmodum potentissimi Imperatores Mosquovitarum Ruthenorum et omnes se ipsos fidei defensores et propugnatores monstavunt semper, nec non protectores afflictorum contra tirannidem adversariorum ita nunc Sua Magestas horumce heroum successor Iegitimus tam in victibus quam s(c)eptro solita Sua clementia dignetur nobis miseris opitulari. En in Persia nostris eclesique neb noc eius ministris vectigalia exotica imponuntur et ob solutiones nostraes tenuitati et paupertati impossibilest nostri ad carceres trahuntur vexantur excruciantur, deinde quod ultima et praecipua mahometanorum est intentio ad ritum illorum compelluntur. Si tota persecutionis in opes et mundanas facultates duntaxat vergerat esset tolerabile malum legent tacerem sed cum videam singularis diebus filios nostros in Cristo lactentos ab uberibus eripi iuvenes delusos in rate protrahi puberitate et aetate dociatos per vim ad ritum saluti aeternae contrarium compelli, tantam stragem nequiens tolerare, exe post lacrimas ad Deum fusas en ad imaginem ipsius et loco tenentem in Suis Regnis accedo Imperatoriam videlicet Magestatem Vestram, et dignetur nobis misere opp(r)essis opitalari, et eo tempore quo Sua Magestas potentissima legatos apud persas emiserit aliquod verbum in nostrum fautrem patrimonium et eundem ..... in suis diplomatibus Regiis jubeat ir(r)iseri. Ruthenica potestas plurimum valet in animis persarum, neque forsam deinceps audebunt tantopere vexare, quos resciverint ratione communis in Cristum Deum fidei ad Vos spectare. En tota nostra gemens eclesia armena pedibus Vestrae Magestatis Imperatori pro voluta hasce humillimas supplicatoines fundit nec non ego gratia Dei huiusce in Cristo servus.*

*Imperatoriae Magestati stodictissimus et obsequentissimus humillimus servus.*

(L. S.)

(Հայոց)

*Potentissimo invictissimoque mosquovitar. Ruthenorum nec non aliarum populorum Imperatori Serenissimo.*

---

### Անյաղթ Կայսր

Խոնարհուելով առ ոտս Զերդ Օգոստափառ Մեծութեան, ուղղելով դէպի Ամենաբարձրեալն անթիւ մաղթանքներ Զեր թագաւորական անձի ողջութեան համար և՝ Հայ եկեղեցու աղերսանքները բովանդակ թագաւորութեանդ անդորր երջանկութեան և ներկայիս անսպառ յաղթութիւնների, խաչի թշնամիների տապալման, խորտակման և բնաջնջման համար, վստահ լինելով Կայսերական Օգոստափառութեանդ թէ դէպի օտարները և թէ դէպի տնայիններն ունեցած հաստատ ողորմածութեան վրայ՝ (Զեզ) եմ մօտենում ծնկաչոք։ Եւ ինչպէս Մոսկովեան Ռուսաստանի բոլոր ամենազօր կայսրները միշտ հանդիսացել են պաշտպան և զօրափիդ հաւատի այլ և թշնամիների բռնութեան հանդէպ՝ հովանի ճնշուածների, նոյնպէս և վայել է Նորին Մեծութեանը, այդ իսկ հերոսների յաջորդին՝ թէ կեանքում և թէ գահի վրայ, օգնութեան հասնել մեզ՝ խեղճերիս։

Պարսկաստանում մեզ և մեր եկեղեցու վրայ պարսից պաշտօնեանների կողմից դրւում են ահա օտարօտի հարկեր և մեզ, որ չենք կարողանում մեր չքաւորութեան և աղքատութեան շնորհիւ հատուցանել այդ հարկերը, քշում են դէպի բանդ, չարչարում են, տանջում և վերջապէս, որ յետինն է ու գլխաւորը մահմետականների նպատակների՝ իրանց դաւանանքն են հարկադրում ընդունել։ Եթէ այդչափ հալածանքները զրկէին մեզ միայն հարստութիւնից և աշխարհային ստացուածքներից, չարիքը փոքր կը լինէր, և ես լուսութեան կը տայի այդ բայց երբ տեսնում եմ օր օրի վրայ մեր ի Քրիստոս սնուող գաւակները հեռացած (մայրական) ստինքներից, խարուած պատանիները նաւով հեռանալիս, չափահասներին և գիտակցութեան եկածներին ուժով մղուած դէպի յաւիտենական փրկութեան հակառակ դաւանանքը, չը կարողանալով տանել այդքան մեծ կորուստը, ահա, արցունքներ թափելով առ Աստուած՝ Նրա պատկերի առաջ, մօտենում եմ նաև իւր թագաւորութեան մէջ Նրա տեղապահ Կայսեր, Զերդ Մեծութեանը, որպէս զի բարեհաճէ օգնել մեզ, խեղճութիւնից ճնշուածներիս, և երբ Նորին ամենազօր Մեծութիւնը պարսիկների մօտ դեսպաններ ուղարկելու լինի մի քանի խօսք (ասել) ի պաշտպանութիւն մեր ստացուածքի այլ և ..... իւր թագաւորական դիւանագէտներին հրամայէ ազդել։ Ռուս իշխանութիւնը մեծ նշանակութիւն ունի

պարսիկների աչքում և գուցէ առաջիկայում հաւակնութիւն չունենան այնքան տանջել նրանց, որ ի Քրիստոս Աստուածն ունեցած ընդհանուր հաւատի շնորհիւ, կարող կը լինեն Զեզ ուղղել իշխանց հայեացքը։ Որպէս իր սեան զարդի՝ բովանդակ Հայ եկեղեցին, ինչպէս նաև ես՝ այդ եկեղեցու սպասաւորն ի Քրիստոս, այս ամենախոնարհ խնդիրն արկանում ենք առ ոտու Զերդ Կայսերական Մեծութեան։

Կայսերական Մեծութեան ամենահաւատարիմ, ամենահնագանդ և ամենախոնարհ ծառայ

(Տ. Ա.)

(Հասցէ)

Առ ամենազօր և անյաղթ մոսկովեան ռուսաց և այլ ժողովրդոց Օգոստափառ Կայսր։

## ԳՐԱԽՈՍՏԱԿԱՆ-ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

«ՆԻՒԹԵՐ ՀԱՅ ՄԵԼԻՔՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ», Բ ՊՐԱԿ.

ԴՕՓԵԱՆՔ ԵԻ ՄԵԼԻՔ ՇԱՀԱԶԱՐԵԱՆՔ: ԳՐԵՑ ԿԱՐԱՊԵՏ  
ԵՊԻՍԿՈՊՈՍ, Ս. ԷԶՄԻԱԾԻՆ, 1914, ՀՐԱՏ. ԱԶԳ. ԸՆԿ.

Հայ մելիքութեան անցեալի ուսումնասիրութեան բնագաւառում «Ազգագրական ընկերութեան» ներկայ հրատարակութիւնն առաջինն է, որ ձեռնարկում է առանց հրապարակախօսական-վիպագրական հարցասիրութեան. Իաֆֆիի և իւր հետեղների ոռմանթիքական ըմբռնումներին և ազգայնական հրահանգներին ենթակայ պատմական երկերի հանդէպ՝ այս աշխատութիւնը կրում է նորութեան հմայք. նա գալիս է գիտական քննադատութեան հիմունքների վրայ դնելու հայ հասարակական կեանքում դեռ ևս մի դար առաջ տիրող իշխանական-ազնուական դասի մի կարևոր շերտի ուսումնասիրութեան գործը: Հարկաւ, պատմագիտական տեսակէտից այդ շերտը հետաքրքրական է այնքան միայն, որքան հնարաւորութիւն կունենանք ուսումնասիրութեան նիւթ դարձնելու նրա գոյութեան հասարակական և պետական հիմունքները ու մեկնելով այդ հիմունքներից՝ բնորոշել նրա դասային մտայնութեան և քաղաքականութեան զարգացման ընթացքը: Սակայն այդպիսի մի ուսումնասիրութիւն սկսելու համար չէ կատարուել ոչինչ նախնական աշխատանք. ոչ միայն մելիքների տիրապետութեան շրջանի իրաւական յարաբերութիւնները բնորոշող նիւթերի ժողովածուներ չը կան ուսումնասիրողի տրամադրութեան տակ, այլ և նոյն իսկ՝ հայ մելիքութիւնների քարտէզն ու մելիքական տների քիչ թէ շատ վստահելի տոհմագրութիւնը:

Վերջին տեսակի մի աշխատութիւն է ահա, որ, սահմանափակուելով Դօփեան և Մելիք Շահնազարեան սերունդներով, փորձում է ներկայացնել վերնագրուած ուսումնասիրութեան հեղինակը: Դիմելով միջնադարեան Հայաստանի ազգեցիկ իշխանական տներից մէկի՝ Դօփեանների սերնդաբանութեանը, հեղինակն աշխատում է ազգակցական կապեր գտնել դրանց և Գեղարքու-

նեաց երկրում իշխող Մելիք Շահնազարեանների միջև ու ներկայացնել միաժամանակ վերջիններիս ճիւղագրութիւնը՝ հասցնելով սերունդների յաջորդականութեան շարքը մինչև ԺՀ դարը։ Դարաւոր Հնութիւն ունեցող իշխանական այս ցեղերի տոհմագրութիւնը մօտաւոր ամբողջութեամբ և ճշտութեամբ տալու համար, տարաբախտաբար, դեռ աղբիւրների պակասութիւն է զգացւում։ Դեռ հրատարակութեան չեն տուած խնդրի լուսաբանութեանը նպաստող արձանագրութիւններից և յիշատակարաններից շատերը և որ ամենակարեւորն է՝ հայ և օտար դիւաններում ու մասնաւոր անձանց մօտ պահուող պատմական և տոհմային վաւերաթղթերը։ Նկատենք նաև այն, որ արդէն իսկ հրատարակած նիւթերն անգամ մասսամբ ժողովել ու խմբագրել են հայ Հնախօսութեամբ պարապող այնպիսի մարդիկ, որոնց գործերից օգտուելուց պահանջւում է տարակուսանքների մէջ տատանուող մտքի արտակարգ լարում։ Եւ չը նայած բոլոր այս անպատեհ հանգամանքներին՝ իրեն մատչելի աղբիւրների սուզ և յաճախ հակասական տեղեկութիւնները հեղինակն աշխատել է օգտագործել գրեթէ լիովին՝ ենթարկելով դրանց կանխական ստուգութեան և քննադատութեան։ Պէտք է ցաւել միայն, որ աղբիւրների վաւերականութիւնն որոշելիս, հեղինակը զանց է առնում այսպէս կոչուած «արտաքին քննադատութեան» (die äussere Kritik) պահանջները։ Նա Հնարաւորութիւն չէ ունեցել անձամբ կարգալու կասկածելի թուացող արձանագրութիւնները կամ անմիջապէս զննելու այն թղթերը, որ չէ համարում վաւերական։ Նման դէպքերում նա շատանում է վկայութիւնների ներքին Հնարաւորութեան սահմանների որոշումով՝ ստուգելով այդ կարգի փաստաթղթերը թեք ճանապարհներով վերականգնած ճշմարտութիւնների միջոցով։ Մերում ենք հաւատալ, որ բանական ենթարութիւնները շատ դէպքերում մոլորութեան մէջ չեն ձգում հեղինակին և որ մտածողութեան այդ իսկ եղանակով երբեմն նրան իրօք յաջողւում է վերատուգել իշխանների ու մելիքների անուններն ու նրանց ազգակցական յարաբերութիւնները։ մնում է միայն սպասել, որ նոր ուսումնասիրութիւնները գան լրացնելու ու սրբագրելու հեղինակի տակաւին թերի գործը։

Այստեղ թող ներուի մեզ այս ընդհանուր նկատողութեանը կցել մի երկու աննշան դիտողութիւն միայն։

Մ. Սմբատեանցի «Գեղարքունիք»-ում հրատարակուած Դաւիթ խան Շափուրեանի թղթերը, որոնց քննադատութեանը Հեղինակը նուիրել է մի քանի էջ (139 և հետ.), հանուած են Եփրեմ [Աջորագեղցի] կաթողիկոսի գիւանից. Մելիք Շահնազարեանների անունով կան սակայն մի շարք ուրիշ տոհմային գրութիւններ ու ֆերմաններ, որ դեռ քննութեան չեն առնուած. դրանց մի մասը, որքան մեզ յայտնի է, պահուած են Բաշ Աղջաքենդ գիւղում (Վերին շէն, Գանձակի գաւառ) այդ տոհմի շառաւիղներից մէկի՝ Բալաս Բէկի մօտ: Վերջինիս թղթերը, որքան եզրակացնել կարող ենք մեզ մօտ գտնուող մի երկու պատճէններից, ըստ բովանդակութեան բաւականին մօտ պէտք է լինեն «Գեղարքունիք»-ում հրատարակուածներին: Մեր ձեռքի տակ եղած պատճէններից երեսում է, որ 1824 թուին Դաւիթ խանը իր ազգականներից լիազօրութիւն է ունեցել «Համեմատ պարսից Աչքէվիդ թագաւորաց հրովարտակաց»՝ տիրանալու նախիջևանայ մօտ գտնուող Զահրուգեի (Յարզինալ) գաւառին, որպէսզի այդ հողերը «յետ տիրելէն, երիցս բաժին արասցէ, մի բաժինն վ սն իւր, մի բաժինն վ սն մելիք Բարսեղին, մին բաժինն վ սն ներկայ եղելոյս աններկայից»: Թղթի տակ ստորագրել են Մելիք Բարսեղ, Օռուշան, Միանսար, Ռուստամ և Մովսէս Մելիք Շահնազարեան Շափուրեանները: «Օրինական ճանապարհով հաւաքած տեղեկութիւնների հիման վրայ» տուած Ղարաբաղի կոնսիստորիայի 1861 թուի մի վկայութեան համաձայն, բոլոր այս ազնուականները պէտք է առաջացած լինեն մելիք Շահնազար Շափուրի երկու որդիներից՝ մելիք Եաւրիից և Եաւրի Աղայից. առաջնից ծնուել է Միր Դաւիթ խանի հայր մելիք Աստուածատուրը, իսկ երկրորդից՝ Միանսար բէկի հայր Նաղդին. «օրինական ճանապարհով հաւաքած տեղեկութիւնների» աղբիւրն այստեղ, ըստ երեսոյթին, պատմական թոյլ ու շփոթ յիշողութիւններից հեռուն չի անցնում: Տպագիր աղբիւրների շարքում հեղինակն ի նկատի չէ առել Եփրեմ կաթողիկոսի մի կոնդակը, որով «վերահասու գոլով մեր իսկութեան ի պատճագրութենէ Հայոց և ի զանազան հրովարտակացն նախնեաց» վաւերացում է «քեօլանու և զարիգիալու ի գրոց ծարու անուանեալ» գաւառում իշխող մելիքների ազգաբանական աղիւսակը (տե՛ս «Լումայ», 1900, Ա գիրք, էջ 290 և հետ.): Կոնդակում յիշուած անունները՝ «Մէլիք Ռւսուփին և որդի

նորա մէլիք Պալասան, և որդի նորա Մէլիք Բէկ, և որդի նորա Միրզախան և որդի նորա մէլիք Ալլահվերդի և որդի նորա մէլիք Ալլահզուլի և որդի նորա Ալամ խան և որդի նորա դարձեալ մէլիք Ալլահզերդի և որդի նորա մէլիք Սարգիսջան» և այլն, մասսամբ նոր են, իսկ մասամբ չեն համապատասխանում հեղինակին ծանօթ աղբիւրների տուեալներին:

Էջ 147 ու 161 և հետ. բերուած Դօփեան Պետրոս վարդապետի և նրա եղբայրների անունները յիշատակող աղբիւրների թւում հեղինակի ուշաղրութիւնից վրիպել է Էջմիածնի № 2105 Տաթևացու գրչագիր քարոզգրքի յիշատակարանը: Քարոզգիրքը գրուել է Ծար գաւառում Վառվառէ կոյսի ձեռքով, «ի վանս կուսանաց, ընդ հովանեաւ Թաղէի առաքելոյն». յիշատակարանի մէջ կարդում ենք. «Որ և տենչամբ սրտի և ըղձափափագ տոչորմամբ ետ գծագրել հեղահոգի և բարեփառ ք հնյապտն տէր Պետրոս վարդապետն որդի գոլով ազատաց յազգէն մեծի իշխանացն Գրիգորի և Հասանայ Դօքեանց կոչեցելոց: Յաղագս յիշատակի հոգւոյ իւրոյ և եղբօրն հարազատի տեառն Գրիգորի եպիսկոպոսի, ի հայրապետութեան Հայոց Եղիազարու դիտապետի լուսակառոյց գահոյն սուրբ Եջմիածնի և ի կողմանս Աղուանից Տեառըն Երեմիայի և Սիմէօնի կաթողիկոսացն: Եւ ի յառաջնորդութեան գերահոչակ Աթոռոյն Թաղէի վանից Տեառն Պետրոսի արիաջան և քաջ հովուապետի, և ի մելիքութեան սոյն նահանգի պարոն Միրզախան բէկին. և ի թագաւորութեան Պարսից Շահ Սուլէյմանին, ի թուին Հայոց Ռձլ Գ...»: Այս յիշատակարանն իրօք տրամադրում է կարծել, որ Դօփեան Պետրոս վարդապետը և Դաղի վանքի համանուն առաջնորդը տարբեր անձնաւորութիւններ չեն: Նման մի յիշատակարան, գրած Հայոց Ռձլին թուին գտնում ենք ի դէպ նաև Ե. Լալայեանի «Յուցակ Հայերէն ձեռագրաց Վասպուրական»-ի № 449-ի ներքոյ:

Էջ 173-174, հեղինակը հաւանական է համարում, որ 18-րդ դարի սկզբում Միւնեաց մելիքների քաղաքական շարժումների մէջ Մելիք Շահնազարեան մելիքներն ու իւզբաշիներն ևս իրանց մասնակցութիւնն ունենային: Կարող ենք պնդել, որ հեղինակի այս ենթադրութիւնն արդարացի է: Մոսկուայի արտաքին գործոց նախարարութեան գլխաւոր դիւանի գործերից երեսում է, որ 1724 և 1726 թուերին Գեղարքունեաց երկրի Մելիք Շահնազարի որդի

մելիք Սարգիսջանը՝ իր և իր երկրի իւղբաշխների և 30 գիւղի գլուխ կանգնած տանուտէրների ու քանդխուղաների անունից հպատակութեան թուղթ է յղել ոռւս արքունիքին և պատրաստակամութիւն յայտնել՝ ենթարկուելու Սիւնեաց երկրում գտնուող ոռւսաց քաղաքական գործակալին: Այդ մասին մնացած գործին ըստ էութեան կը դառնանք այլ առթիւ: Այստեղ կը կամենայինք միայն ենթադրել, որ մոսկովեան դիւանի գործերում յիշուող մելիք Սարգիսջանը մելիք Շահնազար Գի յաջորդն է. Դաւիթ խանի թղթերում, ուր ներկայ դէպքում ըստ երևոյթին անուններից մէկն է միայն շփոթուած, մելիք Շահնազար Գի յաջորդը կոչւում է մելիք Աղաջան, իսկ վերջինիս որդին՝ մելիք Միանսար: Մեր ձեռքի տակ եղած փաստաթղթերից մէկի մէջ մելիք Սարգիսջանի անուանը կից յիշուում է «Միիա(ն)սար» անունը, որից յետոյ գալիս են Գեղարքունեաց տանուտէրների անունները. ըստ երևոյթին վերջիններիս հանդէպ «Միիա(ն)սարն» արտօնեալ վիճակ ունէր. ուստի և կարելի է ընդունել, որ նա հէնց մելիք Սարգիսջանի որդին է:

Էջ 179 և հետ. հեղինակը փորձում է սերնդաբանական կապեր գտնել Գեղարքունեաց և Ղարադաղի մելիքների միջև. այդտեղ յարուցած խնդրի մօտաւոր լուսաբանութիւնը թողնելով ուրիշներին, կը կամենայինք մատնանշել էջմիածնի մատենադարանի № 1720/1488-ի 1781 թուին գրած յիշատակարանի մէջ բերուած Ղարադաղի ժամանակակից մելիքներից մէկի անուան վրայ ևս. գրչագրի թերթ 218 թ յիշատակուած ենք գտնում. «Մէլիք Փարսադանն, որ ի Ղարադաղ, այր հանճարեղ»:

Անյայտ և անյիշատակ շատ այդպիսի «հանճարներ» է տեսել Հայոց աշխարհը. յուսանք «Ազգագրական ընկերութեան» ապագայ հրատարակութիւնները կը գան գեռ ցրելու, գէթ մասամբ, մոռացութեան այն մշուշը, որ սփուրում է դրանց անուան և գործերի վրայ:

## ՊԵՏՐՈՍ ԴԻ ՍԱՐԳԻՍ ԳԻԼԱՆԵՆՑ

(Պատմական-կենսագրական ակնարկ)

Հայոց նոր պատմութեամբ հետաքրքրւողները յիշում են անշուշտ այս մարդու անունը. Պետրոս դի Սարգիս Գիլանենցն այն իսկ անձնաւորութիւնն է, որ 1720-ական թուականների սկզբին Պարսկաստանի ժամանակակից անցքերի ու դրանց ընթացակից հայոց քաղաքական շարժման մասին օրագրի ձեռվ կազմած մի ընդարձակ տեղեկագիր ուղարկեց ուսւաց քաղաքական շրջաններում ծանօթ հայ գործիչ Մինաս վարդապետին և Գիլանի ոուս կառավարիչ բրիգադիր Լեվաշեվին<sup>1</sup>:

Օրագրողի անձնաւորութեան մասին մի քանի ակնարկ գտնում ենք միայն նրա թողած պատմական յիշատակարանի վերջին հատուածում: Աւելի մօտ հասկացողութիւն են տալիս մեզ նրա մասին մեր ձեռքի տակ եղած մի քանի անտիպ գրութիւններ, որ մինչ այժմ գեռ չեն դարձել յատուկ ուսումնասիրութեան նիւթ: Գիլանենցն այստեղ դէպքերի արձանագրող չէ արդէն, այլ նրանց մէջ մասնակցող կենտրոնական դէմք. նրա անունը կապւում է այստեղ ժամանակի քաղաքական-ուազմական ձեռնարկների հետ: Թղթերի մէջ զեկուցանողը ինքը Գիլանենցը չէ այլևս, այլ նրան գործակից մարդիկ ու նրան հովանաւորող Մինաս վարդապետը, հայոց քաղաքական շարժման մէջ նշանաւոր դէմքերից մէկը: Սակայն չը պէտք է մոռանանք և այն, որ այդ թղթերը մեծ մասամբ գրուած են Գիլանենցի մասնաւոր նամակների ու զեկուցագրերի հիման վրայ: Այդ տեսակետից իսկ նրանք ներկայացնում են մեզ, որպէս նրա ընդարձակ տեղեկագրի շարունակութիւնն ու ամփոփումը<sup>2</sup>:

<sup>1</sup> «Ժամանակագրութիւն Պետրոս դի Սարգիս Գիլանենցի ջուղայեցոց բարբառով գրած», տես «Կոռնկ Հայոց Աշխարհին», 1863, էջ 81-112 և 181-212: Հմնտ. «Дневникъ осады Испагани Афганами, веденный Петросомъ ди Саркисъ Гиланенцъ. въ 1722 и 1723 годахъ. Материалы для истории Персии. Переводъ и объясненія К. Патканова (Приложеніе къ XVII – му тому Записокъ Имп. Акад. наукъ. № 3, pp. XXXII + 57), СПб., 1870.Պատմական գրականութեան մէջ Գիլանենցին ուշադրութեան են առել՝ Գ. Էզօվъ, Շոն. Պետ. Վել. ժ. արմ. նարօդուն. Վաճառք, LXI-LXIII և Lx, Հայկական տպագրութիւն, Թիֆլիս, 1901, Բ տպ., էջ 329 և հետև.:

<sup>2</sup> Այստեղ յիշուած գրութիւնները պահուած են Մոսկ. Главн. Архивъ, Мин. Иностр. Дѣлъ. Ճѣла армянскія. 1725. № 1, ներքոյ («Доношение Армянского Архиерея Минаса вартапета о усиленьшшей прозбѣ Армянского народа прислать къ

\* \* \*

ա. Գիլանենցի գործունեութեան սկզբնական շրջանը

**Քիչ բան կարող ենք ասել Գիլանենցի կեանքի և գործունէութեան սկզբնական շրջանի մասին։ Այն հանգամանքը, որ նա գրում է նոր Զուղայի բարբառով ինքնին արդէն հաւանական է կացուցանում, որ նա ծնուած և դաստիարակուած պէտք է լինի Սպահանի նշանաւոր արուարձանում։ Ազգանունը մատնում է մեզ թերեւ նրա հեռաւոր նախորդների հայրենիքը, այն երկիրը, որ յետագայում պէտք է դառնար մեր հերոսի գործունեութեան գլխաւոր կայանը։ Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի մի խաչքարի վրայ կայ յամենայն դէպս յիշատակութիւն, որ գալիս է ասելու, թէ նրա տոհմը հաստատուել էր այդտեղ դեռ Ժէ դարում և եղել է մէկը գաղութի ունեոր հայ տներից։ Անշուշտ ինքը Պետրոսն էլ ապրուստի կարիք չէ ունեցել անցեալում։ Նրա հայրանուան եւրոպականացած ձեր, բաւականաչափ բնորոշ յատուկ ժամանակի ու շրջանի համար, վկայում է, թէ 1723 թուին նա արդէն աշխարհ տեսած մարդ էր, ունեոր վաճառական։ «Նրա գրելու ձեից իսկ, - նկատում է Ք. Պատկանեանը, - երեւում է, որ հեղինակը գրագէտ մարդ է, փորձուած, թէև չէ ստացել առանձին կրթութիւն։ Այն հանգամանքը, որ նա յաճախ գործ է ածում ուու-**

---

нимъ начальника могущаго имъ руководствоваться по причинѣ, что главныи ихъ начальникъ Петръ Сергеевъ на бatalіи убитъ.»): Գործի մէջ գտնուած թղթերից կարեոր են՝ ա. Սինա վարդապետի 1725 թ. 1-ն փետրուարի բուակիր մի զեկուցումը ցարին (fol. 2 ր – 3 ր.), թ. Կուրքառօվի 1725 թ. ապրիլի 12-ի զեկուցումը արտաքին գործոց կողեզիային Գիլանի գործերի համար Սինա վարդապետի Սոսկուայից Պետրորուգ գնալու ցանկութեան մասին (fol. 4 ր – 5 ր.), գ. Յովհաննես (Иванъ) անոնվ հայի Գիլանից Սինա վարդապետին գրած 1725 թ. 17-ն յունուարի բուակիր նամակը (fol. 9 ր – 13 ր.): Այս նամակի հեղինակը, ինչպէս վկայում է Սինա վարդապետը, եղել է Պետրոս Գիլանենցի գործակիցներից և նրա այն զաւ և հաւատարիմ ընկերը, որին ինքն Պետրոսը վստահանում էր իր զաղոսնիքները։ նամակագիրն ինքը ամփոփում է իր դժբախտաբար միայն ուսւերէն քարզնանութեամբ մեզ հասած գրութիւնը այս խօսքերով։ «Все вышеписанное покойникъ Петръ писалъ, а я съ того сie пишу якобъ копію». (fol. 12 v.), դ. Սինա վարդապետի 1725 թ. 19-ն օգսոսոսի բուակիր դիմումը Կատարինն Ակայրուհուն (fol. 27 ր – 28 v.): Վերջին թղթով Սինա վարդապետն ընթացք է տախու նախորդ գրութեան մէջ արուած դիմումներին։ Այդ թղթը, որի մէջ խօսք կայ նաև հայերի ընդհանուր քաղաքական ակնկալութիւնների մասին, գետեղում ենք սոյն յօդուածի յաւելուածում։

<sup>1</sup> Այդ խաչքարի վրայ կարդացում է «Սուրբ խաչ յիշատակէ զինց Աւետիկն, թիվն ոճի։ Յշտկէ սուրբ եկցւ գ լնց (Գիլանէնց) Աւետիկին՝ և կողակցաց Մարաքին՝ Ապիշանին՝ և որդի Յակոբը անին»։ Տես, Յաք. Տեր-Յովհաննեան, Պատմութիւն Նոր Զուղայու որ յԱսպահան, Նոր Զուղա, 1881, թ. էջ 6:

**սերէն** վերստ (верста), չին (чинъ), վօլնա (вольный), սովարի (сухары) և այլն բառերը, ապացուցանում է, որ նա եղել է Ռուսաստանում, եթէ չընդունենք, որ ոռուսերէն բառերի գործածութիւնը այն ժամանակ սովորական էր պարսկահայերի մէջ»<sup>1</sup>: Պատկանեանի բերած բառերի գործածութիւնը օրագրի մէջ կարելի կը լինէր իհարկէ վերագրել նաև Գիլանում ապրող ոռու զինուորականների և պաշտօնեաների ազգեցութեանը, որոնց հետ հեղինակը մօտ և անմիջական շփման մէջ էր գտնւում: Որ սակայն Գիլանեանցը մինչ այդ եղել է Ռուսաստանում և նոյն իսկ Արևմտեան Եւրոպայում՝ դրա համար կան անմիջական տուեալներ: 1716 թուին հանդիպում ենք նրան Ամստերդամում ժամանակի խոշոր հայ դէմքերից մէկի՝ Ղուկաս Վանանդեցու շրջանում. Վանանդեցու այդ թուին լոյս տեսած «Պատկերասէր պատկերատեաց»-ի խորագրի տակ կարդում ենք՝ «Նուիրագրեալ՝ և Տեառնագրեալ Զուղայեցի Գիլանէնց ի Տ ը հանգուցեալ Սարդսի որդւոյ Պետրոսին»: Դժբախտաբար Վանանդեցու այդ գիրքը յիշատակարան չունի, և մենք դժուարանում ենք ասել, թէ ինչո՞ւ կամ ի՞նչպէս է Գիլանենցն արժանացել նշանաւոր տպագրչի այդ ուշադրութեանը. բայց թէ յիրաւի Գիլանենցն այդ ժամանակ հետաքրքրւում էր հայ գրքի վիճակով ու ըստ երեսյթին նաև մեկենաս էր հանդիսանում նրա տպագրութեան՝ եղրակացնել կարող ենք Ամստերդամից գրած նրա մի նամակից, որ նոյն տարին նա ուղղել է Ռուսաստանի նուիրակ Զուղայեցի Յովակիմ արքեպիսկոպոսին<sup>2</sup>. ահա և նրա տողերը՝

**Գերապայծառ Տ՝ իմոյ յօվագիմ եպիսկոպոսիդ.**  
Յատ լիցի վեիդ որ տ ը եղիսէիցն խնդրեցի որ հ ըմնցդ գրի որ լազաթ առես. վարպետ զուկասին ծեռացայգիր նարեկն ու մին լավ գիրք որ մեր վարդայպետ ց քշտին մաղբուլ լինի տաս էս գիր բերող թեօդօրօ վէլքսին որ աղարկէ բանդիս ձեռն որ տեղս մին գիրք ամ պա սմյ անում էն գրքին պէտք այ. կը խնդրեմ որ մաթլապիս կատարումն տաս և թողութիւն առես որ քանի քալմէս վրազ գրեցի. շալահ (իշալլահ?) ա ծ նասիպը թ մին էլ հը մնցդ ոտն համբուրեմ, ուրախ լեր ոխչ ի տէր: Եղեւ ա մմարդմ թիվն 1716 6/17 յուլիսի.

Փոքր ծոյ յ ոտից հող չնշին  
Պետրոս Գիլանենց

**Թւում է թէ Գիլանենցի ակնարկած գիրքը լոյս չէ տեսել աւմենեին: 1717 թուին Ղուկաս Վանանդեցու տպարանից դուրս ե-**

<sup>1</sup> «Дневникъ и. т. д.», апостоларан, էջ XXIX-XXX.

<sup>2</sup> М. Г. А. М. И. Д. Ճելա արմ. 1720 օկտ. 31. № 3, fol. 109 թ.

կաւ Ամստերդամի վերջին հայերէն հրատարակութիւնը՝ «Կարճառու ժամագիրք ի մի վայր ժողովեալ ի պէտս Հայոց վաճառականաց» վերնագրով, մի գործ, որ անշուշտ ոչինչ չունի Գիլանենցին հետաքրքրող աշխատութեան հետ: Նոյն թուին մեռնում է Ղուկասը, և դրա հետ ի միասին ընդ միշտ փակւում է նրա տպարանի գործունէութիւնն Ամստերդամում<sup>1</sup>:

Թէ ո՞ւր դիմեց այնուհետև Գիլանենցը, չը գիտենք: Հազիւթէ տպագրական գործը բերած լինէր նրան Եւրոպա, և հաւանական էլ չէ, որ նոյն գործը երկար պահած լինի նրան այնտեղ: Ամստերդամում նա անշուշտ երթևեկող մարդ էր. այստեղ գալիս էր նա առետրական գործերով. «զրայ մենք սովորագար անք ելել ալիշ վէրիշի տէր», խոստովանում է տարիներ յետոյ Գիլանենցը<sup>2</sup>. նա մէկն էր ըստ երևոյթին այն խոշոր հայ առետրականներից, որոնք Ամստերդամ էին բերում Գիլանի մետաքսը և՝ փոխանակելով այն հոլլանդական գործուածքների հետ՝ վաճառքի էին հանում այս ապրանքները Պարսկաստանի շուկաներում: Եւ երևի առետրական այս ճանապարհորդութիւնների ժամանակ էլ նա ծանօթացաւ Մոսկուայում Մինաս վարդապետի հետ ու սրա միջոցով՝ նաև ռուսների հայկական քաղաքականութեանը:

\* \* \*

թ. Հայ առեւտրականի վերաբերմունքը դէպի Պարսկաստանի  
քաղաքական շարժումները

Հայ վաճառականի գործերը պէտք է շեղուէին իրանց խաղաղ ու կանոնաւոր ընթացքից, երբ արեւելքում բռնկուեց աւղանների ապստամբութիւնը ու երկար տարիներով խանգարեց իրանի գարաւոր հանգիստը: Պարսկաստանն անզօր է հանդիսանում խեղդելու սաղմերի մէջ Միր Վայսի և Միր Մահմուտի խրոխտ ձեռ-

<sup>1</sup> Կուկաս Վանանդեցու մահուան մասին Ռուսաստանի նուիրակ Յովակիմ արքեպիսկոպոսին տեղեկութիւն էր տուել Գիլանենցի նամակում յիշատակուած Ամստերդամի Եղիսէ հայ քահանան. և ահա թէ ինչ խօսքերով է պատասխանում վերջինիս Յովակիմ արքեպիսկոպոսը. «զրեալ էիր վ՝ Կուկասին խղճութ ն վաղճանելն. գիտացիր նախ Թարեւու երեցն. թէ զինչ էր գործեալ լուսահողի Ռսկան վարդապետին հետ. առաւ հասուցումն որ ա՞նց խոստովանութեան և հաղորդութեան վճարեաց զիեանն իր. նմանազէս դա զինչ էր գործեալ Թօմայ վրդպատին հետ ըստ իր առմանցն առաւ և դա» (անդ, fol. 36): Բացասական որակում Կուկասի անձնաւորութեան այստեղ մեզ առաջին անգամն է հանդիպում:

<sup>2</sup> «Ժամանակագրութիւն», № 133, էջ 211:

նարկը. Երկրի մի ծայրում առաջացած շարժումն աճում և տարածում է ամբողջ պետութեան մէջ. հետզհետէ ոտի են կանգնում լեզգիներն ու քուրդերը, արաբ ու թաթար ցեղերն ու ցեղապետները: Օգտուելով ապստամբական այս համատարած հրդեհից, ոռւս և տաճիկ զօրքերը շտապում են Պարսկաստան՝ իւրացնելու նրա զերծ մնացած պատառները, իսկ դրսի այս միջամտութիւնը տարտամ վիճակից հանում է Պարսկաստանի քրիստոնեայ ազգաբնակութեանը՝ վրացիներին և հայերին՝ և թե տալիս նրանց կենտրոնախույս քաղաքական ձգտումներին:

Անկախ Հայաստանի ուրուականն առանձին աշխոյժ է ստանում հայ մելիքների ու իւրգրաշիների աւանդական իշխանութեան ստուերների տակ: Վարդագոյն ապագայի յոյսերով Ղարաբաղի հայ մելիքները և Աղուանից կաթողիկոս Եսային իրանց զօրքերով դուրս են գալիս վրաց Վախտանգ թագաւորի առաջնորդութեամբ դիմաւորելու ռուսների յաղթական մուտքը Պարսկաստան: Ղափանի և շրջակայքի հայերի մէջ սկսում է խմորուել քաղաքական մի շարժում, որ յետագայում պէտք է կենտրոնանար Դաւիթ բէկի ապստամբական դրօշի շուրջը: Կային նաև այլ ուղղութեամբ մտածող և գործող դէմքեր: Հայ ազնուականութեան շրջանում երևացին թրքակը հոսանքի ներկայացուցիչներ: Իսկ երկու տիրող ուղղութիւնների մէջ չէզոք դիրք էին աշխատում գրաւել էջմիածնի հայ վանականները:

Միանգամայն հեռու մնաց քաղաքական այս անցքերից ու դէպքերից հայ առևտրական դասը: Զուրկ ազգային-քաղաքական երազանքներից՝ նաև չունէր նաև իրական գործունէութեան որոշ ծրագիր: Կրաւորական համակրանքներով նա յարում էր ինքնին տիրող քաղաքական-հասարակական կարգերին ու օրէնքներին, որոնց հետ շղթայուած էր իրաւական պահանջների և տնտեսական շահերի հազար ու մի կապերով: Եւ ի՞նչ կարող էր սպասել հայ վաճառականը ցեղային և գաւառական սկզբունքների տեսական յաղթանակից, եթէ ոչ քաղաքական խոշոր միութիւնների կազմալուծում և տնտեսական գործող կազմակերպութիւնների խանգարում և քայքայում միայն: Զէ՞ որ «յեղափոխական» այս շարժումն ըստ ինքեան դարերով ամբարուած յետաշարժ ոյժերի մի ժայթքում էր միայն՝ ուղղած քաղաքական-տնտեսական այն նոր կարգերի դէմ, որ սկսել էին արմատանալ իրանի թագաւորութեան մէջ Սեֆիդեան հարստութեան տիրապետութեան ընթացքում: Իզուր չէ հայ առևտրական Եղիա Մուշե-

ղեանը, որը, որպէս «աճենթ, այսինքն փոխանորդ ժողովին արևելից և հնդկաց վաճառականաց», նստած Պարսկաստանի վաճառաշահ քաղաքներում ուշի ուշով հետեւում էր երկրի անցքերին, տարիների ընթացքում վարած իր մասնաւոր թղթակցութիւնների մէջ սոսկումով արձանագրում ապստամբ ցեղերի ու նրանց վարիչների առաջընթացութեան փաստերը և ընդհակառակը՝ հիացումով նկարագրում պարսիկների յաջողութեան աննշան դէպքերն անգամ<sup>1</sup>: Եւ նա սիրում էր հաւատալ, թէ ճակատագիրը կը փրկէ Սեփիների հարստութիւնը վերջնական կորստից:

Սակայն այդ յոյսերն օր աւուր սպառնում էին չքանալ անհետ: Պետական այն մեքենան, որի յուսալի նեցուկներից մէկն էր մինչ այդ հայկական կապիտալը, դադար էր տուել իր կանոնաւոր գործառութիւններին. այս մտքին պէտք է ընտելանար նոյնիսկ հայ առետրականի քաղաքական բարեյուսութիւնը: Հակամէտ ոյժերի և ազդեցութիւնների այն ժխորում, որ ստեղծուել էր երկրի մէջ չնորհիւ զինուորական-քաղաքական ուժեղ ցնցումների, հայ վաճառականը ևս պէտք է շտապէր գտնել իր գոյութիւնն ապահովող նոր յենակէտներ, յարէր տիրող հոսանքներից մէկին կամ միւսին. նա պէտք է դուրս գար քաղաքական անդորր ու անվրդով մտայնութեան ապահով շրջանակներից, որդեգրուէր նոր ազդեցութիւններից մէկին ու նրա ներշնչմամբ նետուէր կոռուի դաշտ:

Պարսկահայ վաճառականների մէջ Պետրոս դի Սարգիս Գիլանցն առաջինն էր, որ ենթարկուեց ժամանակի այդ պահանջին: Նա առաջինն էր հայ կապիտալի այն ներկայացուցիչներից, որոնք նետուեցին գործոն ազդային քաղաքականութեան գիրկը:

\* \* \*

գ. Հետախոյզ խմբակ եւ հայկական էսկադրօն

Մինաս վարդապետի յանձնարարութեամբ և ոռւս կառավարութեան գիտութեամբ ու ցանկութեամբ 1722 թուի ապրիլին, այն իսկ ժամանակ, երբ Աստրախանում պատրաստութիւն էր տեսնուում առաջիկայ արշաւանքի համար, Գիլանենցն իր տասը հաւատարիմների հետ գալիս է Պարսկաստան<sup>2</sup>: Նրան, ինչպէս ե-

<sup>1</sup>Տես Մ. Գ. Ա. Մ. Ա. Դ. Ճելա արմ., 1724, № 1-ի յաւելուածների մէջ գտնուող տեսքները:

<sup>2</sup> Եզօնք, անդ, № 305, § 100 և «Ժամանակագրութիւն», № 133:

րեռում է, յանձնարարուած էր տեղեկութիւններ հաւաքել այստեղ քաղաքական անցքերի մասին, այլ և իւր փոքրիկ խմբի միջոցով զինուորական հետախուզութիւններ կատարել Գիլանի շրջանում, այն երկրում, որ իր արդիւնաբերութեամբ վաղուց էր արժանացել ցարի առանձին ուշադրութեանը։ Գործունէութեան կենտրոն ընտրելով՝ Ռէշտը՝ Գիլանենցը բաւականացաւ իր սակաւաթիւ մարդկանց աջակցութեամբը մինչև 1723 վերջերը. այնուհետև նրա խումբն աճում է և կազմում 80 հոգուց բաղկացած մի գումարտակ, որ յետագյում «Հայկական անկանոն ձիաւոր Էսկաղրոն» անուան տակ կազմում էր Գիլանում գործող ռուսական գնդի առաջապահ մասերից մէկը<sup>1</sup>։ Կայ յիշատակութիւն, որ Հայերն աւելի մեծ քանակութեամբ էին խմբուել ոռւս զօրքի շուրջը. սակայն տեղեկանալով, որ դրա մասին չը կայ յատուկ հրաման՝ նորից ցըւում են<sup>2</sup>։ Ինքը Գիլանենցը, բարձր կարծիք էլ չունէր տեղական ոյժերի մասին. իր նամակում նա խնդրում է Մինաս վարդապետին «Քանի լեզ բիլան տղէք» ուղարկել Ռէշտ, որովհետև «տեղս տղայ շատ կան ամայ բանի պետք չեն և ... մոչ մեկն մեր ֆանդ չեն»<sup>3</sup>։ Ինչպէս խուզարկու խմբի, նոյնպէս սկզբում նաև Հայկական Էսկաղրոնի պարենաւորման հոգսն ամբողջովին ընկնում էր գործը կազմակերպողների վրայ<sup>4</sup>, և ամենախոշոր զոհաբերութիւն անողն այդ ուղղութեամբ հէնց Պետրոս Գիլանենցն էր։ Նա էր Հայթայթում խմբի համար պատերազմական մթերքներ<sup>5</sup>, նա էր, որ կերակրում էր իր միջոցներով գրեթէ բոլորին. «Նրանց, որոնք չքաւոր էին մեր մէջ, - գրում է Մինաս վարդապետին Գիլանենցի գործակիցներից մէկը, - բոլորին էլ, ինչպէս գիտես, կերակրում էր ինքը պարոն Պետրոս. ինչքան փող և ապրանք ունէր, բոլորն էլ ծախսեց ու շատ պարտքերի տակ ընկաւ, քանի որ եօթանասուն և չորս ձիաւոր էր կերակրում նա»<sup>6</sup>:

Կրելով այսքան ծանր զրկանքներ Գիլանենցն իր մարդկանցով կատարում էր ոռւս զօրքի համար կարեոր գործեր։ «Ինչպէս քեզ յայտնի է, - կարդում ենք Մինաս վարդապետին ուղղած նոյն»

<sup>1</sup> **Մ. Գ. Ա. Մ. Ի. Դ.** Ճյլա արմ., 1725, № 1. ff. 2 r-3 r. և 9 v. հմմտ. **Գ. Էզօվъ**, անդ, № 303 ու № 305, § 10 և **Պ. Բուտկովъ**, Материалы для новой истории Кавказа, съ 1722 по 1803 годы, СПб., 1869, г. I, стр. 57.

<sup>2</sup> Ճյլա արմ., 1725, № 1, fol. 13 r.

<sup>3</sup> «Ժամանակագրութիւն», № 133 (էջ 210-211):

<sup>4</sup> Անդ, էջ 209 և հետ. Ճյլա արմ., 1725, № 1. fol. 2 r.-3 r. **Գ. Էզօվъ**, № 305, § 10:

<sup>5</sup> «Ժամանակագրութիւն», № 133, էջ 212:

<sup>6</sup> Ճյլա արմ., 1725, № 1, fol. 11 v.

գրութեան մէջ, - շատ ծանր են տեղիս պայմանները, երկիրն անտառապատ և ճահճու՝ բացի ուրիշ անյարմարութիւններից (գարցեան)». Հետախուզութեան մասին եղած զինուորական կանոններով ոչինչ չէ կարելի անել այստեղ: Մեզանում օդն էլ վատառողջ է. օտարները չեն դիմանում այստեղ, իսկ մահմետականներն այնքան լաւ տեղեակ են այստեղի սովորութիւններին ու այնպէս գիտեն վարուելու եղանակները, որ երբեմն հարիւրով ջարդում են երկու հազարին, որովհետև տեղը խուլ է, և եթէ չը լինէր մեր հայոց զօրքը, յայտնի է Աստծուն, թէ ինչ ծուղակներ կը պատրաստին մահմետականները»<sup>1</sup>:

Պատերազմական վայրերի խուզարկութեան նպատակով, այլ և տիրող տրամադրութիւններին և ընթացիկ լուրերին իրազեկ լինելու գիտաւորութեամբ՝ հայերը շփում և հաղորդակցութիւն էին պահպանում մահմետական ազգաբնակութեան հետ<sup>2</sup>: Մարդիկ ուղարկելով ամենուրէք կամ հարցման ենթարկելով պատահող մարդկանց՝ Գիլանենցն իրազեկ էր պահում գնդապետ Շիպօվին և Գիլանի կառավարիչ Լեվաշեվին. այդ տեսակէտից էլ հէնց պէտք է մօտենալ նրա ընդարձակ տեղեկագրին, որ ըստ էութեան նրա ձեռնարկած գործի աչքի զարնող արդիւնքներից է: «Պէտք է զարմանալ, - նկատում է Գիլանենցի գիտնական թարգմանիչը, - հեղինակի վարպետութեան՝ բազմաթիւ իրար հակասող տեղեկութիւններից արժանահաւատ փաստերն ընտրելու և նրանց բարեխղճօրէն գրի առնելու վրայ: Կասկածելի ծագում ունեցող լուրերին իւրաքանչիւր անդամ կցում է՝ ասում են, չը գիտենք, ճշնարի՞տ է արդեօք և այլն բառերը: Նրա հաղորդած գրեթէ բոլոր փաստերի վաւերացումը մենք գտանք Կրուզինսկիի և Հանվէյի աշխատութեանց մէջ, որոնցից առաջինն ականատես է եղել (Սպահանի) պաշարմանը, իսկ երկրորդը գրել է վստահելի աղբիւրների և սոսկալի յեղաշրջման բոլոր շրջանները վերապրած մարդկանց պատմուածքների հիման վրայ»<sup>3</sup>:

Հարկաւ ոռւս բրիգագիրը սիրով էր ընդունում Գիլանենցի մատուցած ծառայութիւնները և կրկին ու կրկին խոստանում էր զեկուցել դրանց մասին Պետրոս Մեծին<sup>4</sup>: Ոռւս զինուորականների հետ յամենայն դէպս այնքան բարեկամական էին Գիլանենցի յարաբերութիւնները, որ Մինաս վարդապետին ուղղած գրութեան

<sup>1</sup> Ճելա արմ., 1725, № 1, fol. 10 v.

<sup>2</sup> Անդ, fol. 9 r.

<sup>3</sup> «Дневникъ» и т. д., Апологарян, кн XXIII:

<sup>4</sup> Անդ, fol. 11 r.

մէջ նրան ողջոյններ էր ուղարկում դրանց կողմից<sup>1</sup>: Դժուար է ի հարկէ նման փաստերի մէջ նշմարել գործի իրական գնահատութիւն: Հայերը յամենայն դէպս վստահութեան աւելի շօշափելի հաւաստիացումներ էին սպասում իրանց նոր տէրերից. նրանք չէին ուզում հասկանալ այն սիրալիր վերաբերմունքի խորհուրդը, որ նկատում էին ոռուսների մահմետական ազգաբնակութեան հետ ունեցած յարաբերութեան մէջ: «Ծուս զօրքի մէջ,՝ նկատում է այդ առթիւ մեզ ծանօթ նամակագիրը, ՝ մեզանից աւելի խելօք մարդիկ կան. բայց նրանք ընդունակ չեն ճանաչելու իրանց հաւատարիմ մարդկանց և հեշտութեամբ կարող են ենթարկուել ուրիշների խաբէութեան»<sup>2</sup>: Հեղինակի ինքնասիրութիւնը շոյում է միայն այն կարծիքը, որ ունէին հայերի մասին մահմետականները. «Եթէ չը լինէին մեր մէջ հայերը, ՝ այս խօսքերն է դնում նրանց բերանում նամակի հեղինակը, ՝ եթէ ականատես չը լինէին նրանք մեր գործողութիւններին ու չիմանային մեր լեզուն, մենք վաղուց ջարդած կը լինէինք Ռուսաստանի զօրքերին»<sup>3</sup>: Նամակագիրը շեշտում է առանձնապէս, որ թշնամին քանիցս խոստացել է Գիլանենցին և իւր գործակիցներին մեծամեծ պատուանշաններ և նոյն իսկ առանձին իշխանութիւն՝ միայն թէ նրանք յետ կանգնեն իրանց ոռուսասէր քաղաքականութիւնից: Սակայն Գիլանենցին չէ հրապուրել նրանց խոստումներից և ոչ մէկը<sup>4</sup>:

Դէպքերի այս արձանագրութեան յետեւ թագնուած է յուսախաբ եղած հոգու դառնութիւն. Պարսկաստանում տեղի ունեցող քաղաքական խոշոր անցքերը պէտք է գային դեռ ընդարձակելու հայերի հիասթափութեան սահմանները:

\* \* \*

Դ. Ռուս դիւնագիտութիւնը եւ հայերի քաղաքական տագնապը

### 1722 և 1723 թուականների ընթացքում ոռուսները մերձկաս-

<sup>1</sup> «Ժամանակագրութիւն», № 133, էջ 212:

<sup>2</sup> Ճելա արմ., № 1, fol. 12 v. Հայերը չը գիտէին ի հարկէ, որ ոռուսների սիրալիրութիւնը թելադրուած էր կառավարութեան կողմից և հետևանք քաղաքական փափուկ կացութեան: Հմմտ. Պ. Բուտկովъ, 1, с. 43, և հետ.:

<sup>3</sup> Ճելա արմ., 1725, № 1, fol. 10 r..

<sup>4</sup> «И неоднократно мусульманы обывали дать великие чины и провинции, чтобы мы отстали от той службы, но нашъ господинъ Петръ того не принялъ и ни въ что вмѣнялъ». Անդ, fol. 10 v.-11 r.

պեան երկիրներում գրաւեցին Դերբենդը, Բագուն և Ռէշտը: Նրանց տիրապետութիւնից դուրս մնաց այդ գծի վրայ վաճառաշահ Շամախին, որտեղ լեզգիներն էին ամրացել: Վրաստանն ու Հայաստանը սկզբից և եթ ոռւսների անմիջական մտահոգութեան շրջանից դուրսն էին գտնւում. այդ երկիրներին տիրանալու համար պէտք էր ընդհարուել պարսիկների և, որ ամենաղժուարն էր, օսմանեան թիւրքերի հետ. այդպիսի կոիւ մղելու համար ոռւսները ոչ ցանկութիւն ունէին և ոչ էլ, որ աւելի կարեոր էր՝ հնարաւորութիւն: Գրաւած երկիրներն էլ նրանք հազիւ էին կարողանում պահել իրանց զէնքի իշխանութեան տակ: Զօրքի կանոնաւոր պարենաւորման խնդիրը, չնորհիւ հաղորդակցութեան միջոցների անզարգացած վիճակի, այդ տեսակէտից անյաղթահարելի դժուարութիւններ էր յարուցել նրանց համար հէնց պարսկական արշաւանքի սկզբից: Նոր գրաւած երկիրներն արժէքաւոր էին իրանց բերքերով ու բնական հարստութեամբ, ամենից առաջ՝ որպէս նաւթի և մետաքսի արտահանութեան աղբիւրներ. սակայն այստեղ ոռւսները չը գտան այն, ինչի կարիքը նրանք առաջին նուագ ամենից շատ պիտի զգային՝ ուտեստի պաշար և պատերազմական մթերքներ: Երկրի վատառողջ կիման էլ իր կարգին քիչ մարդկային զոհեր չէր տանում ոռւս զինուորների և ձիերի պահեստից: Եւ պէտք է ասել, որ առանց այդ էլ զօրքի մէջ զգացւում էր ոչ միայն ապրուստի միջոցների, այլ և կոռուզ ոյժերի պակասը: Իզուր չէր ոռւս կառավարութիւնն առանձին հոգ տանում հայերին և վրացիներին նոր գրաւած երկիրները գաղթեցնելու մասին:

**Տեխնիքական այս անյարմարութիւններին աւելանում էին քաղաքական դժուարութիւնները:**

1722 թուի հոկտեմբերին աւղանները գրաւեցին շահերի մայրաքաղաքը ու գրանով պսակեցին իրանց յաղթական արշաւը դէպի արեմուտք: Շահ Հուսէին Սեֆին, որի պաշտպանութեան պատրուակով էին դիմել ոռւսները դէպի հարաւ, եղաւ գահընկէց, իսկ նրա ժառանգ Թահմազը՝ մի մարդ, որի արեգնափայլ անձնաւորութեան մէջ խտանում էր Պարսկաստանի քաղաքական ապիկարութիւնը միայն, մի կերպ քարշ էր տալիս իր գոյութիւնը հիւսիսում, որպէս Սեֆիդների վաղեմի փառքի անշուք խրդուիլակ: Աւղանների յաջողութիւններից և ոռւսական ծրագիրներից անհանգստացած տաճիկ զօրքերի շարժումը դէպի արեելք ստանում էր խրոխտ ընթացք. նրանք ձեռք էին մեկնում Թահմազին

և սպառնում էին իրանց թարմ գօրամասերով հեղեղել ամբողջ Անդրկովկասն ու Ատրպատականը:

Այսպիսի պայմաններում ռուսները պէտք է դիւանագիտական բանակցութիւնները գերադասէին պատերազմական գործողութիւններից: 1722-1724 թուականների ընթացքում նրանք շարունակ բանակցում էին գրեթե բոլոր կուող կողմերի հետ՝ գրաւած երկիրները խաղաղ ճանապարհով իւրացնելու նպատակով: Շահ Հուսէինի «պաշտպան» Պետրոս Մեծը բրիգադիր Լեվաշեվի բերանով 1723 թուի ամառը չնորհաւորում է աւղանների առաջնորդ Միր Մահմուտին Պարսկաստանի գահը բարձրանալու առթիւ, վստահացնելով, որ այս փաստը ոչ միայն հակառակ չէ իր կամքին, այլ նոյն իսկ հաճելի է իրան: Ցարը յոյս է յայտնում միայն, որ նոր շահը չի մտնիլ տաճկաց հպատակութեան տակ<sup>1</sup>: Միաժամանակ նա ուղարկում է իր գործակալներից մէկին ապատամբ հայերի մօտ, յուսաղրելով, որ ինքը շատ տրամադիր է և պատրաստ ազատելու նրանց անհաւատների լծից, միայն թէ հայերը համբերութիւն ունենան փոքր ինչ ու դիմադրեն թշնամուն մինչև ոռւս գօրքերն օգնութեան կը հասնեն<sup>2</sup>: Սակայն առանձին վստահութիւն չունենալով դէպի աւղանները և ոչ էլ առանձին սպասելիքներ կովկասի քրիստոնեայ ազգաբնակութիւնից՝ նոյն թուի սեպտեմբերին ոռւսները դաշն են կնքում պարսից դեսպանի հետ, որով մերձկասպեան երկիրների՝ Դերբենդն ու Բագուն իրանց շրջանակներով և Գիլանի, Մազանդարանի և Աստրաբադի նահանգները, փոխարէն խոստանում են, որպէս վաղեմի բարեկամներ, պաշտպանութեան տակ առնել շահ Թահմազին նրա բոլոր թշնամիների ու ապատամբ հպատակների դէմ<sup>3</sup>: Շահ Թահմազը չը վաւերացրեց իր դեսպանի ստորագրութիւնը, առարկելով թէ ինքը կարիք չէ զգում դրսի օգնութեան. եթէ ոռւսները, նկատում է նա, -այդքան բարեացակամ և հոգատար են դէպի իր ներքին գործերը, թող ազատեն Պարսկաստանը իրանց գօրքերից և թոյլ տան միայն իրան լինելու իր երկրի տէրն ու տնօրէնը<sup>4</sup>: Դեռ ևս այս վճռական մերժումին անտեղեակ, ոռւսները, անտես անելով իրանց բարեացակամ տրամադրութիւնը դէպի իրանի շահը, բանակցութեան մէջ են մտնում թիւրքերի հետ, որոնք 1724 թուի

<sup>1</sup> П. Бутковъ, аնդ, I, և հետև.:

<sup>2</sup> Г. Эзовъ, аնդ, № 229.

<sup>3</sup> «Полное Собрание Законовъ Российской Имперіи», т. VII, № 4298.

<sup>4</sup> «Дневникъ Семена Аврамова», 1726-1729. М.А.Г.М.И.Д. Дѣла персидскія по реестру II, К. 85, № 14, passim.

ընթացքում գրաւել էին Խոյն ու Համադանը, իսկ Անդրկովկասում՝ Երևանն ու ամբողջ Վրաստանը։ Նոյն թուի յունիսին ոռուսները համաձայնութիւն են կայացնում Թիւրքիայի հետ, որով ապահովելով իրանց մերձկասպեան երկիրները՝ թողնում են վերջինիս Ատրպատականն ու Անդրկովկասը<sup>1</sup>։ Թիւրքերին էր վերապահում նաև Վրաստանի ապստամբներին ճնշելու իրաւունքն ու հոգաը<sup>2</sup>։ Նման պարագաները չը խանգարեցին ցարի կառավարութեանը յետին թուով խմբագրած մի ամբաստանագրի մէջ ապստամբների կրած անյաջողութիւնները վերագրել նրանց ղեկավար Վախտանգի դանդաղկոտութեանը<sup>3</sup>։

Յոյս դնելով ոռուսների տուած խոստումների վրայ, Անդրկովկասի քրիստոնեաները, անտեղեակ քաղաքական յարաբերութիւնների ընթացքին, հերոսական ճիգեր էին թափում իրանց դիրքերը ձեռքից չը տալու համար։ Իզուր էին նրանք անվերջ նամակների և պատգամաւորութիւնների միջոցով հրաւիրում ցարի ուշադրութիւնն այն անել կացութեան վրայ, որ ստեղծուել էր նրանց համար շնորհիւ իրանց փութկոտ և անվերապահ քաղաքանութեան։ Նրանք ձեռնարկել էին քաղաքականօրէն անշահաւէտ մի գործի ու, նեղուած լեզգիների, օսմանցիների ու պարսիկների յարձակումներից ու նրանցից լիովին բնաջինջ լինելու սոսկալի հեռանկարից, քամում էին դառնութեան բաժակը։ Աւելի լաւ վիճակում չէր նաև Գիլանի հայոց գաղութը։ Պատերազմի սկզբում տեղի ունեցած ընդհանուր թալանի շնորհիւ շատերը հազիւ էին քարշ տալիս իրանց գոյութիւնը. պատերազմի շնորհիւ ապրանքների գները խիստ բարձրացել էին, սակայն ապրանք չը լինելու պատճառով առեստուրն ինքնին շահաւէտ չէր։ Հայ առետրականի կարաւանները՝ ենթակայ էին անխնայ կողոպուտի, առետրական ճանապարհները՝ բռնուած թշնամու զօրքերով, տրամադրելի նաւերն ու ուղտերը՝ զբաղուած զօրքի ու պատերազմական մթերքների տեղափոխութեամբ<sup>4</sup>։ Բայց այստեղ ևս վտանգուել էր հայ առետրականի տնտեսական բարեկեցութիւնից զատ նաև նրա քաղաքական բարեյուսութիւնը։ «Հայր սուրբ, գրում է 1725 թուի սկզբին Մինաս վարդապետին նրա Գիլանի թղթակիցը, այժմ ամենուրեք յայտնի եղաւ մեր բանը. այսքան

<sup>1</sup> «Полное Собрание Законовъ Российской Имперіи», т. VII, № 4531.

<sup>2</sup> Անդ. յօդ. II:

<sup>3</sup> «Переписка на иност. языкахъ грузинскихъ царей съ российскими государствами», СПб., 1861, стр. 183-189.

<sup>4</sup> «Ժամանակագրութիւն», № 133, էջ 210 և հետև.:

տարի ոչ ոք չը գիտէր քո խորհրդի և գործունէութեան մասին, այլ և այն բանի մասին, որի համար դու այդտեղ (Ծուսաստանում) ապրում ես: Ահա այժմ հինգ տարի է, ինչ մեր բանը յայտնի դարձաւ բոլոր դաւաճաններին և իմացան, որ դու այդտեղ ապրում ես նորին մեծութեան հրամանով: Մեզ հաւատարիմ մարդիկ այժմ իսկ կամենում են ծառայել նորին կայսերական մեծութեան հրամանի համեմատ, և այդ յուսով այժմ նրանք կորած են և անգիտօրէն գերի վարուեցին: Ամեն տեղ անօրէնները աւելի են ուժեղացել և սկսել են վնասել թէ մեզ և թէ նրանց, որոնց վրայ մենք յոյս էինք դրել»<sup>1</sup>:

«Ափսոս որ մեր ձենըն թամամ Ղզլբաշի երկիրն և Օսմանցու երկիրն յըռչակվեց՝ թէ Փլան Փլան Խայէրն Ըռուստի թագավորին դու ան դառցել՝ որ արունւանիս ծըծում ան», ~ գրում է նոյն Մինաս վարդապետին Պետրոս Գիլանենցը. «Եթէ Աստուած մի արացէ՝ մեզ մին բանի վերայ չը դրիր, որ մեզ ըռուսխաթ ելավ՝ էլ կարել չենք էս երկրումն ման գալ, որ թէ ձեռն ընկանք՝ մարդի պէս չեն ըսպանում շան պէս կը ըսպանեն»<sup>2</sup>: Անձի ապահովութիւն փնտողներին մնում էր՝ քաղաքական տիրող հովերի ուղղութիւններով ֆարել գաղթի փրկարար ճանապարհներին: «Թարեղումու, ~ շարունակում է Գիլանենցը, ~ մեր Հայոց ազկէն օվ փողայտէր այ՝ փախել այ՝ եկէլ էտ երկիրդ և որն գնացել այ Բաղդադ»<sup>3</sup>: Ի՞նչ էր սպասում հայ վաճառականին այդ օտար վայրերում: Գիլանենցը շատ լաւ գիտակցում է այդ. «պիտի Ըռուստի երկրումն դար բէ դար մնանք, ում ունի՝ ուտի, ում չունի՝ ողորմութիւն բոլորի յանցկայ»<sup>4</sup>:

Լաւ չէր գնում նաև Գիլանենցի կազմակերպած գործը. նրա վրայ անդրադառնում էր տիրող տնտեսական տագնապը: Ուղարկելով Գիլանենցին Պարսկաստան Մինաս վարդապետը, ինչպէս երեւում է, յանձնարարականներ էր տուել նրան տեղական հարուստների հասցէով, ուր նրանց նիւթական օժանդակութիւնն էր խնդրում հայկական խմբի գործին: Սակայն հաղորդակցութեան խանգարման պատճառով այդ յանձնարարականները հնար չէ լինում տեղ հասցնել<sup>5</sup>. «Ըստեղիս Խայէրն որ կան, ~ գրում է Գիլանենցը, — մոչ մէկն մեզ օգնութեան պէտք չեկին, որ ոխչն էլ լալ-

<sup>1</sup> Ճելա արմ., 1725, № 1, fol. 10 r.

<sup>2</sup> «Ժամանակագրութիւն», էջ 211:

<sup>3</sup> Անդ:

<sup>4</sup> Անդ, էջ 212:

<sup>5</sup> Ճելա արմ., 1725, № 1, fol. 11 v.

ման ան՝ թէ թալանած անք՝ խեղջ ելած: Ինչ ունենք՝ որ ձեզ ինչ օգնութիւն առենք և ուրիշ տեղած խոյ իսկի ումիդ չկայ. զրայ ոխչն էլ թալանվել ան և ճանայպարներն կապ այ, որ նման չէ գիր աղարկելն, և մենք էլ մին ծախ տեղ անք ընկէլ, որ մոնչինչ կողմէ մեզ ա օգնութիւն առող չկայ»:  
«Էս օր ժ զ, ամիս այ, որ մեր սօվդագարութենէն ձեռն անք վեռել, ա ստակ գէլուր չունենք, զէյրի խարջելն: Դեռ խաբար չենք՝ թէ ինչ անք կամ թէ ինչ դառնալէց անք»<sup>1</sup>: Կրկին ու կրկին խնդրում է Գիլանենցը Մինաս վարդապետին, նրան, որի քաղաքական ազդեցութեանն էին ապաւինել Գիլանի հայերը, հոգալ ստեղծուած դրութեան մասին, օգնութիւն խնդրել հայերի համար, միսիթարական խօսք ասել նրանց: «Էս օր մեր տէրն հրամանքդ ա, ~ գրում է նա, ~ պիտի որ մեծին յիմաց անես մեր ֆիքրն ասես, մեր խազինի վերայ չենք, մին քանի թուման փող ունինք որ կերաք գնաց, յախիրն ինչպէս պիտի լինի»<sup>2</sup>: Սակայն Գիլանենցը մտածում է ոչ միայն իր կազմակերպած գործի մասին. նրան անհանգստացնում է նաև այն նեղ վիճակը, որի մէջ գտնւում էր այդ ժամանակ անդրկովկասեան հայ զինուրութիւնը. «մեր հայոց ասկարն, որ բոլորվել ան, ~ գրում է նա, ~ ասում ան՝ թէ կ ո մարդ այ, գ բօլկ ան, որ գ տեղ նստած ան՝ նոցայ մին աչքն Աստուծոյ լուսին այ, մին աչքն մեծ թագաւորին ճանայպարին այ՝ որ տիր շատ այ նոցայ դիշմանան պիտի՝ որ հրամանքը նոցայ ֆիքրն քաշես՝ որ մամամ Ղզլբաշն և Օսմանլուն նոցայ արշնին յետհեն ան և նոցայ պատճառիւ ամենայն տեղի Խայէրն նեղութիւն ան քաշում»<sup>3</sup>:

Իր հայրենակցի աղերսանքները Մինաս վարդապետը յատուկ զեկուցագրերով հասցնում էր ի հարկէ Պետրոս Մեծի ականջին. բայց նրա այդ դիմումները, ինչպէս ինքն է գանգատուում իր մի գրութեան մէջ, մնում էին անհետեանք<sup>4</sup>:

Յարի կառավարութիւնը Պարսկաստանում ամենից առաջ տարուած էր իր անմիջական գործերը շտկելու մտահոգութեամբ: Համաձայնութեան գալով Թիւրքիայի հետ՝ Ռուսաստանն այլևս պարտաւորուած պէտք է զգար իրան չէզոքանալու անդրկովկասեան քրիստոնեաներին սպասող վիճակի հանդէպ: Հիւսիսից Կովկաս հասնող քաղաքական դժգոյն ու վտիտ խաբրիկներն այ-

<sup>1</sup> «Ժամանակագրութիւն», էջ 210 և հետ.:

<sup>2</sup> Անդ:

<sup>3</sup> Անդ, № 133, էջ 209:

<sup>4</sup> Ճելա արմ., 1725, № 1, fol. 2 v., § 12.

սուհետեւ պէտք է այցելէին հայ և վրացի հաւատացեալներին ի սպաս կրօնական մխիթարութեան:

\* \* \*

Ե. ԳԻԼԱՆԵՑԻ ՎԵՐԺԻՆ ՉԱՆՔԵՐԸ

Կառավարութեան և նրա ներկայացուցիչների տարտամ ու անորոշ պատասխանները հայերի դիմումներին յամենայն դէպս յուսահատութեան չը հասցրին Պետրոս Գիլանենցին ու նրա ընկերներին: 1724 թուի սեպտեմբերի 24-ին Մոսկուայում ստացուած մի գրութեան մէջ նրանք յայտնում են, որ պատրաստ են Գիլանում կռւող հայերի թիւը հասցնել հազար հոգու, միայն թէ այդ իմաստով հրաման լինի ի վերուստ<sup>1</sup>: Մի ուրիշ տեղ խօսք կայ նոյն իսկ նրանց թիւը երեք հազարի հասցնելու մասին<sup>2</sup>: Միաժամանակ խնդրում են նրանք պետական ոռօճիկ նշանակել իրանց ու այդպիսով՝ միջոց տալ հոգալու մարդկանց ու ձիերի ու տեստի մասին<sup>3</sup>: Յետագայում հայերը կրկին դիմում են Մինաս վարդապետին՝ ուղարկել 100 հաւատարիմ հայ, այլ և դրանց հետ՝ որքան կարելի է «զինուորական արուեստի ու վարպետութեան մէջ վարժուած» ոռւս մարդիկ<sup>4</sup>: Գրլանենցը մտադրուել էր նոյնիսկ անձամբ գնալ Ռուսաստան զեկուցելու Պետրոս Մեծին, թէ Պարսկաստանի ընդհանուր վիճակի և թէ հայերի մասնաւոր դրութեան մասին ու միաժամանակ այնտեղից գործին պիտանի մարդկանց հաւաքել բերել Պարսկաստան<sup>5</sup>: Ռուսաստան անցնելու համար նա յոյս ունէր թոյլտութիւն ստանալու գեներալ Մատիշկինից, որը շուտով պէտք է ժամանէր Ռէշտ: Սակայն, երբ 1724 թուի գեկտեմբերի 24-ին Մատիշկինը հասաւ այդ քաղաքը Գիլանենցն արդէն կենդանի չէր:

1725 թուին 17-ին յունուարի թուակիր գրութեան մէջ նամակագիրը յայտնում է Մինաս վարդապետին, որ Պետրոս Գիլանենցը, հայ գումարտակի պաշտպանն ու ուսուցիչը, սպանուել է ծառայութեան ժամանակ և, որ իրանք մնացել են առանց զեկավարի: Նրա ընկերները խնդրում են վարդապետին գլխաւոր նշանա-

<sup>1</sup> Ճելա արմ., 1725, № 1, fol. 2 v., § 7:

<sup>2</sup> Անդ, fol. 9 v.:

<sup>3</sup> Անդ, § 8-11:

<sup>4</sup> Անդ, fol. 10 v.:

<sup>5</sup> Անդ, fol. 11 r. և 12 v.:

կել իրանցից մէկին, կամ ուղարկել իր կողմից որ և է մէկին, որին նրանք և խոստանում են հնազանդուել<sup>1</sup>: Միայն թէ նոր հրամանատարը լինի «լաւ և ազնիւ հայ, որպէս զի, քանի դեռ, ինչպէս լսում է, թշնամու ուժեղ բանակներից մէկի յարձակումը տեղի չի ունեցել, միւսները, զրկուած ղեկավարից, չը թերանան իրանց հաւատարմութեան մէջ»<sup>2</sup>. «ինչպէս դու քո նամակներով Պետրոս դի Սարգսին էիր ցուցմունք ու յորդոր տալիս, - դիմում է նամակի հեղինակը Մինաս վարդապետին, - որոնց համաձայն նա մեզ էր ուսուցանում և պահպանում, այնպէս էլ մի թող այժմ մեզ»<sup>3</sup>:

Լսելով այն մարդու ծառայութիւնների մասին, որը բոլորի վկայութեամբ իր զինուորական գործունէութեան ընթացքում «երբէք ձիուց թամք չի վերցրել», գեներալ Մատիւշկինն իր ցաւն է յայտնում նրա գործակիցներին: 1724 թուի նոյեմբերի 10-ին ստորագրուած կայսերական ուկազով Մատիւշկինն հրահանգուած էր տեղ տալ Գիլանում Ղարաբաղի և Ղափանի շրջանի հայ գաղթականներին և նպաստել նրանց տնտեսութեան վերականգնմանը<sup>4</sup>: Գնահատելով հայերի կատարած դերը՝ գեներալը գալով Ռէշտ հրամայում էր նաև ըստ կարելոյն մեծացնել հայ կուողների թիւը. սակայն այդ հրամանը հնարաւոր չէ լինում շուտով իրագործել, որովհետեւ Գիլանում քիչ հայ էր մնացել, իսկ դրաի հետ հաղորդակցութեան կապերը կտրուած էին լիովին<sup>5</sup>: Անդրկովկասի հայերն էլ, ինչպէս յայտնի է, չը հետեւցին կայսերական հրաւերին ու շարունակեցին մնալ իրանց երկրում: Երեսում է, որ քաղաքականօրէն յուսախաբուած հայերի համար պատերազմը կորցրել էր արդէն իր նախկին հմայքը: Այդ տեսակտից խիստ բնորոշ է Գիլանի հայ խմբապետի դիմումը Մինաս վարդապետին՝ միջնորդութիւն յարուցանել, որ հայերին ևս թոյլ տրուի թալանել և գերեվարել թշնամուն, ինչպէս այդ մահմետականներն են անում. «Դրանով, շարունակում է Մինաս վարդապետի թղթակիցը, - մեր զօրքերը կարող են շահագրգռուել՝ ճակատուելու թշնամու հետ. բացի այդ, մուսուլմանները, տեսնելով

<sup>1</sup> Ճելա արմ., 1725, № 1, fol. 9 v.:

<sup>2</sup> Անդ, fol. 11 r.:

<sup>3</sup> Անդ, fol. 12 r.: Այս դիմումին ընթացք տալու համար Մինաս վարդապետը գնաց Պետարքուրք, որը նա 1725 թ. 19-ն օգոստոսի քուակիր մի գրութեամբ դիմում արեց Կատարին: Ա կայսրութեան յօդու Գիլանի հայերի: Տես ներկայ յօդուածի յաւելուածը:

<sup>4</sup> Գ. ԷՅՈՎԵ, անդ, № 259.

<sup>5</sup> Ճելա արմ., 1725, № 1, fol. 9 v., fol. 13 r. v.

մեր թուլութիւնը, այն, որ մենք չենք կողոպտում և չենք գերեւարում նրանց, աւելի յանդգնօրէն են յարձակում մեզ վրայ»<sup>1</sup>:

Մատիւշկինի գալուց յետոյ հայերը՝ նրա հրամանով՝ մասնակցում են 1724 թուի դեկտեմբերին Գիլանում վերսկսուած պատերազմական գործողութիւններից երկուսի մէջ և վարձատրւում իրանց քաջագործութիւնների համար: Առանձին ուշադրութեան է արժանանում Պետրոս Գիլանենցի հաւատարիմներից Աղազար անունով մէկը, որը ստանում է ուստմիստրի և հայկական էսկադրոնի հրամանատարի աստիճան: Աղազարը՝ յետագայի Լազար Խրիստաֆօրովը՝ ուսւ գեներալի աստիճան ստացող առաջին հայ զինուորականը, եղաւ այսպիսով Գիլանենցի սկսած գործի շարունակողն ու դեկապարը<sup>2</sup>:

\* \* \*

Պետրոս դի Սարգիս Գիլանենցն անշուշտ մէկն էր ժամանակի եռանդուն և արգասաւոր հայ քաղաքական գործիչներից: Ճիշտ է, նա ապրեց գաղութային հայութեան մէջ, սակայն նրա գիտակցութեան մէջ անդրադառնում էր պարսկահայ ընթացիկ կեանքն իր ամբողջ ծաւալով. հայկական էսկադրոնի հիմնադիրն ու դեկավարն ապրում էր «Հայոց ասկի» փրկութեան համար մտահոգուած «Հայոց ասկարի» կեանքով: Ո՞ւնէր նա արդեօք ազգային-քաղաքական խնդիրների մասին իր մշակուած ծրագիրը՝ չգիտենք. գիտենք միայն, որ գործնականի մէջ ԺՀ դարի քաղաքականօրէն մտածող ու գործող խոշոր հայ առեւտրականների նախահայրն է նա: Եւ եթէ յիշենք, որ սրանցից միայն նա ընկաւ հայ ազատագրական պայքարի մէջ՝ այն ժամանակ կը լինի նա և միակ իսկական զինուորը հայ կապիտալի քաղաքական պատմութեան ամայի դաշտում:

<sup>1</sup> Ճյլա արմ., 1725, № 1, fol. 12 r.

<sup>2</sup> Անդ, fol. 11 v. և Γ. ԹՅՈՎԵ, № № 303, 304, 305:

### ՅԱԿԵԼՈՒԱԾ

Մինաս վարդապետի զեկուցումը Կատարինէ Ա. Կայսրութուն  
Գիլաճի հայերի մասին<sup>1</sup>

*Թ՝ կ ռճ՝ հդ օգս"տս ժ՝ թ*

**1.** Թ"րեղում լսում ենք որ ամ կողմնէ իմց"լեն որ հա(j)քն թ՝ գի տկումն են և հիմիկս այլազգիքն ամեն կողմնէ կոիվ գ"լիսեն մեր ազգի վրչ"տ նեղութք"շումեն թուրքից և ամ այլազգեց. և լ ամէ որ մեր ազգն մե(ծ) իմփ"ոյթուի ուխտիւն և հրմնին հն զնդլ նեղութք քշմեն և յոյս ունին որ մեծ թգրէն ողբմութլինի իւ բնց:

**2.** Հիմիկս ձէն կ"յ և մ"րդ մէջ անկ"լ որ հ"յքն խզլպ"շի հետ մին գ"ոնն շ"տ ինքմեն խոստ"ցլ թէ մեծութիթէ լս"զնա որ ինչպէս ուզեն"ն այնպ"ս առնեն. մեր ազգն անշ"րժ մեծ թ՝ գի ուխտին վրհս"տտ կ"ն կ պծեն, Ած մի ար"սցէ եթէ դ կողմից անօրէնքն գնան չեն դիմն"լ. վս էս պ տճառիւ ու թ՝ գի չունին կմ իւ զնյ ճէպախնյ (ՃЛЯ ТОГО ЧТО НИ ГЛАВЫ НИ КАЗНЫ АРТИЛЕРИИ НЕИМЮЮТЬ). ո"պ այս չ"փ ժմկ որ կոիվ տ"լիս են ած է ն ց պ"հպ"ն մինչ այսօր. այլ ո"րյ եթէ մին ողբմութ չի լինի մեծ թ՝ գրէն մեր ազգն չեն կ"րել դիմն"լ որ տուշմնն շ"տցերէ ին պս ձեր մեծութիթ յետոյ ձեր զօր ցնլ շ"տ դժվրութ կու լինի առնց նց. զէրն այն յերկրների բլնիքն և ինչ պ հմնքին գիտկեն. թ"րեղում անօրէնքն ամ տեղիք իւրնց հմիս ոհուք բերթ և ճն պրհերն ըսկալ կու կ"պեն (Нынѣ противъ всѣхъ своихъ непріятелей по дорогами пути пресѣкли по положенію и обыкновенія таможныхъ мѣстъ):

**3.** Եւ այլ կիլնու եկ ծ գիրն յ"տէ ձեր մեծուեն . որ էն քնի մրդ"իքն էն տեղն կան. Ամենն մեծ պեղ ըկնին իւրնց առևտրին ձեռ վեր առին և թ՝ գի ծոյուե են առնց տօնլդ ինչպս ձեր մեծուե յ"տէ որ էլ փող չի մն"ց ամենն պ"րտքօվ մեծ թ՝ գին խոլո-

<sup>1</sup> Ներկայ վաւերագիրը կազմում է Մ. Գ. Ա. Մ. Ի. Դ. Ճելա արմ., 1725, յնվ.-իօլ. № 1-ի գործի ff. 27 ր.-28 ս., նոյն գործի ff. 31 ր.- 55 ր. գտնում ենք սրա ուսերէն ազատ քարզանութիւնը. հայերէն բնագիր դժուար ըմբռնելի դարձուածքների հանդէպ դնում ենք քարզանութեան համապատասխան պարբերութիւնները:

դի միջումն են մինչ այսօր. Յերփ ճնտ'ոլ մաթուշկն հսնիլն մին և կւ օգնու ի արերէ ինչպս յադէ ձե ըմ մեծու ե:

4. Եւ այլ ովոք մեր ազգէ որ մեծ թէ գի լոյս անունն լսումեն գալիսէ կիլան ինչ ապ ընք վեր դնում է. ինքն մեծ թէ գի սիրուն գնո մէ կռիւ և իւ ընց մահն չեն ափսոս գալիս որ լինի ա վ յ"ղթեն զտ"շմնն որ թ գի անունն բ ձրնյ և տուշմնն հ լծի, ինչ խ"զնյ կ մ էրաղ որ ձեռէ ընկնում իւ ընց չեն տ"լիս:

5. Եւ այլ թ"րեղէս յեռ"ջ կիլ"նյ մին գիր արեկ ինչպս ձեր մեծու ե յ"տէ. և էլ էն գրումն գ"րծէ թէ այդ կողմից մեր ազգէ ք նի որ պահ մ կու գա կովի սէր հւ"տի մր"դ և թ գի հ"րմնւն հետ ըերես զերն մեր ազգէ ք"նի շ"տ լինի բ"րի է որ ինչ տեղիք գ"նլն թ"գի զօր"ցն մին կող"մնէ խ"ֆիլ պ կու ի չի հանդիպի որ լինի մեզ ամօթ:

6. Եւ այլ իմ խնդիրքն այսէ մեծ թէ գրէն երբ մեր հ"յերն որ կովումն ինչ ձեռ ընկնի իւ ընց լինի ճեպիսանէն ի զատ (кромъ артилеріи). զէրն փողի և ինչ ապ ընց սիրոյ սրտօվ կռիվ կու մ"տնն և օվ ոք որ լսէ սէր առ"լ ամէն կողմէ ուժ առ"լ կուգ"ն բզմնն. ինչպս անօրէնք անող ըմբյըար մեր ազինքն թ լնում և գերի վ ըեց. այնպէս հ ըմն լինի թգրէն որ ինչ զինվոր ինչ թլ"ն և գերի ա"ոլն իւրն լինի. ինչպս որ անօրէնքն այնպէս թ"լն առնելով զօր"ցն. երբ մեծ թ գէն ա յսպս հըմն տ յ բ զմ մ"րդիք պահամ կու լինի և մ հկոկց գէմ պահպն (то много го същедца, а что приказано будеть оставяте то можно оставов(л)ять):

7. Եւ այլ թ"րեղէս յեռ"չ անչ"փ խնդ"րլս թէ կան"ցլրումն թէ կապինէթումն էն իմ խնդիրք բ ներին ճու"պն քելսի"ց և անտոն փօփին հետ ուղ"րկերէք. ապ"յ ձեր մեծու ե յ"տէ որ այն կողմէ ճնպրհերն կ"պէ. մինչ այսօր խպ"ր չկ"յ ած գիտէ թէ ողչ են թէ մեռ"ծ. ապ"յ կը խնդրեմ մեծ թ գուհուդ ինչպս ող ըմծ հոգի լոյս թ գն ողորմու ի արեց յեստի յեռ"չ հըմն և այն կողմն մ"րդ ուղ"րկեց որ շ"տ ու ըխու ի եղե ն ց. կրկին կու խնդրեմ մին հը մն նշն տ"յ որ մէ լմ անենք այն մերայնոց որ չի յուսահտին. զերէ որ թ գրն առ ա ծ փոխփոխեցւ (sic!) կու լսեն շ"տ տրտմու թ կու լինի ն ց կու յուս"յ հ"տին ն"ր հ"մր թգոհէն հըմն ն"շ ն կու խնդրեմք որ լուսյ հոգի թ գին խոստց"լն և անչ"փ

աշխատնք զուր չի կօրի և իւր յիշտ՝ կն մն"յ յւիտ"ն որդոց որդի. և մերո ք նի դարվա չը"չ"ընք և նեղու ին զուր չի կօրի և մերս հոգոյ մեղք լինի. զէրն մեք ն ց մեծ կ"յսերի շինու ե և ք"չու ե բ"րու ի աւելօք ծանուցեր եմք հնպ"զ որ ն ք անշր"ժ կան ի սէր թգւրին. և բազմապ"տիկ հ"րսթ (sic!) կ"յին տեսնել և ճշմտու բ ծռ"ել մեծի Ար"քյի:

8. Եւ այլ թ՛վ 1701 այն ոմն"ցնէ խորհրդի նշնօվն եկինք մեծ իմփեռ"յթօռի դուլուղումն մեծ իմփէռ"յթօռն զմեղ ընդունեց և իւր բ"րի շղվթօվն պ"հեց մինչ այսօր. որ մեքլ իւր ինչ հ րմլ բանին ճ շմտու բ կու ծռ"յեաք ինչպէս ձեր մեծու ե յ"տէ. Ա(j)լ ա"յ Ա. ծ մեր մեղ"ցն բ"րկ"ցւ որ մեր մեծ սհապ ինփէռյթօռն առ ա ծ փոխեց"ւ կ մքն ա յ է. ինչպս որ այն լոյս թգ ըին ինչ հը մնին կ"տրլ սիրով հ"նզանդէ"ք նոյնպէս հ նզնդեմք մեծագունեղ իմփեռ"յթօռից մեծ թգուհուն կ"տրին Ալքսեկնյ և իւր բ"րի յիշտկցն. ինչպէս որ իւր տէր լոյս թ գրն զմեղ իւր շաղվթօվն պահելէ կու խնդրեմք մեծ"յգունեղ թգու հուն որ նոյնպէս իւր շղվ թ ողորմութենն մեղ վեր"էն պ կս չռնէ մեղ և մերանոցն. որ ինչպէս մեծ իմփէռ"յթօռն իւր սէր առ"լ կ մւն աղջի ա յ. ևս մր"դկն ուխտ"լէ զ"յն հ"յոց ուխտն կարել թէպէտ յե ոջ այս խոք-հուրդն ծածուկէր միան կարծիք կ"ոնէին. Այսօր ե ամէ որ ա մ ազգի հոչէկ"լ յ"տնի եղե որ այլ հն"ր չէ ինչ հն"րիւ ծածկե"լ կ մ բնկան ճ շմտ իւ"ղուրի առնել. Ահ մեծ շհ կնն ձեր մեծու ե որ զայն ուխն կտ"րել. զէրն այս երկրի տիրոչ հ կոկորդքն ամէն կողմնէ անթիւ է աներեւութաբար. եթէ ա յ ուժովն ջանք դնէք որ այն բ ազգ վր"ցի և հայք որ ձեր մ թգ րե ծ"ոյու ե պահէք ա վ ա մ հ"կոկորդքն միջակտուր ամօթի լինելոցեն որ այն ա մ հկո ց. դուռ և թյնյերն (sic!) ըստ իւրաք"նչիւր սէնթի կողմն կուպահեն. որ ձեր զօրց և յերկրի պ կսութի չի հանդպիր ա վ. ինչպս որ այսօր իւ"յրթ և եղթիարու ին ձե ըմ թ գըու է. և եթէ այն բ ազգն ձռո"ց գ"նն այլ յետոյ հ"նրք չէ տնջու ի լինիլ. որ այսօր հ"սլ ն ց վաղջանն. և եթէ հոգի ե"լնէ այլ ոչ դ"ոնյ. ի նոյն. որ ն ք բոլորօվին ամէնն սէնթ աներեւութաբար իւ ընց ինչ պէթ կկն զօր"ց թէ-տէրուքն կու լցուցնեն:

9. Եւ այլ աս"տի յ"ոջ որ ևս թ՛գի հրմն ւն խզլպաշն գնց ելի յ"տնի ելաւ որ օսմանլուն և բուխ"րու հաճիք ը միմիայնս խօսք տու"լ որ իւ ընց կողմ մեղէն տէրէ. Աստր"պտ և ինչ պի"տնի տե-

Ղիք բերթք և նաւք հստ՝տեն և ճնպր՝քն կ՝պեն որ ինչ ուրիշ ազգ ֆո՞նկ կմ ուռուսք փութփար՝զք թախիխ կու գան համ ձեր երկիրն քն տի կ մ մեզ ամէն կողմէ զարը և անհնդտու ի. սիրով միաբան լինիք ա մ սունիք որ մերո մահմէտակն՝ց փութ փր՝զ ն՝ցէ ձեզ և մեզ պկու ի չի հանդիպի թէ ծօվէ թէ ց մքէ: (...«и извѣстился тамо что турки съ бухарцами согласились по пе-регу Каспійского моря около Мазандарана, Астарабада и протчихъ угодныхъ мъстахъ построить крѣпости и сдѣлать ка-рабли. И до роги пересъчъ дабы изъ другихъ странъ изъ Рос-сіи прѣздѣ прекратить ибо де когда иноземцы и россіяне въ тыхъ мъстахъ усилиятся то бухарянь будуть разорять такожъ и имъ туркамъ не безъ опасности будетъ. И для того де над-лежитъ намъ по единоверію быть въ согласіи и чтобы намъ не было разоренія какъ моремъ тако и сухимъ путемъ.»):

**ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ**



## Հավելված 1

**ՀԱՅ-ՌՈՒՍ ՕՐԻԵՆՏԱՑԻԱՅԻ ԾԱԳՄԱՆ ԽՆԴԻՐԸ**  
**Պատմական – քննադատական ուսումնափրութիւն**

Ա. Ռ Ա. Զ Ա. Բ Ա. Ն

Դեռ քառորդ դար առաջ ներկա ուսումնասիրութեան մէջ զբաղեցնող խնդիրը դրւում և լուծում էր այսպէս՝ հայերի ոռուսական օրիենտացիան հին է, նոյնքան հին, որքան «Հայոց հարցն» առհասարակ. «Հայոց հարցը» հրապարակ եկաւ «առաջին անգամ» 1878 թւին, առաջադրւելով ոռւս դիպլոմատիային՝ այդ հարցը մնաց այնուհետև նրա բացառիկ մտահոգութեան առարկան մինչև մեր օրերը<sup>1</sup>:

Մի այլ տեղ աշխատել ենք ցոյց տալ, որ այս կարծիքը շրջանառութեան մէջ դնող հեղինակ Կ. Եղեանը հանդէս բերեց իր տեսութեամբ կատարեալ անտեղեակութիւն «Հայոց հարցի» նախընթաց պատմութեանը<sup>2</sup>: Որ սակայն այդ տեսութիւնը երևան հանեց նաև սիալ հայեցակէտ ոռուսական օրիենտացիայի ծագման մասին՝ այդ է, որ կարօտ է յատուկ լուսաբանութեան:

Քննելով հայ քաղաքական գիտակցութեան ընթացքը Ժէ դարի վերջերին՝ յանգել էինք այն կարծիքին, թէ ժամանակի մտայնութեան մէջ ոռւս օրիենտացիան բանուկ ճանապարհներ չունէր տակաւին<sup>3</sup>: Այդ տեսակէտի մէջ աւելի համոզւեցինք, երբ հետագայում մեր ձեռքն ընկաւ քաղաքական այն անդրանիկ աղերսագիրը, որ 1670-ական թւերի սկզբներին հայերի կողմից ուղղւել էր ոռւս արքունիքին<sup>4</sup>:

Սակայն մեր եզրակացութիւնները դրանից հեռուն չէին գնում, քանի դեռ, տուրք տալով Եղեանի հեղինակութեանը, կասկածի տակ չէինք առնում նրա տեսութեան գլխաւոր աղբիւրների

<sup>1</sup> Г. А. Эзовъ, Сношение Петра Великаго съ армянскимъ народомъ., հմնտ. №№ 6-8 և Введение, էջ XX, XXIII, XXIV, XXX.

<sup>2</sup> A. Johannissjan, Israel Ory und die armenische Befreiungsseite, էջ 148.

<sup>3</sup> Անդ, էջ 59 և հետ., 83 և հետ., 104:

<sup>4</sup> Ա. Յովհաննիսեան, Յակոբ Ջուղայեցու մի գրութիւնը ուս արքունիքին, «Արարատ», 1915, էջ 775 և հետ.:

վաւերականութիւնը: Իւրացնելով այդ կասկածը՝ պէտք է վերագնահատէինք միաժամանակ նաև աղբիւրների մատակարարած նիւթը, երբ, 1915-1916 թւերի ամառւա ամիսներին, հնարաւորութիւն ստացանք անձամբ տեսնել և ուսումնասիրել Մոսկւայի նախկին Արտաքին գործոց նախարարութեան գլխաւոր դիւանում պահւած այն բոլոր փաստաթղթերը, որ ընդհանուր հասկացողութիւն են տալիս Ժէ-Ժէ դարերի հայ-ռուսական յարաբերութիւնների զարգացման ընթացքի մասին:

Այդ նիւթերի անմիջական քննութիւնն էր, որ հնարաւորութիւն տւեց լիովին հերքել հայ-ռուս օրիենտացիայի ծագման մասին տիրող տեսութիւնը և հիմնաւորել ու զարգացնել առաջադրւած խնդրի նոր ըմբռնումը: Մենք մշակեցինք այն համոզումը, թէ մինչև 1720-ական թւականները ուսուսական օրիենտացիան ոչ միայն հայ ժողովրդական մասսաների քաղաքական մտայնութիւնը չի սնել, այլ և ուղեցոյց չի հանդիսացել վարիչ դասերից որևէ մէկին նրա քաղաքական որոնումների ճանապարհին:

Ներկա աշխատութեան մէջ սպառում ենք միայն տիրող տեսութիւնը հերքող նիւթեր և դիտողութիւններ: Ամփոփելով բացասական եղրակացութիւններ՝ մեր գործը պէտք է կրէր նախ և առաջ քննական-բանասիրական բնոյթ: Հայ-ռուս օրիենտացիայի սկզբնաւորութեան քննական-պատմական նկարագրին կը դառնանք մի այլ ուսումնասիրութեան մէջ՝ նւիրւած Ղարաբաղի և Զանդեզուրի առաջին ապստամբութեանը՝ Դաւիթ-բէկ Սիւնեցուժամանակ:

ա. Զեռագրական դիտողութիւններ

Հայ-ռուսական քաղաքական յարաբերութիւնների սկզբնաւորութեան խնդրի քննութիւնը կապւած է Ժէ-Ժէ դարերում ապրող երկու նշանաւոր հայերի՝ Խորայէլ Օրիկի և Մինաս վարդապետի գործունէութեան վերագնահատումի հետ: Լուսաբանել այդ մարդկանց գործերը՝ նշանակում է ուսումնասիրութեան նիւթ դարձնել նրանց անւան հետ կապւած դիւանական հարուստ նիւթերը և ամենից առաջ որոշել այն փաստաթղթերի վաւերականութիւնը, որոնց հիման վրա նրանք բանակցում էին Արևմտեան Եւրոպայում՝ կաթոլիկ արքունիքների և Ռուսաստանում՝ ցարի կա-

**ուավարութեան հետ:** Կատարել այդ աշխատանքն ամբողջ ծաւալով հնարաւոր չէ այժմ: Ուսումնասիրութեան գործը դժւարանում է ինքնին շնորհիւ հայ դիպլոմատիկայի պատմութեան ընդհանրապէս անմշակ գրութեան այլ և այն մասնաւոր պատճառով, որ համեմատական ուսումնասիրութեան ձեռնարկելու համար պատմական, հաստատ յենակէտների պակասն ենք զգում: Ոչ միայն չեն հասել մեզ ստուգւած փաստաթղթեր գրւած կամ վաւերացրած այն մարդկանց ձեռքով, որոնց անուններով հեղինակւած են մեզ զբաղեցնող գրութիւնները, այլ և չունենք ստոյգ և արժէքաւոր կողմնակի տւեալներ այդ անունները կրող անձերի մասին առհասարակ: Միւս կողմից գործերի մէջ չկա կամ, լինելու դէպօւմ, մատչելի չէ մեզ կարեոր գրութիւններից մի երկուսի բնագիրը: Այսպէս՝ հնարաւորութիւն չունենք կանգ առնելու եղեանի հրատարակած վաւերագրերից №№ 3-ի և 5-ի վրա, քանի որ դրանց հայերէն բնագիրները<sup>1</sup> չեն պահւել Բաւարական Գաղտնի Պետական Դիւանում, իսկ № 2-ի այն բնագիրը, որ գրեթէ մի դար առաջ աղբիւր է ծառայել Ա. Սեն-Մարթենի ֆրանսերէն թարգմանութեան, մատչելի չէ մեզ՝ տեխնիքական պատճառներով:

Անմիջական քննութեան հնարաւորութիւն են տալիս յամենայն դէպս Սիւնեաց մելիքների անունից գրած այն թղթերի սկզբնագրերը, որ զետեղւած են եղեանի ժողովածւի №№ 6-ի, 85-ի, 98-ի, 100-ի, 102-ի և ներկա տեսութեանը կցւած Յաւելածի № 1-ի ներքո: Բոլոր այս թղթերի սկզբնագրերը պահւում են Մոսկովյայի նախկին Արտաքին գործոց նախարարութեան գլխաւոր դիւանում<sup>2</sup> և մատչելի են ուսումնասիրութեան: Դրանց վրա էլ պիտի կենտրոնացնենք մեր ուշադրութիւնը:

**Ամենից առաջ դիտողութեան նիւթ պիտի դառնա, ի հարկէ, վաւերաթղթերի արտաքինը:**

№ 6-ի մեծութիւնը՝ 43×31,5 սմ. թուղթը՝ հաստ, ազնիւ, թղթի սպիտակ նշանները՝ ուղղահայեաց գծեր իրարից 2,8 սմ. հեռաւո-

<sup>1</sup> Հմմտ. մեր «Israel Ogy» աշխատությունը, էջ 82, ծան. 243:

<sup>2</sup> 3-е Московское отделение Единого государственного архивного фонда (նախկին Московский Главный архив министерства иностранных дел). Дела Армянские 1701 июнь-дек. 1703, fol. 234 (=ԷՅՋ. № 85), f. 238-9. (=ԷՅՋ. № 6), f. 240-1. (=ԷՅՋ. № 98), f. 257-8. (=ԷՅՋ. № 100), f. 263 և 270 (=ԷՅՋ. № 102). Дела арм. 1718 июль-сент., f. 12-13 (=Յաւելած № 1): Ակզբագրերը նշանակելու ենք Կ. Եղեանի ժողովածուի համապատասխան տպագրերի համարներով:

**բութեան վրա և երեք կիսալուսին. գրութեան տեղը և ժամանակը՝ «թւին ռճիսը, ի գիւղաքաղաքն՝ ընկեղակոթ ի Ապրիլի իթ»:**

**№ 85-ի մեծութիւնը՝  $37,5 \times 21$  ամ. թուղթը՝ հասարակ. սպիտակ նշաններ՝ չունի. տեղը և ժամանակը՝ «ռՃ ա թւականի յաբեթեան տոհմին՝ ի ն եմբերի ամսոյ է երորդի ի Դ րն... Էջմիածնի»:**

**№ 98-ի մեծութիւնը՝  $43 \times 31$  ամ. թուղթը՝ նոյնն է, ինչ № 6-ինը, միայն թէ փոքր ինչ աւելի բարակ. սպիտակ նշաններ՝ նոյնը, ինչ № 6-ի մէջ. տեղը և ժամանակը՝ «թ վն ո ճծ բ մայիս ի է դա ւոն Աղւն»:**

**№ 100-ի մեծութիւնը՝  $29 \times 19,5$  ամ. թուղթը՝ հասարակ, բարակ. սպիտակ նշաններ՝ չունի. տեղը և ժամանակը՝ նոյնը, ինչ նախորդինը:**

**№ 102-ի մեծութիւնը՝  $29 \times 19,5$  ամ. թուղթը՝ նոյնն է, ինչ № 100-ինը. սպիտակ նշաններ՝ չունի. տեղը և ժամանակը՝ նոյնը, ինչ № 98-ինը:**

**Բոլոր վաւերագրերի հանգամանքը՝ լաւ է, թանաքը՝ սկ, գիրը՝ նոտր:**

**Ստորագրութիւններն ու կնիքները կրկնում են վաւերագրերի տակ իւրաքանչիւր անգամ թէ՝ տարբեր թւով և թէ՝ տարբեր կարգով ու խմբակցութեամբ: Այլ և այլ ուղղագրութեամբ հանգիպում ենք ընդամենը 12 ստորագրութիւն՝**

**Ա. Հայկազի որդի Փիլիպոս:**

**Է. Պահումի որդի Մելքոն:**

**Բ. Նարին պէնի որդի Շահնազար:**

**Ը. Նալիի որդի Ցոհաննես:**

**Գ. Պաղտասարի որդի Թադէոս:**

**Թ. Պաղտասարի որդի Մելքոն:**

**Դ. Եարիի որդի Աղաջան:**

**Ժ. Շահինի որդի Սուքիաս:**

**Ե. Աստուածատուրի որդի Սարուխան:**

**ԺԱ. Մարտիրոսի որդի Ամիրպէկ:**

**Զ. Մելքոնի որդի Սաֆրազ:**

**ԺԲ. Կոստանտի որդի Գրիգոր<sup>1</sup>:**

**Այս անունները կրող մելիքների փոխարէն ստորագրւած է ըստ երկոյթին երկու ձեռքով. դրանցից մէկի գիրը նոտր է և շատ մօտ բնագրի ձեռքին<sup>2</sup>, միւսն, ընդհակառակը, շղագիր է. դժւար է**

<sup>1</sup> Վերջին անունը հանդիպում է միայն մի՛ անգամ, Էջմիածնի աթոռակալ Սինաս վարդապետի անւան հետ միասին, № 85-ի ներք:

<sup>2</sup> Հմմտ. սոյն տեսութեանը կցած նկար I, IV և Γ. ԹՅՈՅԵ № 100-ի բնագրից հանած նկար V:

Է նմանութիւն գտնել դրա և մեր ծանօթ այլ գրերի մէջ<sup>1</sup>: Նկատենք, որ շղագիր և նոտրագիր ստորագրողների տարբերութիւնն երեւում է նաև նրանց լեզւից. մինը՝ շղագիրը՝ ստորագրւում է միշտ «ինձ ղաբուլայ». միւսը՝ նոտրագիրը՝ «ինձ ղաբուլէ» կամ՝ «ինձ խալլէ»: Շղագիր ձեռքն ամենուրեք ստորագրւում է Ա և Գ անւան փոխարէն. Բ-ի և Դ-ի փոխարէն ստորագրւում է երբեմն շղագիրը, երբեմն նոտրագիրը. միւսների փոխարէն ստորագրում է ամենուրեք նոտրագիրը: ԿԱհքների թիւը 10 է. Թ և ԺԲ անունները համապատասխան կնիք չունեն: Առաջնի փոխարէն դրւում է երբեմն ԺԱ<sup>2</sup>, երբեմն է անւան կնիքը<sup>3</sup>: Վերջինի փոխարէն դրւած է ԺԱ անւան կնիքը<sup>4</sup>: Ստուգելով միւս ստորագրութիւնների հանդէպ գտնւող կնիքները՝ նկատում ենք մի անկանոնութիւն. № 100-ի տակ ստորագրւած է՝ «Ես ասատրի որդի ամիրպկս», իսկ կնքւած է՝ «Մարտիրոսի որդի Ամիրպէկ» փորագրութիւնն ունեցող կնքով<sup>5</sup>: Մեզ ծանօթ ստորագրութիւններից ևս գիտենք, որ Ամիրպէկն Աստածատուրի որդի չէր կոչւում, այլ՝ Մարտիրոսի:

Փորձե՞նք որոշել գոչի անձնաւորութիւնը: Համեմատելով մեր թղթերի գրերը՝ գալիս ենք այն եղրակացութեան, որ գրանք գրւել են մի՛ անձնաւորութեան ձեռքով: Վստահանում ենք շեշտել այդ ո՛չ միայն «Ընկեղակոթում» և «Աղւանքում» գրած թղթերի նկատմամբ, այլ և այն թղթի, որ գրւած է «Էջմիածնում»: Հնագրական բոլոր գիտողութիւնները բերում են այդ եղրակացութեան:

Արդ՝ № 85-ի տակ հանդիպում ենք մեզ ծանօթ մելիքներից երկու հոգու՝ Դ և ԺԲ անունները: Քանի որ ըստ երեսյթին այդ թղթի գիրը ոչնչով չի տարբերում մեզ զբաղեցնող միւս թղթերի գրից, և քանի որ յատկապէս Դ անունը գտնում ենք միաժամանակ բոլոր միւս վաւերագրերի տակ՝ կարելի էր ենթադրել, թէ հէնց այս վերջինն էլ մեր որոնած գրիչը պիտի լինի: Սակայն հաւաստի համարել այս ենթադրութիւնը չի կարելի և ոչ մի կերպ: Եթէ նոյնիսկ մի կողմը թողնելու լինենք այն հանգամանքը, որ

<sup>1</sup> Հմնտ. մեր Ակար V:

<sup>2</sup> Հմնտ. № 6:

<sup>3</sup> Հմնտ. № 98 և Յանելած № 1:

<sup>4</sup> Հմնտ. № 85:

<sup>5</sup> Հմնտ. Ակար V:

Դի ստորագիրը երբեմն չի համապատասխանում բնագրի ձեռքին, մեզ ծանօթ մելիքներից հենց Դ և Բ անունները կրող անձնաւորութիւնների մասին է, որ առանց այլեայլութեան կարող ենք պնդել, թէ անգրագէտ էին, քանի որ ինչպէս մէկի, նոյն պէս և միւսի ստորագրութիւնը տարբեր թղթերում երևան են գալիս տարբեր գրերով։ Աւելի բնական կլինէր մի այլ ենթադրութիւն։ Նկատեցինք արդէն, որ երկու ստորագրողներից մէկի գիրը շատ մօտ է մեր թղթերի նոտրագրին. տեսանք, որ այդ մէկն ամենուրեք ստորագրում է եօթնի փոխարէն. առաջին հնարաւոր եզրակացութիւնը պէտք է լինի, ուրեմն, այն, թէ մեր բնագիրների գրիչն այս եօթնից մէկն է, որ ստորագրում է թէ՛ իւր և թէ՛ միւսների տեղը։ Եւ ընդհակառակը՝ թղթերի գրիչ չեն կարող լինել Ա-Դ անունները կրող այն անձնաւորութիւնները, որոնց տեղ միշտ կամ երբեմն ստորագրել է շղագիրը. ուրեմն գրիչ չեն կարող լինել հենց այն մելիքները, որոնց անունները գտնում ենք անխտիր թէ՛ մեզ զբաղեցնող բոլոր թղթերի և թէ՛ բոլոր այն տպագիր վաւերագրերի տակ, որոնց սկզբնագրերը ստուգելու հնարաւորութիւնը չունենք։

Հնարաւոր է սակայն աւելի մասնաւորել մեր ենթադրութիւնը։ Մոսկայի դիւանում պահւած հայերէն մի թուղթ, գրած Կամենիցում 1727 թւին, դրա լուսանկարն ու տպագիրը զետեղւած է ստորև<sup>1</sup>, վաւերացրած է մեր յիշած եօթնից միայն մէկի՝ Մարտիրոսի որդի Ամիրպէկի՝ կնքով, և, եթէ ուշագրութեամբ քննելու լինենք այդ բնագիրը՝ մեծ նմանութիւն կնկատենք դրա և մեզ հետաքրքրող բնագիրների գրչութեան մէջ։ Մօտ քառորդ դարի հեռաւորութիւն կա վերոյիշեալ թղթի և մեր բնագիրների գրութեան ժամանակների միջև. և եթէ, բացի այդ, նկատի ունենանք, որ մատնանշւած գրութիւնը մասնաւոր դիմումի բնոյթ է կրում, հասկանալի կլինի թէ ինչո՞ւ նրա գիրը արդէն շտապ ու անփոյթ շղագրով գրած թղթի տպաւորութիւն է անում ու մասամբ տարբերւում մեզ զբաղեցնող թղթերի գրերից։

Ամիրպէկը մէկն է մեզ հասած թղթերում յիշւող այն մելիքներից, որոնց մասին եզրանի հրատարակած գրութիւններից յայտնի են մեզ մի քանի մանրամասներ։ Խորայէլ Օրին առանձին

<sup>1</sup> Հմմտ. Ակադ III և Ցաւելած № 16:

ակնածութեամբ է յիշում այդ մարդու անունը: Օրին ճանաչում էր Ամիրպէկին, ինչպէս ինքն է պատմում, դեռ 1670-ական թւականներից, երբ վերջինս դեռ երիտասարդ էր: Վերադառնալով 1699 թւին հայրենիք՝ Օրին տեղեկանում է, որ Ամիրպէկը, միացած «անօրէնների» հետ, նեղում է հայերին ու թշնամական յարաբերութիւնների մէջ է գտնուում յատկապէս Անկեղակոթի մելիք Սաֆրազի հետ<sup>1</sup>: Հայերի ազատագրման գործի յաջողութեան տեսակէտից Օրին ամենից առաջ կարևոր համարեց համերաշխութիւն ստեղծել իրար հետ թշնամացած մելիքների միջև. Հակառակ դէպքում նա սպառնում էր հեռանալ հայրենիքից՝ չյայտնագործելով հայ մելիքներին իր քաղաքական ծրագիրն ու դիտաւորութիւնը: Հաշտութիւնը կայանում է և պսակւում Օրիի միջնորդութեամբ երկու տների մէջ ստեղծւած խնամիական կապերով: Եւ իրօք, դրանից յետո է, որ սկսում է Օրին իւր հայրենակիցների հետ բանակցել ազատագրական ծրագրի շուրջը<sup>2</sup>: Մեր տրամադրութեան տակ եղած վաւերագրերի հիման վրա դժւար է որոշել Ամիրպէկի մելիքական իշխանութեան բնագաւառը: Օրիի պատմածից կարելի է եզրակացնել, թէ այդ իշխանութեան սահմանները Սիւնիքից դուրս չպէտք է որոնել, թողնելով Անկեղակոթը՝ նա դիմում է Ամիրպէկի բնակավայրը և արդէն միւս օրը վերադառնում է կրկին Անկեղակոթ<sup>3</sup>: Հստ երևոյթին Ամիրպէկի շրջանը սահմանակից էր նրա հակառակորդի՝ մելիք Սաֆրազի՝ իշխանութեան, և երկու մելիքներն իրարից հազիւ մի քանի ժամւա հեռաւորութեան վրա էին ապրում: Խաչիկ վարդապետի թղթերում կամի յիշատակարան, որ գալիս է կարծես վկայելու, թէ Ամիրպէկն, իրօք, պատմական անձնաւորութիւն էր և 1706 թւի շուրջը մելի-

<sup>1</sup> Հստ Ե. Լալայեանի, այս մելիք Սաֆրազը պէտք է որ Սիսիանում իշխող Սելիք-Սաֆրազեանների նախահայր մելիք Շափրազը եղած լինի (հմնտ. Ե. Լալայեան, Չանգեզուրի գաւառ, Թիֆլիս, 1898, էջ 17): Թէ որքան իմնաւոր է այս ենթադրութիւնը՝ չը գիտենք: Սիւնիքում յամենայն դէպս այդ անունով մելիքներ յիշում են: Ե. Լալայեանը, օգտելով ժողովրդական աւանդութիւններից, յիշում է համանուն մի ուրիշին, որ ԺԷ դարում պիտի ապրած լինի (հմնտ. անդ): Դրանից առաջ Սելիք-Փարսադանեանների մի շատ կասկածելի տոհմագրութեան մէջ հանդիպում է մեզ մելիք Սաֆրազ անունով մի ուրիշը, որ մեզ հետաքրքրութին ժամանակակից է գալիս («Բանասէր», Դ, 381 և հետո.): Սի գրչագիր յիշատակարանում, 1781 թից, յիշում է «Սելիք Շափրազն որ ի Սիսիան, այր ճարտարախօս (Էջմիածնի Սատենապարան, № 1720/1488 fol. 218 v)»: Վերջինին մասին հմնտ. նաև Պ. Ալիշան, Սիսական, էջ 215:

<sup>2</sup> Գ. ԷՅՈՎԵ, անդ, № 11, էջ 52 և հետո.:

<sup>3</sup> Անդ:

**Քութիւն էր անում Անկեղակոթին հարևան Բոնակոթ գիւղում:**  
**Ահա այդ յիշատակարանը.**

«Փառք ամենայս բերրորդուն ն հօր և որդոյ և հոգոյն արբոյ Ամէն. Ես տրուա և անարժան և սուտ անուն տ ո ածատուր կրօնայորս որ եմ ի յերկրէն Սիւնեաց ի գիւղաքաղաքէն բոնագալիքու ի յազգէն Թորոսնեցի ի թ վկունս հայոց ո ճծէ ին ի թագաւորութենան պարախց Շահ սովթան հիւսէինն և ի հայրապետունն տ ն ս բ Էջմիածնայ ի տ րն հանգուցեալ նահայապետ կաթողիկոսին ի տիրութեն գիւղաքաղաքիս աղայ սատիշաղ պէկին և իշխանութ ն հայոց մէլիք ամիր խանին ի հայրապետութեն ն ս բ աթոռոյս ըստաթէի լովասակ սրբակրօն վարդապետին: Ո նծ դ թվկանիս մերոյ հայոց և յամսենան նոյեն բ հանգցե լ տ ո վարդանի որդի Թաթոսն այս հայրանց վարք գիրքս իւր վս կոցն և էառ եղ ի ս բ գէորք եկեղեցիս յիշատակ իւրն և ծնօղաց և որ հանդիպիք սմայ կարդալով սա ... ա ծ ողորմի Թաթոսին ամէն»:

**Արդեօք Բոնակոթի մելիք Ամիրխանը և մեր յիշած մելիք Ամիրպէկը նոյն անձնաւորութիւնը չե՞ն՝ հաստատապէս պնդել անկարող ենք:** Սակայն վերստին դառնալով 1727 թւից մնացած վերոյիշեալ թղթին, յամենայն դէպս նորից պէտք է եզրակացնենք, որ յիրաւի Ամիրպէկը Սիւնեցի էր, քանի որ այդ տեղից երեւում է գրողի անմիջական առնչութիւնը Դաւիթ-Բէկի անունը կրող նշանաւոր շարժման հետ: Անհնարին չէ ինքնին, որ Սիւնեաց շարժման բոլոր շրջանները վերապրած և դրանց գլխաւոր հերոսների հետ ծանօթ այս մարդը լինէր հենց մեր թղթերի գրիչը:

Սակայն խնդիրն աւելի բարդ է, քան կարող է թւալ: Դեռ կանգ չենք առնում այն հանգամանքի վրա, թէ ինքնին որքան դժւար է ընտելանալ այն մտքին, որ ժէ-ժլ դարի Սիւնեաց մելիքներից մինն այնքան գրագէտ կարող էր դառնալ, որ վստահութիւն ունենար անգամ աշխարհիս հզօրներին ուղղած դիմումներն իր ձեռքով գրել: Կա զօրաւոր հիմք ուղղակի ենթագրելու, որ Սիւնեաց այդ մելիքը, եթէ իրօք ապրել է այդ անունով մէկը, և կասկածից դուրս է նրա կնիքն ու ստորագրութիւնը կրող թղթերի վաւերականութիւնը, անգրագէտ մէկը եղած լինի: Ամիրպէկի անձնաւորութիւնն առանձին տարակոյսների տեղիք է տալիս արդէն իսկ կնիքների ու ստորագրութիւնների նկարագրութիւնից: Նշանակութիւն չունի դեռ այն, որ նա ուրիշների փոխարէն է կնիք դնում. այդ երեսյթը կարող ենք թերևս օտարի ստորագ-

բութիւնը վաւերացնելու ձև համարել։ Զենք ուզում նշանակութիւն տալ նաև այն հանգամանքին, որ Ամիրպէկը, լինելով ի մեջի այլոց նաև №№ 6-ի և 85-ի գրիչն ու վաւերացնողը, առաջին գրութիւնը նա կնքել է Թ անւան, երկրորդը՝ ԺԲ անւան փոխարէն, չի գրել այդ թղթի տակ իր ստորագրութիւնն ու կնիքը։ Հնդունենք նոյնիսկ, թէ նա ինչ-ինչ պատճառներով անձնապէս համակիր չէր իր ձեռքով գրած թղթերի բովանդակութեանը։ Սակայն անպայման կարեոր է հաշվի առնել այն, որ անկարող էր ուրեմէ մէկը մոռանալ իր հօր անունը և ըստ հարկին, «ես մարտիրոսի որդի ամիրպէկս» գրելու փոխարէն՝ ստորագրէր «ես ասատրի որդի ամիրպէկս»։ Այսպիսի սայթաքումն հոգեբանօրէն թոյլատրելի չէ։ Աւելի ևս, երբ այդ սայթաքումը պատահական չէ, այլ սովորական։ Եթէ ուշադրութեան առնենք մեր Շահը ՊՇ կտեսնենք, որ Ամիրպէկը իր սովորական կնիքի հանդէպ ստորագրում է՝ «Ես մրտիրոս ամրպէնց»։ Այստեղ արդէն նրա անունն ու հայրանունը շփոթւած են իրար հետ։ Այս երեսոյթը հարկագրում է մեզ առնւազն ենթադրել, թէ Ամիրպէկի տեղ ևս ուրիշն էր ստորագրում։ այդ ուրիշն էլ կարող էր մեքենայաբար շփոթել այն մարդու անունը, որի փոխարէն ստորագրում էր։

Բայց սրանով գեռ միանգամայն չի լուծում Ամիրպէկի առեղծւածը, քանի որ դրանով գեռ չեն պարզուում այդ անւան հետ կապւած ուրիշ խնդիրներ։ 1701 թւին ռուս արքունիքին ներկայացրած իր ծրագրով, առաջիկա պարսկական արշաւանքի ժամանակ Օրին առանձնապէս կարեոր գեր էր վերապահում Շամախուց տասը մղոն հեռաւորութեան վրա գտնւող «Կիշգաօ» անունով տեղում ապրող ոմն Ամիրպէկին (Էմիր Ենի)՝<sup>1</sup> Տարօրինակ ոչինչ չէինք գտնի այս յայտարարութեան մէջ, եթէ սրանով հարկադրւած չլինէինք Ամիրպէկի բնագաւառը Շամախու շրջանում որոնելու։ Կամ երեսակայութեան արդիւնք է Օրիի այս յայտարարութիւնը, այդ դէպքում՝ Ամիրպէկը նրա թղթերի մէջ դեւանագիտական նպատակներով շահագործուող մի անուն է միայն, կամ, ընդհակառակը, ճիշտ է այդ յայտարարութիւնը, այն ժամանակ բաւականին կասկածելի արժէք է ստանում Օրիի այն գեկումը, որ հարկադրել էր մեզ Սիւնիքում փնտոելու Ամիրպէկի

<sup>1</sup> Դ. Էզօվե, անդ, № 43, § 3:

**Բնակավայրը:** Բայց եթէ խուսափելու լինենք նաև այս տարակուսանքներից՝ ենթադրելով, որ Շամախու շրջանում ապրող Ամիրպէկը և Սիւնեաց երկրի համանուն մելիքը տարբեր անձնաւորութիւններ են, վերջինիս դէմքից այնու ամենայնիւ չի իջնի մթութեան քօղը: 1727 թւից մնացած թղթին կցած գործից չի երևում, որ այդպիսի մի անձնաւորութիւն գոյութիւն ունեցել է առնւազն այնտեղ, որտեղից ուղարկւած է նրա կնիքն ու սիսալ ստորագրութիւնը կրող թուղթը: Այս գործի մէջ արձանագրւած մի ցուցմունքից երևում է, որ Կամենից քաղաքում այդ ժամանակներում Ամիրպէկ անունով փախստական հայ մելիք չի եղել<sup>1</sup>:

Աւելի կմօտենանք մեզ հետաքրքրող խնդրի՝ ու միաժամանակ նաև Ամիրպէկի անձնաւորութեան յարուցած կասկածելի լուծմանը, եթէ փոքր ինչ աւելի ընդլայնենք հնագրական համեմատութիւնների սահմանները: Քննութեան առնելով ԺՀ դարի այն հայերէն գրութիւնները, որ պահւում են Մոսկվայի դիւանում՝ ակամայից մեր ուղադրութիւնը կանգ է առնում այն թղթերի վրա, որ գրւած են Օրիի գործակից Մինաս վարդապետի ձեռքով: Այս մարդու ձեռքով գրած բազմաթիւ նոտրագիր թղթեր են մնացել Մոսկվայի դիւանում: Գրչութեան արւեստի տեսակէտից Մինաս վարդապետի գիրն այնքան եղակի է և իւրատեսակ, որ դժւար կլինէր նրան մօտաւոր նմանութիւն ունեցող ուրիշ գրիչներ մատնացոյց անել: Դիտեցէք թէկուզ իսրայէլ Օրիին և Թարաղուլի անունով վաճառականին ուղղած 1704 թ. 3-ն նոյեմբերի թւակիր նրա այն նամակի սկզբնագիրը, որից ընդօրինակւած է մեր Յանձնած № 3 և վերաբարեւած Ակար՝ II: Նոտրագիր տառերին յատուկ ուղղահայեաց գծերի աղեղնաձև ընթացքը, ինչպէս նաև դրանց նրբացումը վերից վար՝ այդ գրերի մէջ արտայայտիչ են սովորականից աւելի: Տառերի ոլորագծերը տարւել են, ըստ երկոյթին, արագ, նեարդային շեշտով: Տառերից իւրաքանչիւրն ունի իւրայատուկ գծագրութիւն: Այդ տեսակէտից բնորոշ են յատկապէս Ա, Մ և մանաւանդ՝ Գ գլխատառերը, իսկ հասարակ նշանագրերից՝ Կ, Թ, Ջ, Ա ու առանձնապէս՝ Եւ տառերը: Նոյնպէս շատ դէպքերում բնորոշ են տառերի միացումներն ու կրճատումները:

<sup>1</sup> Մոսկվայի դիւան, Ճելա արմ., 1727, օկտ. 28-օկտ. 1728. f. 43 թ:

Բայց ահա տարօրինակը։ Գրերի բոլոր առանձնայատկութիւնները գտնում ենք թէ մեզ անմիջապէս հետաքրքրող վաւերագրերի և թէ 1727 թւին գրած այն նամակի մէջ, որի վրա կանգ առանք վերը։ Այս չէ՞ նշանակում, թէ այդ թղթերի գրիչը ոչ այլ ոք է, քան եթէ Մինաս վարդապետը։ Հայ հնագրութեանը ծանօթ ամեն մէկը, որ հնարաւորութիւն կարող էր ունենալ տեսնել և համեմատել այստեղ յիշատակւած թղթերի գրերը, չի կարող դրական իմաստով չպատասխանել ծանրակշխո եզրակացութիւններով յղի այդ հարցին։ Անշուշտ, գրչութեան արւեստի տեսակէտից նա այդ թղթերի մէջ որոշ տարբերութիւններ կգտնի։ բայց և այդ տարբերութիւնները տրամադրի պիտի լինի վերագրել ոչ թէ գրող ձեռքի տարբերութեան, այլ այն հանգամանքին, որ միենոյն ձեռքը գրել է այդ թղթերը տարբեր տրամադրութիւնների տակ, տարբեր ժամանակներում, տարբեր միջոցներով կամ նպատակներով։ Մասամբ գրերի տարբերութիւնը հետեանք է մելանի և փետուրի տարբերութեան։ Մասնաւոր մարդկանց ուղղած նամակների վրա նոյն խնամքը չը պիտի գործադրւէր, որպիսին գործ էր գրւում պաշտօնական գրութիւնների մէջ։ Եւ վերջապէս՝ 1699-1704 թւերին 41-46 տարեկան Մինաս վարդապետն աւելի վայելուչ, չափւած ու գեղեցիկ գիր պէտք է ունենալը, քան 1727 թւին, երբ մօտ 70-ամեա ծերունին էր գրիչ առնում իր ձեռքը<sup>1</sup>։ Թղթերի մէջ նկատող տարբերութիւններն այսպիսով պէտք է նոր յենակէտներ համարւեն հանած եզրակացութեան, և ոչ ընդհակառակը։

Նոյն եզրակացութեան կյանգենք, եթէ փորձենք որոշել մեր վաւերագրերի հեղինակի անձնաւորութիւնը։

Հեղինակի անձնաւորութեան մասին ուղղակի տւեալներ չկան, ի հարկէ։ «Պէտք է ենթագրել, - գրում է Կ. Եզեանը, - որ կուրֆիւրստին և պապին ուղղած թղթերը (իմա՛ ժողովածւի №№ 2 և 5), այլև մելիքների կողմից Օրիին տւած հաւատարմաթուղթը, գրած լատին լեզով (№ 3), կազմւել են միսիոնարների ձեռքով, թէև կան ցուցմունքներ, որ դրանք հայերէն են գրւել։ Սակայն, հաւանօրէն, հայ բնագրին կցւած է եղել նաև լատին թարգմանութիւնը, կամ, լաւ է ասել՝ աւելի ուղիղ և հանգամանօ-

<sup>1</sup> Մինաս վարդապետի հասակի մասին հմմտ. Յաւելած № 3 ծան։

բէն շարադրւած բնագիրը, ինչպէս այդ արւած է նաև Պետրոս Մեծին ուղղած թղթի նկատմամբ, որ հասել է մեզ երկու լեզով (№№ 6 և 7)<sup>1</sup>: Մենք արդէն առիթ ենք ունեցել ցոյց տալու, որ Եղեանի այս ենթադրութիւնն անհրաժեշտ չէ ինքնին և զուրկ է ուրեմ հիմքից<sup>2</sup>: №№ 2, 3 և 5-ի բնագիրները հայերէն են գրւել, և հաւանօրէն՝ նոյն ոճով, որով դրանց բախտակից № 6-ն է գրւել: Բոլոր այս բնագիրների թարգմանութիւնները հոգացւել են արտասահմանում: №№ 2-ին և 3-ին համապատախանող հայերէն բնագիրների թարգմանութիւնը արել է Ստ. Ռոշքան<sup>3</sup>: Եղեանի հրատարակած Փրանսերէն թարգմանութիւնը կատարել է, ինչպէս գիտենք, Սեն-Մարթէնը: № 5-ը թարգմանուել է Դիւսելդորֆում<sup>4</sup>, իսկ № 6-ը, ինչպէս պէտք է եղրակացնել Օրիի մի յայտարարութիւնից<sup>5</sup> Ռուսաստանում:

Հարկ չկա նոյն իսկ սահմանափակւել այս ցուցմունքներով: Մեր վաւերագրերի լեզվական համեմատութիւններն աւելի զօրեղ միջոցներ են տալիս դրանց հեղինակը գտնելու համար:

Բոլոր այս փաստաթղթերը գրւած են բարբառախառն գրաբարով: Թղթերի խոչոր մասն ուղղւած է բարձրաստիճան անձանց, կրում է պաշտօնական դիմումի կամ իրաւական պարտաւորութեան բնոյթ՝ ուստի և գրողն ինքը պէտք է աշխատէր տալ դրանց պատշաճ ձև՝ արտայայտւել ըստ կարելոյն գրոց լեզով: Դրանով էլ պէտք է բացատրել յատկապէս ցարին ուղղած №№ 6-ի և 98-ի մէջ գրաբար տարրի գերակշռութիւնը: Բայց և այնպէս հեղինակի ժամանակը և նրա գիտութեան աւելի քան համեստ չափերը խոր կնիք են դրել այդ գրութիւնների վրա: Այստեղ առատօրէն կիրառում են բարբառային ձևեր ու դարձւածքներ, այլ և ռամկօրէնին յատուկ բառամթերք: Եւ հենց այսպիսով էլ վաւերագրերը ներկայացնում են իրանց այն առանձնայտկութեամբ, որի ուսումնասիրութիւնը պէտք է յենակէտներ տա մեզ՝ որոշելու հեղինակի անձնաւորութիւնը:

<sup>1</sup> Г. Эзовъ, Введеніе, XXIII.

<sup>2</sup> «Israel Ory», 82, ծան. 242.

<sup>3</sup> «Հանդի Ամսօրեայ», XI, էջ 26. Г. Эзовъ, Введеніе, LXXVI, ծան. 2. Р. J. Th. Krusinski, Tragica vertentis belli Persici historia, Leopoli, 1740, էջ 254 և հետ.:

<sup>4</sup> Kgl. Bayr., Geh. St. Archiv. Kastenblau 45/6, f. 26.

<sup>5</sup> Г. Эзовъ, № 37, էջ 77.

Հնչիւնափոխութեան տեսակէտից ուշագրաւ են մի քանի կրկնող դէպքեր: Ամենից սովորականը գրանցից՝ ո՞յօ՝ արդիւնք է ոչ այնքան առանձնայատուկ գրութեան, որքան հեղինակի պակասաւոր գրագիտութեան: Սակայն արդէն բարբառի ազդեցութիւն է նկատւում այդ է հնչիւնափոխութեան մէջ, ինչպէս էաքեր, էզիզ (№ 98) և սէպէա (№ 100) օտար բառերի և այդ հայերէն երած բառի մէջ (անդ. և Յաւելած № 1): Նոյնպէս բնորոշ է քաչ (№№ 6, 85, 98), մէչ (№ 98) բառերի և ընդհակառակն՝ չշ հոչակել (անդ) բառի մէջ: Նկատելի է նաև դշխան՝ խապու բառի մէջ (№№ 6, 98, 100 և Յաւելած № 1):

Դարաբաղջիական ուր ո մեր վաւերագրերի մէջ հնչիւնափոխութեան երեսյթ չէ, այլ համառոտագրութեան հետևանք: Թողթ (№ 98 և Յաւ. № 3) և թորք (Յաւ. № 3) բառերը թուղթ և թուրք բառերի համառոտագրութիւնն են: Նոյն Յաւ. № 3-ում թողթ համառոտագրութեան կողքին հանդիպում է նաև լիագիր թուղթը: Հմմտ. նաև շոտով (№ 98 և Յաւ. № 3), շո՛տով (Յաւ. № 8) և շուտով (№ 239), ոմուտ (№ 207) և ումուտ (№№ 5 և 98), խովաթ (№ 3) և խուվաթ (№ 4), մուղաթ և մողաթ (Յաւ. №№ 1 և 3): Նոյն համառոտագրութիւնը հանդիպում է՝ Յաւ. № 15 մատւ՛սցի, որիշ, գր՛ւմ, պակաս՛ւթե: Միևնոյն գրութեան մէջ հանդիպում են խոլոխ և ղուլող ձևերը («Պետրոս գի Սարգիս Գիլանենց», Յաւ.):

Բայերի խոնարհման դէպքերից բնորոշ է ներկայի կու լինի, կու յատնէ (№ 6), կու կամին (№ 85), կու աղաչենք (№ 98), կու խնդրենք (№ 100) օրինակները: Անցեալ անկատարում գործ է ածւում ուղարկեաք, ունեաք, չեաք արժանի, ընտրեր էաք (№ 6), գրեր էաք (№ 98) ձևը: Ինչպէս արդէն այս օրինակներից երեսում է, բնորոշ է նաև վաղակատար դերբայի վերջաւորութիւնը՝ քաշեր է (№ 6), յանձն առեր է. ասցեր ենք (№ 85), ուղարկեր էին (№ 98), ընդուներ ես, արեր ես (№ 100), գրեր են (Յաւելած № 1):

Համաձայնութեան ձևերից ուշագրութեան արժանի է եզակիի գործածութիւնը հետևեալ դէպքերում՝ հայրն ու պայծառ տունն չարչարանք է քաշեր (№ 6), նոքա մեր աղաչանաց լսած է եւ .. գրած է (№ 98):

Բնորոշ բարբառային արտայայտութեամբ և գրական բառերի ինքնայատուկ տառադարձութեամբ կամ ուղղագրութեամբ կրկնում են յաճախ հետևեալ բառերը կուռճի (№№ 6, 98, 100),

եփուատօր կամ եփրատօր (№№ 6, 98), լէքտօռ փալաթին (№№ 6, 98, 100), գերագուն (№ 6), ամրագուն, վեհագուն (№ 85), գերն (№№ 85, 100), էրաս (№№ 85, 98, 100), ումուտ (№№ 6, 98), վան արէ (№№ 6, 98, 100), վաղեմէ (առանց նախդիրի՝ №№ 6, 100), գիտակեմք (№№ 6, 85, 98, 100): Կան նաև յաճախ կրկնւող դարձւածքներ, համեմատութիւններ, մտքեր, այսպէս՝ №№ 6-ի և 98-ի մէջ՝ բարուն բարի եւ հակառակիդ հակառակ, №№ 98-ի և 85-ի մէջ՝ կոստանդինի և Թէզողորոսի օրինակը, նոյն №№ 6-ի և 98-ի մէջ՝ հայոց ազատագրական առասպելի նոր տարբերակը, որով ոռւսական ցարը հռչակւում է գրոց և նախնեաց խոստման համաձայն հայերի ակնկալած փրկիչը:

Բոլոր այս երեսյթները հարկադրում են յամենայն դէպս ընդունել, որ թղթերը մի ընդհանուր հեղինակ ունեն: Ճիշտ է, այս համեմատութիւնների ժամանակ չկարողացանք շփման կէտեր գտնել № 102-ի և միւս փաստաթղթերի միջև. սակայն դա հնարաւոր չէր այն հասարակ պատճառով միայն, որ այդ թուղթը ընդդամենը չորս հինգ տողից է բաղկանում: Ոչ մի հիմք չկա սակայն դատելու այդ թղթի ծագման խնդիրը բախտակից № 100-ից և Յաւելւածի № 1 գրութիւնից:

Արդ, ո՞վ է այս թղթերի ընդհանուր հեղինակը: Այդ հարցին պէտք է տանք նոյն պատասխանը՝ ինչ տւինք վաւերագրերի ընդհանուր գրչի մասին. այստեղ ևս մենք գործ ունենք նոյն Մինսս վարդապետի՝ Օրիկի գործակցի հետ: Եւ ինչպէս առաջ Մինսս վարդապետի ինքնօրինակ գիրն էր օգնում մեզ որոնելու գրչի անձնաւորութիւնը, նոյնպէս և այժմ կարող է նպաստել մեզ զբաղեցնող հարցի լուծմանը նոյն մարդու ինքնօրինակ ոճը:

Եւ իրօք, անցնելով Մինսս վարդապետի թղթերում պահւած բարբառային տարբերի բնորոշմանը՝ նկատում ենք, որ այդտեղ ևս կրկնւում են վաւերագրերի մեզ ծանօթ յատկանիշները:

Ու օ հնչիւնափոխութիւնը հանդիպում է յաճախ ա> է հանդիպում է թէտէրուք (№ 207 և Յաւելած №№ 7 և 16), հէլպէթ (№№ 207 և 239) օտար և գնէք (Յալ. № 8), էրա (№ 239), չէրան (№ 207), կէռէի (Յալ. № 7) և մեր «Պետրոս դի Սարգիս Գիլանենց» աշխատութեան Յաւելած) հայ բառերի մէջ. ա> ե՛ յեռաջ բառի մէջ (Յալ. № 7 և «Պետ. դի Սարգիս Գիլանենց», «Յալ.»), շ>չ՝ քաչ (Յալ. № 4), մէչ, մի ըստ միոչէ (Յալ. № 3), յեռ(ա)չ, տիրոչ («Պետ. դի Սարգիս

**Գիլանենց», Յաւ.) բառերում. չ> չ` այստեղ ևս հանդիպում է մի անգամ՝ ճանաչուի բառի մէջ (Յաւ. № 3). դ> խ` խովաթ (Յաւ. №№ 3 և 4), խալրաթ (№ 240), խզլաշ (№ 207 և «Պետ. դի Սարգիս Գիլանենց», Յաւելած), բառերի մէջ:**

Բայերի խոնարհման ժամանակ հանդիպում են նոյն երևոյթները, որ առիթ ունեցանք վաւերագրերի մէջ դիտելու։ Ներկայի կազմութեան համար բնորոշ է՝ կու հայցեմք (Յաւ. № 7), կու հարցնէ (Յաւ. № 8), կու խնդրեմք (Յաւ. № 3), կու կապեն («Պետրոս դի Սարգիս Գիլանենց», Յաւ.) ձևը։ Անց. անկ. գրեր եաք (Յաւ. № 8 և այլն)։ Վաղակատար դերը. ունի մեզ ծանօթ ձևը՝ զալթեր (№ 207), արեր (№ 240), գացեր էք (Յաւ. № 3), չես գրեր, չէ տուեր, եղեր էր (Յաւ. № 7), գացեր էի, արեր են («Պետ. դի Սարգիս Գիլանենց», Յաւ.) և այլն։

Համաձայնութեան համար ակնբախ է եղակիի գործածութիւնը յոգնակիի փոխարէն՝ բանքն ... որ եկած է (№ 239), մէլիմ է նոցա գործը (№ 240), նոքա եւս առ մեզ գրած է և մերայնիքս խիստ թամպէ արած է (Յաւ. № 3) դարձւածքների մէջ։

Մինաս վարդապետի բառամթերքն ևս մեր վաւերագրերինն է՝ եփրատօր (Յաւ. № 4) կամ աւելի ուղիղ տառաղարձութեամբ՝ իմփեռատօն (№ 240 և «Պետ. դի Սարգիս Գիլանենց», Յաւ.), լեռտօն փալաթին (Յաւ. № 4), վեհագուն, մնձագումեղ (Յաւ. № 3), գեղեցկագումեղ (№ 240), զերն (Յաւ. № 3 և «Պետ. դի Սարգիս Գիլանենց», Յաւ.) էհաս (Յաւ. №№ 3, 4 և 8), ումուտ (№ 207), ահէ (առանց նախդիրի՝ № 240), վաղեմէ (առանց նախդիրի՝ անդ), գիտակ եմք (անդ. և Յաւ. №№ 3, 7, 8):

Մի շարք ուրիշ բառեր, որ բնորոշ կերպով երևան են գալիս այս թղթերի մէջ, հանդիպում են նաև վաւերագրերի մէջ. վաղթ, թէպիէթ (№ 98 և Յաւ. № 3), չաշուտք (№№ 98 և 240), ամալ (Յաւ. №№ 3, 4, 7 և եղեան № 98), աւելօք (Յաւ. №№ 3, 7 և «Պետ. դի Սարգիս Գիլանենց», Յաւ. և եղեան № 100), գրաքար առնել բայը՝ (№№ 207, 239, 240. Յաւ. №№ 3, 7 և եղեան № 102), Ալէքսէուին (№№ 240 և 102):

Վերջին երկու օրինակները ցոյց են տալիս, ի դէպ, նաև № 102 թղթի առնչութիւնը Մինաս վարդապետի թղթերի և ուրեմն անուղղակի կերպով նաև՝ բախտակից վաւերագրերի հետ։ Նոյնքան կարեռ է սակայն նկատել, որ թէ Մինաս վարդապետի

թղթերի և թէ քննւող վաւերագրերի հետ սերտ առնչութիւն ունի 1727 թւին գրած թուղթը՝ Յանելած № 16, ինչպէս եղբակացնել կարող ենք այդ գրութիւնից քաղած մի շարք բառերի ու դարձւածքների գործածութեան փաստից կամ դրանց կիրառման ձևերից, ինչպէս՝ օրինակ, հօվիլ, օտ փոխանակ ու, թէտէրութ, խզլաւաշ, կու քաշեն, կու մնաս, սիրտ, ունէաք, հաստատեր ես, արեր եմք, չարագործք սպանած է, հողագործութիւն առնել, ճէպախն (Հմմտ. «Պետ. դի Սարգիս Գիլանենց», Յաւ.), խայրաթ (Հմմտ. № 2 և Յաւ. № 4):

Թղթերի մէջ յաճախ էլ շաղկապի ձայնաւորը սղւում է՝ նախընթաց բառին միանալու շնորհիւ: Օրինակ. Յաւ. № 7-ի մէջ կազմւել է մեքլ բառը: Նոյն երևոյթը նկատում ենք մեր Յանելած № 16-ում՝ մեզլ, դուլ, մեքլ, մերնլ, այլ և Մինաս վարդապետի թղթերում՝ մեքլ (№ 207 և «Պետ. դի Սարգիս Գիլանենց», Յաւ.), ձեզլ, ինձլ, (Յաւ. № № 3 և 7), երեքեամքնլ (Յաւ. № 8), փօստիլ (Յաւ. № 3): Այս ձեզ համապատասխանում է խարբերդցոց «Ոլ» շաղկապին<sup>1</sup> և գալիս է վկայելու, թէ այն հանգամանքը, որ Ստ. Ռոշքան խարբերդցի է անւանում Մինաս վարդապետին, պէտք է որևէ հիմք ունեցած լինի:

Բարբառային նման հետքերով հնարաւոր չէ սակայն աւելի որոշակի ցոյց տալ վաւերագրերը հեղինակողի հայրենիքը և այդ եղանակով իսկ մօտենալ նրա անձնաւորութեան որոշման խնդրին: Հայ բարբառների պատմական զարգացման ընթացքը պարզելու աշխատանքը տակաւին չի կատարւած, ուստի և դժւար կլինէր ստուգել հին բարբառների հայրենիքը՝ ելակէտ ընդունելով ներկայումս իշխող բարբառների բնագաւառները: Աւելի պիտի դժւարանա այս խնդիրը, եթէ նկատի ունենանք, որ թէ՝ վաւերագրերի և թէ՝ Մինաս վարդապետի թղթերի լեզուն ոչ մի կերպ չի մօտենում ժամանակակից բարբառներից բացառապէս մէկին կամ միւսին: Արևմտեան տարրն անպայման գերակշռողն է թղթերի մէջ, քանի որ պահւած է ամենուրեք նրա հիմնական յատկանիշը ներկայի՝ կը՝ (կու): Սակայն կու քաշեն, կու մնաս-ի կողքին գտնում ենք ասում են ձեզ: Այդ ձեզ, ինչպէս երևում է, հարազատ բնագաւառից կտրւած Մինաս վարդապետը, սկսել էր գործ ածել արևելեան բարբառների ազդեցութեան տակ. 1724

<sup>1</sup> Հր. Աճառեան, Հայ բարբառագիտութիւն, Սոսկւա-Նոր Նախիջևան, 1911, էջ 170:

թւին նրա գրած մի թղթում արևմտեան ձևերի կողքին հանդիպում ենք տալիս են ձևը (№ 239), իսկ 1725 թւին՝ լսում ենք ձևը («Պետ. դի Սարգիս Գիլանենց», Յաւ.): Արևելեան ազգեցութիւնը նկատելի է այնպիսի դէպքերում, ինչպէս՝ օր. քեզանից, քեզանով (№№ 98 և Յաւ. № 2), խանից, օրուրումն, Էսքերումն (№ 98), միջիցն, ամենից (№№ 98 և 100), թագաւորիցն և այլն (№ 207): Պօլսական գացեր'ի (Յաւելած № 3) կողքին հանդիպում է աւստրիահայ՝ «բ սում» (Երկուսում)-ը (անդ<sup>1</sup>), արևմտահայ բալնիք (№№ 98, 240 և «Պետ. դի Սարգիս Գիլանենց», Յաւ.), աղէկ, աղէկութիւն (№ 98 և Յաւ. № 7) բառերի կողքին արևելահայ բանալիք (Յաւ. № 3) և լաւ (№ 6 և Յաւ. № 3) բառերը:

Ոճերի և բարբառային այս խառնուրդը նոր ապացոյց պէտք է նկատել այն վարկածի, որ վաւերագրերի հեղինակը Մինաս վարդապետն է: Մինաս վարդապետը ծագումով տաճկահայ էր<sup>2</sup>, հասկանալի պէտք է լինի ուրեմն, թէ ինչու արևմտեան բարբառների յատկանիշները գերակշռում են նրա թղթերում և մեր վաւերագրերի մէջ: Յայտնի է միւս կողմից, որ Մինաս վարդապետը ճանապարհորդել է Պարսկահայաստանում, եղել է Եւրոպահայ գաղութներում, երկար տարիներ ապրել է Ռուսաստանում՝ շփւելով արևելեան այլ և այլ բարբառներով խօսող հայերի հետ: Այստեղից և հասկանալի է, թէ ինչու նրա լեզուն չէ ներկայանում բացառապէս մի բարբառի յատկանիշներով, այլ միացնում է իր մէջ բարբառային այլատարր յատկանիշներ: Տեղեակ լինելով փոքր ինչ գրոց լեզւին՝ վարդապետը ճոխացնում է իր աղքատ ոճը գրաբարի ձևերով և բառամթերքով. մի հանգամանք, որ զգալի պէտք է դառնար յատկապէս նրա պաշտօնական գրութիւնների մէջ:

Մեր վաւերագրերի հեղինակը ոչ այլ ոք է, քան եթէ դրանց գրիչ՝ Մինաս վարդապետը: Վաւերագրերի գրչի և հեղինակի մասին տարբեր եղանակներով մեր հանած եղբակացութիւնները համապատասխանելով և լրացնելով իրար, փոխադարձաբար ճշտում են միմեանց: Հստ որում, եթէ Մինաս վարդապետը մեր թղթերի հեղինակն է, հնարաւոր և հաւանական է ինքնին, որ նա լինէր

<sup>1</sup> «Երկուսում»-ի մասին հմմտ. Հր. Աճառեան, անդ, էջ 264 և 271:  
<sup>2</sup> Յաւ. № 3, ծանօթ.:

նաև դրանց գրիչը և եթէ յիրաւի նա թղթերի գրիչն է՝ հնարաւոր է և հաւանական, որ նա լինի նաև դրանց հեղինակը:

բ. Մինաս Վարդապետի կեղծիքը

**Այդ դիտողութիւնները հարկադրում են մեզ յանգել ծանրակշիռ եղրակացութեան. եթէ յիրաւի Մինաս վարդապետն է մեր թղթերի թէ՛ հեղինակը և թէ՛ գրիչը, նշանակում է՝ այդ թղթերի խոշոր մասը բացարձակ կեղծիք է:**

Եւ իրօք: Թղթերից մէկը, № 85, ինչպէս տեսանք, պէտք է գրւած լինի Էջմիածնում, մնացածները՝ Աղւանից երկրում: Գիտենք, որ, № 6-ի բացառութեամբ, բոլոր թղթերի գրութեան ժամանակամիջոցում՝ 1702-1703 թւերին, դրանց գրիչն ու հեղինակը գտնուում էր Մոսկվայում: № 85-ը ուղղւած է հենց իրան՝ գրչին ու հեղինակին. Հարեւանցի նկատեցինք նոյնը նաև 1727 թւին գրած թղթի վերաբերութեամբ: Նշանակում է, եթէ չենք կամենում հրաժարւել այն համոզմունքից, որ մեզ զբաղեցնող վաւերագրերի և՛ գրիչը, և՛ հեղինակը հսրայէլ Օրիի գործակից Մինաս վարդապետն է՝ պէտք է մակաբերենք, որ իսկապէս դրանք Հայստանում չեն գրւել, այլ Մոսկվայում: Եւ դեռ աւելին. այս նշանակում է, թէ թղթերը գրւել են այլ շարժառիթներով, այլ պարագաներում և այլ մարդու ձեռքով՝ քան ասւած է դրանց մէջ, կամ պէտք էր ենթադրել բնականօրէն:

Թղթերի կեղծ լինելու մասին կասկածներ յայտնւել են արդէն: Եթէ մի կողմ դնենք պրօֆ. Հայգելի a priori յայտնած տարակուսանքը հայ մելիքների անունով Եւրոպայում պտտած թղթերի մասին<sup>1</sup>, Կ. Եղեանի ժողովածուն լոյս տեսնելուց յետո նոյն իմաստով պնդումներ են արել յատկապէս վրաց գիտնական Ա. Յագարելի և հայ բանասէր Ն. Քարամեան:

Յագարելիի առարկութիւնները վերաբերում են Եղեանի №№ 2, 5 և 6 վաւերագրերին. կարեոր համարելով դրանց վաւերակա-

<sup>1</sup> Հմմտ. Sitzungsberichte der philos – pbilol und der hist Classe der kgl. bayr. Akademie der Wissenschaften zu München. 1893, Bd. II, Heft III, p. 279 ff. «Hat Ory als er in Düsseldorf, Wien und Petersburg mit seinen Bitten und Anerbietungen hervortrat wirklich im Auftrag seiner Landsleute gehandelt oder die Propaganda für die Befreiung Armeniens auf eigene Faust betrieben, um sich selbst einen Namen zu machen und eine Stellung zu erringen? Wir müssen die Frage ungelöst lassen» ... անդ, էջ 296 և հետև.:

նութեան ստուգումը, նա կամենում էր նախ և առաջ իմանալ, թէ ո՞վ է այդ թղթերի գրողը, ստորագրողը և կնքողը: Սակայն չփորձելով անգամ բնագիրների համեմատութեան կամ այլ միջոցով մօտենալ յարուցած խնդրի լուծմանը՝ Ցագարելին հետամտում է չապացուցւած կեղծիքի բացատրութեան և ընկնում այնպիսի ենթադրութիւնների ու եզրակացութիւնների յետևից, որոնց միակ արդարացումը հեղինակի անտեղեակութիւնը պիտի լինէր, եթէ դրանք նոյն չափով բնական հետևանք չկինէին եզեանի հայամումտայնութեանը ներհակող վրացամոլութեան<sup>1</sup>:

Աւելի ուշագրաւ են Քարամեանի դիտողութիւնները: Այս քննադատը տրամադիր է կեղծւած համարել յատկապէս հայ մելիքների անունից ուղղած առաջին գրութիւնը՝ Եզեանի № 6-ը: «Համար 6. վաւերաթուղթը, ~ գրում է նա, ~ մեզ կասկածելի է թւում. հաւանական ենք համարում, որ այդ թուղթը Մոսկովյան գրւած լինի Օրիի ընկեր Մինաս վարդապետի ձեռքով այն հաւատարմաթղթի հիման վրա, որ տւել էին իշխանները Օրիին: Յայտնի է, որ Օրին ոչ մի խօսք չէր ասել Անգեղակոթի ժողովում Պետր Ալեքսէյևի թագաւորի մասին, որին ինքը հազիւ էր ճանաչում, ուրեմն ի՞նչպէս կը գրէին հայ իշխանները նրան: Օրին ստիպւած էր հարցաքննելուց իսկ փոփոխել իր գալստեան նպատակը. այդ պարզ երևում է № 44 վաւերաթղթից, ուր ասուած է, թէ նա ուղղակի ոռւսաց կայսեր մօտ է ուղարկւած, բայց ճանապարհը փոխել է պարսից երկիւղից»<sup>2</sup>:

Կ. Եզեանի № 44-ի այդ, յիրաւի, տարօրինակ յայտարարութիւնը մենք ևս առիթ ենք ունեցել մատնացոյց անելու<sup>3</sup>: Սակայն ենթադրել, թէ № 6-ը գրւել է Մինաս վարդապետի ձեռքով ու կեղծւած պէտք է լինի՝ հետևեցնելով այդ № 44-ի մէջ արտայայտւած մտքերի անհեթեթութիւնից՝ նոյնչափ պարզ անհեթեթութիւն կլինէր: Թեթևամիտ քայլ կլինէր նաև հիմնաւորել կեղծիքն այն դիտողութեամբ, թէ Անգեղակոթի ժողովում խօսք չի եղել ցարի մասին: Մի կողմ թողնենք դեռ այն, թէ բանասիրական

<sup>1</sup> “Грамоты и другие исторические документы XVIII столѣтія относящіеся по Грузіи”, под ред. А. А. Цагарели, СПб., 1902, т. II, вып. II, Предисловіе, £ջ XI և հետ.:

<sup>2</sup> «Լումայ», 1899, Ա, £ջ 253:

<sup>3</sup> «Israel Ory», p. 59 և «Արարատ», 1915, £ջ 775 և հետ.:

տեսակէտից որքան ներելի է առհասարակ այդքան խախուտ հեմունքներով լուրջ հարց բարձրացնել կեղծիքի մասին. յիշենք, որ Անգեղակոթի ժողովի մասին գիտենք միայն Օրիի և համախոհների կողմից Պավլոցի կուրֆիւրստին ներկայացրած տենդենցիոզ զեկուցումից<sup>1</sup>. աւելի էական է սակայն նկատել, որ Պետրոս Մեծին դիմելու ծրագիրն ինքնին գոյութիւն ունէր դեռ 1699 թւին, նախ քան Օրին կը յուսախաբւէր Արևմտեան Եւրոպայում ու իր ուշքն ամբողջովին Ռուսաստան կդարձնէր<sup>2</sup>: Քարամեանին ծանօթ է Ստ. Ռոշքայի այն կարճ յիշատակութիւնը, որից երեսում է, թէ 1699 թ. ապրիլի 29-ին հայ մելիքները թուղթ են գրել ցարին<sup>3</sup>. բայց նա ենթադրում էր թէ Ռոշքայի տեղեկութիւնների աղբիւրն Օրին լինելով՝ առանձին նշանակութիւն չունի<sup>4</sup>: Այստեղ Քարամեանն աչքաթող է անում այդ վկայութեան մի այլ հանգամանքը: Ռոշքան հանդիպել էր Օրիին Հռոմում 1700 թւին. այդ ժամանակամիջոցից էլ ծագում են նրա տողերը: Նշանակում է՝ Պետրոս Մեծին ուղղած թուղթը գոյութիւն ունէր նախ քան հայ պատկրակները Մոսկւա կանցնէին: Այդ թուղթը յամենայն դէպս Մոսկւայում կեղծւած լինել չէր կարող: Յօգուտ այդ թղթի վաւերականութեան և Պարսկաստանում գրւած լինելուն խօսում է առայժմ նաև այն հանգամանքը, որ այդ թղթի մէջ պարսիկների անունը նշանակւած է պայմանական ուն կամ ըստ տառերով, մի փաստ, որ դժւար կլինէր իմաստաւորել, եթէ թուղթը գրւած լինէր Արևմտեան Եւրոպայում կամ Ռուսաստանում, որտեղ վտանգւելու երկիւղ չին կարող ունենալ դրա տակ ստորագրողները<sup>5</sup>:

Թէ՛ այս փաստերը և թէ՛ սկզբնագրի վրա արած դիտողութիւնները ցոյց են տալիս այսպիսով, որ առայժմ դեռ հարկ չկա

<sup>1</sup>Հմն. Γ. ԷՅՈՎԵ, №№ 5 և 9:

<sup>2</sup>Անդ, № 9, § 4, 15, 16. «Israel Ory», Anhang №№ 7 և 11:

<sup>3</sup>Γ. ԷՅՈՎԵ, LXXVI, ծան. 2. հմն. նաև Krusinski, Tragica vertentis belli Persicia historia, p. 254 և հետո.:

<sup>4</sup>«Լումայ», 1899, Ա, էջ 253, ծան.:

<sup>5</sup>Ուշազրաւ է, ի դէպ, նաև Օրիի Հայաստանում 1699 թ. կատարած ճանապարհորդութեան մասին արած գելուցագրի (Γ. ԷՅՈՎԵ, № 11) վերաբերմամբ Քարամեանի մի դիտողութիւնը: Քարամեանը նկատում է, որ այդ գելուցագրի մէջ հանդիպող ամսաթերը ճիշտ լինել չեն կարող («Լումայ», 1899, Ա, էջ 251): Այդ դիտողութիւնը, լինելով միանգանայն իրաւացի, կարող էր թերևս փոքր ինչ ձգել գելուցագրի արժեքը, եթէ անհերթութեան հեղինակը լիներ Օրին և ոչ նրա հրատարակիչը՝ Կ. Եղեանը: № 11-ում (ինչպէս ի դէպ նաև №№ 108 և 120-ում) փակազծի մէջ առած բանականները բնագրից չեն առուծ, այլ՝ իր կարդացածի իմաստը շըմբոնած հրատարակչի յուշատետրից:

№ 6-ը զատել 1699 թւի ապրիլի 29-ին գրած միւս գրութիւններից ու առանց այլեայլութեան կեղծ համարել այն: Գտնւելով 1699 թւի ապրիլին Անգեղակոթում, երբ և որտեղ հայ մելիքները խորհրդակցում էին Օրիի առաջարկած քաղաքական նախագծի շուրջը, Մինաս վարդապետը կարող էր մասնակցել այդ խորհրդակցութիւններին և որպէս ժողովականների մէջ միակ քիչ թէ շատ գիտակ և գրագէտ անձնաւորութիւն գրի առնել և խմբագրել մելիքների գիմումները: Զեռագրական համեմատութիւններից գիտենք արդէն, որ վերջին հանգամանքը ոչ միայն հնարաւոր է, որպէս ենթագրութիւն, այլ և՝ ակներե, որպէս իրողութիւն:

Հնարաւոր և անհրաժեշտ է ենթագրել, որ Մինաս վարդապետն է գրել նաև Եղեանի №№ 2, 3, 5 թղթերը և Լէօպոլդ կայսրին ուղղած այն գրութիւնը, որ չի հասել մեզ: Սրանցից առայժմ միայն պապին ուղղած № 2-ի բնագրի մի քանի դարձւածքներն են մատչելի մեզ. Սան-Մարթէնի թարգմանութեանը կցած մի ծանօթութեան մէջ հանդիպող «Յրանալիթէս լէքտոռ փալաթինոսին և մեծ թագաւորին իփրատուին» բառերը<sup>1</sup> գրեթէ նոյն տառադարձութեամբ, տարբերութիւնները գուցէ և Սան-Մարթէնի սխալ ընթերցւածքին պէտք է վերագրել, գտնում ենք Եղեանի № 6-ում՝ «... և կ պ ըն իս լն եփուատուին յերկրէն ի հետ գրովն իրանալիթէս լէքտոռ փալաթինի»: Ինչ վերաբերում է յատկապէս №№ 2-ի և 5-ի մէջ արտայայտւած կաթոլիկական ուղղութեանը, որ տրամադրել է Եղեանին ենթագրել, թէ այդ թղթերը գրւել են կաթոլիկ միսիոնարների ձեռքով, այդ հանգամանքը, ինչպէս փորձել ենք ցոյց տալ ուրիշ աշխատութեան մէջ, պէտք է նախ և առաջ բացատրել այն ժամանակւ «Հայոց հարցի» ընդհանուր բնոյթով<sup>2</sup> և մասնաւորապէս հսրայէլ Օրիի ազգեցութեամբ<sup>3</sup>:

Օրիի ազգեցութիւնն ինքնին շատ խոշոր է քաղաքական-դիւանագիտական այն գրագրութիւնների մէջ, որ վարւում էին եւրոպական արքունիքների հետ հայերի ազատագրման խնդրի շուրջը: Սակայն ընդունելով անգամ, որ Օրին այդ գրութիւնների հոգեւոր ծնողն էր՝ չպէտք է դեռ կարծել, թէ միաժամանակ նաև նրանց գրիչն էր: Օրիի ստորագրութիւնը կրող թղթերից, ինչպէս

<sup>1</sup> A. Saint-Martin, Mem. hist. et géographiques sur l'Arménie, Paris, 1819, II, p. 487.

<sup>2</sup> «Israel Ory», էջ 24 և հետ.:

<sup>3</sup> Անդ, էջ 79 և հետ.:

և ընդհանրապէս գործերի մէջ պահւած բնագիրներից և պատճէններից և ոչ մէկը իր ձեռքով չի գրւած, այլ գլխաւորապէս իր քարտուղարների՝ Peter Simmonaire-ի, իսկ հետագայում նաև *Avet di Murat*-ի ձեռքով: *Simmonaire-ը Փրանսիական ծագում ունէր, գիտէր գերմաներէն, և, ինչպէս անունն է ցոյց տալիս, գուցէ նոյն իսկ գերմանախօս էր: Avet di Murat-ը, որը նաև թարգմանի պաշտօն ունէր, հայ էր անշուշտ. երկար ժամանակ ապրելով Եւրոպայում՝ սովորել էր իտալերէն և ֆրանսերէն, այդ լեզուներով մնացած թղթերից մի քանիսը հաւանօրէն նրա ձեռքով են գրւել: Դիբախտաբար երկու քարտուղարների գրերն իրար շատ նման են, ուստի և դժւար է ստուգել, թէ ո՞րը նրանցից ո՞ր թուղթն է գրել<sup>1</sup>: Ինքը՝ Օրին Եւրոպական լեզուներով գրել չգիտէր բոլորովին: Կրուզինսկիի վկայութեամբ Օրին տեղեակ էր իտալերէն, ֆրանսերէն, գերմաներէն, մասսամբ նոյնիսկ լատիներէն լեզուներին: Սակայն լաւագոյն դէպքում կարելի է ենթադրել միայն, որ այդ լեզուներին ընտելացել էր միայն գործնական եղանակով, ինչպէս այդ ի դէպ ցոյց է տալիս նաև Կրուզինսկիի արտայայտութիւնը «*Italicam, Gallicam, Germanicam (nec latine omnino expers) probe calluerit*»<sup>2</sup>:*

Որ մասնաւորապէս լատին լեզուով ևս Օրին չէր գրում, այլ գրել էր տալիս, երեսում է նաև Մինաս վարդապետի ստորև հրատարակած մի նամակից<sup>3</sup>. թղթերի մէջ հանդիպող «*Israel Ory*», ստորագրութիւնն անգամ քարտուղարներից մէկի կամ միւսի գրչին է պատկանում, գերմաներէն մի գրութեան տակ ստորագրութեան ներքո ուղղակի մակագրւած է. «по приказу посланника Израиля Ория подпись переводчикъ Афетъ Муратъ и печать его посланнику приложилъ»<sup>4</sup>: *Եղեանի հրատարակած փաստաթղթերից № 155-ի բնագրում հանդիպող Փրանսերէն «*Israel Ory*» ստորագրութիւնը կրող թուղթը մակագրւած է նաև նոյն անւան հայերէն «Իզրել Օրի» տառագարձութեամբ: Այդ ա-*

<sup>1</sup>Հմմտ. Սոսկուայի Դիւան. Դելա արմանսկ. 1711-1714 նոյն, f. 147 և 1713. մայ 2-ի յուլ 21, f. 11. Simmonaire – ի ստորագրութիւնը, այլ նրա գերմաներէն գիրը. Դելա արմանսկ. 1711-1714 նոյն, f. 477. հմմտ. անդ, f. 476 պահւած *Avet di Murat*-ի ստորագրութեան հետ:

<sup>2</sup>Krusinski, անդ, էջ 259:

<sup>3</sup>Յաւելած № 3:

<sup>4</sup>Սոսկուայի Դիւան. Դելա արմանսկ. 1711-1714 նոյն, f. 367.

նունը որպէս մակագրութիւն կրկնում է ինքնին անկարևոր մի գրութեան մէջ մի քանի անգամ<sup>1</sup>: Այդ մակագրութիւնը, որքան յիշում ենք, եղակի մի երկոյթ է Օրիին վերաբերող գործերի մէջ: Սակայն անգամ գերմաներէն առողանութեան ազդեցութիւնը մատնող այդ խեղճ ստորագրութիւնն օտար ձեռքի արդիւնք է: «Իզրէլ Օռի» կրկնող մակագրութիւնների շարքը վերջանում է «Ես զաքարէ որդի Եղիէս ձեռաղբի» ստորագրութեամբ, մի գրչութիւն, որ ըստ ամենայնի մեզ հետաքրքրող մակագրութիւնն է յիշեցնում: Եղրակացնում ենք այսպիսով, որ Օրին ինքը նոյնիսկ հայերէն չէր գրում: 1711 թւին Պարսկաստանից Մոսկա ուղարկւած հայերէն այն թղթերը, որ համապատասխանում են Եղեանի №№ 167-169-ին նրա ձեռքով չեն գրւած, ոչ մի նմանութիւն այդ թղթերի կանոնաւոր նոտրագրերի և «Խորել Օռի» մակագրութեան անփորձ ձեռքի միջև: Հնագրական տեսակէտով այդ մակագրութիւնը թոյլ տա թերևս նոյնացնելու այն քննուող վաւերագրերի տակ հանդիպող շղագիր ստորագրողի անձնաւորութեան հետ. սակայն, ինչ վերաբերում է այդ վաւերագրերի բնագրերին՝ Օրին ոչ դրանց գրիչը կարող է լինել, ոչ հեղինակը: 1711 թւին գրած հայերէն թղթերից ոչ միայն գրիչն է տարբեր քննուող վաւերագրերի գրչից, այլ և լեզուն՝ վերջիններիս լեզւից: Եւ եթէ ենթագրենք, որ այս գրութիւնների մէջ պահւել է մասամբ Օրիի հայերէնը, ապա կարող կլինենք նաև այդ եղանակով հաւանական համարել, թէ Օրին չէ մեր վաւերագրերի խմբագրողն՝ անգամ, եթէ նրանը լինեն այդտեղ յայտնւած մտքերը՝ ամբողջովին, թէ մասամբ, այդ միենոյն է:

Սակայն նոյնիսկ առանձին հարկ չկա փաստաթղթերից մի քանիսի մէջ արտայայտող կաթոլիկ տենդենցը բացատրելու համար Օրիի ազդեցութեան հետքերը որոնել. եկեղեցական հարցերում, ինչպէս նաև դրանց յարակից քաղաքական խնդիրներում, այդ թղթերի գրիչ Մինաս վարդապետը՝ գուցէ շատ էլ հեռու չէր կանգնած իր գործակցից:

1719 թւին Պետրոս Մեծին ուղղած իր մի գեկուցագրի մէջ Մինաս վարդապետը գրում է. «Пропесли мы славу... бутто для любви честнѣйшаго папы къ намъ его величество изволить

<sup>1</sup> Մոսկայի Դիւան. Դела персидские 1710 окт. 24-1712 март 15, 7 և հետ.:

милостиво поступать, и меня надъ народомъ нашимъ по закону и по правилу святаго Григорія въ его державъ пастыремъ быть и имъть церкви не возбраниль, но мы сіе чинимъ подъ прикрытиемъ. Первое, чтобы по сіе услыша, нашъ народъ отвсюду въ страну его державства стекался, второе, чтобы и другіе потентаты не нанесли бъ его пресвѣтому величеству какой противности»<sup>1</sup>:

*Երևում է, որ Մինաս վարդապետը եկեղեցին, միևնոյն է պապական թէ լուսաւորչական, քաղաքական նպատակների միջոց էր ծառայեցնում: Իր քաղաքական գործունէութեան ամբողջ ընթացքում նա հաւասարապէս կապեր էր պահպանում թէ՝ լուսաւորչական եկեղեցականների և թէ՝ կաթոլիկ քարոզիչների հետ<sup>2</sup>: Եւ հենց այդ հանգամանքն է, որ ամբաստանութիւնների առիթ էր տալիս հակառակորդներին և գովասանքի նիւթ մատակարարում բարեկամներին: Եզուխտ Կրուզինսկին, որ Մոսկայից էր ճանաչում Մինաս վարդապետին, համարում էր նրան լաւ կաթոլիկ՝ «apprime Catholicus»<sup>3</sup>: Եւ ընդհակառակը: 1717 թւին Յովակիմ Զուղայեցին սարսափով է զեկուցում ժամանակի Աստւածատուր Համադանցի կաթողիկոսին, թէ «այս խաբեբայ նեստոր Մինասս», պատարագի ժամանակ անտես առնելով էջմիածինը, յիշում է Հոռմի պապի և Գանձասարի կաթողիկոսի անունը<sup>4</sup>: Թոյլտութիւն խնդրելով կառավարութիւնից հայ լուսաւորչական եկեղեցիներ հիմնել Մոսկայում և Աստրախանում՝ 1719 թւին Մինաս վարդապետը և Մոսկայի Յովհաննէս Յակոբեան հայ քահանան ներկայացնում են կառավարութեանը հաւատող մի հանգանակ՝ որ բաւականին առաձգական է դարձնում նրանց լուսաւորչական ուղղափառութիւնը. «Исповѣдуемъ всѣхъ вселенскихъ соборовъ ... исповѣдуемъ исхожденіе духа святого отъ отца яко же свидѣтельствуетъ святої Иоаннъ евангелистъ во*

<sup>1</sup> Г. ԷՅՈՎԵ, № 212, § 8.

<sup>2</sup> Կաթոլիկ քարոզիչների հետ Օրին և Մինաս վարդապետը շփում էին նաև Ռուսաստան զունած ժամանակ: Այդ մասին կան ակնարկներ Գ. ԷՅՈՎԵ, №№ 44 (էջ 95), 54 (էջ 105), 60 (էջ 112), 61 և Յաւելած №№ 2 և 3: Մինաս վարդապետը 1714 թին թոյլտութիւն է խնդրում Հոռմ զնայու, որպէսզի պապի ծեռքը հասցնի պարսից շահի պատափանը: Հմատ. Գ. ԷՅՈՎԵ, № 201.

<sup>3</sup> P. J. Th. Krusinski, էջ 259.

<sup>4</sup> Յաւելած, № 12:

главъ пятой на десять въ стихъ двадесять шестомъ<sup>1</sup> - *ահա այդ հաւատամքի հիմնական մասը*: *Յակոբեան քահանան Մինաս վարդապետի մտերիմն էր և մինն այն սակաւաթիւ մարդկանցից, որ ծանօթ էր նրա քաղաքական առաքելութեանը*<sup>2</sup>: *Վարդապետի գաղտնիքները նա լաւ չպահեց, նրանց յարաբերութիւնները խզւեցին և հին բարեկամների գործը գեսպանական ատեանը հասաւ:* *Մեղաւոր ճանաչւած քահանան, զրկւելով պաշտօնից, 1725 թւին կառավարութեանը մի ընդարձակ ամբաստանագիր ներկայացրեց Մինաս վարդապետի դէմ, որտեղ ի միջի այլոց մեղադրում էր նրան հոռմէադաւանութեան մէջ*<sup>3</sup>: *Հայ լուսաւորչական եկեղեցին, քահանայի ասելով, քաղկեդոնական է և ունի միանգամայն նոյն դաւանանքը, ինչ որ ոռւսականը*<sup>4</sup>. *Եկեղեցու հայրերի «ուղղափառ» վարդապետութեան շուրջը, վկայում է Յակոբեանը, առիթ է ունեցել յաճախ վէճի բռնւել նախկին բարեկամի հետ. վերջինս, նրա կարծիքով, կամենում էր եկեղեցական «ծէսերը կաթոլիկ օրէնքով կատարել»*<sup>5</sup> և ոչ միայն կամենում էր կատարել, այլ և կատարում էր իրօք<sup>6</sup>: *Հայերին պատժում էր կաթոլիկ դարձնելու նպատակով, որ և յաջողւում էլ էր նրան*<sup>7</sup>: *Մեղադրողը Մինաս վարդապետի բերանը նոյնիսկ այս խօսքերն է դնում.* «*Շատ չի անցնի և բոլոր ժողովուրդները, ինչ օրէնքի և հաւատի չպատկանեն նրանք կմտնեն կաթոլիկութեան գիրկը և, ուրիշների օրինակով, կսպասաւորեն հոռմէական եկեղեցուն և պապին:* *Դէտք է ուրեմն թողնել քրիստոնէական իւրաքանչիւր մի օրէնք և եկեղեցի և հնազանդել կաթոլիկ օրէնքին»<sup>8</sup>:*

<sup>1</sup> Սոսկայի դիւան. Дела армянские 1719 мая 30, f. 2 г.

<sup>2</sup> Անդ, f. 6 г. Г. Էզօվъ, № 212. § 7. Յաւելած №№ 7 և 8:

<sup>3</sup> Անդ, Дела армянские 1722 февр. 15, f 28 г. և հետ.: Հմմտ. Յաւելած № 7. ծան.:

<sup>4</sup> Հմմտ. անդ, f. 30 v.

<sup>5</sup> «... Минасъ вартапетъ, которой прежде сего былъ Архимандритомъ во многіе числа со мною въ скоре былъ для католические вѣры и правилу святыхъ отцовъ, что онъ Минасъ не хотълъ такого правила слышать ... хотъль службу отправлять по католическому закону. И въ томъ онъ учился православной христіанской вѣры противень». Անդ, ff. 28 և հետ.:

<sup>6</sup> «А подлинно онъ Минасъ вартапетъ правиль церковные дѣла многое число по католическому закону и крестиль и венчаль». Անդ, f. 29 г.

<sup>7</sup> «А онъ Минасъ и нынешнему армянскому народу наказание чинить что людей превратить къ католицкому закону и превратилъ многое число». Անդ, f. 30 г.

<sup>8</sup> «...Не въ долгое время будетъ всякихъ народъ и вѣры и закона съ католицкой, и надобно всъмъ поклонятися и слушать римской церкви и папы.

Իհարկէ Յակոբեան քահանայի վկայութիւնը ինքնին չապացուցւած մի ամբաստանութիւն է և մի վատ վկայական ոչ միայն մեղադրողի, այլ ամենից առաջ հէնց մեղադրողի համար։ Սակայն, թւում է, թէ այդ ամբաստանութիւնը գուրկ չէ միանգամայն իրական արժէքից։ նրա մէջ ոչ միայն վաւերացրած ենք տեսնում Յակոբեան քահանայի հակառակորդ՝ Յովակիմ եպիսկոպոսի, այլ և Մինաս վարդապետի բարեկամ՝ Եղուիտ Կրուզինսկիի վկայութիւնները։ Ինքնին ի՞նչ նշանակութիւն կարող էր ունենալ Մինաս վարդապետի համար կաթոլիկ եկեղեցին այն օրից, երբ նա երես դարձնելով Արևմուտքից, ոտք դրեց Ռուսաստան։ Հարկ կա՞ր արդեօք տուրք տալ Հռոմին նաև այդ շրջանում, եթէ քաղաքական ակնկալութիւններից զատ, չը լինէր նաև կրօնական-դաւանական կազմ պապական եկեղեցու հետ։ Այն փաստը, որ Մինաս վարդապետը վերջ ի վերջո մեռաւ որպէս պրավուլաւ հոգեբորական<sup>1</sup>, ինքնին արդէն արատ է ձգում նաև նրա լուսաւորչական հաստատամտութեան վրա։ Եւ նոյնիսկ եթէ չկամենանք կասկածի տակ առնել նրա հաւատքն այն ժամանակամիջոցին, երբ գրի առնւեցին մեզ զբաղեցնող վաւերաթղթերը, պէտք է նկատենք, որ գործով հայ վարդապետը միշտ էլ համակերպւելու նոյն ընդունակութիւններն էր ցոյց տալիս, ինչ նրա ընկերը։ Կարիք չկա այսպիսով կաթոլիկ միսիոնարների անմիջական մասնակցութիւնը ենթադրել՝ 1699 թւի ապրիլին Միւնեաց Անկեղակոթ «գիւղաքաղաքում» եւրոպական արքունիքներին դրած թղթերի ծագումը պարզելու համար։ Այդ խնդիրը լիովին կպարզւի, եթէ հաշւի առնենք Մինաս վարդապետի բաւականաչափ առաջական կրօնական-եկեղեցական նկարագիրը։

Բոլոր այս հանգամանքները նոր լոյս ձգելով՝ 29-ն ապրիլի 1699 թւակիր գրութիւնների ծագման պարագաների վրա՝ ինքեան դեռ չեն շօշափում դրանց վաւերականութեան խնդիրը։ Այդ խնդիրը հարկադրւած ենք առ այժմ առկախ թողնել. պատմական փաստերի դասաւորութիւնը դրանց վաւերականութեան օգտին է խօսում, սակայն վերջնական հաւաստիացման համար կարեոր էր

А всяки християнскій законъ и церкви надобно оставить и быть въ католицкомъ законъ. И потому мнъ никакшему приказалъ что мнъ управлять по католицкому закону и народъ нашъ превратить къ католицкой въре». Անդ, f. 29 թ.

<sup>1</sup> Յաւելւած, № 3, ծան.։

ունենալ այլ կարգի տւեալներ։ Թերևս շատ բան պարզէր մեզ համար, եթէ ձեռքի տակ ունենայինք այն կարևոր սկզբնագիրը, որ հիմք է ծառայել Սեն-Մարթենի թարգմանութեանը. յատկապէս այդ թղթի տակ գտնւող կնիքների ուսումնասիրութիւնը, նրանց համեմատութիւնը ծանօթ կնիքների հետ, կարող կլինէր թերևս վերջնականապէս լուսաբանել այն հարցը՝ արդեօք վաւերականութեան տեսակէտից №№ 2, 3 և 5 թղթերը համարժէ՞ք են № 6-ին, թէ ոչ։ Եւ ապա, որ աւելի կարևոր է, ո՞րքան աւելի շատ են բաւարարում այդ թղթերը վաւերականութեան ձևական պահանջները քան №№ 85, 98, 100, 102 և Յանկած № 1 գրութիւնները։

Վերջին գրութիւնների կեղծ լինելու հանգամանքն է, որ գրաղեցնում է այստեղ։

Մենք փորձեցինք հիմնաւորել այդ մասին մեր կազմած կարծիքը ձեւական նկատառումներով։ Սակայն լուսաբանութեան կարում են դեռ փաստական մի շարք հանգամանքներ, որ հարկադրում են ոչ միայն կասկածի տակ առնել թղթերի վաւերականութիւնը, այլ և միանգամայն ապացուցւած համարել կատարւած կեղծիքը։

Անցնելով այդ հանգամանքների քննութեան՝ կարևոր է նախ իմանալ, թէ ինչպէ՞ս և ի՞նչ պարագաներում են հրապարակ եկել այդ թղթերը Մոսկվայում։ Դիւանական գրութիւններից երեսում է, որ Օրիին և Մինաս վարդապետին 1702 թ. մարտին պատւիրւած է եղել, ի պատասխան մելիքների անունից ցարին ուղղած թղթի (№ 6), «յարմար մարդու միջոցով» յուսադրել հայերին։ Օրին և Մինաս վարդապետը պէտք է իրազեկ դարձնէին մելիքներին կառավարութեան բարեհաճ մտադրութեան մասին՝ շվեդական պատերազմի շուտափոյթ աւարտումից յետո ձեռնարկել պարսկահայերի ազատագրման գործին<sup>1</sup>։ Հայ պատւիրակները խոստանում են կատարել այդ պատէրը և առաջարկում են այդ նպատակով իրանց «գլխաւորների» մօտ ուղարկել Միրոն անունով մէկին, որ մինչ այդ թարգմանի պաշտօն ունէր Մոսկվայում։ Միրոնը, որը ծանօթ է նաև Վասիլեկ և Մոսկովաֆին ազգանուններով, ծագումով հայ էր, ունէր Մոսկվայում տուն և ընտանիք,

<sup>1</sup> Դ. Էզօվե, № 59.

ուստի և յանձնարարութմ էր Մինաս վարդապետի և Օրիի կողմից որպէս վստահելի մարդ<sup>1</sup>: Օրիին և Մինաս վարդապետին ուղղած 15-ն ապրիլի 1703թ. թւակիր նամակի թարգմանութեան մէջ՝ նամակի բնագիրը չյաջողւեց գտնել Մոսկուայի դիւանում - մելիքները յայտնում են, որ Միրոնի միջոցով ստացել են նրանց 1702թ. մայիսի 10-ին գրած նամակը, որին և պատասխանում են «մի վանականի և Յովակիմ անունով մարդու միջոցով»<sup>2</sup>: Պէտք էր ենթադրել, որ հենց այս մարդկանց միջոցով է, որ Մոսկուա են ուղարկւել նաև մեր №№ 98, 100, 102 և Յաւելած № 1 գրութիւնները:

Ինչ վերաբերում է Միրոնին՝ նա Մոսկուա էր վերադարձել 1703թի ամառը: Դեսպանական ատեանում նրա տւած բացատրութիւնից երեսում է, որ 1702թի մայիսին իսրայէլ Օրիի նամակներով նա ուղարկւել է Պարսկաստան՝ Էջմիածնի կաթողիկոս Նահապետի և Երից Մանկունքի կաթողիկոս Սիմէօնի մօտ: Աստրախանի և Շամախու վրայով Միրոնը գալիս է Մոսկուայից Գանձակ, այստեղից անցնում Կարգալու (Չարգալախլո<sup>3</sup>) և յանձնում Օրիի նամակներից մինն Աղւանից կաթողիկոսին: Այստեղից նա մեկնում է «Երևան» (իմա՝ Էջմիածին)՝ Նահապետ կաթողիկոսի մօտ և այդտեղ «Ս. Գրիգորի» վանքում յանձնում նրան Օրիի երկրորդ նամակը: Ստանալով կաթողիկոսից (sic!) այդ նամակի 7-ն նոյեմբերի 1702թի թւակիր պատասխանը (Եզեանի № 85 ը): Միրոնը վերադառնում է կրկին «Կարգալու»՝ Սիմէօն կաթողիկոսի մօտ, բայց սրան կենդանի չէ գտնում: Սիմէօնի մահից յետո «նորընտիր» Եսայի կաթողիկոսը մի վանականի միջոցով յանձնում է Միրոնին, Օրիին հասցնելու համար, 7-ն դեկտ. 1702թ. գրած այն օրհնութեան թուղթը, որ արտատպված ենք գտնում Եզեանի № 86-ի ներքո: Եսայի կաթողիկոսի այդ գիրը, ուղղած Մոսկուայի և Աստրախանի հայերին, յայտնելով Սիմէօնի մահւան և իր կաթողիկոսանալու մասին՝ Հնագանդութեան յորդոր է կարդում նրանց: Այստեղ հետաքրքիր են այդ գրութեան հետևեալ տողերը «... թուղթն զոր յղել էիք առ կթղկ սն սիմէօն, որ թղթյբերն եկել տեսել շիջել զգահն եկեղեցոյ և առ ա ծ փոխել, իսկ և իսկ

<sup>1</sup> Գ. ԷՅՈՎՅ, № 60:

<sup>2</sup> «... того ради мы нынъ пишемъ къ вамъ сія письма съ единимъ старцомъ нашимъ да съ другимъ мірскимъ Аввакумомъ, потому что имъ мы повѣрили есмы». Անդ, № 95.

նորայ զայն տեսել զանց արարել գնացել ի սեպաթոռն էջմիածին. ապա յ մեք ոչ իմացաք զէյութին և զպատշ ո թղթոյն, զորյղել էիք»: Միրոնի ասելով՝ կաթողիկոսը յայտնած պիտի լինի, որ նրան տալու ուրիշ թուղթ չունի այլևս, և որ ինչ ինչ պատճառներից դրդւած նրան տեսնել իսկ անկարող է<sup>1</sup>: Միրոնն աւելացնում է, որ Մոսկվայից մեկնելիս հարայէլ Օրիի կողմից հայ կաթողիկոսներին կամ ուրիշ հայ «գլխաւորներին» ուղղած բանաւոր յանձնարարութիւններ ինքը չէ ունեցել. նոյնպէս և ընդհակառակը՝ սրանց կողմից, բացի վերոյիշեալներից (№№ 85 և 86), գիր չէ ստացել Օրիին կամ իր ընկերոջը հասցնելու համար<sup>2</sup>:

Միրոնի այս զեկուցումը տարակուտանքների տեղիք է տալիս: Օրիի մասին, ինչպէս տեսանք, ոչինչ չի ասւած եսայի կաթողիկոսի կոնդակի մէջ: Կարող է նոյնիսկ այն տպաւորութիւնը ստացւել է, թէ Սիմէօն կաթողիկոսին ուղղած թուղթը Օրիի կողմից չէ գրած եղել, այլ ոռւսահայ գաղութների: Միւս կողմից, Միրոնի ցուցմունքով № 85-ի սկզբնագիրը պէտք է որ ստացած լինի նահապետ կաթողիկոսից. մինչդեռ այդ թուղթը գրած է նրա աթոռակալի և երկու հայ մելիքների անունից: Նկատենք նաև, որ այդ գրութեան ծրարի «ի ձեռն տէր Մինասի և կամ հսրայէլին հասցէ Ազ» մակագրութիւնը նամակից տարբերող նոտրագըրերով է գրւած և կնքւած է «Դաւիթ վարդապետ» փորագրութիւնն ունեցող կնքով<sup>3</sup>: Ո՞վ է այս վարդապետը, չգիտենք: Բայց չենք էլ կարող պնդել, որ այս ծրարն իրօք № 85-ի բնագրին է պատկանում: Աւելի քան տարօրինակ է սակայն այդ թղթի մէջ յիշւող էջմիածնի աթոռակալ Մինաս վարդապետի կնիքը: Արդէն առիթ ունեցանք նկատելու, որ այդ կնիքի շրջագրութիւնն Օրիի ընկեր Մինաս վարդապետի ձեռքն է մատնում: Բայց աւելի կարեոր է նկատել, որ էջմիածնի աթոռակալի կնիքը հենց նոյնն է, որով վաւերացնում է իր գրութիւններն Օրիի ընկերը<sup>4</sup>: Աթոռակալի թուղթը վաւերացրած է գրեթէ ամբողջովին ջրախառն թանաքով ծածկւած կնիքով, կարծես դիտմամբ՝ նպատակ ունենալով անը-

<sup>1</sup> Ղ. ԷՅՈՅԵ, № 104:

<sup>2</sup> Անդ:

<sup>3</sup> Սոսկուայի դիւան. Դела аրмянские 1701 июнь-дек. 1703, f. 35.

<sup>4</sup> Հմմտ. Ակադ. II և IV: Կնիքների շրջանակները բնագրում միանգամայն ծածկում են իրար: Նկարների մէջ դրանք տարբեր շառավիղներով են դրւս եկել, շնորհի նրան, որ լուսանկարները միևնույն մեծութեամբ չեն վերցրած:

թեռնելի դարձնել փորագրութիւնը։ Ըստ երկոյթին, այն հանգամանքը որ էջմիածնի աթոռակալն անւանակից էր մեր փաստաթղթերի գրչին ու հեղինակին<sup>1</sup> հնարաւորութիւն է տւել վերջինիս օգտագործել սեփական կնիքը ուրիշի անունից գրած թուղթը վաւերացնելու համար։ Ամիրաբէկի անձնաւորութեան մասին մեր արած համեմատութիւնները թելագրում են առհասարակ կասկածի տակ առնել ոչ միայն վաւերագրերի տակ զետեղւած ստորագրութիւնները, այլև՝ այդ ստորագրութիւնները վաւերացնող կնիքները։ ինչպէս երկում է, հարկ եղած դէպքում՝ Մինաս վարդապետը ոչ միայն ուրիշի անունով պատրաստած կնիքներն էր գործադրում, այլև այն կնիքը, որտեղ իւր իսկ անունն էր փորագրւած։

Թէ յիրաւի Միրոնը եղել է Աղւանից կաթողիկոսի մօտ և նոյնիսկ՝ էջմիածնում, դժւար է կասկածել եսայի կաթողիկոսի գրութիւնից յետո, որի վաւերականութիւնը մերժելու ոչ հիմք կա, ոչ՝ հարկ։ Բայց թէ նա ստացել է իրօք էջմիածնի կաթողիկոսից կամ նրա աթոռակալից № 85 գրութիւնը, այդ է, որ չենք կարող ընդունել։ Ըստ երկոյթին Օրին և Մինաս վարդապետը կարիք են ունեցել շղարշելու էջմիածնի դէպի հայ քաղաքական շարժումները ցոյց տւած անտարբեր կամ թշնամական վերաբերմունքը։ Կարեոր են համարել Նահապետ կաթողիկոսի աթոռակալի բերանում դնել այնպիսի խօսքեր, որ կարող էին մեղմել կառավարութեան կասկածամտութիւնը։ «Զեր ամեն գրին պատասխնին, կարդում ենք աթոռակալի անունից գրած թղթում,» չի կարց ք

<sup>1</sup> Խաչիկ ծ. վ. Դադեանի դիմանում պահած մի ձեռագիր ժամանակագրութեան մեջ գրած ըստ երևոյթին Թաղէնու Առաքեալի վանքում, արձանագրուած է. «Քվին ո ճիսա դ կտմրի ամսոյ մէկին ծ ուկի աթոռակալ մինաս վրդպէն այ չիոխ առա սարգիս վրդպատն յործան ուզէ անսպան տա. գիտու թ. տ թ յաւթին և տ թ յովսէվին»։ Նոյն անունով Էջմիածնի աթոռակալ յիշում է նաև ոճ լ թ թից։ Տես Մ. Մսերեանց, Պատմութիւն կարողիկոսաց Էջմիածնի ի Սիմեօնէ մինչ ցՅովիաննէս Հ, Մոսկա, 1876, էջ 296։ Արդեօք խօսքն ամենուրեք մինոյն անձի մասին է դիար է պնդել։ Նկատենք սակայն, որ Մսերեանցի յիշածի գրութեան պաշտօնական ձևը տարբերում է № 85-ից։ Հանգամանք, որ յամենայն դէպս վերջինիս վաւերականութեան օգտին չի վկայում։ Սի որիշ հանգամանք։ Կա 1722 թից մի բույր, գրուծ «ձեռամբ Սինաս Փէրվագեան վարդապետէ, Առոռակալա ս թ յէջմիածնի, յայժմուս արքեպիսկոպոս և առաջնորդ հաղաքու ս թ նշանին»։ (Ղ. ԷՅՈՎԵ, № 216)։ Եթէ դարձեալ ընդունենք, որ սա մեր բորբում յիշած Էջմիածնի համանուն աթոռակալն է, կը յանգենք նոյն եզրակացութեան Եղեանի հրատարկած №№ 85-ի և 216-ին համապատասխանող ընագիրների ոճի և գրի հիմնական տարբերութիւնները նոր փաստեր են դառնում զբաղեցնող բորբի անվաւերականութեան։

գրել վ ս երկիւղի գաղնց, ո պ առնց ծանուցանելոյ գիտ կ էք, վ ս ահէ ոչ կարեմք զմեր սրտին խորհուրդն այս մարդիս հետ-խօսքը Միրոնի մասին է, գրել, բայց յետոյ մին հաւատարիմ մարդօվ կուղարկեմք»։ Նամակի այս տողերը մատնում են նրա նպատակը՝ միամտցնել ոռւսներին Միրոնի ըստ երևոյթին ապար-դիւն առաքելութեան վերաբերմամբ<sup>1</sup>։ Ինքնին այս գրութիւնը պատմական մի անախրոնիզմ է։ Նրա բովանդակութիւնը չի էլ դաշնակւում ժողովածուի մէջ զետեղած մի շարք ուրիշ թղթերի բովանդակութեանը։ Ժէ դարի վերջերից հայ ազատազրական միտքը շարժւում էր ոչ միայն Էջմիածնից անկախ, այլև նրա դա-սային մտայնութեանը ներհակ. 1699 թւի քաղաքական բանակ-ցութիւնները տարւում էին ոչ միայն Էջմիածնից գաղտնի, այլև՝ Էջմիածնի դէմ<sup>2</sup>։ Ճիշտ է, հայ ազատազրական գաղափարը հետա-գա տարիների ընթացքում կորցրեց հակաեկեղեցական բնոյթը<sup>3</sup>, բայց նա շարունակեց զարգանալ հայոց ընդհանրական կաթողի-կոսի իրաւասութեան և մտահոգութեան սահմաններից հեռու։ «Մենք այժմ ձեզանից աւելի սպասելիք ունենք, և գրում են այդ իսկ ժամանակներում մելիքներն Օրիին և Մինաս վարդապետին, և քան մեր բարձրագոյն հոգեոր պետից՝ առաջնորդից և կաթողի-կոսից. առաջ նրանից դեռ սպասում էինք որևէ բարիք. այժմ ո-չինչ չենք սպասում ... աւելի շուտ վնաս կարող է գալ մեզ նրանից ... դրա համար էլ մենք չենք վստահանա խոստովանել նրան մեր գործի մասին»<sup>4</sup>։ Այս գրութեան վաւերականութիւնը, ինչպէս դեռ կտեսնենք, նոյնպէս կասկածելի է։ Բայց այդ չի խանգա-րում, որ նրա մէջ յայտնած միտքը համապատասխանէր իրերի իսկական վիճակին. այդ գրութիւնը պատրաստւած է եղել այն-պիսի նպատակներով, որոնց հասնելու համար հարկ չկար աւելին ասել Էջմիածնի մասին։ Օրիին ուղղած մի նամակում Մինաս վարդապետն այսպիսի չարախնդաց տողեր ունի նահապետ կա-թողիկոսի մասին. «Մեր կթղկ սն մին ցաւի է հանդիպել որ ի ահէ իւր մտաց բանն մօռացեր է, զի ա ծ ը մեզ է»<sup>5</sup>։

<sup>1</sup> Հմնո. Դ. ԷՅՈՎԵ, № 106.

<sup>2</sup> Հմնո. «Israel Ory», էջ 75 և հետև.:

<sup>3</sup> Անդ, էջ 123 և 151:

<sup>4</sup> Դ. ԷՅՈՎԵ, № 95.

<sup>5</sup> Ցաւելած № 3:

Եւ յանկարծ այսպիսի յարաբերութիւնների շրջանում Օրին և Մինաս վարդապետը դիմում են այդ կաթողիկոսին, ստանում նրա աթոռակալից մի թուղթ, որը վկայում է, թէ Օրին բարեացակամ մելիքներից ոմանք կապեր ունէին Էջմիածնի հետ, և որ այստեղ տեղեակ էին Մոսկւայի հայ դիւանագէտների քաղաքական ծրագրներին<sup>1</sup>: Միայն գրութեան կեղծ լինելու հանգամանքն է, որ բացատրում է այս հակասութիւնը: Դեսպանական ատեանն իսկ, կարծես, կասկած ունէր այդ, ինչպէս նաև № 86-ի ծագման մասին. նա «բոնում է» այդ գրութիւնները<sup>2</sup> և մանրամասն հարցաքննում գրաբեր Միրոնին<sup>3</sup>. վերջինիս այդ առթիւ տւած բացատրութիւնները, ինչպէս տեսանք, գոհացուցիչ չեն. և սակայն, ինչպէս երեսում է, դեսպանական ատեանը, չմտնելով գործի մանրամասնութիւնների մէջ, անհետեանք թողեց այն:

Թէ ե՞րբ և ինչպէս են գործերի մէջ մտել մեզ հետաքրքրող միւս վաւերաթղթերը՝ №№ 98, 100, 102 և Յանձնած № 1 ասել չենք կարող<sup>4</sup>. այդ մասին չկա արձանագրութիւն, չկա նաև այդ հանգամանքը մատնող որևէ մակագրութիւն թղթերի կամ նրանց ծրարների վրա: Բոլոր թղթերի ծրարները պահւած չեն առհասարակ: Դէտք էր կարծել, թէ այդ տեսակէտից բացառութիւն է կազմում № 100 գրութիւնը: Գործի մէջ յիրաւի գտնում ենք այն ծրարը, որ յիշւում է Եզեանի ժողովածւի տպագիր պատճէնի ներքո<sup>5</sup>: Ծրարի վրա կա Եսայի կաթողիկոսի մակագրութիւնը և կնիքը. այդ հանգամանքը կլինէր զօրեղ փաստ յօգուտ այս և բախտակից թղթերի վաւերականութեան, եթէ այդ ծրարը, իրօք, առնչութիւն ունենար № 100-ի սկզբնագրի հետ և նրան թիւրիմացութեամբ չլինէր կցած: Նախ № 100-ը ուղղած է ոռւս կանցլեր Գալավինին. մինչդեռ Եսայի կաթողիկոսը մակագրում է ծրարի վրա՝ «Հասանի Պետրպուրիս ի ձեռն Մեծն ինքնակալ կայսրն»: Միւս

<sup>1</sup> Հմմտ. Գ. ԷՅՈՎՅ, № 85.

<sup>2</sup> Անդ, № 84:

<sup>3</sup> Անդ, № 104:

<sup>4</sup> 1704 թ. նոյեմբերի 15-ին Նիկ. Սպաքարին ուղղում է կանցլեր Գալավինին մի գրութիւն, որտեղ ակնարկ կա այդ թղթերի բարգմանութեանց (Գ. ԷՅՈՎՅ, № 99, 101, 103) մասին նիշայն. «давно уже послалъ я къ вельможности вашей переводы армянские за рукою моего, а по сию пору ... ведомости еще нетъ приняты въ целости, или нетъ, прошу унижение отповедъ», «Русский Архивъ», 1867, № 2, էջ 308.

<sup>5</sup> Մոսկվայի Դիւան. Դела аրմ. 1701 յուն-1703 դեկ., f. 256.

կողմից՝ ծրարն ունի  $13,2 \times 13$  սմ ծաւալ. մինչդեռ ծալքի հետքերով № 100-ի քառորդ ծաւալը տալիս է  $10,5 \times 14$  սմ մի մակարդակ: Կարելի էր կարծել, թէ այդ ծրարը պատկանում է № 98-ի բնագրին. սակայն նոյն եղանակով եթէ չափելու լինենք մեր վաւերագրերը, կատանանք  $14, 5 \times 15,2$  սմ մեծութեամբ մի մակարդակ, որ նոյնպէս հնարաւոր չէ զետեղել մեր փոքրիկ ծրարի մէջ: Հստ երևոյթին, այդ ծրարը պատկանում է եսայի կաթողիկոսի այն բազմաթիւ թղթերից մէկին, որ հետագայում նա ուղղում էր ցարին. այդ ծրարը միայն դիւանական մի թիւրիմացութեամբ կարող էր ընկնել մեզ զբաղեցնող գործի մէջ:

Այս հանգամանքը նոր հիմք է տալիս պնդելու, թէ վաւերագրերը ոչ այլ ինչ են, քան եթէ Միրոնի ձեռնունայն Ռուսաստան վերադառնալուց յետո կազմած կեղծ գրութիւններ, և ո՛չ եսայի կաթողիկոսը և ո՛չ էլ Աղւանից երկրում հաւաքւած մելիքները չէին կարող առնչութիւն ունենալ այդ թղթերի հետ: Աղւանից կաթողիկոսութիւնը և Ղարաբաղի հայ մելիքները շատ հեռու էին կանգնած Օրիի քաղաքական ձեռնարկություններից, որ գլխաւորապէս յենւում էին Սիսեանի և Ղափանի հայ մելիքների աջակցութեան վրա: Այս պարագաներում, եթէ հեռու կանգնենք թղթերի վաւերականութիւնը միտելու մտքից, նոյնիսկ դժւար պիտի լինէր հասկանալ, թէ ինչպէս է, որ 1703 թւին Օրիի բարեկամներն Աղւանից են գրում №№ 95, 98, 100, 102 և մեր Յանեած № 1 գրութիւնները: Անգամ, եթէ ընդունելու լինենք, թէ 1699 թւի օրինակով, այդ ժամանակ ևս մելիքները փորձել էին իրանց կողմը գրաւել Գանձասարի կաթողիկոսին ու այդ նպատակով էլ ժողովւել նորից Աղւանից երկրում՝ տարօրինակ պիտի լինէր, որ այդ կարեւոր դէպքի մասին ոչ մի ակնարկ չարւէր մեր աղբիւրների և յատկապէս մելիքների անունից Օրիին և Մինաս վարդապետին նոյն թւին գրած № 95 ընդարձակ նամակի մէջ:

Թէ Օրին և Մինաս վարդապետը Միրոնի միջոցով մելիքներից որո՞նց էին թուղթ ուղարկել՝ պարզ չէ: № 85-ի ներքո գտնում ենք երեք անուն. սակայն № 95-ի բնագրում եղած պէտք է լինի վեց մելիքների ստորագրութիւն, որոնց և, կարելի է ենթադրել, թուղթ պէտք է ուղարկւած լինի Միրոնի միջոցով: Թէ ի՞նչ բովանդակութիւն ունէր այդ թուղթը՝ յայտնի չէ իսկապէս: Յայտնի է սակայն, որ Միրոնի միջոցով դրա պատասխանը կամ

չէ ուղարկւել Մոսկվա, կամ, որ աւելի հաւանական է, պատասխանը ստացւել է Մոսկվայում, բայց ինչ ինչ պատճառներով չէր կարող կառավարութեանը յայտնւել ու պաշտօնական ընթացք ստանալ: Միրոնի առաքելութեան այդ հետևանքները չէին կարող գոհացնել ոչ կառավարութեանը, ոչ էլ նրա շրջաններում գործող հայ գիււնագէտներին: Այսպիսի պարագաներում է, որ ըստ երկոյթին Մինաս վարդապետը, անշուշտ, Օրիի գիտութեամբ և խորհրդով, ձեռնարկել է իր կեղծիքը: № 98-ը, գրած մելիքների անունից, ցարին է վերապահում Հայոց հարցի լուծումը: № 100-ը, ուղղած Գալավինին, նրա աջակցութիւնն է խնդրում հայերի ազատագրման գործին: № 102 և մեր Յաւելած № 1 նոյն նպատակով կաշառք են խոստանում ոռւս կանցլերին և նրա թարգման նիկ. Սպաթարիին: Վերջապէս № 95-ի հայ սկզբնագիրը, ուղղած Օրիին և Մինաս վարդապետին, նպատակ ունի հանգստացնել նրանց պարտատէրերին<sup>1</sup>:

Վերջին տեսակի նպատակ հետապնդող մի գրութիւն է նաև ստորև հրատարակած № 3 փաստաթուղթը՝ Մինաս վարդապետի նամակն Օրիին և սրա պարտատէր Թարդուլի անունով հայ վաճառականին: Մեր Յաւելած № 2 և մանաւանդ № 5 գրութիւններից երկում է, որ ազարակցի այդ առևտրականն և իւր երեք եղբայրները մուրհակով փող էին տւել Օրիին, որով և վերջինս, ըստ երկոյթին, հնարաւորութիւն էր ստացել տարիներ շարունակ ապրել եւրոպայում և առաջ վարել Հայոց հարցի շուրջը տարւող բանակցութիւնները: Սկզբում Օրին «ազնիւ» և «գործին նւիրւած» մարդ էր համարում, Թարդուլիին և իրան շատ պարտաւորւած զգում նրան<sup>2</sup>: Սակայն, ինչպէս երկում է, գողթանեցի հայը «գործով» այնքան էր միայն հետաքրքրում, որքան դրա յաջող ելքը պարտահատոյց լինելու հնարաւորութիւն կտար հայ քաղա-

<sup>1</sup> Պէտք է ենթադրել, որ միաժամանակ, Մինաս վարդապետը թղթեր էր պատրաստել նաև Լէօպոլդ կայսեր ու Պֆալցի կուրֆիւրստի համար, կամնենալով դրանով դիւրացնել 1704-1705 թիւրին Գերմանիայում գտնուղ Օրիի գործերը: Այդ թղթերը մեզ չեն հասել, բայց դրանց մասին կան ակնարկներ մեր աղբյուրների մէջ. 1704 թիւ նոյեմբերին Մինաս վարդապետը գրում է Օրիին. «...այդ կողմին եղել մեծամեծ ց թղթերն չեմ ուղարկեր» (Յաւելած, № 3): Նոյն ամսում Սպաթարին ուղղում է Գալավինին մի նամակ, որտեղ ասած է. «Вартапеть грамоты, что къ цесарю и курфирсту, хотѣль послать къ Орию, а я не велъль ему до вашего указу, и о томъ какъ государь изволитъ, и прикажи», см. «Русскій Архивъ», 1867, № 2, стр. 308.

<sup>2</sup> Գ. ԷԶՈՎԵ, №№ 78, 87.

**Քաղէտներին:** Ազնիւ Թարդուլին սկսեց անհանգստանալ, տեսնելով, որ Օրիի քաղաքական գործերը ձգձգելով ոչինչ երաշխիք չեն ցոյց տալիս բարեյաջող ապագայի նկատմամբ: 1703 և 1704 թւերին, ինչպէս երեսում է, Օրին և Մինաս վարդապետն աշխատում էին յուսադրել պարտատիրոջը, յետաձգել այլեայլ խոստումներով նրա պահանջի հատուցման ժամանակը: Հենց այդ նպատակով էլ Մինաս վարդապետը հնարել էր 1703 թւին № 95 գրութիւնը, այդտեղ ակնարկւած «բարեգործն», անշուշտ Թարդուլին է, իսկ փոքր ինչ յետո՝ 1704 թւին գրել էր մեր Յաւելած № 3 նամակը, որտեղ, ի հարկէ, դերի մէջ էր մտել ոչ թէ կեղծիքը, այլ լոկ ստախօսութիւնը: Եւ չնայած բոլոր այս հնարներին՝ 1705 թւականին Օրիի և Թարդուլու յարաբերութիւններն այնքան լարւեցին, որ վերջինս այլևս ոչ մի միջոց չէր խնայում վարկաբեկելու նրան Պֆալցի հովանաւորների մօտ<sup>1</sup>. Երեսում է նոյնիսկ, որ նա այդ միջոցներով կարողացաւ մասամբ հասնել իր նպատակին. «մեր եղեայր թող լին իւր տղայ անդրիասին հետ, գրում է Թարդուլու եղբայրներից մէկը, դիս[լ]դօրֆ յի[սրայ]էլի ձեռնէն արդ էին տվել յի[սրայ]էլին բռնել տվել. դաւի ընկել փարայի կէս յիք-մին պարտկիցն յինք են առել<sup>2</sup>»:

Հստ երեսոյթին աւելի յաջողութիւն գտան Մինաս վարդապետի գրած թղթերը Մոսկւայում: Օրիին ուղղած նամակում վարդապետը պատմում է գոնէ այն նպաստաւոր տպաւորութեան մասին, որ թողեցին այդ թղթերը Գալավինի և Սպաթարիի վրա. «Սպաթար Նիկոլաին ասի առանձին եկ և գիրն տեսաւ խիստ ուրախացաւ ասաց թէ առանց այս գիրն ձեր բանն ոչինչ էր ահա այսուհետև խիստ բարի եղե ձեզ»: «Մեծ արծիւն, խօսքը վերաբերում է Գալավինին, ինչ որ կու հա[յ]ցէր այ աւելօք էառ»: «Այս վաղթն, խօսքն ուղղւած է Օրիին, քո անունն ոչինչ կու համարէին ամ ինչ մեզ պիտան տեղիք, այսուհետև ողորմութը այ քո ծածկեալ բարութի հոչակեցաւ առ ի մեզ պիտանի բարեկամացն»<sup>3</sup>: Այս բոլորի հանդէպ Մինաս վարդապետը, թւում է, թէ դժգուհ էր Օրիից, որը, ըստ արժանոյն չգնահատելով իր ընկերոջ մատուցած ծառայութիւնները՝ իրազեկ չէր պահում նրան

<sup>1</sup> «Israel Ory», Anhang, № 14.

<sup>2</sup> Յաւելած, № 6:

<sup>3</sup> Անդ, № 3:

գործերի մասին: Բայց և այնպէս՝ գիտակցելով գործի յաջողութեան համար իր կատարած «յանցանքը», Մինաս վարդապետը կամենում է հաշտւել այն երկրորդական դերի հետ, որ յատկացնում է նրան իր ընկերը. «Այդ քո թէպիէթին դէմ անչափ մեղօք լցնալ են, առ ի բանին խաթրին, կու համբերեմք խոնարհաբար», գրում է Մինաս վարդապետը Օրիին<sup>1</sup>, ակնարկելով ըստ երևոյթին «առ ի բանին խաթրին» իր գրչի գործած կեղծիքները:

Մինաս վարդապետին վիճակւած չէր տեսնել «բանին» փրկարար վախճանը: Տոկալ և սպասել - ահա նրա ճակատագիրը: Իրերի թարս բերումով ամեն տեսակի անձնական զրկանքներ կրելով՝ հետագայում իսկ երեխն լցւում էր «մեղօք» նրա հոգին, երբ, ճնշւած կրած յուսախաբութիւնների դառնութիւնից, անհրաժեշտ էր լինում խոնարհ աղերսագրեր ուղարկել ցարի կառավարութեանը: Թւում է, թէ հէնց այդպիսի մեղսալիր մի գրութիւն է 1727 թւի այն թուղթը, որի վրա կանգ առանք նախորդ գլխում: Գործից երեսում է, որ այդ թւին Մոսկւայում մի քանի հայեր էին երեացել՝ որոնք նպատակ ունէին թոյլտութիւն խնդրել Լեհաստանում և Հունգարիայում թափառող համերկրացիներին Ռուսաստանի վրայով Պարսկաստան վերադառնալով<sup>2</sup>: Միջնորդելով սրանց օգտին կառավարութեան առաջ՝ Մինաս վարդապետը ներկայացնում է և այն նամակը, որն իբր ստացել էր ինքը մեզ ծանօթ Ամիրպէկից և սրա երկու ընկերներից: Պէտք է ենթադրել, թէ այս նամակի իսկական հեղինակն ու գրիչը անհրաժեշտ գտաւ դիմել այդ միջոցին թէ իր միջնորդութիւնը յարգել տալու և թէ մի աւելորդ անգամ հայերի յանուն Ռուսաստանի 1720-ական թւերին կրած ապարդիւն զրկանքները երեան հանելու դիտաւորութեամբ: Նամակը վաւերացրած է Ամիրպէկի կնքով: Հայ մելիքների անուններով փորագրած այն կնիքներից մէկն էր այդ, որոնցից վարպետօրէն օգտւում էին Օրին ու Մինաս վարդապետը իրանց դիմումներին ոյժ տալու նպատակով:

գ. Կեղծիքի նշանակութիւնը

Ի՞նչ է այդ կեղծիքը: Պատմական արժէքից զուրկ արկա-

<sup>1</sup> «Israel Ory», յաւելած, № 3:

<sup>2</sup> Մոսկվայի Դիւտան. Դելա արմ. 1727 օկտ. 28 — օկտ. 1728, թ. ֆ. և հետ.:

ծախնդիր մտայդացումների արգասի՞ք, թէ պատմականօրէն իւմաստալից երևոյթ։ Պատասխանել այդ հարցին՝ կնշանակէր ոչ միայն որոնել կեղծիքի հոգեբանական հիմքը, այլ և վերաքննել մեզ զբաղեցնող գրութիւնների հիման վրա մինչ այժմ արւած պատմական եղբակացութիւնները։

Վրաց գիտնական Ա. Ցագարելիի ենթադրութեամբ հսրայէլ Օրիի 1700 թւականի շուրջը Պարսկահայաստանի ազատագրման պատրւակով ծրագրած խաչակիր արշաւանքն ինքնին մի ֆանտաստիկ ձեռնարկ էր, որ ծրագրւել էր Կարլոս ԺԲ-ի գիտութեամբ նրա եւրոպական բարեկամների և համախոհների շրջանում՝ Հիւսիսային պատերազմի սկզբում՝ Պետրոս Մեծին խանգարելու և նրա ուշադրութիւնը Բալտիկ ծովի եզերքից Կասպից ծովի ափերը դարձնելու դիտաւորութեամբ։ Ցագարելիին թւում է նոյնիսկ, որ Պետրոս Մեծը հասկացաւ այդ ծրագրի յետին միտքը, ուստի և իր կամքը՝ զբաղւել հայերի յարուցած խնդրով միայն շվեդական պատերազմից յետո՝ բացայայտեց նրանց միայն բերանացի, իսկ հսրայէլ Օրիի ցանկութեանը՝ մասնակցելու այդ պատերազմին պատասխանեց մերժումով<sup>1</sup>։ Ցարել այս ենթադրութեանը հնարաւոր չէ։ Ցայտնի է, որ 1700 թւին տեղի ունենալիք արշաւանքում Պետրոս Մեծն Օրիի ծրագրով չպետք է ունենար և ոչ մի մասնակցութիւն, ուստի որևէ շահ այդ արշաւանքից Կարլոս ԺԲ կամ նրա բարեկամներն սպասել չէին կարող։ Արշաւանքի ղեկավարները՝ Պֆալցի կուրֆիւրստը և գերմանական կայսրը՝ շվեդական թագաւորի հետ անմիջական աղերս չունէին. քաղաքականօրէն բարեկամ ըլինելով նրան՝ չէին կարող թակարդներ լարել նրա թշնամիների համար։ 1700 թւի արշաւանքի ծրագիրն իսկ պէտք է որ նախամտածւած լինի Հիւսիսային պատերազմի սկզբնաւորութիւնից առաջ՝ ամենաուշը 1697-1698 թւերին՝ երբ եւրոպայի քաղաքական հորիզոնի վրա ո՛չ Կարլոս ԺԲ անուն կար և ո՛չ էլ ուսական վերահաս պատերազմի վտանգ։ Ինչ վերաբերում է պարսկական արշաւանքին, որ պիտի ձեռնարկւէր ցարի ղեկավարութեամբ, նրա իսկական հեղինակը ոչ Կարլոս ԺԲ-ն էր և ոչ էլ նրա եւրոպական մերձաւորները, այլ, ինչպէս իրերի ընթացքն է ցոյց տալիս, հսրայէլ Օրին, մի մարդ, որ ոչինչ առնչութիւն չունէր

<sup>1</sup> А. Цагарели, е. с. II, вып. II, т. XII, дата.:

շվեդական քաղաքականութեան հետ: Օրին գործում էր մասամբ Վիեննայի արքունիքում ազգեցութիւն վայելող իր բարեկամների ցուցմունքներով. սակայն Վիեննայի արքունիքն այդ շրջանում բարեացակամ էր հենց Պետրոս Մեծին և անտրամադիր դէպի նրա հակառակորդը: Պետրոս Մեծի «Քերանացի» պատասխանն Օրիի առաջարկին շատ բնական է քաղաքական նմանօրինակ բանակցութիւնների ժամանակ: Միւս կողմից՝ մերժելով Օրիի զինուրական ծառայութիւնները՝ ոռւսները չհրաժարւեցին նրան պարսից արշաւանքի համար օգտագործելու մտքից: Եթէ յիրաւի որևէ կասկած ունենար ցարն Օրիի քաղաքական բարեմտութեան վերաբերութեամբ, նա աւելի կտրուկ միջոցների կողմէր. մերժելով կասկածների տեղիք տւող մի մարդու առաջարկները՝ հոգ կտարւէր նրա չէզոքացման կամ երկրի սահմաններից հեռացնելու մասին: Անպատող փորձ կլինէր առհասարակ հայկական ծրագրի շվեդական ծագումը մատնող պարագաները փնտոել մեզ ծանօթ պատմական տւեալների մէջ: Ցագարելիի ենթադրութիւնը ոչ միայն չէ նպաստում մեզ զբաղեցնող խնդրի լուսաբանութեանը, այլև, ընդհակառակը, աւելի է խճողում ու մթագնում այն: Եւ քանի գեռ ապացուցւած չէ Օրիի և Մինաս վարդապետի միջոցով եւրոպայում ընթացք ստացած միւս վաւերաթղթերի կեղծ լինելը՝ ինքնին հիմք էլ չկա քաղաքական դաւադրութեան հետքերը որոնել դրանց մէջ: Թւում է նոյնիսկ, որ բացայայտելով կեղծիքի ուրոյն պատմական հիմքերը, կարող կլինենք միաժամանակ կարեոր տւեալներ շահել յօդուտ այն մելիքական թղթերի վաւերականութեան, որ ընթացք ստացան Արևմտեան եւրոպայում Օրիի և Մինաս վարդապետի ձեռքով 1699-1700 թւերին:

Համեմատելով վերջին տեղը յիշատակած թղթերը այն գրութիւնների հետ, որոնց վաւերականութիւնը մենք մերժեցինք, գտնում ենք մի հիմնական հակասութիւն: 1699-1700 թւականներին, երբ Օրին բանակցութիւն էր վարում Արևմտեան եւրոպայում, նա իր գլխաւոր յոյսը բեկոել էր Պֆալցի կուրֆիւրստի և Լէոպոլդ կայսեր վրա. ոռւս ցարը պէտք է միայն դիւրութիւն տար նրանց իրագործելու Պարսկահայաստանի ազատագրումը: Գործոն միջամտութիւն հայերը նրանից ո՞չ սպասում էին և ո՞չ իսկ ցանկալի համարում<sup>1</sup>:

<sup>1</sup> Դ. ԷՅՈՎԵ, №№ 5, 2.

Բայց ահա անցնում է մի-երկու տարի, և 1701 թվին, գալով Ռուսաստան, Օրին այլ ծրագիրներ է մտորում: Հայաստանի գրաւողն ու տիրապետողը ոչ թէ Պֆալցի կուրֆիւրստը պիտի լինի, այլ՝ ոռւս ցարը: Այդ նպատակով ձեռնարկած պատերազմի առաջին տարին ցարը կարիք չպէտք է ունենա հայերի եւրոպական բարեկամների աջակցութեանը: Կուրֆիւրստին և իր զինակիցներին, հաւատացնում է Օրին, հայերը միայն պատւար էին նկատել Տաճկաստանի յոխորտանքների դէմ և ոչ՝ Հայաստանի ազատարաններ. այդ իմաստով էլ Հենց օգնութեան գալու խոստումներ էր արել հայերին Պֆալցի կուրֆիւրստը<sup>1</sup>: Մոսկայում մելիքների անունից սրան համապատասխանող բացատրութիւններ է տալիս № 98-ի գրիչ ու հեղինակ Մինաս վարդապետը. «Մեք գրել էաք եփրատօրին և լէքտօր փալաթինին, որ աղաչեն առ քո թ գրութե դ, նոքա ևս մեր աղ չնցն լսած է և քո թ գրութե դ գրած է, եթէ նոցա և մեր ա ղ չնցն լսեր ես և առեր ես յանձդ որ ազատես զմեզ որ լինիք մեծ ուխտիւք հաւ տրիմ ծառյք քո բարի հ ըմնին նիրքե և բարուդ բարի և հակոկ իդ հակո կ»: Հայաստանի ներկայացուցիչներն, ինչպէս տեսնում ենք, այստեղ տրամագծօրէն հակառակ նախադրեալներից են ելնում: Եւ հին ու նոր ծրագիրների այս հակասութիւնն է, որ կարօտ է առանձին բացատրութեան:

Մինչև Ժէ դարի վերջերը հայ քաղաքական մտայնութիւնը յածում էր «Փրանկ» խաչակիրների կազմակերպելիք արշաւանքների հետ շաղկապւող բաղձանքների շուրջը: Օրիի և Մինաս վարդապետի քաղաքական-դիւլանագիտական բանակցութիւններն ընթացան նախ և առաջ հայ քաղաքական ակնկալութիւնների բանուկ ճանապարհով: Փրկութեան այն ուղին, որ բռնեցին նրանք, առաջնորդեց նրանց Հռոմից կաթոլիկ եւրոպայի արքունիքները: Այստեղ կրած ծանր յուսախարութիւնից յետո հայ դիւնագէտները բարեացակամ եւրոպացիների խորհրդով հարկադրւած եղան վերջ ի վերջո ցարի կառավարութիւնից աղերսել պարսկահայերի ազատագրումը<sup>2</sup>: Սակայն հայերի բախտը Ռուսաստանի ձեռքը տալու համար՝ հայ դիւանագէտները յանձնարարական չունէին: Ռուսաստանի գործոն միջամտութեան հե-

<sup>1</sup> Դ. ԷՅՈՒԹ, № 40:

<sup>2</sup> «Israel Ory», էջ 162 և հետ.:

ռանկարը, որպէս քաղաքական բանակցութիւնների նպատակ, բացակայում էր հայ մելիքների անունով վաւերականութեան տեսակէտից դեռ ևս չմերժւած գրութիւնների մէջ: 1699 թւին, երբ Օրին Պֆալցի կուրֆիւրստի միջոցով պարսկահայերի ազատագրման ծրագիրն էր մշակում, պէտք է գիտակցէր, որ այդ ծրագիրն առանց Ռուսաստանի աջակցութեան անիրազործելի մի բան էր: Եւրոպական զօրքերը կարող էին անցնել Պարսկաստան միայն Ռուսաստանի վրայով: Եւ հենց այս աջակցութիւնն ստանալու համար է, որ հայ մելիքները կարող էին դիմել Պետրոս Մեծին յատուկ գրութեամբ<sup>1</sup>: Սակայն այդօրինակ դիմումից մինչև հայերի բախտը ցարի ձեռքը տալը դեռ շատ հեռու էր: Եւ սա հասկանալի է: Հայերի այսպէս կոչւած «ռուսական օրիենտացիան» շօշափելի երևոյթ չէր հայ կեանքում: Ճիշտ է՝ կա յիշատակութիւն, որ դեռ ևս Յակոբ Զուղայեցի կաթողիկոսի ժամանակ էջմիածնի մի գաղտնի ժողովում եկեղեցական և աշխարհիկ ներկայացուցիչները որոշած են եղել ցարի աջակցութիւնը հայցել հայերի ազատագրման գործին<sup>2</sup>. սակայն մատնանշելով մի այլ տեղ այդ վկայութեան յետին ժամանակներում խմբագրւած լինելու փաստը՝ արժանահաւատ չէինք համարել այն: 1670-ական թւականներին Յակոբ Զուղայեցու մի դիմումից ոռւս արքունիքին կարող ենք միայն եզրակացնել, որ այդ ժամանակներում էջմիածնը թերևս յոյս էր դնում ոռւս դիւանագէտների հայանպաստ միջնորդութիւնների վրա, սակայն դրանով ոռւսներից դեռ զինւորական օգնութիւն չէր ակնկալւում<sup>3</sup>: Ոչ միայն բացակայում էր այդ ակնկալութիւնն, այլ և կար ըստ երևոյթին ընդդիմագիր տրամադրութիւն՝ ուղղած հայերի քաղաքական բախտը Ռուսաստանի հետ կապելու մտքին: Մի տեղ Օրին պատմում է, որ ոռւսներն առիթ են ունեցել հասկացնելու հայերին Հայաստանը գրաւելու նկատմամբ իրանց ունեցած դիտաւորութիւնը, և սակայն հայ մելիքները այդ լսել անգամ չեն կամեցել՝ երկիւղ կրելով, թէ այդ նւաճումի հետևանքով հարկագրւած կարող են լինել փոխել իրանց դաւանանքը, ընդունել «յունական հերծւա-

<sup>1</sup> Գ. ԷՅՈՎԵ, № 6. Հմմտ. «Israel Ory», էջ 83 և հետ.:

<sup>2</sup> Գ. ԷՅՈՎԵ, № 59 և հետ.:

<sup>3</sup> Տես մեր յօդածը՝ «Յակոբ Զուղայեցու մի գրութիւնը ոռւս արքունիքին» («Արարատ», 1915, էջ 775 և հետ.):

**ծը»:** Հայերը, - վկայում էր Օրին, - կգերադասէին լինել անհաւատ-ների ստրուկները, քան ապրել յունաղաւանների տիրապետութեան ներքո<sup>1</sup>:

Հասկանալի է, թէ ինչու, գալով Ուռասստան՝ Օրին իր սկզբնական յայտարարութիւնների մէջ խօսք չէ բանում ուռասներին ապագա Հայաստանին տէր դարձնելու մասին: Այդ ուղղութեամբ կառավարութեան արած ակնարկներին նա խուսափող պատապիաններ է տալիս: Երևում է, որ նա դժւարանում էր աւելին ասել, քան լիազօրւած էր: Միայն Կանցլեր Գալավինի բացորոշ ձեւակերպած հարցաթուղթն ստանալուց յետո և նրա անմիջական թելադրանքի հետեւողութեամբ է, կարծես որ Օրին ստիպւած եղաւ դուրս գալ իր լիազօրութեան սահմաններից և Պետրոս Մեծին յատկացնել այն դերը, որ Պֆալցի կուրֆիւրստին էր վերապահւած<sup>2</sup>: Բնորոշ է յամենայն դէպս Օրիի քաղաքական այդ նոր ընթացքը մի տեսակէտից. Օրին տրամադրում է հայերի ուժերը ցարի կառավարութեանը՝ պահանջելով նրանից փոխադարձ խոստումներ և հաւաստիացումներ, մի բան, որ տեղի չունեցաւ Պֆալցում վարած բանակցութիւնների ժամանակ: Առնելով հայ մելիքներին իր հպատակութեան ներքո՝ ցարը պէտք է տար նրանց զանազան արտօնութիւններ և մանաւանդ խոստանար հաւատքի ազատութիւն, - ահա Օրիի հիմնական պահանջը: Նա նկատում է, թէ այդ հանգամանքն այնպիսի վստահութիւն կներշնչէր հայ մելիքներին, որ կշտապեցնէր նրանց ներկայացուցիչ ուղարկել Մոսկւա և իրանց տրամադրելի անել ցարի կառավարութեանը<sup>3</sup>:

Ուռս շահերին ծառայելու համար այդպիսի խոստումների և հաւաստիացումների կարիք ունէր նոյնիսկ Մինաս վարդապետը:

<sup>1</sup> Դ. ԷՅՈՒԹ, № 9, § 15: Նման մի վկայութիւն տաճկահայերի և հարևան յոյների վերաբերութեամբ զոնում ենք թէ դարի կարևոր աղբիրներից մէկի մէջ ևս. «La haine qu'ils-, խօսքը հայերի մասին է, - leur portent est si grand qu'ils aimeroient mieux, disent-ils, rester toute leur vie sous la tyrannie des Turcs, que de tomber encore sous la domination des Grecs, qui leur estoit autrefois et leur seroit encore plus insupportable que celle des ottomans». **Michel Feuvre Theatre de la**, Turquie, Paris, 1682, էջ 408.

<sup>2</sup> «Israel Ory», էջ 111 և հետև.:

<sup>3</sup> Դ. ԷՅՈՒԹ, № 45, § 4. Ուշադրութեան արժանի հանգամանք է, որ հայ մելիքների անունից ներկայացրած գրութիւնների մէջ ևս արտայայտում էր այն «ումուտը», թէ ուսների միջոցով պէտք է լինի «ամենազն քրիստոնէից հաւատոցն արձակութիւն» (Դ. ԷՅՈՒԹ, № 6) կամ «ամենալն քրիստոնէից» արձակումն (անդ, № 98): Խօսքը վերաբերում է թերևս դաւանանքի ազատութեան:

Օրիի մի նամակից տեղեկանում ենք, որ Եւրոպայում յուսախար եղած վարդապետը թղթեր էր գրում Ունգարիա, հայ պատւիրակների առաքելութեան ելքով շահագրգուած բարեկամներին և յայտնում, որ հայ մելիքների մօտ Օրիի պատմածները չեն ճշտւել՝ ո՞չ Դիւսելդորֆում, ո՞չ այլուր: Պֆալցի կուրֆիւրստն ամենից քիչ հայերի մասին է մտածում: Հայերը չպէտք է տարւեն Եւրոպայից օգնութիւն ստանալու յուսով և պէտք է իրանք տեսնեն իրանց գլխի ճարը<sup>1</sup>: Բնական է, որ Մինաս վարդապետն այսքան խոր հասմանավոր յետո սկզբում վստահութիւն չունենար դէպի այն վճռական քայլերը, որ անում էր ոռւսների օգտին իր ընկերը: Ուստի և հասկանալի է ցարին ուղղած Օրիի դիմումը՝ յուսադրել վարդապետին, որպէսզի սա իր թղթերով կարողանացարի անունից խոստումներ անել հայերին ի նպաստ նոր օրիենտացիայի<sup>2</sup>:

Սակայն, եթէ դեռ Օրիի անմիջական ազգեցութիւնն ու ոռւսների ցոյց տւած հովանաւորութիւնը կարող էին այնքան խորը շրջել Մինաս վարդապետի քաղաքական տրամադրութիւնները, որ մի երկու տարւա ընթացքում ստիպեցին նրան յանուն նոր հովերի բոնել նոյնիսկ կեղծիքների զարտուղի ճանապարհը՝ դժւար էր դեռ թեքել այն հայերի մտքերը, որոնք մատչելի չէին նմանօրինակ ներշնչումներին: Եւ իրօք, վաւերական ճանաչւած աղբիւրներից և ոչ մէկը ԺՈ դարի սկզբներում չի վկայում ոռւսական օրիենտացիայի ժողովրդականութեան մասին: Ուուսասիրական հակումներ արտայայտողներից հայերի մէջ այդ շրջանում աչքի էր ընկնում մի մարդ միայն՝ Գանձասարի կաթողիկոս Եսային: Եւ չի կարելի ասել այնուամենայնիւ, թէ այդ մարդու վերաբերմունքը դէպի Օրիի ընտրած նոր քաղաքական գիծն անվերապահ էր սկզբից ևեթ: Տեսանք արդէն, որ Եսայի կաթողիկոսի անունը միայն թիւրիմացութեամբ է մտել 1702 թւին հայ մելիքների անունով գրած թղթերի մէջ: Նկատեցինք նաև, որ այդ թւականին Եսայի կաթողիկոսը ոչնչով չարտահայտեց իր համակրութիւնը ոռւսների շրջանում գործող դիւանագէտների ձեռնարկին: Եսայի կաթողիկոսին նոր քաղաքական հովերը դիպան մի քանի տարի յետո միայն: Նոր օրիենտացիային նրան ուխտագրեց դար-

<sup>1</sup> Դ. ԷՅՈՎԵ, № 78.

<sup>2</sup> Անդ, № 54, § 4:

ձեալ *Oրին՝ իր պարսկական դեսպանութեան շրջանում:* 1709 թւին *Oրիի հետ կաթողիկոսը դիմում է դէպի Ռուսաստան «առ ի տեսութիւն և երկրպագութիւն» ցարին<sup>1</sup>:* Բնորոշ է, որ այդ ճանապարհորդութեան միջոցին կաթողիկոսի ներկայութեամբ *Oրին դեռ «մեծ ամօթանք» էր զգում ուսւ պաշտօնեաների գործած կամայականութիւնների համար<sup>2</sup>, ճգնելով բարձրացնել Հայոց երկրում ուսւների վարկը՝ *Oրին վշտանում էր ամեն անգամ, երբ ուսւ պաշտօնէութեան արարքը ցրում էր այն յուսառատ պատրանքը,* առանց որի չէր կարող ապրել հայ ազատագրական գաղափարը:*

Առանձին ազգեցութիւն ունեցաւ Եսայի կաթողիկոսի վրա Մինաս վարդապետի 1715 թւի առաքելութիւնները դէպի Պարսկահայաստան: Մինաս վարդապետը յայտնում է նրան ցարի «բարի և ածահաճոյ կամք և խորհուրդը» «... և մեր լսելով, գրում է այդ առթիւ կաթողիկոսը 1716 թ. օգոստոսի 10-ին, գւարճացաք և ցնծացաք ի հոգի և ի մարմին և յօժար սրտիւ կամիմք ընդ հովանեաւ թեսոց քոց լինիլ, եթէ հաճեսցի տէրութիւն քո ի մեզ, և գթասցես ի վը թշւառութեան մերում մեք պատրաստ եմք ընդ առաջ քո ըստ իմում կարողութեանս, և մեր նահանգիս մէլիքովք մեծամեծովք և փոքրումբք և ցործամ կամեսցի հզօր և մեծ թագաւորութիւնդ յաջապարել այսր կամօքն այս յայնժամ զնշան գործոցն խնդրեմք ցուցանել մեզ, զի առաւել հաստատ լիցուք ի վերայ խորհրդեանս, և ապա զամենայն հանգամանք երկրիս ծանուսցուք առաջի քոյ»<sup>3</sup>: Եսայի կաթողիկոսին հարկաւոր էին յամենայն դէպս «առաւել հաստատ» գրաւականներ Մինաս վարդապետի միջոցով ուսւների արած խոստումների արժէքը որոշելու համար, ուստի և ցաւ էր յայտնում վարդապետին, որ վերջինս կառավարութեան կողմից յայտարարութիւններ է անում «բերանացի և ոչ գրաւոր». Նա նոյնիսկ մարդ է ուղարկում Շամախի՝ հաւաստիանալու ուսւ դեսպան Վոլընսկիից Մինաս վարդապետի լիազօրութեան մասին<sup>4</sup>:

Աւելի որոշ կերպարանք ստացաւ կաթողիկոսի վերաբերմունքը քաղաքական այն խոշոր տագնապի շրջանում, որ վերապրե-

<sup>1</sup> Գ. ԷՅՈՎՅ, № 205, հմմտ. № 167:

<sup>2</sup> Անդ, № 167:

<sup>3</sup> Անդ, № 205:

<sup>4</sup> Անդ:

ցին Անդրկովկասի հայերը Սեփիդների դէմ նիւթւած քրդական և լեզգիական ապստամբութեան հետևանքով։ Երկրում սկսւած ընդհանուր ցնցումների այս շրջանում Եսային ուղղում է իր հայեցքը դէպի հիւսիս և այստեղից սպասում հայերի ազատութիւնը։ Եւ սակայն նա չի մոռանում յորդորել Մինաս վարդապետին՝ չմատնել ոչ ոքի իր այս գրաւոր գիմումները, որովհետեւ այդպիսի մի անզգուշութիւն կարող էր իսպառ կորստեան մատնել Գանձասարի աթոռը։ Կարելի էր կարծել, թէ այդ ակնարկը մի նախազգուշացում էր մուսուլմաններից։ Բայց այդ այդպէս չէ։ Վարդապետին նա յիշեցնում է, որ հայերն իրանք են բանսարկում միմեանց, և հենց Գանձասարն էլ ազատ չէ ներքին թշնամիներից։ «Գիտէք, որ ջուղայեցիների մէջ կան չար մարդիկ։ Այլև էջմիածնեցիներից կան հետախոյզ մատնիչներ Շամախում»<sup>1</sup>։ Բացորոշ արտայայտութիւն է գտել այս երկիւղը Եսայի կաթողիկոսի 1721 թւին նոյն անձնաւորութեանն ուղղած մի նամակում։ «մեք ի մէջ օձից բնակիմք չեմք կարող զամ խորհուրդ և սրտի իղձ մեր կատարելապէս գրել ամենուրեք զի քեզ յայտնի է հայոց ազգի չարութիւնը որ մատնութիւնէ ի զատ բան չը գիտեն. մանաւանդ մեր թշնամիք և հակառակք անչափք կան և ու պու իսկ գրեալ ես թէ ջուղայեցիք, թէ էջմիածնեցիք և թէ շամախեցիք. ած մի արասցէ թէ որ այս թղթոց մէկն նոցա ձեռն անկանի. այլ հոգով մարմնով զերծանելոյ հնար չկավ որոյ համառօտ բանիւ գրեցի թուղթն արքունի. բայց հաւատարիմ մարդով երկար բանիւ տուր թարգմանել որպէս պատշաճն է։ Բայց զայս պնդագոյն պատուեր սիրելոյդ որ յետ և յառաջ իմ ամենայն թուղթք որ յայսմ խորհրդոյ առ քեզ և այդը գրեալ եմ պիտի որ թէ ի կենդանութեան քում, կամ թէ զկնի մահուան, ի մերազնեաց ոչ ոքաց ձեռն չանկանի որ մեծ վնաս կու հասանի ու քայլութիւն»<sup>2</sup>։ Ոչ միայն կղերի ու վաճառականութեան շրջանից էր երկիւղ կրում Գանձասարի կաթողիկոսը, այլև՝ հայ մելիքներից ու գիւղապետներից. «գրեալ ես թէ քանի մելիք և քէդիսուղէք ձեռագրով մշրեն թուղթն. ապա ու պ վերևն գրեցաք սոցա մէջն մարդ կարօղ չէ խորհուրդ յայտնել. քանի մի մեր համախոհ սիրելիք կային որ՝ ոմանք մեռան և ոմանք հեռու գոլով ձեռնհաս չեղաք առ ժամս,

<sup>1</sup> Դ. ԷՅՈՎԵ, № 210:<sup>2</sup> Ցաւելած № 15:

միայն թէ բ՝, գ՝. եալ սկզ սք մօտ մեզ եկին մհրեցին. այլ այլոց չկարեցաք խորհուրդ յայտնել: իսկ թէ պն շահինն գանջայ կարասցէ քանի մարդկանց մհրել տալ զայն չգիտեմ»<sup>1</sup>: Այսպիսի պայմաններում հասկանալի է, թէ ինչու Մինաս վարդապետը 1719 թւին ցարին ուղղած մի թղթում գրում է. «այս գաղտնի գործին հոգատարներ շատ կան, բայց շատ կողմերից երկիւղ ունեն, այնպէս որ ուրիշների ներկայութեամբ մտածել իսկ չեն յանդգնում»<sup>2</sup>:

Նկատի առնելով իրերի այս վիճակը՝ չենք կարող սխալ չհամարել, երբ նոյն կաթողիկոսը 1721 թւին իր ակնարկած թղթում գրում է ցարին. «Աչա այս ի բ ամ աւել է որ նահապետ մեծ պատրիարքն և ազատ որդովք և ես նուաստու իմ եպիսկոպոսօք և մելիքովք այսմ խնդրանաց և խորհրդեան կամք»<sup>3</sup>: Քսան և երկու տարի այդ գրութիւնից առաջ՝ 1699 թւին՝ Եսային առհասարակ գեռ նստած չէր կաթողիկոսական գահի վրա. իսկ նրա նախորդի մասին յայտնի է, որ համակիր չէր Օրիի ծրագիրներին. այդպէս է վկայում գոնէ ինքը՝ ծրագիրների հեղինակը<sup>4</sup>: Բայց և թւում է, որ եթէ հարկ լինէր անգամ ընտրութիւն կայացնել ազատագրական շարժման հին և նոր ուղիների միջև այս շրջանի հայ կաթողիկոսները նախապատռութիւն կտային հնին: Եթէ հաւատ ընծայենք մի քանի վկայութիւնների, մինչ այդ նոյնիսկ կաթողիկ քարոզիչների անմիջական ազդեցութեան շրջաններից կտրւած Գանձասարի կաթողիկոսներն են առիթներ ունեցել դաւանական-քաղաքական բովանդակութեամբ թղթեր փոխանակել Հռոմի հետ: Այսպէս յիշւում են Աղլանից Ազարիա կաթողիկոսի ինոկենտիոս ԺԱ. պապին ուղղած գրութիւնը 1688 թւից<sup>5</sup> և Երիցմանկանց Սիմէօն կաթողիկոսի դիմումը Ինոկենտիոս ԺԲ-ին 1695 թւից, որով նա վերջինիս միջնորդութիւնն է խնդրում շահի առաջ՝ պաշտպանելու իրան հակաթոռ կաթողիկոսի դէմ<sup>6</sup>: «Սիմէօն կաթողիկոսը և Եսայի արքեպիսկոպոսը, - գրում է 1702 թւի մա-

<sup>1</sup> Յաւելած № 15:

<sup>2</sup> Ղ. Էզօբե, № 205, § 11.

<sup>3</sup> Յաւելած № 14:

<sup>4</sup> Ղ. Էզօբե, № 11 և «Israel Ory», էջ 79 և հետ.:

<sup>5</sup> Ղ. Ալիշան, Կամենից, էջ 127. թերևս այստեղ խօսքը Սսի Ազարիա կաթողիկոսին է վերաբերում: Հմմտ. Մ. Օռմանեան, Ազգապատում, հ. 1, Կ. Պոլիս, 1912, § 1816:

<sup>6</sup> Ղ. Ալիշան, անդ, էջ 146:

յիսի 18-ին Շամախում ապրող մի եզրուիտ, - մեզ շատ են սիրում և արգահատանքով չեն նայում կաթոլիկ կրօնի վրա. նրանցից մէկը նոյնիսկ անձամբ կաթոլիկ է, սակայն, ծածկում է այդ՝ հրեաների ու փարիսեցիների ահցից»<sup>1</sup>: Կրուզինսկիի վկայութեամբ Եսայի կաթողիկոսը ևս պէտք է որ հպատակութեան թուղթ ուղարկած լինի Կղեմենս ԺԱ պապին. ինչպէս նաև պէտք է որ օգնութիւն խնդրած լինի Լեհաստանի Օգոստոս Բ թագաւորից՝ հակաթոռ (Ներսէս) կաթողիկոսին տապալելու համար<sup>2</sup>:

Նոյն վերաբերմունքն էր ցոյց տալիս նոր քաղաքական օրիենտացիային նաև Էջմիածնի կաթողիկոսութիւնը: Նկատեցինք, որ 1699 թւականին ծրագրած հայ մելիքների քաղաքական բանակցութիւնները ոչ միայն գաղտնի էին Նահապետ կաթողիկոսից, այլև՝ ուղղած մասամբ հենց նրա եկեղեցական-վարչական ընթացքի դէմ<sup>3</sup>: Պարսկական առաքելութեան միջոցին Օրին տեսակցութիւն ունեցաւ «պատրիարքի» հետ, որին նա, ինչպէս Մինաս վարդապետն է վկայում պէտք է տրամադրէր ազդեցութիւն գործ դնել մերձկասպեան երկրների ու Շամախու շրջանի ազգաբնակութեան վրա ճանաչելու ցարի «իշխանութիւնը»<sup>4</sup>: Մինաս վարդապետը ենթադրում էր, որ Օրին կատարեց այդ յանձնարարութիւնը, սակայն նրա առաքելութիւնն ապարդիւն անցաւ՝ «պատրիարքի» վերահաս մահւան շնորհիւ: Օրին յաջողացրեց միայն «նորընտիր պատրիարքի» երթը Մոսկւա. այստեղ էր, որ Օրին մտադիր էր յայտնագործել նրան իր քաղաքական ծրագիրը: Փաստերի շփոթում և աղաւաղում կա իրադարձից երկար ժամանակ անցած տրւած այս վկայութեան մէջ: Օրիի դեսպանութեան ժամանակամիջոցում (1707-1711) կաթողիկոս կամ պատրիարք չէ մեռել կամ ընտրւել՝ ո՛չ Էջմիածնում և ո՛չ էլ Աղւանից երկրում. ակնարկը վերաբերում է անշուշտ Միրոնի առաքելութեանը ու դրա հետ կապւած մեզ ծանօթ դէպքերին ու անձնաւորութիւններին՝ Սիմէօն և Եսայի կաթողիկոսներին, թէև գիտենք, միւս կողմից, որ «նորընտիր» Եսայի կաթողիկոսի վրա ազդողն

<sup>1</sup> «Письма и донесения іезуитовъ о Россіи конца XVII и начала XVIII века», СПб., 1904, № 104, հմմտ. № 294:

<sup>2</sup> Jud. Th. Krusinski, Prodromus ad Tragicam vertentes bell Persici historiam, Leopoli, 1740, № 174:

<sup>3</sup> «Israel Ory», № 75 և հետ.:

<sup>4</sup> Г. Эзовъ, № 202, § 1.

իսկապէս Միրոնը չեղաւ, այլ՝ Օրին: Միւս կողմից՝ մերձկասպեան երկրները և Շամախին կապւած էին Աղւանից կաթողիկոսութեան հետ և այդ կողմերում անմիջական ազդեցութիւնն էջմիածնին չէր պատկանում: Յամենայն դէպս, ինչ յանձնարութիւն էլ ունեցած չլինի Օրին էջմիածնում, պէտք է ենթադրել, որ նա չօշափելի արդիւնքներ չստացաւ: Գոնչ այդպէս է տրամադրում կարծել այն կոնդակը, որ, ի պատասխան Օրիի առաքելութեան, 1709 թւին Աղէքսանդր [Ա] Զուղայեցին [1706-1714] ուղղեց Պետրոս Մեծին: Այդ գրութեան բնագիրը յաջողւեց մեզ գտնել Մոսկովյայի դիւանում: Պատռելով ընդհանուր դարձւածքների քօղն, այդտեղ դժւար կլինէր փնտոել որևէ կոնկրետ քաղաքական միտք. Ոչինչ չի պարտաւորեցնում այդ կոնդակը, որն ըստ երկոյթին գրւել է Օրիի խնդրանօք այն դիտաւորութեամբ, որ իմաց տրւէր ցարի կառավարութեանը, թէ դեսպանն իր դերը կատարել է յամենայն դէպս ինչպէս հարկն է<sup>1</sup>: Օրիի մահից յետո նրա թղթերի մէջ գտնւել է նաև Աղէքսանդր կաթողիկոսի մի գրութիւնը՝ ուղղւած Հռոմի պապին<sup>2</sup>: Պէտք է ենթադրել, ուրեմն, որ էջմիածնում միայն ցարի անունից չէր խօսում Օրին, այլև՝ պապի: Աւելի քան այդ. մեր աղբիւրներն այդ խնդրում այնքան սուղ են և անրովանդակ, որ նրանց հիման վրա առհասարակ հիմք չկա պնդել, թէ Օրին Ռուսաստանի կողմից անպատճառ որևէ քաղաքական բանակցութիւն է վարել էջմիածնում:

Նկատելի հետքեր չթողեց նաև Մինաս վարդապետի տեսակցութիւնն Աստւածատուր [Ա] Համադանցի կաթողիկոսի հետ: Վարդապետի զեկուցումից երկում է, որ իբր վերջինս շատ ուրախացաւ, երբ լսեց հայերի նկատմամբ ուուսների ունեցած դիտաւորութիւնների մասին, և պատրաստակամութիւն յայտնեց առաջիկա արշաւանքի ժամանակ օգնել ցարին: Սակայն երբ Մինաս վարդապետի կողմից առաջարկ եղաւ գրաւոր տալ այդ խոստումը, կաթողիկոսը մերժեց, առարկելով, թէ այդ գործը պէտք է գաղտնի մնա, քանի որ դրանով մեծ պատուհաս կարող է գալ. այստեղ էլ երկիւղ է յայտնում պարսիկներից զատ նաև «Հայերից ոմանցից»<sup>3</sup>: Աստւածատուր կաթողիկոսը կոնդակ է տալիս

<sup>1</sup> Յաւելած № 5:

<sup>2</sup> Մոսկովյան պապան. Ճեղա արմ. 1711 յնվ. 28 — օկտ. 1714 նոյն., f. 205:

<sup>3</sup> Դ. Էզօբե, № 209.

Մինաս վարդապետին, բայց այդ գրութիւնը նոյնպէս զուրկ էր քաղաքական արժէքից. «ընկալաք բազում սիրով և մխիթարեալ ուրախացաք ի միմեանց»՝ ահա այն ամենը, ինչ կարողացել էր գրել կաթողիկոսը Մինաս վարդապետի հետ ունեցած ունկնդրութեան մասին<sup>1</sup>: Ինքը, Մինաս վարդապետն, իսկապէս, «մխիթարւելու» քիչ բան էր գտել Հայոց կաթողիկոսարանում: Կառավարութեանը ներկայացրած զեկուցագրում վարդապետը յայտնում է, որ թէև Հայոց կաթողիկոսը խօսքով համակիր է գործին, փաստորէն այնքան վստահելի չէ, որքան եսայի կաթողիկոսը, քանի որ պարսից շահից աւելի մեծ երկիւղ է կրում, քան վերջինս<sup>2</sup>: Թէ յիրաւի սա այսպէս է՝ երևաց հետագայում՝ պարսկական արշաւանքների շրջանում: «Տեղոյս մեծամեծ աղայնոց խորհուրդն հարցանէք միտքն ու խորհուրդն և դիտաւորութիւն առ հիւսիսայինքն են. միշտ կո սպասեն դոցա գալըստեանն», – գրում է Էջմիածնից 1724 թւի մարտի 13-ին եսայի կաթողիկոսին ուղղած մի թղթում աթոռակալ Յովասափ վարդապետը<sup>3</sup>: Ինքը, Աստւածատուր կաթողիկոսը նոյնպէս հիւսիս էր ուղղել իր հայեացքը և գաղտնի հաղորդակցութիւն էր պահպանում հայոց շարժման ղեկավարների հետ<sup>4</sup>: Եւ սակայն, ըստ ամենայնի խուսափելով վճռական քայլերից՝ նա դեռ երկիւղ ունէր թիւրքերից, որոնց և ենթարկում էր փաստորէն՝ սփոփելով այն գիտակցութեամբ, թէ խոհեմ հպատակների համար օսմանցիներն էլ վատ չեն<sup>5</sup>:

Աչքի առաջ ունենալով բոլոր այս փաստերը, որ միակ վաւերական տւեալներն են ժամանակի հայ-ռուսական քաղաքական յարաբերութիւնների մասին, պէտք է գանք այն եզրակացութեան, թէ յիրաւի ռուսական տրամադրութիւնները հայերի ղեկավար շրջաններում սկզբից և եթ չէին վայելում այն համակրանքը, որպիսին ենթադրել մեր անդամական առաջնորդութեան մասին: Ուստանան օրիենտացիան խմորւեց 1720-ական թւականների շուրջը, երբ նեղւած պարսից դէմ ապստամբած ցե-

<sup>1</sup> Յաւելած № 9:

<sup>2</sup> Գ. ԷՅՈՎԵ, № 209.

<sup>3</sup> Սոսկայի դիւան. Դելա արմ. 1724. № 4, f. 8.

<sup>4</sup> «Կոռոնկ», 1863, էջ 193 և հետ.:

<sup>5</sup> Գ. ԷՅՈՎԵ, № 244. 1723 թ. Ա՝ ծատուր կաք. և Երևանի նախքը հաւատարիմ հպատակութեան բուղը գրեցին տաճիկներին: Հնմտ. Սոսկայի դիւան. Դելա տուրեցկու 1723 յնվ. — Ճ. Ք. № 5, fol. 47-48.

ղերից, հայ կղերի և մելիքութեան մի խոշոր հատւած հարկադրւած եղաւ փարել ոռուսների օգնութեանը և նրանցից վրկութիւն յուսալ: Մինչ այդ՝ հսրայէլ Օրիի և Մինաս վարդապետի ջանքերը՝ այդ յուսացումը ներկայացնել ոռուսներին որպէս ժողովրդականութիւն վայելող քաղաքական երևոյթ՝ դիւանագիտական մի խաղ էր, որ ոչալ յենակէտ չունէր ընթացիկ հայ գիտակցութեան մէջ: Օրին և Մինաս վարդապետը խորապէս գիտակցում էին հայրենակիցների մասին իրանց արած պնդումների իրական արժէքը: Այս էր պատճառը, որ Հայաստանի ազատագրման ծրագրի մէջ նրանք շատ համեստ տեղ էին յատկացնում հայերի գործոն մասնակցութեան հեռանկարին<sup>1</sup>: Եւ ուշագրաւ է, որքան աւելի էին մօտենում նրանք խօսքից գործին, նոյնքան աւելի էին հարկադրւում հեռանալ հայերի քաղաքական ինքնագործութեան մտքից և հաշտւել ոռուսների նւաճողական քաղաքականութեան հեռանկարի հետ: Յատկապէս նկատելի է այս Ռուսաստան ուղարկած այն թղթերի մէջ, որ հայ դիւանագէտները գրել են տարիներ յետո Պարսկաստանից: Հայաստանի նւաճումը Հայոց հարցի լուծման միակ միջոցն էր նկատում այն պահուն, երբ մեր դիւանագէտները հնարաւորութիւն էին ստանում աւելի մօտիկից չօշափել հայ իրականութիւնը, քան իրանց քաղաքական գործունէութեան ընթացքում դրանից երբեմիցէ առաջ կամ յետո:

Հասկանալի է դառնում այսպիսով, թէ ինչու մեր դիւանագէտներն այնքան ջանք էին գործադրում, մթութեան քողով ծածկել իրանց բանակցութիւնները հայրենակիցների մօտ: Միւս կողմից նրանք աշխատանք էին թափում յուսախարութիւն չառաջացնել ոռուսների մէջ իրական վերաբերմունքի դրսեորումից: Օրին և Մինաս վարդապետը պէտք է թագցնէին իրերի իսկական վիճակը և նոր հովանաւորներից, այսինքն՝ ոռուս դիւանագէտներից, և հին համախոհներից, այսինքն՝ հայ մելիքներից: Եւ Օրին, և Մինաս վարդապետը, սպառեցին իրանց կեանքի կարեոր շրջանը քաղաքական գաղտնի բանակցութիւնների մէջ: Նրանք հարկադրւած էին շարունակ դիմել խուսափող բացատրութիւնների, քողարկւած առաջարկների, ի վերջո նաև կեղծ թղթերի օգնութեան: Ծայրայեղ ծածկամտութիւնն ու զգուշաւորութիւնը, Օրիի

<sup>1</sup> «Israel Ory», էջ 114 և հետ.:

և Մինաս վարդապետի գործունէութեան յատկանշական կողմը, ոչ միայն թշնամիների դէմ ձեռնարկած ինքնապաշտպանութեան բնական միջոց էր, այլև բարեկամների կասկածը փարատող իւմաստուն եղանակ<sup>1</sup>:

Կան մի շարք փաստեր, որ կարող են ըմբռնելի դառնալ հենց այս ընդհանուր դիտողութիւնից յետո: Այսպէս, երբ 1701 թ. նոյեմբերին Պետրոս Մեծը յայտնում է մեր դիւանագէտներին, որ Պարսկաստանի մասին նրանց բացատրութիւնները մի քանի կտերում չեն համապատասխանում այն տւեալներին, որ ստացւել են Պարսկաստանից վերադարձած ռեզիդենտ Կուչիւկովից, ուստի և հարկ է տեսնում ստուգումն կատարելու համար յատուկ մարդ ուղարկել այդ երկիրը, Օրին շտապում է առարկել այդ մտքի դէմ: Նրա կարծիքով առանց իր աջակցութեան ոչ մի ռուս չի կարող պարզել Պարսկաստանի իսկական վիճակը: Այդ պատճառով էլ առաջարկում է Պարսկաստան ուղարկել մի փոքրիկ դեսպանութիւն, որի շքախմբի մէջ նաև իրան՝ որպէսզի ծպտեալ կերպով՝ «Alcides Franciscus» անւան տակ՝ հնարաւորութիւն տա ռուսներին ծանօթանալ պարսկական և հայկական գործերին: Առանց դրան, պնդում է Օրին, ո՛չ հայերը և ո՛չ էլ վրացիք չեն կարող յայտնագործել ռուսներին իրանց գաղտնիքները<sup>2</sup>: Օրիի այս պատրաստակամութիւնը չօգտագործւեց կառավարութեան կողմից, բայց գլուխ չեկաւ նաև նոր առաքելութիւնը: Յայտնի է սակայն, որ 1707-1708 թւերին՝ գալով Պարսկաստան՝ Օրին, ստացած յանձնարարականների համաձայն, իրագործեց մասսամբ նաև իր հին առաջարկը: Զի երեսում այնուամենայնիւ, որ նա իր դեսպանութեան միջոցին հնարաւորութիւն տւած լինի ռուսներին անմիջապէս ծանօթանալ պարսկահայերի կեանքին, նրանց քաղաքական կացութեանն ու տրամադրութեանը: Պարսկական դեսպանութեան նպատակներից մէկն էր բարձրացնել հայերի աչքում ռուսների հմայքը, տրամադրութիւններ առաջացնել հայաստանի

<sup>1</sup> Թագցնելով հայերից ռուսների մտադրութիւնը, Մինաս վարդապետը մի քանի գործ սկսեց Պարսկաստանում ապրող զանազան անձերի դէմ: Շարժադիրը կողմնակի իրազեկներին հայոց ազատագրական ձեռնարկին անվտանգ դարձնելու հոգսն էր: Մեղադրութերից ոմանք վարդապետի ջանքերով դատապարտւեցին բանտի և արսորի: Հմնտ. Սոսկուայի դիւան. Ճելա արք., 1707 փեբր.-1711, f. 47 և հետ.: 1718 յուլ. – սեպտ. Հմնտ. Յանելա Նո. 7 ծանօր. և 13 ծանօր.:

<sup>2</sup> Գ. ԷՅՈՎԵ, № 54, § 4.

ներսում յօդուտ նոր քաղաքական օրիենտացիայի: Զնայած սրան, չի երևում, որ Օրին վստահութիւն ունեցած լինի բացայայտելու հայերին ապագայի հեռանկարը, չի երևում, որ անմիջական շփման մէջ մտնելով իրայինների հետ՝ յայտնագործած լինի սրանց իր նոր քաղաքական ծրագիրը կամ ոռւսների համապատասխան տրամադրութիւններն ու դիտաւորութիւնները: Պարսկական դեսպանութեան ժամանակ Օրիին յաջողւեց գրաւել յօդուտ իր առաքելութեան եսայի կաթողիկոսին: Եւ սակայն նոյնիսկ այս մարդը չկարողացաւ լաւ ծանօթանալ Օրիի գործերին ու ծրագիրներին: Հետագայում հենց կաթողիկոսն ինքն է խոստովանում, թէ «ես ողորմած հոգի էլչի հսրայէլ Օռին գործառնութեան և խորհրդոցն և արարմանցն չեմ տեղեակ»<sup>1</sup>: Մինաս վարդապետի վկայութեամբ՝ Օրին դրդել էր կաթողիկոսին գնալ Մոսկւա, չբացայայտելով նրան իր նպատակները<sup>2</sup>. նշանակալից է, որ իր թողած պատմական յիշատակարանում<sup>3</sup> եսայի կաթողիկոսը լուսում է Օրիի մասին: Աւելի ուշագրաւ է այն, որ Պետրոս Մեծի պարսկական արշաւանքից յետո Ռուսաստանում ստացւած բազմաթիւ հայ գրութիւնների մէջ իսկ յիշատակութիւն չենք գտնում այն մարդու մասին, որ առաջինն էր հայերի քաղաքական ճակատագիրը Ռուսաստանի միջոցով տնօրինել կամեցողներից: Իրերի բերմամբ հայերը գնացին հսրայէլ Օրիի նշմարած քաղաքական հունով՝ անծանօթ պատմական այն խոշոր դէմքին, որի գործունէութիւնը վճռական շրջակէտ պիտի դառնար Հայոց հարցի հին պատմութեան:

<sup>1</sup> Ա. ԷՅՈՎՅ, № 15. § 4.

<sup>2</sup> Անդ, № 202, § 1.

<sup>3</sup> «Պատմութիւն համառօտ Աղուանից Երկրի», Շուշի, 1839 և Երուսաղէմ, 1868:

## ՎԵՐՋԱԲԱՆ

Կար ժամանակ, երբ հայ-ռուս օրիենտացիայի ծագման ներկա լուսաբանութիւնը կարող էր անբարեյուսութեան նշան համարւել ազգային տիրող դասակարգերի կողմից։ Ժամանակները փոխւել են, և այսօր խնդրի նոյն լուսաբանութիւնը միսիթարութեան աղբիւր կարող է դառնալ ազգի տապալւած դասակարգերի համար։

Զո՞ւր սփոփանք։ Զբաղեցնողն այստեղ ժողովրդների հնաւանդ բարեկամութեան կամ թշնամանքի հարցը չէ։ Օրիենտացիայի խնդիրը սոցիալական խնդիր է, ենթակա ժողովրդների դասակարգային ներհակութեան վրա հիմնաւած փոխյարաբերութեան ներքին դիալեկտիկային։ Այն, ինչ խորթութիւն և հակամարտութիւն էր ստեղծում հասարակական-պետական մարմինների մէջ երէկ՝ սոցիալ-պատմական ուժերի մի՛ դասաւորութեամբ, կարող է փոխանցւել համերաշխութեան և հարազատութեան այսօր՝ նոյն ուժերի նո՞ր դասաւորութեամբ։

Ուսւ օրիենտացիան, օտար և անհարազատ աշխատաւոր ժողովրդին և արհեստական մի պատւաստ նրա քաղաքական մտայնութեանը, հայ աւատականութեան մեռնող շառաւիղների փրկութեան ուղին էր թւում մի ժամանակ, երբ ռուս ուեժիմը դասային իրաւունքի և արտօնութեանց միակ ապաւէնն էր համարւում Անդրկովկասում՝ նեխւող դեսպոտիայի և պոռթկւող տոհմատիրութեան հանդէպ։ Սակայն քաղաքական դարաւոր փորձով հոգեսոր և աշխարհիկ հայ աւատականութիւնը սնեց և սպառեց ուրոյն գոյութեան վերջին յոյսերը նահանջող իսլամի և յաղթական ցարիզմի քուրայում։ Յաջորդելով դասալքւած կղերին և ազնւականութեանը՝ հայ բուրժուազիան ժառանգեց դրանց օրիենտացիայի հեզ վարքագիծը։ Եւ դա իր հիմքն ունէր։ Ուսւ ուեժիմը մասնատիրական կարգերի ապահով յենարանն էր սոցիալական գերիշխանութիւն վաստակած առետրա-արդիւնաբերական դասակարգի համար։ Օրինակը վարակիչ էր։ Հաւատարիմ իր սոցիալական նկարագրին՝ ազգային քաղքենիութիւնն ընթացաւ երերուն քաղաքականութեան հունով։ Սակայն՝ ենթակա կապիտալի այլասերող ազգեցութեան և ստրուկ նրա քաղաքական իւ-

մաստութեան՝ նա հնագանդւում էր ոռւս կնուտին, պաշտպանութիւն փնտուելով մերթ «անօրէն» թուրքի գրոհից, մերթ «հարազատ» պրոլետարիատի ահից:

Հոկտեմբերը շրջակէտ կազմեց քաղաքական նոր ուխտի: Յուսախաբութիւնը քաղքենի մտայնութեան հաւատարիմ ուղեկիցն էր: Թոռները լքեցին պապերի հարթած քաղաքական շաւիղները: Հայրենի բնագաւառ քաշւելով նրանք վտիտ մարմնով ծւարեցին ազգային-պետական կենցաղի անձուկ պատեանում: Փխրուն ատամների բութ ծայրը միակ զէնքն էր կարմիր ուրւականի սուր եղջիւրներից փրկւելու համար:

Յեղափոխութեան վտանգը, ահա ոռւս օրիենտացիայի առաջացրած սարսափի աղբիւրը գահավէժ դասակարգերի համար: Իրաւունքի և սեփականութեան հին պաշտամունքը չէ այսօր այդ օրիենտացիան: Դիւանագիտական մեքենայութիւնների փոխարէն նա դարձել է կազմակերպող աշխատանքի ուղեցոյց: Մեր օրերի ոռւս օրիենտացիան ընթանում է մասսաների ազատագրման տիեզերական խոյանքի հունով: Այդ օրիենտացիայի մէջ է դարբնուում այսօր նաև շղթայաթափ հայ բազմութեան յեղափոխական տարերքի օղակը:

Երևան, յունիս, 1921

ՅԱԻԵԼԻԱԾ

№ 1<sup>1</sup>

ՀԱՅ ՄԵԼԻՔՆԵՐԻ ԳՐՈՒԹԻՒՆՆԸ  
ՆԻԿՈԼԱՅ ՍՊԱԹԱՐԻԻՆ<sup>2</sup>

Է

Ի Հայաստանեացս մ՛լքներս ծանուցում լիցի պ՛րն նիկոլիա-  
յոսիդ, իսպիթար ինքնկլ թգ՝ ըի զւ՛տի բառքառօղ, և ք՛րտիղի  
թ՛րքմնօղ, և մերայնոցս սիրելի Հաւտրիմ բրեկ մ Մին՛ս վրդն և  
պ՛րն ի էլն մեզ գրերեն քո հրմն՛ց բարութ՛են որ խիստ ուղիղ  
սրտիւ մեր բանին մողաթես. Ապա այսմ ժ մնկիս ոչ կ՛րեմք քո  
բարութե գ փոխ՛րէնն հատուց՛նել վ ահից թշն՛մեցն, Մեք  
խոստ՛ցինք ուղիղ սրտիւ որ քո պ՛րնիդ առնեք մին ճանչութի ,  
դ, ո, ոսկի որ կ՛նէ մեր հսապն դճ իւ թում՛ն երբ որ տ կ  
կատ՛րի քո երած բարութե փոխ՛րէն այն ժամնկին տամմք և քո  
որդոց որդիք մեզանից բարեկ մութի առնեմք:

Մեր գրովն և մօհրովն մինս վրդ՛ին, և պ՛րն իէլին երկոսին  
խօսօքն և մօհրովն ա մ ինչ մեզ խապուլէ:

Թվն ո ճծ բ, Մայիս ի է ՚իքաղվ՛ն:

հիլիպոս որի իմ	դի ամիրպ՛կ իմ	ո դի թաթոս գիդի
մօրհս ձեռացագիրն	մօհրովս և ձեռագ-	(sic!) իմ ձեռացա-
ինձ դաբուլայ: Կնիք՝	րովս ինձ խպլէ:	գիրն ինձ դապու-
Հէկէզի որդի Փիլի-	Կնիք՝ Մարտիրոսի	լա: Կնիք՝ Պաղդա-
պոս:	որդի Ամիրպեկ:	սարի որդի թա-
		թէոս:

<sup>1</sup> Բնագիրների ուղղագրութիւնն ամենուրեք պահում ենք նոյնութեամբ:

<sup>2</sup> Սինայիմ յայտնի էր միայն գրութեանս իին ուսւերէն թարգմանութիւնը, որ հրա-  
տարակել էր **Юր. Арсеньевъ** («Чтение въ Имп. Общ. Истории и Древностей  
Российскихъ при Моск. Унив.», М., 1900, Кн. IV, էջ 55 և հետ. յօդ. «Новыея  
данныя о службѣ Николая Спафарія въ Россіи»).

Ես նրինպէկի որ-  
դի շնորի իմ ձեռգ-  
րովս մհրովս ի՛ձ  
խալէ: Կահք՝ Նա-  
րինպէկի որդի Շահ-  
նազար:

Ես եավրի ոռդի  
(sic!) աղայճան դրի մելքոն իմ ձեռագ-  
իմ մօրհն և ձեռա-  
րովս մօրհրովս ինձ  
խալէ: Կահք՝ Պայուն  
լայ: Կահք՝ Եավրի  
որդի Մելքոն:

Ես պղտորի որդի

(Մովկւյի գիւտն: Յա Մոսկովսկое отделение Единого Государ-  
ственного Архивного Фонда, նախկին Մоск. Главн. Архив Минист.  
Иностр. Дел. Дела армянск. июль-сент. 1718. № 4. Дела Армянского  
Архиепископа, fol. 12).

## № 2

ԳԻՒԼՆԱԶԱՐ ԱՐՈՒԽԵՆՑԻ ԽՆԴԻՐՆ ԻՐ  
ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

### Державнъиший Царь Государь Милостивъиший

В прошлом 1702 году по твоему Державнъишиему Указу изъ твоего великороссийского Государства з грамотой отпущен я съ Москвы через Малороссийские города до Киева а из Киева до польских городов до Замощи<sup>1</sup> а из Замощи ѿхать было мне в польский город до Аршавы<sup>2</sup>. И до Аршавы ѿхать мнъ в то время было невозможно потому что во Аршаве был в то время Свекий король. А как я был на Москвѣ и баварский посланник Израель Орий и вартает говорили мне как я буду в Аршаве чтоб мне взять в Аршаве торгового человека Таргулия до курюстра Дисельдора и чтоб ему ѿхать со мною взять у него Курфистра деньги, а сколько денег взять того мнъ было неповѣдано. И как мнъ приказывали посланник Израель Орий и я из Замощи Аршаву писал и наняв человека нарочно до Аршавы чтоб тот торговой человека Таргулий из Аршавы приїхал ко мне до Кракова. И он Таргули в то число

<sup>1</sup> Замостье, գալապային քաղաք նախկին Լիտվինի նահանգում:

<sup>2</sup> =Варшава.

в Krakове не был а был в прусском городе в Торуне. И я из Замоши поъхал до Krakова и в Krakовъ его Tarгулия ждал пять недѣль а людей со мною был челядник да четыре лошади. И в то время в Krakовъ всякой харчи и конской корм был в дорогой ценѣ потому что под Krakовым от Свѣс-кого короля были воинские люди. И я в том городе Krakовъ в то воинское время был для того что мнѣ приказывали Баварский посланник Израель Орий и вартабет взять с собою торгового человѣка Tarгулия. И он Tarгулий ко мнѣ в Krakов притѣхал с челядником своим спустя пять недѣль и говорил мнѣ прислали со мною Баварский посланник Израель Орий и вартабет к нему Tarгулию деньги и я ему Tarгулию сказал что он посланник со мною к нему Tarгулию денег не прислал и в дорогу мнѣ чем харчеватца ничего не дал. И говорил мнѣ он Tarгулий для чего они посланник Израель Орий и вартабет сами не притѣхали и со мною денег къ нему не послали. И я ему говорил что ему Куроистр деньги даст как мне приказывал Баварский посланник. И из Krakова мы сним Tarгулием поъхали до немецкого города до Olmonца и до Видны а челядников снами было два человѣка да четыре лошади и ъхали мы до тѣх городов двѣ недѣли и харчевал я с ним Tarгулием и с челядники и конской корм вѣк покупал на свои деньги. И как я был на Москвѣ и со мною послано было до Видны к твоему Государему Послу Боярин Феодор Алексѣевича Головин грамоты и он посланник Баварский Израель Орий взял тѣ грамоты с иными писмами не положил и запѣчатали мнѣ про тѣ грамоты не сказал. И как я стал в Видне на постѣйлом дворѣ осматриватца и тѣ грамоты от боярина Феодора Алексѣевича к нему послу не нашел, а которые твои Государевы грамоты со мною были посланы для Цесаря христианского и тѣ я грамоты как он Цесарь шел из Церкви его палаты вручил и послѣ того его цесарев посол спустя дни с четыре приказал меня сискать и как я к нему пришел и он мне говорил милостивно что к нему писал Боярин Феодор Алексѣевич чтоб мнѣ всякое поможеніе чинил и я ему послу извѣщал которые грамоты со мною были посланы от боярина Феодора

Алексьевича к нему послу и я тъх грамот приъхав в Виднъ у себя не нашел и затъм к нему вскоръ ни явился и просил у него посла Милости кто ему послу тъ грамоты от боярина Феодора Алексьевича вручил и он посол мнъ сказал, что тъ грамоты вручил ему патер Блема и тъ де грамоты послал с Москвы сним Патер Блюмом Баварский посланник Израель Орий. И жили мы в Виднъ полтреты недѣли и живучи я в Видне лошадей своих испрадал за покупкою корму дорогой цены. А из Видния поъхали мы наймом до Праги а из Праги до Изерберка а из Изерберка до Гадерберка и в прогороде мы были неймуючи полпяты недели. И как приъхал Куроистр Баварский до Гадерберка и патер Патии нам говорил ка де мы будем в городъ Винеусе и там де ждите куроистра и поъхали мы до Винеуса и в Винеусе были недѣлю и твои Государевы грамоты Куроистру авианцу подали и он Куроистр обрадовался и воздана нам честь. И он Таргулий ему Куроистру бил челом о денгах и ему Таргулию денег не дано не знаемо за что а явилиб ему Таргулию от него Куроистру даны были деньги и я бы что мнъ от посланника Баварскаго Израель Ория искупил. А жили мы с ним Таргулием в Винеусъ на моем харче четыре недѣли до после того жил я особно в Винеусъ четыре же недѣли. ... к тебе державнейшему Царского Величества от куроистра грамотах. А как я поъхал съ Москвы и в проѣзде мне по разным городам до Винеуса стало всяких харчей и убытков и себъ на корм и лошадям и что харчевался со мною Таргулий и челядников четыреста шестнадцать еѳимков и от куроистра дано мнъ жалованья двѣсти дватцать пят еѳимков да пару подсвѣшников столовых серебренных золоченных да от Куроистра дано мнъ на расплату от господы пятьдесят еѳимков тъ еѳимки принял без меня тот торговой человѣк Тарголий и роспечатал и из тъх еѳимков мнъ отдал дватцать еѳимков и заплатя я от господы поъхал Өранкөурта, а от Өранкөурта наимваючи почту до Сакса города Лепцика и из Лепцика до Бандабурка города Барлина а в Барлине был две недѣли скорбен. А из Барлина до Гданска и в тъх городах проезде было пять недель.

А из Гданска до Торуна города прусского а из Торуна до Аршавы а из Аршавы тъхать было мнъ на Киев. И как я поъхал из Аршавы в десяти милях швецкие воинские люди меня взяли и держали из караулом три дни и спрашивали меня какой я человѣк и я им сказал что я армянин персицкой земли торговой человѣк и они щвецкие люди меня оставили въ целости и никакой поруки мнъ не учинили. И от тых воинских швецких людей поъхал я назад до Аршавы и в Аршаве сидѣл шесть недѣль, а из Аршавы поъхал до Торуна а из Торуна до Малбурка. И ото Гданска до Малбурка по разным городам для проѣзду от воинских швецких людей было в проѣзде десять недѣль. И как я приъхал до Мальбурка и пришел к твоему Государеву послу ко князю Григорию Феодоровичу Долгоруково обо всем своем проезде объявил и он мнъ сказал милостивое слово и дал мнъ к тебѣ Державнейшему Государю писма и жил я в Малбурке четыре недѣли и он твой государев посол отпустил меня с Крыжъвским до Шлотбурха. И от Франкѣрта до Шлотбурха. Учинилось мнъ всяких убытков и харчей по разным городам в проѣздах двѣсти еѳимков и из Венеуса от Куроистра грамоту и от твоего Государева послы князь Григорий Феодорович писма в Шлотбурхе подал боярину Феодору Алексѣевичу Головину. И из Шлотбурха приъхав к Москвѣ живу на своих харчах и проторях. А твоего Государева жалованья и поденного корму мнъ ничего не дано и от того дальнего проезду оскудал и одолжал великими долгами. Всемилостивѣшій Государь прошу Вашего Величества Державнейшій Царскаго Величества милостивой Государев указ учинить чтоб мнъ от таких великих убытков и харчей в конечном разорении не быть.

Вашего Величества нижайший раб Персицкой земли армянин Назарий Арховичъ. декабря въ день 1703 году

(Ստորագրութիւն) Կովճազար Առուկսնց

(Մոսկվայի դիւշն. Ճѣла армянские. 1701 іюня 30- дек. 1703. Ցաւել-  
տաճ, f. 329 v. – 330 v.).

№ 3.

ՄԻՒԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՆԱՄԱԿՆ ԻՄՐԱՅԷԼ ՕՐԻՒՆ  
ԵՒ ԱԳԱՐԱԿՑԻ ԹԱՐ[Ի]ՂՈՒԼԻՒՆ

Է

Ի ԱՆԻՄԱ ՄՆ՝ ս վրդէս սիրով ս՝ ը հոգւոն ծանիր մեր սրտէ սիրեցել եղբայր պ ըն ի սէլ և պ ըն թար՝ զուլի որ դուք ասիք թէ ա մ ինչ բանի ստուք գիրն պակաս չեմ աներ քանի որ գացերէք այսօր թ՝ ամիս է քեզանից ը գիր էհաս մինն ի լովա միւսն վէնա ինչ նեղութի որ հանդիպեցէր ձեզ իմացա, ա յ ո անգամ գոհութի որ այս խառնակ ժմն կին սալամաթ հասերէք ի վէնն, ամէն մեզ պիտան մ՝ րդկ՝ ցն գրեր էիր խիստ լաւ ես արեր այն գրովն ամենք ուրիշ՝ ցն. գրերէիր թէ յարութի եփրաթօրի հը մնւն առ շահ գատայի միրզային մօտն վ ս ազատութե կ մ այլ ինչ խապ՝ ը բերի համար կուղարկեմ, և եթէ ճշմր՝ տէ խիստ բարի կառնես ապա խիստ առանձին առնես որ այս վեհագունից կ մ այլ ոչ ոքանց մէն մէր բանին վնաս չի հասնի կու խնդրեմք որ խիստ լաւ մուղաթ լինես ինչ նշանով մրդ գնալն մեզ յատնես. Հոկտեմբերի ամսին մին գիր ողարկերս պոէն պուրքն մարութին վր եկն էհաս խիստ ուր խցւ ինչ որ գրեր էիր վ ս որդուն: Ապա այտ տեղաց աֆալիցն կ մ այլ ինչ մեզ պիտանի սիրոյ խօսք ինձ էր չի գրեցիր, այն որ առանձին բան է դու միտ ածելով իմ գրին օրինակովն քո ձեռովն ինձ գրէ որ ես իմանամ թէ ինչ պէտք է մեր բանին ը գիր հասեր է իսկի պիտանի բան չկար մէջն, կեցածն (sic!) չես կարցեր ճարտար գրել: Ասեր ես թէ մերայնոց խապար կանէ ուղ ըկէ, ես քան զքեզ այլ առաւել հոգս կու քաշեմ չեմ կարել հնարել. առջի գիրն գրեր էիր թէ կողարկեմ ոչ եղե հնար իմ գ գրին պատսխնիքն քեզանից ինձ չերեկ. Առ մեզ գրին բերողն ե ամիս պահեցի թէ առ քեզ գա ոչ եղե հնար, վ ս այն պատճ ոին որ փոքազին ասաց թէ ի հոռմ ուխտ կու գնամ. Հոռմա անուամբն այս կողմէն հրամ՝ չկա գնալ, այլ ինչ պատճառիւ կարէր գալ, հոռմա անու ըն ոչ կարէ գալ, խիս (sic!) ա ծասէր բարի մարդ էր բայց ինքնահաւան: Եւ այլ հաւատալի

ոչ եղև փօստով չի հաւատցի, որ գ՝ գրին մին պտ՝ սխնի չէ հասեր ինձ, գնցի պատրուն թէ հաւտ՝ լի մ՝ ը՛րով ինք ուղ՝ րկէ ոչ է առանձ (*sic!*), թէ պարտ չէ այս խառն՝ կ ժմ՝ նկին այտպիսի բան ուղարկել չի լինի թէ զայ լինի և ձեր բանին պկ՝ սութի՛ գա պ՝ ըտէ զսուրաթն ուղարկել։ Գրին վ՝ ր գրեր էին թէ երկուստ միատեղ բան՝ քո հրմ՝ նքդ այս տեղն չէիր գիրն պահելով մեր բանին վնաս էր գն՝ ցի սպաթար նիկոլախն ասի առանձին ե՝ կւ գիրն տեսաւ խիստ ուր խցւ ասաց թէ առանց այս գրին ձեր բանն ոչինչ էր ահա այսուհետեւ խիստ բարի եղև ձեզ։ Գրեց մեծին զտիպն զաւֆալն, հրամայեր էր նիկոլախն թէ գնա թղթին բերողն՝ տես թէ ինչպիսի է, դու և վր՝ դն առանձին բացէք միջի ինչ եղելն ինձ ուղարկեցէք. Մեծին հրմ՝ նւն բաց՝ ք և սուրաթն ողարկեց՝ ք դեռ մեծիցն պատ՝ սխնին առ մեզ չէ հասեր, որ քեզ գրէի։ Ահա ամենից թղթերուն սուր՝ թն առ քեզ ողարկեցի լինի ա վ որ մեծին հրամն՝ որ միւս տիպ թղթերնլ (*sic!*) ուղարկեմ ինչպ՝ ս որ գրած է այնպ ս կատր՝ ս, ք նի որ այդ կողմին եղել մեծամեծ ց թղթերն չեմ ողարկեր, այս կողմն չի յատնես թէ սուրթն ողարկերէ, և այդ տեղաց ա մ ինչ ճշմ՝ րտ եղել աֆալն առ մեզ ծանուցանես, որ քանի դուք գացերէք. ամէն յերկրէ խապ՝ ր կ մ ելչի եկելէ տեսանեմ որ այս գրիս պատախանիքն քեզանից առ մեզ գալն մի ըստ միոչէ առ քեզ կու ծանուցանեմք զերն ժամ՝ նկս փօստիլ հաւտ լ չեմ, որ մեծամեծ՝ ց թողթն (*sic!*) ի տեղն կու հասանի բայց մեր ոչ։ Մեծ արծիւն ինչ որ կու հալլացէր ա յ աւելօք էառ, ինչ որ հանդիպէր ճնպ՝ րհին քեզ և մեր սիրեցել սիմօնէրին, նիկոլախն պ՝ տմեցի, նա մեծին գրեց շատ խղճացերէր քո նեղոթե։ Մերայնիքս խիստ թամպէ արածէ թէ հնազանդ կ՝ ցեք որ չի լինի մեր բանին վն՝ ս բերէք, կու խնդրեմք քեզանից պըն իս՝ էլ որ մեր եղբայրակցել պըն թար՝ ղլին բանն սալն հանէս և քանի որ կրողութի՛ ունիս իւրն ազաթ առնես, դարձ՝ լ պ՝ ր թարզլուդ կաղաչեմք որ վ ս ա յ խաթրին համր չի լինի թէ սպտն՝ մարդի խօս՝ ցն յուշ դնել և պ ըն իս՝ էլին հակո կիս քանի որ հակո կիս քո հոգւոն և շատ աշխատն ցն կու հակոկիս. Ա ծ որ քեզ սաղ պ՝ հէ քո աշխատն չի կօրիր, քո մին մազն թէ ես թէ պ ըն իս՝ էլն ա մ վաճ ոկնցն չեք փոխեր ժմ՝ նկւ ապա հիմի դու գիտ՝ կս որ կարո-

ղութի՞ չկա քո բարութի՞ փոխարէնն լցուցանել. կու խնդրեմք որ քնի կարողութի՞ ունիս խովաթ տաս և հաշտ լինիս հետ պը ըն իսէլին որ քո բանն աջողն լինի որ չի լինի թէ քո տուշմնին ծաղր լինիս. քո բարութի՞ գրերէ՞ ք բարեկմ՞ ց ն ք ևս առ մեզ գրածէ աղաշանօք թէ ձեզանից մի զատէք մինչև սալամաթ առ մեզ հասանիլն որ մեք ն ր բարութի՞ փոխարէն ժ պատիկ զինդիրքն լցուցանեմք: Այսօր պարտ է որ մեք զպ ըն իս էլ մեծացուցանեմք վ ս մեր շահակ նութենե՞ , և եթէ հակ ոկինք վ ս մեր կու հակու կինք: Պարտէ որ գրես այս կողմն ամենից առ ի մեզ շնորհակ լութի, նախ բարի պտուղ կլօվին որ, առաւել մեզ պիտ նի է որ մեզ հանապ զ կու հարցն էս սիրով և կու լսէ մեր պաղ տնցն: բ . սում մեծ գունեղ խանին որ կու պատուէ զմեզ ամէն վաղթի, թէ բագրատոնն, թէ պ տրին, թէ նիկոլան, թէ փօտիաչին (f. 39 v.) կ մ այլ ինչ մեզ պիտն մ րդիք ինչպ ս որ դու գիտ կես ամենից ըս (sic!) իւրաքանչիւր կօրէ մեծ շնորհակալութի գրէ որ չասեն թէ երախտամօռացեն. զատկին խանն ի տես գնացի ա մ ինչ կողմ է առ մեզ հետաքրքիր եղեւ իմաստութ բ ա մ ինչ ի մեզ պիտան բանի, պատճ ոն ի տեղն էառ ուրիսաց ւ լի սրտիւ և անքակտելի սէր ձգեց ի վ ր քո, և մեր բանին: Այսուհետեւ մեր բանին հոգս կու քաշէ, ինչպ ս որ իւր որդուն: Այն վաղթին քո անունն ոչինչ կու հմրէին ա մ ինչ մեզ պիտան տեղիք, այսուհետեւ ողորմութ բ ա յ քո ծածկեալ բարութի հոչակեց ւ առ ի մեզ պիտանի բարեկմ՞ ցն: Հոգեոր իմաստութ բն իմացիր զա մ ինչ գրե լսն, իսպարթար նիկոլային աւելօք շնորհակ լութի գրես որ մրմնաւոր մեծ շահակ նէ այժմուս առ մեր բանին և եթէ քո բարութի հոչակելն ես վկաեմ կու խաբեմ զքեզ, ինչպէս որ այժմուս ժամնկիս մարդիքն. լինի ա վ որ գաս բարով լսես ականջօք, և քո մտ ց անցած բաներն փօշէմանիս չարն և զբարին ճանաչես և կատ ը լ Հոգեոր բանին հասանիս, զէրն ճարտար և բարեսէր մարդն զիւր կօնտակիւն կու ճանաջուի, որ բ անգամ ինձ գիրես գրեր մին միսիթարակ ն ճարտ ր խօսք չկա միջումն մահանա կանես թէ չեմ կարել գրէր, քո մտօքն կասես թէ կարողեմ ամէն բան մին պատճառիւ խաբել և եթէ զիս խաբես ա ծ ոչ կարես խաբել, ա մ ինչ ի ձեռինս ն ը է աջողումն, պարտ է որ ա յ ինչ ճարտար

խապար ինձնէ իմանան ես կու գնամ մունէթով նոցանէ իմանամ, ած այդպէս ընկերատեցութի՞ն չի վերցներ դու գիտ կես. Այդ քո թէպիէթին դէմ անչափ մեղօք լցել եմ, առ ի բանին խաթրին համբերեմք, թղթերն եթէ ինձ հնարք լինէ ուրախութիւն բոկոտեափ (sic!) քեզ կու հասուցանէի. կու խնդրեմ ի քեզանից որ ինչ ասացեր ես այս տեղս վէզիրին ջանք դնես որ սուտ չելնուս, ամ ինչ մեծ հրաման, մեզ պիտանի ի ձեռինս նորա է ավ ինչպէս որ կամի կարող է առնել այս մեծին մեծ բանալիքն ի ձեզինս է երփոր կմի շոտով կու բանա զմեր դուռն այլ ամենեքեանքն ոչինչ, ուտելոյ բարեկամք են. քո յուշանալն մեր բանին վնաս չի առներ թէք ինչ որ առերես տեղն կատ՛րես. թէ ատ տեղն բարեկմօք կարես կատ՛րել օգ կնութե բ խիստ բարի է, թէ չէ այն իշխանին տուած քսուրն ծախէ քո պակասութիւն տես որ մեր աշխատանքն չի կօրի:

Թէ ինչ առանձին խօսք ունես, թէ ինձ, թէ վէզիրին, և թէ խանին, քո ձեռքովն միտք ենելով ինձ գրես որ իւրեանց սրտի հաճելին իւրեանց պատմեմ, զէրն ֆոէնսի բառ գրեր էիր խանին թարքմանութիւն ոչ էր սրտի հաճելի երբ որ բագրատունին մեզ պատմեց, քաղցր խօսաց կարքն, ի տեղն կարգեց՝ք, և ամ ինչ յատնի բանն լաթինավար գրել տաս որ նիկօլանլ կարէ թաքմանել և փաթրինլ որն որ ձեռահաս է նա կու թարքմնէ:

Այսուհետեւ մեր կողմաննէն միամիտ կացիր և այ ճշմը բանին հետեկիր որ քո մեծութիւն իմնէ և իմն ք՝սէ ամ բարեկմօք, և մեր եղբայր թարղութին որ պազի տկարաց կու հաւտա մեղք մի համարեր իւրն այլ անգիտութիւն կու խօսի և կու հաւտա, եթէ հայոց թէ ֆուանկ՝ կամ այլ ինչ ազգաց. վհկա ուսացք իմաստուն մարդկնց, դու քեզ նց մի վստանահր, և իմ գրին պատսիսնին իշխնին ձեռագրովն առ մեզ ուղարկես, և եթէ տունտ կու բերես խիստ պտիւ դու ծանօթես մեծ՝ց թէ առջին գիրն թէ այս միտ ածելով ինձ գրես: Մեր կ թղոսն մին ցաւի է հանդիպեր որ ի ահէ իւր մտաց բանն մօռացեր է, զի ածը մեզ է: (f. 40 r.) թորքի էլչի ժը ոսկէ զարդբել կառօցով որ զ առջեն պ՝րազ կու գնար խիստ պատուօվ ի ներս մտուց և բաղչիկ թաթարիցն էառ իւրն օտալդ տուեց. դեռ այստեղնէ. երբոր ած տա գաս ինձլ մին տա:

Եւ սիմօէնդ կու օ՞հու՞ք խնդրեմք որ բանին խաթերն հմ՞ը միամտու՞ք պի ըն իսէլին ծառ՞ես որ չէ կորուստ ով ոք ծ՞ոյէ կ՞ոնէ փոխարէնն: Յարութենին, Անդրիասին և քո տանն մեծի և փոքոյ և մեզ յիշող՞ցն ամենեցուն շատ սիրով ողջուն կու մատուցանեմք:

Ած մեծ իսափ տա պէչու եղե՞լ մեր յազգ անգութ սուտ փարիսեցի քրիստո[ն]էից որ թէ մին սակ՞ւ սէր լինէր այսմ բանի շաբաթն մին թուղթ կողարկէի հալպաթ որ գին մինն կու հասնէր. ցաւակից մ՞րդ բարեկ մ չունիմք. մեծ բարեկ մ ա մ կարօղ զտ ըն մեր յերկինս ունիմք որ ի նա յուսացելոցն կարողէ բանն ի յաւա[ը]տն հասուց՞նէ. թղթին բերօղն գ ամիս է որ յետէ դառցեր. ողջ լերուք ի տը Ամէն:

**Թղին ո՞ճձ գ նոեմբերի գ :**

Նամակի սկզբին դրած է Մինաս վարդապետի կահքը՝ Յի Քի ծ ո Մինաս վարդապետ: Կահքի միջում՝ Աստւածամօր նկարը և թւական՝ թվին ՌՃիկի<sup>1</sup> (Հմմտ. Ակար II):

<sup>1</sup> Այս բականը, թում է մեզ, կարող է նպաստել վերականգնելու Մինաս վարդապետի կեանքի ստերագիծը: Սոսկայի հոգեւոր Մինօրի աստանին 1740 թին ներկայացրած իր մի բորի մեջ զառանած Մինաս վարդապետն ասում է. «родился я въ градъ Тигранъ, въ Ассирии, отъ рода имъю 82 года; монахомъ сталъ въ томъ же граде въ монастырь св. апостоловъ тому назадъ 50 (sic!) лѣтъ, тамъ же поставленъ въ іеромонаха архиепископомъ армянскимъ Иоанномъ, игуменомъ и архимандритомъ былъ черезъ 10 лѣтъ, а въ 1716 г. патріархомъ армянскимъ Авганскимъ Исаіемъ въ домъ патріаршемъ, называемомъ Кангасимъ (sic!), поставленъ въ архиепископъ» (նախկին Արքա Հայոց Պատրիարքության գույքը. Ակար II, կազմ. Ակար II): Այս ցուցմունքի համաձայն՝ Մինաս վարդապետը պետք է ծննած լինի 1658 թին, հոգեւոր կոչման մեջ մտած՝ 1690 թին: Թէ ո՞ր բականին է նա արեղայական աստիճան ընդունել՝ յայտնի չէ. սակայն վարդապետական վեղարի հետ վանահայրութեան պաշտօն պէտք է ընդունած լինի նա արեղա դրանալոց 10 տարի յետո միայն, յամենայն դէպէ 1700 բականից ոչ առաջ: Այս եզրակացութիւնը չէ համապատասխանում իրական տեսալներին, քանի որ արդէն իսկ 1699 թին գրած թղթերում Մինասը վարդապետ է կոչում եւ Ս. Յակոբը վանքի վանահայր: Սակայն եթէ ընդունելու լինենք, որ Մինաս վարդապետի կնիքում ՈՇԽՎ. = 1691 բականը ցոյց է տախս հենց նրա վարդապետական կոչում ստանալու տարին՝ օգտագործելով վերը բերած ցուցմունքները, կարող ենք ենթադրել, որ արեղա ծեռնադրել է նա 1684 թին, իսկ վանք է մտել, 1740 թից հաշվելով, ոչ քէ 50, այլ՝ 60 տարի առաջ, այսինքն՝ 1680 բականին՝ 22 տարեկան հասակում: Եպիսկոպոսական աստիճան ստացաւ Մինաս վարդապետը 1716 թին. վախճանեց 1740 թ. մայիսի 12-ին. Սոսկայում, նոյն տարւա ապրիլի 28-ին Ուսպենսկի տաճա-

(Մուկույի գիւան. Ճյլա արմ. 1724 № 4. Листы разныхъ духовныхъ и светскихъ Армянъ, изъ коихъ оные переняты въ Астрахани. f. 39 r. — 40 r.):

## № 4

ԱՐՁԻԼ ԹԱԳԱՒՈՐԻ ՆԱՄԱԿՆ ԻՄՐԱՅԵԼ ՕՐԻՒՆ

Է

*Ա կայսը եսսե՛ դաւիթե՞ն, սօլոմե՛ց ի ցեղէ նիւնե՛ց մեծ՛ց ցըելոց երկը դ թափօրակ՞նէ, և Ա ծասէր կայսերէ:*

*Ծանուցումն լիցի առ մեր նրին դ բարեկ մ իսէ լ օրիդ, որ առ մեզ ք մխիթարակ ն քարտէզ գրե լ էիր եկն էհաս կարդց՞ք իշմաց՞ք ըզքո բարութիւնն զոր քաչ մեծամեծօքն կառնես դու ը մեզ, որ մեր սրտէ սիրեցե լ անգին գանձ, մեր ընծա որդուն բանն լի սրտիւ խայրաթ կառնես, և ծանուցերես մեծ ինքնկ լ եփրատօրին, և Ա ծասէր և քաչ մեծ իշխ նին լէքտօր փալաթին, քո գրիւն հաւատցք. Մեք լի սրտիւ որ իւրեանց անդարց մեծ հրամանն գե-*

իմասցիս զայս և հոգացիս վ ս ապագային զի մի հասցին մեզ  
պատիժք և դու լիցիս պատճ"ո այսպ"սի իրաց. և դ"րձե"լ զայս

ծանիցէ սիրելութի՝ քոյ գրե՛լ ես թէ քանի մէլիք և քէտխուղէք ձեռագրով մհրեն զթուղթն տհա ո պ վերեն գրեց՝ ք ո ց մէջն մարդ կարօղ չէ խորհուրդ յայտնել. քանի մի մեր համախոռ սիրելիք կային որ ոմանք մեռան և ոմանք հեռու գոլով ձեռնհաս չեղաք առ ժամս, միայն թէ բ, գ. եպսկ պսք մօտ մեզ եկին մհրեցին. այլ այլոց չկարցաք խորհուրդ յայտնել: Իսկ թէ պ ըն շահինն գանջայ կարասցէ քանի մարդկանց մհրիլ տալ զայն չդիտեմ: Այլ և գրեալ ես թէ փոքր ընծայիւք մարդ յղես ընդ պ ըն շահինն տեղիս մեծամեծացն լաւ կու լինի քեզ. յայտնի է մեր դատարկաձեռն լինիլն և ես այնպ'սի կատարելամիտ մ'րդ ևս չունիմք մեր թալուր որ կարօղ իցէ տեղդ այնպ'սի բանավարութի առնել. այլ դու զոր ինչ պատշաճն գիտես այնպ'ս կառավարեա գործդ այդ և մեզ իսկ դապուլ է: Իսկ եթէ այս կողմի պարսից իշխանութի և զօրաց ո պութի իմանաս մեծ վէզիր աղամին աչքերն կուրացուցին և մանզուր արին վ ս զի կամէր աբստամբիլ թ'գւրիցն այլ և զանտահարու կոիւն հաստատէ. շրուանու երկիրն լազկին աւերեց թամամ մինչեւ շամախու ևս կէս մին չափմիշ արին. այժմ վրացին և դզլպաշն վերա են փոքր ինչ հանդ'րտութի է. բայց երկիրն աւեր է. որիշ (sic!) այլ այնպ'ս խապ'ր չկա գրելոյ. էջմիածնա կ թղկ'սն փարազաթ է: ես ևս գարունս գնալու եմ էջմիածնին և զոր ինչ անտ ո պութի լինի գրելոց եմ քեզ: Եթէ դու մէկ մէկ ն ը վ ը գիր գրես լաւ կու լինի իբր թէ մեք ո ը աթո՛յդ հակ'ուակ չեմք մեր թշնամին շատ է մեզանէ հանապ'զ կանգ'տեն գր'ւմ պիտի լսէք ոչ. այսպ'ս գրես լաւ կեղնի գրձե՛լ շուրջառին և այլ քո յղե՛լ ընծայից կողմ'նէ շատ շնորհակ'լ եմ ի քէն. ապա այն ժամանակն իսկ ասացի քեզ սակս ո ը՛յ եկեղեցոյս ա մ նիւթից և անօթից պակաս'ւթե, այսինքն պ'տկերի խաչի սկու շամատանի զանկակի. քեզ ձանձրութի չլինի կամիմ որ ինչ որ քեզ ձեռք տայ քո հոգոյ յիշատակ մի խնայեցես յղել ով ոք զինչ պիտեն ասել ամանաթ իքմինին միայն թէ դու յղեսցես ՚ի շամախի և մեզ գրեսցես հաւատարմաւ գիւրին է բերիլն. և այլ ո պութիք մեր ի պ ըն շահինէդ իմասցիս և թուղթք քո անպակ'ս տրասցես ի մէնջ անպատճառ. մէկ թուղթ ևս անցեալ տարիս շամախ'ւ յղեցի, չգիտեմ քեզ հաս'ւ թէ ոչ. և լեր ողջ տ ըմբ յ սիւ, ի ո ճճ թվիս հայոց ապրիլի ե գրեցաւ:

Դ'ըձլ վրդպ տ իմ առաջնորդք յոհան պ ըն տ ըն, խաչատուր վրդ պ տն, առաքե՛լ վ ըդպ տն, պետրոս վ ըդպտն, պ ըն մէլիք ե-

սային մհրեցին այլ ոչ ոքաց չկարացինք յայտնել. և այլն դու գիտես ողջ լեր ՚ի տէր:

Գրութեան ճակատին զետեղած է Եսայի կաթողիկոսի փոքր կնիքը՝ է. Շնորհօքն Ա. Ե Եսայի կթղկս Գանձսրա. ոճ. 1701.

(Մոսկվայի դիւան. Ճելա արմ. ու կատալոգ 125. № 10. 1740 յնվ. 23).

## № 16

### ՊԱՐՍԿԱՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆ ՆԵՐԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ՄԻՆԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

Առ մեր սհալ մին ո վ րդ Արքեպ կս ամէնիս ճ՝ ր աչքի լոյս  
Հովիւր

Քո օդի հող և անրժն ծառայ քո հօտի նեղ ելքս և այլք մեր  
բոլորիք ի ոտ պաշեմք իբր մօտըտ, որ վերոյ քո հրմնքդ մեր մեծ  
հոգեոր հօվիվ քէ որ ա ոձի խորհրդին եղթիար կրգել կաս վաղ  
հետէ էդ մեծ թգ րի շքին. որ քանի հեղ էդ մեծ թգ րի առ մեզ  
սէր առնել շաղ թն մեզ միսիթը ել յոյսն հաստ՝ տեր ես մանաւ՝ նդ  
ի գալդ մեր ո բ աթ ոն թէ գնծար որ մեք տրուսդ հաւտ՝ և ամէն  
բոլոր հաւտ՝ րմօք թգրի շա[Հ]կան բանք քանի պապ թն մէլ մ  
արերեմք որ դու թգրին իմ՝ ցնես և մեք անպկ՝ սիրտ ունէ՝ ք որ  
հը մն լինէր գայե ք ի ծ ոյութեն որ մեր սրտի բան քեզ յայդէ,  
որ թ վն ո ճհ ին մեքէլն ուզեց ք և յետէ զխոնոմն և յ՝ կոբն թէ  
այս չափ ճան հ՝ զիր հը մն ըդնի գ մք ի ծ ոյե. և էլ արթունի  
բանք շահինովն և էլ յարութենովն որ ըս պոլէ տաճկի և դաւիթ  
պէկի թէպտիր թէտէրուք և ճ էպէխն նյ և ք նի փաշաա զօ՝ ք  
թէկին ի խղլպ՝ շի երկրներ մ որ հը մնոցդ յայդեր ք որ թ գըին  
յէլմ առես որ տուշմնի դէմ պատրաստութ քաշէ. և էլ թ վն  
ոճհ գ կրկին մ՝ րդ ու զլ քեզ թէ ք նի ճան հը մն ըդնի գ նք, կե-  
նէ պէյլու չեղե. թէքրէր մահտեսի մկրտիչն առնձին մեր բանի  
վեքիլ կարգեց ք որ գոյ հը մնոցդ հատ լի որ սրտով ջանք առնել  
որ թ գըէն մեզ օգնութի հասցէ, մեր մեղաց նա էլ նէժին մեր չա-  
գործք ի քնած տեղն տապնչի կոլով ըսպնածէ. զկնի տիրացու ա-  
ւաքն և քո հեմշէի պ գտորն յ՝ թեն ուզեց՝ ք ի նէժին որ մաղտէ-  
սի մկրտչի ինչ լինիլն իմն՝ և գալ հը մնոցդ յետնէ, սհ կն և մի-

սիրն էս մեր գրօվն որ հ ւտս մին Փիքիր չանես ու վաղուցէ այդ մեծ թ գի կշտին մեր հաւ տլի եղթիարն դու ես այլ ում պիտի հւտմք էս մեր խորհրդի բանքն, որ մեր թշն յմիքն մեր սրտի բ նքն թէ շիտ կն իմ նան ա մ տեղիք մեզ սուրն կու քաշեն. թէ-պէտ մեզ ասումեն թէ խաին էք մեր մեհմէտի յօրին՝ցն, մեք ըն քար քալիս թէ մեք էն խաին հ՝աիցն չեմք թէ արուստ իմնն մեզ սուր կու քաշեն. գուլ մեզ պ րտտէր կու մնաս որ մեր հօ-վիին ժողուրդօք հ ւայցուցե՞ս ես այդ մեծ թ գրովն թէ իբր թ գրի խօսքն անստելի է ո պ ք ի ս բ աւետ ընին. մէքլ մէկն հւ տցերեք որ դու վերուտէն տու՝լ հոգ ոց տիրապէտող հօվիւ որ ցրու լան պ՝րտ է որ ժողովես որ անչ փ հոգի կոր սակ ն, և մեծ թ գրց ևս տու՝լ յերկ՝նից պո լ լուսեղէն զօրութե թ ք որ ի ք ս մկ ըտլն ի յանօրին ցն ազ տէ. վ ս ա յ մեր խղճելոցն Փիքըն քաշես թէ թ գրէն մեզ գլութի կու հ սնի թէ ոչ մեր Փիքըն ք շեմք. ոմն եկ որ իմ՝ցք սր քն և պէզիքիք ը մեզ որ պ առ ջի. քո հ ըմնդ մեզ մեղ ց ամէն կողմէ մօոցլ որ մեր խնդիրք և նեղուե կորուստն թ գրին յէլմ չես առնել որ մեր ինչ խ՝յրթն թ գին շահ կննէ. թէ ուրիշ թ գր գլ՝իս տ՝ք իւր սէնթին լինէր մեր խորհրդ ն մին տա-րումն կու կ տրէր. կու խնդրեմք թ գրէն որ առ ւ եզ մէկն պտ սխն տա որ ինչ տեղիք տեղիս մնց լքն չի յուս չ հատե լ այ-լայլին. մեր միջումն կա բզմ ց որ իրնց խիզանքն ա մ ընչիւ գերի և սրօվ մաշե լ և յ լք խիզնք մերկ վիխստի ի մէջ սղնաղին և է առ նց տէր սօվամահ և էս կողմէ հն ըք չէ գն՝լ և յ լք կան որ սղնղին օգնուի գն՝լ և այլք կան որ ինչ տեղիք բ՝րի և հանգս-տութի է էն տեղիքն բնկիլ ով ոք ալիշ վէրիշ կ մ հողագործու-թի առնելօվ ինչաքս նէմսի և լէհաց երկըումն մեր յազգէ վ րդ և ժողովրդօք բնկե լ կան և էն մեծ բարի թ գին շաղվ թն ի վրդ մեր անպ կս լինի թէ ինչ տեղիք ողջ մնց լ և հ նր եղե լ գերիքն ժողո-վինք և որդոց որդիք օրհնող լինէք թ գին. և իւր ինչ ծ՝ոյուե թ՝րքի դ՝տօստ՝ն և մեր ազի գրուի զկ՝ը եղե գրուի եստէլ (՝) էտ մեծի աղերսնօք կու խնդրեմք որ նխն ձաւրք մ ըդիք և օ տր ազգ չիմնն զմեր սոն. վերն ա ծ և վ ր երկրիս մեր պահ պ ն էտ լոյս թ գրն որ տ ր ա ծ պ հեսցէ զինք ա մ փորձնց և շատ ամօք Ամէն: Մեծ թ գրն առ ա ծ փոխն լն շ՝տ տիրուի եկ ի վ ր. հի-միկս լսեց՝ք իլ թօռնկն թ գլ յօլօվ ցնծ՝ցք որ ըղնի մեզ տր և պ՝րծ՝նք ~ ի: եւ ես մ ըտիրոս ամրպկնց, ս՝հկի սիմօն որդի և մն՝կ շ՝միր և քօտենչ (՝) եղ լ եղը րձ խօսօք գրլ մօհրեցի և զինչ

պտ՝ սխնն շուտով իմն մք. թշ վն ո՞ճհ զ հոկտեմպր իէ ին որ հսնի մեր հայր մինաս վ րդ Արքեպ կաին ուր և իցէ ի ձեռն նորին.

Կահք՝ Մարտիրոսի որդի Ամիրպէկ...

Ծրարի վրա՝ է. Ա զ հ սնի գիրս ի մեծն մօսկով կ մ պէտր-պուրք ի ձեռն մինաս վ րդ արքեպիսկ պոսին. անբ ց հ սուցնօ-ղին վ րձ տ նէ առնէ ամէն.

Միս երեսին գտնում ենք Մինաս Վարդապետի մակագրութիւնը՝ մերս Հայոց առ մեզ հս լ գրի խնդիրքն մեծ թշ գին մէլմ եր ք և գիրն փոսոլցքի փրք զին տու ք օպր սրբթրին:


(Մոսկովի գիւան. Дела арм. окт. 27 1727 — окт. 1728. № 3. Прізв-дъ Армянского діакона Авакума Минасова, Балтазара Назарова съ товарищи с писмом отъ живущихъ въ Польшъ Армянъ къ Астраханскому Архиепископу Армянскому Минасу etc. fol. 2. г. Մակագրութիւն՝ "Оригинальное писмо армянское писанное къ Минасу вартапеду изъ Каменица и изъ окрестныхъ городовъ отъ армянъ" октября отъ 28. 1727., которое оной Минасъ объявилъ въ коллегии иностранныхъ делъ өевраля 14 дня 1728").

### ԼՐԱՑՈՒՄՆԵՐ


1. Էջ 15 ծանօթութեան պէտք է աւելացնել մի ուրիշ դիտողութիւն. Կայտաթ անունը կարելի էր կարծել նաև Սիւնեաց Քշտաղ (Հագարու գետի հովտում գտնւող Խանածախ և Հոչաս գիւղերն ընդգրկող մելիքութեան) գաւառը, եթէ Կայտաթը այնքան մօտ չյիշւէր՝ Շամախուն: Միւս կողմից Հայաստանի թանգարանի Տաթեկից բերած ձեռագիր Աւետարաններից մէկի յիշատակարանում, գրւած 1693-1694 թւերին Խանածախ գիւղում Եփրեմ քահանայի ձեռքով, պահւել են Քշտաղ գաւառում ժիշտարի ընթացքում իշխած մելիքների և նրանց ժառանգների անունները՝ պարոն Հայկազ, մելիք Գասպար, մելիք Հախնազար, վերջինիս որդիները՝ Պախտամ պէկ, Աղաջան պէկ, Պահաժուր, Ազամ և թոռները՝ Հաւթանդիք և Բարխուդար: Մեզ հետաքրքրող Ամիրպէկին այստեղ չենք հանդիպում:

2. Էջ 41 և 49 մելիքների անուններ կրող կնիքներ փորագրելու և գործադրելու մասին մեր արած ենթագրութիւնը հնարաւոր է սրբագրել մի այլ. աւելի հաւանական, վարկածով: 1699 թւին և Պֆալցի կուրֆիւրստին, և՛ Մոսկուայի ցարին Ղափանի և Սիսիանի մելիքներն ուղարկել էին *carte blanche* («Ճերմակ թուղթ») իրանց ստորագրութիւններով և կնիքներով՝ լիազօրութիւն տալով Օրիին և Մինաս վարդապետին արձանագրել այդ թղթերի վրա «ուխտագրութեան դաշն» եւրոպական այդ իշխանների հետ (Հմմտ. Դ. ԷՅՈՎԵ, № 5, 6 և 11): Կ. Եղեանի հրատարակած № 3 վաւերագիրը և մանաւանդ № 44 բացադրութիւնը թոյլ են տալիս կարծելու, որ նման թղթեր տրամադրեւել էին նաև Օրիին և Մինաս վարդապետին՝ մելիքների ստորագրութիւններից և կնիքներից վերև «որոշումներ և պայմաններ» արձանագրելու համար: Այսպիսով, առանց նոր կնիքների փորագրութեան իսկ, մելիքների ներկայացուցիչները հնարաւորութիւն ունէին նրանց անունից նաև ուրիշ բովանդակութեամբ գրութիւններ պատրաստել և Արևմտեան եւրոպայում և Ռուսաստանում:





Նկար II. Համապատասխանում է մեր Յաւելուած № Յին. արտանկարւած է Մոսկվայի  
Դելա արմ. 1724 № 4, fol. 39 թ-ից:



Նկար III. Համապատասխանում է մեր Յաւելուած № 16-ին. արտանկարւած է  
Մոսկվայի Դրա. Դելա արմ. 1727 օկտ. 28 - օկտ. 1728, fol. 2 թ-ից:


Ե

Եւ Ելմածա, Վենուս Մի կը կը, և մատու  
պանձակ, չուտ ող գիշա, և տրծուց ամենց մուզ պէ  
հուտուն նմառակ ձբակուս ուշն դիւճութ մա քի  
պիկ և զի խոնօս, և ուժուուակ բարձր ու ու զի  
անց վերէն բորդ չարք. Վհաւուուս մէ միակ ուղարկ վիրէր  
ին և հուսակը. Ած ունութ ին և արտօնէ տակ բոնէ  
տէսնէ, ու ու ան գիշ պատիւն վիրէր դիւճութ  
ի գոյն, ու ան կատահաւ դիւճութ, և ան ու յունէ չ  
մտ որոն խիստութ այ մարդ հա քին, ու այս  
առող մարդ եւ եւ հանդէ. Այ ունութ գրք ու վարութ  
ու ու ան առ տուն կատահաւ ի զատ, ու ու ու ան առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ

Հ ա մ ա մ ա մ

Նկար IV. Համապատասխանում է Էջում, № 85-ին. արտանկարւած է Մոսկովյի Դիւճ.

Դела արմ. 1701 սուն 30 — դեկ. 1703, fol. 234 թիգ:



Նկար V. Համապատասխանում է ԷՅՈՎԵ, № 100-ին. արտանկարւած է Մոսկվայի Դիւ.  
Դела арм. 1701 տու 30 – 1703 ցեկ., fol. 258 թ-ից:

Հավելված 2

### ԳԵՂԱՄԱՅ ԵՒ ԾԱՐԱՅ ՄԵԼԻՔՆԵՐԻ ՏՈՂՄԸ

**ԳԵՂԱՄԱՅ և ԾԱՐԱՅ երկրների պատմական հին ու նոր ուսումնասիրութիւնները հաւասարապէս տրամադրում են կարծել, որ ԺԶ և ԺԷ դարերի ընթացքում այդ կողմերի հայ քաղաքական իշխանութիւնը կենտրոնանում էր մելիքական մի տոհմի ձեռքին:** Հայր Ղ. Ալիշան այդ տոհմի նահապետ է համարում ԺԶ դարում ապրող Դօփեան մելիք Ուլուբէկին: Մի ուրիշ հեղինակ, Կարապետ եպիսկոպոսը, հասնում է այն եզրակացութեան, թէ մելիքական այդ տոհմը սերւում է Մելիք Շահնազարեանների ԺԶ դարում ապրող նախահայր Դօփեան Մելիք Աբովից: Կարապետ եպիսկոպոսը տրամադիր է Մելիք Շահնազարեան համարել այն բոլոր իշխողներին, որոնց Ալիշանը մելիք Ուլուբէկի սերունդ է համարում. այդ առումով Մելիք Շահնազարեանների սեփականութիւն են նաև Մելիք Ուլուբէկեանների կալուածները<sup>1</sup>: Ալիշանը բաւարար հիմքեր չի գտնում նոյնացնելու Դօփեան այս շառաւիղները: Զը նայած սրան՝ «Սիսական»-ի հեղինակն ևս չի որոշում մելիքական այդ տարբեր սերունդների իշխանութեան բնագաւառները: Խօսելով Մելիք Ուլուբէկեանների մասին՝ նայակնութիւն ունի սպառել «Գեղամայ և Ծարայ» մելիքների տոհմագրութիւնը: ԺԶ և ԺԷ դարերում յիշուող Մելիք-բէկերին՝ մելիք Աբովեան և մելիք Ուլուբէկեան՝ Ալիշանն առանց այլեայլութեան դասում է «Գեղամայ» մելիքների շարքը, չը նկատելով կարծես, որ դրանով շփոթ է առաջանում իր իսկ տեսութեան մէջ<sup>2</sup>:

Երկու տեսակի եզրակացութիւններն էլ սիսալ են կամ հակասական: Մէկը, Ալիշան, չի մեղանչում մելիքական տոհմագրութեան դէմ, բայց շփոթում է նրանց բնագաւառները: Միւսը, Կարապետ եպիսկոպոս, սիսալ կարծիք է կազմում բնագաւառների


<sup>1</sup> Հմմտ. Կարապետ եպիսկոպոս, Դօփեանը եւ Մելիք Շահնազարեանը, Էջմիածին, 1914, էջ 152 եւ հետ.:

<sup>2</sup> Հմմտ. Ղ. Ալիշան, Սիսական, էջ 34 (ծանօթ.) եւ հետ.:

մասին, որովհետեւ հիմնում է Գեղամայ և Ծարայ մելիքների տոհմագրական սխալ տեսութեան վրայ:

Ալիշանը ներկայացնում է<sup>1</sup> Ժէ դարի «Գեղամայ և Ծարայ» մելիքների գլխաւոր գիծն այս ճիւղագրութեամբ.


### ՄԵԼԻՔ ՈՎՈՒԹԷԿ



Կարապետ եպիսկոպոսը տարակուսանքով է մօտենում հին աղբիւրի հիմունքով հիւսած այս աղիւսակին: Երկար ու բարակ ենթադրութիւնների և եզրակացութիւնների օգնութեամբ նա միացնում է այստեղ հանդիպող կարեոր անունները Մելիք Շահնազարեան անուններին ու տալիս տոհմագրական մի տեսութիւն<sup>2</sup>, որ ամփոփել կարելի է հետևեալ աղիւսակի մէջ.

<sup>1</sup> Հմմտ. անդ, էջ 37:

<sup>2</sup> Հմմտ. «Դօփեանք եւ Մելիք Շահնազարեան», էջ 115 եւ հետ.:



**Տոհմագրական այս տեսութիւնը բաւարար չափով չի ճշտում աղբիւրների փաստական տուեալներով:** Կարապետ եպիսկոպոսի հիմնական ենթաղրութեամբ՝ Զօդի 1653 թուի խաչքարի վրա յիշատակւած մելիք Քամալի որդի Այտին Պալասանը և Ալիշանի յիշած Յովհաննէս քահանայի որդի մելիք Պալասանը նոյն անձնաւորութիւնն են<sup>1</sup>: Հստ Ալիշանի վերջինս ունեցել է մի եղբայր՝ Ստեփաննոս եպիսկոպոս անունով: Կարապետ եպիսկոպոսը ստոյգ է համարում այդ՝ հիմնւելով 1701 թւի Զօդի մի այլ խաչքարի վկայութեան վրայ<sup>2</sup>: Սակայն հէնց այս վաւերացումն ինքնին հերքում է մելիք Պալասանի և Այտին Պալասանի նոյնութիւնը: Հստ վիմագիր վկայութեան վերջինիս եղբայրները կոչւում են Դաւթաք բէկ և Ա ծպաւ. մինչ գեռ մելիք Պալասանի եղբայրներն են վերը յիշած Ստեփաննոս Եպ. և Յովհաննէս քահանան, կամ ինչպէս վկայում է ներկայ յօդուածին կցուած երեմն Դա-

<sup>1</sup> «Դօփեամբ եւ Սելիք Շահնազարեամբ», էջ 151:

<sup>2</sup> Անդ, էջ 147 եւ 160:

դեան Խաչիկ վարդապետի սեփականութիւն կազմող յիշատակարանը<sup>1</sup>: Ստեփաննոս կրօնաւորը և Տ. Յովհաննէսը (Յովհաննէս եպիսկոպոսը): Կարապետ եպիսկոպոսը պատմական է համարում մելիք Ասապով<sup>2</sup> անունով անձնաւորութիւնը: Կարեոր է շեշտել յատկապէս, որ այդ անունով մարդ չի յիշւում մելիք Պալասանի եղբայրների շարքում: Եւ հազիւ թէ մեր աղբիւրների այս լռութիւնը լոկ պատահականութեան հետևանք լինի: Պէտք է ենթադրել, և փաստական տւեալներից սա միակ բանական եղբակացութիւնն է, թէ մելիք Քամալին յաջորդող մելիք Ասապովը Ուլուբէկեան սերնդի հետ առնչութիւն չունէր: Վերջապէս հէնց Կարապետ եպիսկոպոսի կարծիքով «Այտին Պալասան» անունը ցոյց է տալիս, թէ նա «Այտինցւոց ցեղիցն էր. այդ անունով նա, ըստ Կարապետ եպիսկոպոսի, տարբերում էր ժամանակակից մի ուրիշ Պալասանից՝ Ուլուբէկանց ցեղից»<sup>3</sup>: Թուում է, թէ, եթէ ճիշտ է մեր հեղինակի այդ ենթադրութիւնը, ապա հէնց այդ «ուրիշ ժամանակակից Պալասանը» ոչ այլ ոք է, քան եթէ Ուլուբէկեան Յովհաննէս քահանայի որդին:

Ուլուբէկեան սերնդի մասին արժէքաւոր տուեալներ ենք գտնում Խաչիկ վարդապետի վերն ակնարկած յիշատակարանում, որ ծանօթ չէր Կարապետ եպիսկոպոսին: Այդ յիշատակարանը՝ հանուած Խոթա վանքի 1626 թուին գրուած մի բոլորագիր գանձարանից, հարկադրում է աւելի վստահել Ուլուբէկեանների այն տոհմային աղիւսակին, որ Ալիշանն է առաջարկում:

Ալիշանի աղբիւրի մէջ Մելիք Ուլուբէկեան Մելիք Բէկ (Ա)-ի և Մելիք Պալասանի միջև աշխարհական անուն չի յիշւում: Մելիք Պալասանը, ինչպէս երեւում է սոյն յօդուածին կցուած յիշատակարանից, իշխանութիւն ունէր 1626 թւին. մի այլ տեղ նա յիշւում է նոյնիսկ 1630 թւին<sup>4</sup>. նրա մահուան թուականը յայտնի չէ. գիտենք սակայն, որ 1657 թուին «Գեղամայ» երկրում իշխում

<sup>1</sup> «Նիբեր», Ա:

<sup>2</sup> Ասապով=Ա ծապով = Աստուածապով: Հմմտ. Կ. Կոստանեան, Վիմական տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 201: Աստուածապով անունը հանդիպում է նաև Զաքարիա Ագուլեցու «Օրագրութեան» էջ 47 և 80 և 1670 թի մի յիշատակարանում, տես Ե. Լալայեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, Թիֆլիս, 1915, Ա, № 405:

<sup>3</sup> «Դօփեամբ և Մելիք Շահնազարեամբ», էջ 132:

<sup>4</sup> «Արարատ», 1914, էջ 736:

էր արդէն նրա որդին Մելիք-Բէկ (Բ)<sup>1</sup>, որը կարող էր ի հարկ է, այդ թուից շատ առաջ ժառանգած լինել հօր իրաւունքները: Ինքնին դժւար չէ ենթադրել, թէ մելիք Պալասանը իր պապի անմիջական յաջորդն է, նրա իշխանութիւնը մի քանի տասնեակ տարիների տևողութիւն է ունեցել: Սակայն այդ մասին յայտնուած տարակուսանքները<sup>2</sup> հնարաւոր է փարատել և այլ կարգի ենթադրութիւններով: Անհնարին չէ նախ, որ Մելիք-Բէկ (Ա)-ի մահից յետոյ իշխանութիւնն անցած լինէր նրա որդուն՝ Յովհաննէս քահանային. սրանով էլ գուցէ բացատրուէր նաև այն փառը, որ Խաչիկ վարդապետի յիշատակարանը Մելիք-Բէկ (Ա) ի աշխարհական որդուն՝ Գիշի բէկին, եթէ չընդունենք, որ նա հօրից առաջ է մեռել, մելիքական տիտղոս չի տալիս, թէև, ի հարկ է, սա հետեանք կարող էր լինել նաև այն հանգամանքի, որ մելիքական իրաւունքը հօրից մեծ որդուն էր անցնում: Հոգեսորական մելիքներ հանդիպում են երբեմն նաև Սևանայ լճի շրջանում: Այսպէս՝ ԺԶ դարի առաջին կէսում, որպէս «Տէր տանս Գեղամայ» յիշւում է Տէրունի քահանան<sup>3</sup> (Մելիք երէ՞ց)<sup>4</sup>, իսկ Մասուրայ անապատի մի արձանագրութեան մէջ կարդում ենք. «... կամաւն Աստուծոյ նորոգեցաւ եկեղեցիս ի թէվ. ՌԿ (1611) ի կաթողիկոսութեան Տէր Մելիքսէթին, ի թագաւորութեան Շահապասին ի ղանութեան Ամիր Գիւնայ խանին և մելիքութեան Տէր Վարդանին» և այլն<sup>5</sup>:

Եփրեմ կաթողիկոսի որպէս թէ պատմական հին տուեալների հիման վրայ գրուած մի կոնդակի մէջ կայ յիշատակութիւն, թէ մելիք Պալասանը յաջորդել է իր հօրը<sup>6</sup>, սակայն հնարաւոր չենք համարում օգտագործել այստեղ այդ ընդհանրապէս հակասական

<sup>1</sup> Ղ. Ալիշան, Սիսական, էջ 33: Մելիք Բէկ (Բ) որպէս ժամանակակից իշխող յիշում է մի այլ տեղ 1665 բուին: Հայր Բ. Սարգսիսեան, Մայր Յուցակ Հայերէն Զեռազրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Վենետիկ, 1914, հ. Ա, էջ 42:

<sup>2</sup> «Դօփեանք եւ Մելիք Շահնազարեանք», էջ 118:

<sup>3</sup> «Ազգագրական Հանդէս», XIX, էջ 22:

<sup>4</sup> Ե. Լալայեան, Յուցակ, Ա, № 270: Հմմտ. «Դօփեանք եւ Մելիք Շահնազարեանք», էջ 110 եւ հետ.:

<sup>5</sup> «Ազգագրական Հանդէս», XXIV, էջ 58 եւ հետ.: Հոգեսորական մելիքների մասին խօսում է ընդհանրապէս Առաքել պատմագիրը. «... գեղական երիցունք՝ անուամբ միայն քահանայք, այլ ոմանք առեալ զիշխանութիւն մելիքութեան, եւ ոմանք տանուտէրութեան...», տես՝ Առաքել Վարդ. Դարիթնեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 289:

<sup>6</sup> «Լումայ», 1900, Ա, էջ 291 եւ հետ.:

և անստոյդ աղբիւրը. բաւական է յիշել, որ ըստ այդ յիշատակարանի մելիք Պալասանի հայրը աշխարհական էր և կրում էր մելիք Ուսուփ անունը: Սակայն Յովհաննէս մելիքութիւնից աւելի հաւանական է թւում մի այլ ենթադրութիւն, այն, որ Մելիք Ուլուրէկեան Մելիք բէկ (Ա)-ի իշխանութիւնը կարող էր խած լինել Մելիք Աբովեան մելիք Շահնազար (Ա)-ն և այսպիսով մի առ ժամանակ խզած Մելիք Ուլուրէկեանների տոհմային իշխանութեան շարայարութիւնը: Առաքել Դաւրիծեցին յիշում է Մելիք Շահնազար (Ա)-ին ժամանակակից մելիքներից ոմանց անունները. սակայն դրանց մէջ մենք չենք հանդիպում Մելիք Ուլուրէկեաններից մեզ ծանօթ դէմքերին: Արդեօք չի<sup>1</sup> բացատրում այդ նրանով, որ վերջիններս այդ շրջանում կորցրել էին իրանց իշխանութիւնը ու տեղի տուել զօրեղ հարեանին: Շահ Աբբասի գերեվարութեան ժամանակակից մի նկարագրող վկայում է, որ երբ պարսիկները հեռացան Հայոց երկրից՝ Մելիք Շահնազարը, որը ինչպէս յայտնի է, մէկն էր պարսիկներին Հայաստան հրաւիրողներից, խուսափելով թիւրքերի վրէժինդրութիւնից ապաւինեց Շար<sup>2</sup>, այսինքն՝ այն երկրը, որ ինչպէս կը տեսնենք, Մելիք Ուլուրէկեանների բնագաւառն էր: Այս փաստը ևս գալիս է, կարծես, վկայելու յօդուտ մեր ենթադրութեան:

Թէ՛ Ղ. Ալիշանի տեսութեան և թէ՛ վիմագիր վկայութեան համաձայն<sup>3</sup> Մելիք-Բէկ (Բ)-ի յաջորդը կոչւում էր մելիք Միրզախան: Ալիշանի աղբիւրը հաղորդում է մեզ վերջինիս որդու՝ եաւրի բէկի անունը. սրա մելիքութեան մասին ոչինչ յայտնի չէ: Սակայն մելիք Միրզախանը պէտք է որ ուրիշ ժառանգներ էլ ունեցած լինի: Ժամանակակից մի յիշատակարան արեշատութիւն է մաղթում նրան հանդերձ «պարոն յորդեկօքն<sup>4</sup>: Ըստ Մ. Սմբատեանի Մելիք-Բէկ (Բ)-ի յաջորդներն այլ անձնաւորութիւններ էին՝ մելիք Շահնազար (Բ), Մելիք-Բէկ (Գ), մելիք Շահնազար (Գ), մելիք Աղաջան և մելիք Միանսար<sup>5</sup>: Սակայն Սմբատեանը քաղում է անվաւեր աղբիւրներից: Արդէն առիթ ենք ունեցել ցոյց տալու, որ Սմբատեանի վաւերագրերում յիշուած այս անձնաւո-

<sup>1</sup> «Դօփեանը եւ Մելիք Շահնազարեանը», էջ 124:

<sup>2</sup> «Ազգագրական հանդէս», XIX, էջ 27:

<sup>3</sup> Ե. Լալայեան, Ցուցակ, Ա, № 449:

<sup>4</sup> Մ. եակ. Սմբատեանց, Տեղագիր Գեղարքունի Ծովագարդ գաւառի, Վաղարշապատ, 1895, էջ 792 եւ հետ.:

բութիւններից պատմական են մելիք Շահնազար (Գ) և մելիք Միանսար. մելիք Աղաջանի տեղ պատմական ենք համարել մելիք Սարգիսան անունով մի ուրիշին<sup>1</sup>: Արդե՞օք Մելիք Շահնազարեան տոհմից ևս ապրել է Մելիք-Բէկ (Բ) անունով մէկը, թէ այդ անունը առաջ է եկել Մելիք Ուլուբէկեան Մելիք-Բէկ (Բ)-ի անձնաւորութեան հետ չփոթելուց, որն ի դէպ իր հերթին կարող էր գրաւած լինել Գեղամայ երկիրը, դժուար է որոշել: Կարապետ եպիսկոպոսը պատմական է համարում մելիք Շահնազար (Բ)-ին, որն ապրած պէտք է լինի 1670-ական թուականներից մինչև դարի վերջերը<sup>2</sup>:

Թէ որքան պատմական է Մելիք-Բէկ (Գ)-ի անձնաւորութիւնը՝ թողնում ենք առկախ: Եթէ նկատենք սակայն, որ սրան ժամանակով մօտիկ է յիշուում մելիք Ասլան անունով մէկը<sup>3</sup>, կ'ստանանք Ժէ դարի կիսերից մինչև յաջորդ դարի կիսերն ապրած Մելիք Շահնազարեան մելիքների մի երկար շարք: Անունների այդ շարանի մէջ ոչ մի կերպ չենք կարող մտցնել մելիք Միրզախանից սերուած Մելիք-Ուլուբէկեան տան այն ներկայացուցիչներին, որ գրանց հետ միաժամանակ են և՛ ապրել, և՛ իշխել: Ժէ դարի վերջերին և Ժէ դարի սկզբներին Գեղամայ և Ծարայ երկիրներում, միևնոյն անձնաւորութիւնները կամ միևնոյն սերնդի ներկայացուցիչները իշխել չէին կարող, և մելիք Միրզախանին արիւնակից նախորդներն ու յաջորդները, անշուշտ, ժամանակակից մելիք Շահնազար (Բ)-ի ցեղակիցներից տարբեր անձնաւորութիւններ պէտք է եղած լինին: Անգամ Կարապետ եպիսկոպոսը նկատելով, ըստ երևոյթին, հարցի մէջ իր մտցրած չփոթը, Գեղամայ և Ծարայ մելիքների ծագմանը նուիրած տեսութեան մէջ ստիպուած է մեղմել իր տուեալների աննպաստ դասաւորութիւնը և խոստովանել իշխանական երկու «ճիւղերի» գոյութեան փաստը: «Միակ հասկանալի ենթադրութիւնը, գրում է նա, - մնում է դարձեալ այն, որ երկու ճիւղերն էլ մեծ մելիք Շահնազարի տնից

<sup>1</sup> «Արարատ» 1915, էջ 791 եւ հետ: Մելիք Սարգիսանի անունը հիշատակում է Մոսկայի նախկին արտաքին գործոց դիանի գործերում. Ճելա արք. 4 1739 դ. սեպտ. 4, № 2, fol. 29 ff. Սանոնի վարդ. Կիմիշխանեցի, Պատմութին անցից Սէվանայ վանոց, Վաղարշապատ, 1871, էջ 60:

<sup>2</sup> Հմնտ. «Դօփեանը և Մելիք Շահնազարեանը», էջ 155, 159 եւ հետ.:

<sup>3</sup> Մ. եա. Քարխուղարեանց, Արցախ, Քազու, 1895, էջ 406 եւ Մ. Միքատեանց, անդ, էջ 613:

են. մէկը իբրև Մելիք Քամալի Մելիք Ասապով որդու ժառանգ, որը Մազրայումն էր մնացել, միւսը նոյն մելիք Քամալի Շահնշահեանների հետ խնամանալուց առաջացած և Զօղի շրջանում հաստատւած. յանձին Մելիքքէկ (Բ)-ի որ և է հանգամանքով իշխանութիւնը միացել էր, նորա մահից յետոյ կրկին բաժանուել»<sup>1</sup>:

Թէ յիրաւի Մելիք-Շահնազարեաններն ու Մելիք Ուլուբէկեանները Դօփեաններից սերուած մելիքական տարբեր տոհմեր էին, երեւում է նաև այն տեղեկութիւններից, որ հասել են մեզ դրանց տիրապետութեան բնագաւառների մասին: Դժբախտաբար այդ տեղեկութիւնների մէջ ամեն ինչ պարզ և միօրինակ չէ: Իշխանութիւնների սահմանները նշանակուում են յաճախ պատմական աշխարհագրական այնպիսի անուններով, որ ընթացիկ կեանքում վաղուց էին կորցըել իրենց հին իմաստը: Բոլոր նշաններից երեւում է սակայն, որ Մելիք Շահնազարեանների իշխանութեան բնագաւառը սահմանագծուում էր Սևանայ լճի հարաւարեւմտեան անկիւնը կազմող ափերով, ընդգրկելով հին Հայաստանի Սոթք գաւառի խոշորագոյն մասը<sup>2</sup>: Մելիք Շահնազարեան տոհմին վերաբերող մեզ յայտնի գրեթէ բոլոր նիւթերը կապւած են «Գեղամայ Երկրի» կամ «Մազրայ նահանգի» անուան հետ, որի շրջանում և պէտք է որոնել այդ տոհմի իշխանութեան կամ հովանաւորութեան ներքոյ գտնուող Մեծ Մազրա գիւղը և Մաքինեաց վանքը<sup>3</sup>: Թւում է սակայն, թէ Մելիք Շահնազարեանները տոհմային կալւածներ պիտի ունենային նաև Սևանայ լճի հարաւարեւմտեան անկիւնում: Ժէ. դարի երկրորդ կէսերից յիշւող մելիք Ասապովի և մելիք Շահնազար (Գ)-ի անունները կապվում են այդ կողմերում գտնուող Ղանղուկեղդարա գիւղի հետ. սակայն նոյնիսկ այս հեռաւոր անկիւնի իշխողները յիշատակուում են որպէս մելիքներ «նահանգին Մազրայ»<sup>4</sup>: Գեղամայ շրջանում գտնուող Դալիդարդաշ գիւղի հետ են կապւում նաև Ժէ դարի վերջում և ԺԸ դարի սկզբում ապրող մելիք Մալխասի և մելիք

<sup>1</sup> «Դօփեանը եւ Մելիք Շահնազարեանը», էջ 157 եւ հետ.:

<sup>2</sup> H. Hübschmann, Die altarmenischen Ortsnamen, Strassburg, 1904, էջ 348.

<sup>3</sup> Այս կարգի նիւթերի թուին պիտի դասել նաև վարդ տպագրուած մեր մի յիշատակարանը՝ հանած Լազարեան Շնմարանի գրչագիրներից: Տես Նիւթեր, Բ:

<sup>4</sup> «Դօփեանը եւ Մելիք Շահնազարեանը», էջ 158: Հմնտ. մելիք Ասապովի (մեծ պարոն Աստուածապովի) շառակիղներից մէկի արձանագրութիւնը Մաքինեաց վանքում, Կ. Կոստանտիան, անդ, էջ 201:

**Մանուչարի անունները<sup>1</sup>:** Այս մելիքների ծագումը յայտնի չէ տակաւին և կարապետ եպիսկոպոսի փորձը, նոյնացնել դրանցից մէկին, մելիք Մանուչարին, Ալիշանի յիշած մելիք Միրզախանի եղբայր Մանուչար բէկի հետ, չի կարող համոզիչ լինել<sup>2</sup>: Կարող է սակայն պատահել, որ սրանք ևս սերուած լինեն Գեղամայ երկրի իշխողներից՝ Մելիք Շահնազարեաններից: ԺԼ դարում մի ուրիշ մելիք Մանուչարի, գուցէ և վերոյիշեալի յաջորդներից մէկի անունը կապւում է Գեղամայ Բասարգեչար գիւղի հետ<sup>3</sup>: Այդ Մանուչարը Մելիք Շահնազարեան Մելիքջան Քալանթարի որդին էր: Կարբիի դաշտում, տաճիկների դէմ վարած կռւում, վերջինիս ցոյց տուած քաջութիւնների համար, Նադիրը նրան ենթարկուող Գեղարքունեաց մելիքութիւնը Երևանի խանութիւնից անկախ յայտարարեց: Մելիքջանի որդին, մելիք Մանուչարը, աւելի առաջ գնալով դարձաւ «Պէյլէրբէյի ի վերայ Արարատեան երկրի և մասին ինչ Սիւնեաց աշխարհի»: 1747 թ. գրկւելով այդ պաշտօնից Մելիք Մանուչարը փախաւ Վրաստան<sup>4</sup>: Արանով էլ, ըստ երևոյթին, գոցւեց Մելիք Շահնազարեանների Գեղամայ ճիւղի պատմութիւնը:

Մելիք Ուլուբէկեանների իշխանութիւնը տարածւում էր «Մազրայ նահանգն» ընդգրկող դաշտավայրերից արևելք գտնուող այն լեռնաստանի վրայ, որ սահմանագծւում է Ղարաբաղի լեռների հետ Կոնդուրդաղի շղթայով. այս մելիքութիւնը բռնում էր Ծարը և Սոթքի արևելեան մասը. Երկրի գլխաւոր կենտրոններն էին Զօդ ու Ծար աւանները<sup>5</sup>: Ժէ և ԺԼ դարերում այս շրջանը քաղաքական-վարչական տեսակէտով փոխէփոխ անցնում էր Երևանի և Ղարաբաղի խանութիւններին: Զաքարիա Սարկաւագը յիշում է Ծարը, որպէս պարսկական Աղրբէջանին ենթարկող սուլթանութիւն<sup>6</sup>: 1725 թւին գրած մի թղթում խօսք կայ «Գեղարքունի, Քոլանի, Ղափան, Սիսեան և այլ երկիրների»,

<sup>1</sup> «Ազգագրական հանդէս», XVIII, էջ 136:

<sup>2</sup> «Դօփեանը եւ Մելիք Շահնազարեանը», էջ 157 եւ հետ.:

<sup>3</sup> **Մ. Եպ. Մըրատեանց**, անդ, 495:

<sup>4</sup> Էջմիածնի Մատեմադարան, ձեռագիր № 466 («Համառօտոքիւն Պատմոթեան Հայոց»):

<sup>5</sup> 1552 թ. մի յիշատակարանում հեղինակը գրում է իր մասին, որ փախչելով թշնամու հալածանքից հասաւ «վերին Գեղամայ» Երկիրը՝ «յամուրն Ծար» (Յովհ. Թուժանեանի ձեռ. Յայսմաւորը):

<sup>6</sup> **Զաքարիա Սարկաւագ**, Պատմագրութիւն, Բ, 104:

մասին<sup>1</sup>: Իսկ եփրեմ կաթողիկոսի կոնդակը վաւերացնում է «Քօլանու և Զարիզիպիլու ի գրոց Ծարու անուանեալ» գաւառի մելիքների տոհմագրութիւնը<sup>2</sup>: Յովսէփ Էմինը յիշատակում է. «the clan of Colan Curds belonging to Carabagh, who siuce Nadir Shahs death had been removed to Iravan and were then marching to the protection of Ganja»<sup>3</sup> («Ղարաբաղին պատկանող Քօլանի Քուրդերի ցեղը, որ Նադիր շահի մահից յետոյ երևան էին տեղափոխուել և այժմ գալիս էին Գանձակի խանութեան տակ մտնելու»): Թուում է, թէ Հայերի կողքին բնակւող այս քրդերը 18-րդ դարում իսկ թափառում էին Ղարաբաղում և յատկապէս՝ Ծար և Բոստակ գաւառներում. Վերջինում գետեղում է նրանց Բարխուդարեանը<sup>4</sup>: Էմինի և Սիմէօն կաթողիկոսի յիշատակարանների համաձայն լեզգիները կուուի բռնուեցին նրանց հետ Գեղամայ լճի մօտերքում<sup>5</sup>:

ԺԶ դարի սկզբներում դեռ ևս, ինչպէս ենթադրւում է, Ծարում իշխում էր Դօփեան Շահանշահի կամ Զհանշահի ժառանգներից մելիք Ղուկասը<sup>6</sup>: Նոյն դարի կէսերին յիշուող Դօփեան Շահանշահի ժառանգ մելիք Ուլուբէկը, ըստ Բարխուդարեանի չը հերքուած վկայութեան, իշխում էր Ծար և Զօդ գաւառների վրայ<sup>7</sup>: Կարապետ եպիսկոպոսն ընդունում է, որ ԺԶ դարի կեսերին Դօփեան Այգինը «Հայրենի կալուածները թափելով՝ Ծարը թողել է Շահանշահի և Զհանշահի սերունդներին, որոնց դեռ ԺԶ դարի վերջերում... այնտեղ ենք հանդիպում»<sup>8</sup>: Միւս կողմից 1568 թւին Զօդում խաչարձան է կանգնեցրած Ուլուբէկ անունով մէկի «Հոգու փրկութեան» համար<sup>9</sup>. տեղի և ժամանակների տեսակէտից

<sup>1</sup> Գ. ԷՅՈՎՅ, ստր. 421.

<sup>2</sup> «Լումայ», 1900, Ա, 290:

<sup>3</sup> «The life and adventures of Joseph Emin», London, 1792, էջ 372.

<sup>4</sup> Մ. Եպ. Քարխուդարեանց, Անդ, յԱռաջարան, Ը:

<sup>5</sup> «Դիւան Հայոց պատմութեան», Թիֆլիզ, 1894, Գ, 494: «The life... of Emin», ibid.

<sup>6</sup> «Դօփեանը եւ Սելիր Շահնազարեանը», էջ 107:

<sup>7</sup> Մ. Եպ. Քարխուդարեանց, Պատմութիւն Աղուանից, Վաղարշապատ, 1902, Ա, 213. հմնտ. Բ, 25: 1552 թ. գրած Յայսմատորքի յիշատակարանում «յամուրն Ծար» կարդում ենք. «Եւ կամեցողութեամբ իշխանաց տեղույն, պարոն Միրզաջանին եւ Դաւադի բեկին եւ հոգեւոր մարցն իմ Բեկ աղին եւ Գաւզալ աղին բնակեցաք ի վանքս գետամէջ ընդ հովանեաւ ս թ. Ա ծածնին եւ օրեղ սքանչելագործ ս թ խաչին... աղաւնեաց ամս է (ձեռագիր Յովի. Թումանեանի):

<sup>8</sup> «Դօփեանը եւ Սելիր Շահնազարեանը», էջ 103, հմնտ. 129 եւ հետ.:

<sup>9</sup> Մ. Եպ. Միքատեանց, անդ, էջ 625, «Ազգագրական հանդէս», XIX, 27:

ոչինչ չի արգելում նոյնացնել այդ մարդուն Ծարում և արևելքան Սոթքում իշխող համանուն մելիքի հետ։ Ուշագրաւ է նաև այդ արձանագրութեան մի այլ յիշատակութիւնը՝ «կանգնեցաք խաչերս... ձեռամբ պարոն Տէր Գրիգորէս եպիսկոպոսին եղբաւը որդի մելիք Աղայըէկին»<sup>1</sup>։ Եթէ այս արձանագրութեան մէջ «եպիսկոպոսին» բառից յետոյ ստորակետ կամ բութ դնելու լինենք, այստեղ յիշուող Աղաբէկը հնարաւոր կը լինի նոյնացնել Խաչիկ վարդապետի յիշատակարանում բերուած Ուլուբէկի որդի Աղաբէկի հետ, որի եղբայր Մելիքբէկ (Ա)-ի որդու անունը հէնց Գրիգոր(իս) եպիսկոպոս էր։ Այդ ենթադրութեամբ հնարաւոր կը լինի նաև ընդունել, որ Մելիք Բէկ (Ա)-ից առաջ Ծարայ շրջանում, ինչպէս նաև Սոթքի արևելքան մասերում մելիքական իշխանութեան գլուխ էր կանգնած նրա մեծ եղբայրը։ Մելիք Բէկ (Ա)-ից յետոյ, ինչպէս նկատել ենք արդէն, անհաւանական չենք համրում, որ այս կողմերում ևս իշխած լինի մելիք Շահնազար (Ա)։ Մելիք Պալասանի ժամանակից մնացած ու նրա տոհմին վերաբերող կարեոր աղբիւրը, Խաչիկ վարդապետի յիշատակարանը, գրւել է Դատի վանքում, այն վայրում, որ, ինչպէս ուրիշ աղբիւրներից էլ յայտնի է, գտնւում էր Մելիք Ուլուբէկեանների հովանաւորութեան տակ։ Այստեղ էին նստում նոյն ցեղից սերուած առաջնորդները, որպիսիներից մէկն էր, ըստ երևոյթին, յիշատակարանի մէջ յիշուած Գրիգոր արքեպիսկոպոսը, Ժէ դարի առաջին քառորդում, իսկ նոյն դարի վերջին քառորդում այլ աղբիւրներից յայտնի Դօփեան Պետրոս վարդապետը<sup>2</sup>։

Ինչ վերաբերում է Զօդի անմիջական շրջապատի, արևելքան Սոթքի, վիմագիր յիշատակարաններին՝ Կարապետ եպիսկոպոսի խոստովանութեամբ սրանք ևս վերաբերում են Շահնշահեան սերունդներին՝ գէթ մինչև Ժէ դարի կէսերը։ «Մելիքական գերդաստանի արձանագրութիւններ» երեսում են այստեղ Ժէ դարի կէսերին ու վերջերում։ սակայն, ըստ մեր հեղինակի, դրանք արդէն պէտք է որ Մելիք Շահնազարեան յիշատակարաններ լինեն և ոչ՝ Մելիք Ուլուբէկեան։ «Ենթադրել, - գրում է Կարապետ եպիսկոպոսը, - թէ մելիք Քամալի մահուամբ մելիք Շահնազարի բազմանդամ սերունդը վերջացել է ու մելիքութիւնը Ուլուբէկեանց

<sup>1</sup> Մ. Եպ. Սմբատեանց, անդ, էջ 625:

<sup>2</sup> Հմմտ. մեր յօդուածը՝ «Արարատ», 1915, 791:

տան է անցել, ոչ մի կերպ ներելի չէ, այլ աւելի հաւանական է ընդհակառակն, որ Ուլուբէկեանք սկզբում այս շրջանի տէրը եղած լինին, իսկ Մելիք Շահնազարեանք հետզհետէ արևմուտքից դէպի արևելք փոխելով իրենց իշխանութեան կենտրոնը՝ Ժէ դարի վերջերում ինամէական և այլ կապերով այս տեղին էլ տիրէին»<sup>1</sup>: Համաձայնել այս ենթադրութեան ոչ մի կերպ չենք կարող: Ճիշտ է, Զօդի խաչքարի վրայ 1653 թուին արձանագրուած ենք գտնում մելիք Քամալի որդի Այտին Պալասանի անունը, սակայն ասացինք արդէն, որ նոյնացնել այդ մարդուն թէկուզ մի քանի քայլի հեռաւորութեան վրա գտնւող մի ուրիշ վիմագիր արձանագրութեան մէջ յիշուող մելիք Պալասանի հետ<sup>2</sup>, ինչպէս Կարապետ եպիսկոպոսն է առաջարկում, հնարաւոր չէ: Որոշ դժւարութիւններ կապւած են միայն մելիք Պալասանի յաջորդի՝ Մելիք Բէկ (Բ)-ի իշխանութեան սահմանների որոշման հետ: Կարապետ եպիսկոպոսը գրում է. «Եթէ կրկին Ժէ դարի կէսերին ապրող Մելիք Բէկ (Բ)-ին դառնալով՝ ասենք, այդ միջոցին երկու Մելիքքէկ է եղել, մէկը Շահնշահեան տնից, միւսը մեծ մելիք Շահնազարի թոռներից, անբացատրելի կմնայ, ինչպէս նկատեցինք, թէ հապա ինչու միակ ծանօթ և զանազան աղբիւրներից իբրև մելիք Պալասանի որդի վկայեալ Մելիքքէկը «Գեղամայ երկրի» մելիք է կոչւում, և ինչպէս կարող էր լինել, որ Շահնշահեան տնից վրան դար անցնելուց յետոյ մէկը հանդէս դար յանկարծակի, Գեղամայ երկրի իշխանութիւնը խլէր մելիք Շահնազարի տնից, և ոչ մի յիշատակ չմնար այդ մասին: Միակ հասկանալի ենթադրութիւնը մնում է դարձեալ այն, որ երկու ճիւղերն էլ մեծ մելիք Շահնազարի տնից են. մէկը իբրև մելիք Քամալի մելիք Ասապով որդու ժառանգ, որը Մազրայումն էր մնացել, միւսը նոյն մելիք Քամալի Շահնշահեանների հետ խնամանալուց առաջացած և Զօդի շրջանում հաստատւած. յանձին Մէլիքքէկ (Բ)-ի որ և է հանգամանքով իշխանութիւնը միացել էր, նորա մահից յետոյ կրկին բաժանուել»<sup>3</sup>: Որ Մելիքքէկ (Բ) կարող էր որևէ հանգամանքով Գեղամայ և Շարայ երկիրները միացրած լինել իր իշխանութեան ներքոյ մենք պետք է հնարաւոր համարենք: Որ սա-

<sup>1</sup> «Դօփեանք եւ Մելիք Շահնազարեանք», էջ 152 եւ հետ.:

<sup>2</sup> Հմմտ. «Ազգագրական հանդիս», XIX, 26 եւ հետ.:

<sup>3</sup> «Դօփեանք եւ Մելիք Շահնազարեանք», էջ 157 եւ հետ.:

կայն նա սերւած կարող էր լինել Մելիք Շահնազարեան ցեղից՝ չենք կարող ընդունել, քանի որ թոյլատրելի չենք համարում այն ենթադրութիւնը, թէ նրա հայր մելիք Պալասանը մելիք Քամալից է սերուել:

Մելիքբէկ (Բ)-ից յետոյ Մելիք Ուլուբէկեանների իշխանութիւնն, ըստ երևոյթին, նորից սկսում է սահմանափակւել տոհմային ժառանգութեամբ: «Եթէ 1708 թւին,- գրում է Կարապետ եպիսկոպոսը,՝ «Մազրայ նահանգի» իշխանն էր մելիք Շահնազար Գ, նորանից առաջ նորա հայրը Մելիք Բէկ Գ, հապա ի՞նչ էր 1701 թւին ապրող մելիք Միրզախանը, դժւարանում ենք որոշել<sup>1</sup>: Այդ դժւարութիւնը միանգամայն կվերանայ եթէ նկատի առնենք, որ մելիք Միրզախանը, անմիջական կապ չունենալով Մելիք Շահնազարեանների հետ, իշխում էր նրանց տոհմական Գեղամայ տան սահմաններից գուրս՝ Ծարայ և Զօդի շրջանում: Եւ իրօք, մելիք Միրզախանի անունը յիշւում է ոչ միայն Զօդի 1701 թուի խաչքարի վրա, այլ և 1684 թուին Ծարում գրուած մի յիշատակարանում, որպէս նոյն «նահանգի» իշխող<sup>2</sup>:

Ամփոփենք: ԺԶ-ԺԷ դարերի ընթացքում Գեղամայ և Ծարայ երկիրներում մելիքական մի տուն չէր իշխում: Այլ երկու, եթէ ոչ աւելի: Դրանցից մէկի՝ Մելիք Շահնազարեանների իշխանութեան կենտրոնը Մեծ Մազրան էր, միւսի՝ Մելիք Ուլուբէկեանների կենտրոնը՝ Զօդը: Հաւանական է, որ երբեմն մելիքութիւնները կենտրոնանալով մի ձեռքում՝ ենթարկուած լինեն իշխանական այդ տներից մէկին կամ միւսին: Սակայն գաւառներից յուրաքանչիւրը իր տոհմային իշխանաւորն ունէր, որ ժառանգում էր հին իրաւունքները և խզում եկուոր Մելիքի միարար քաղաքականութիւնը:

<sup>1</sup> «Դօփեամբ եւ Մելիք Շահնազարեամբ», էջ 157:  
<sup>2</sup> «Արարատ», 1915, էջ 791:

Ն Ի Ի Թ Ե Ռ

Ա,

«Զվերջին նորացող ծաղկազարդ սբ գանձարանիս սրբայտէր եւ հեղահողի պարոն տէր Գրիգոր արհեալիսկսն, որ ետ նորոգել զսր եղանակաւոր տառս յիշատակ իւր եւ իւր ծնօղացն. պապն իւր մելիք յուլոյպէկն եւ իւր կողակցին գուլաղին եւ իւրեանց զաւակացն պրն աղայպէկին, մելիքպէկին, սարուխան պէկին. ստեփանոս կրաւնաւորին եւ միւս ստեփանոս եպիսկոպոսին եւ դստերաց իւրոց զիֆարին, ուղլան փաշին. խանում ազին. խանաղին, եւ որ ի քո են հանգուցեալ յիշեցէք ի քո եւ լի բերանով ած ողորմի ասացէք նոցայ. եւ ած ձեզ ողորմեսցի իւր միւս անգամ գալստեան եւ որ ի վրյ սբ. գրոյս աշխատանք ունին յառաջնոց. միջնոց եւ վերջնոց լիայբերան ած ողորմի ասացէք նց ամէն:

Դարձեալ յիշեցէք ի քո զպարոն տէր Գրիգոր եպկոն որ ետ նորոգել սբ գանձարանս յիշատակ բարի հոգոյ իւրոյ եւ ծնաւղաց իւրոց պրն մելիքպէկին. պարոն խաթունին եւ եղբարքն իւր յովհաննէս էրէցն. գիշէ պէկին. եւ եղբաւը որդոցն պրն մելիք պալասան պէկին. տր ովհաննէսին. տր ստեփաննոս կրոնաւորին ած զինքն անփորձ պահէ ի ախպից իս ամէն. եւ որդիք պրն պալասանին մելիքպէկն շահիպէկն. յուլուպէկն. աղիպէկն եւ այլն որ ի քս էն հանգուցեալ. եւ մայր պրն պլսնին զաւաթ խանումն որ բազում յաշխատանք ունի ի վր մեր ած իւրան յարքայութիս տացէ իւր գալստեանն ամէն. եւ հարսնէրն իւր խաթուն աղէն. խանում աղէն. Աղաչեմ զձեզ ով որ հանդիպ(ի) որ գրոյս զվերոյ գրեալս յիշեցէք ի քս եւ լի բերանով ասաց () նոցայ. եւ ողորմածն ած որ առատն է ի տուրս բար(ե)աց զմեզ եւ մեզ ողորմեսցի իւր միւսանքամ:

Կամեցաւ որ գիրքս ի թվաբերութես հայոց ուհե ին ի դառն եւ ի նեղ ժամանակիս որ ս իբրեւ ծով ալէկոծման էր. բարերարն ած խաղղութի տացէ իս ամէն: Նորոգեց գիրս այն տարին որ ազգն վրաց մովրա: ասին անուն նրյ վսն մեր մեղաց եկեալ բազւմ հեծելաւ հաս ի գանձակ քղք որ այժմ գանջայ ասի. եւ ոչ ոք եղանգ ազդէն դզլպաշի. քն զի որ ժմ լուան գալն վրաց փախստա-

կան եղէն. ի նմնէ եւ յանիրաւ ազգն վրց արձակեց. ի վր հայոց ազգիս գէտաշենու հետ մինչի պարզուեցիք ա աւուր գերաց ուղին դաշտ ու սար հայք եւ թուրք ի միասին ի ձեռն անկեալ. զոմն սպանին, զոմն վիրաւորեցին. եւ բազումս գերի տարան որ անթիւ շատ աւերս ած ի վերյ իս. եւ ես նուաստ եւ անպիտան վրդն սուտանուն քհ. վայ ինձ որ անուանս չեմ արժանի խիստ թալանվեցայ ինչ մաւրէ մերկ. գոհութի այ իմ մեղցն բրկցօ ած. եւ զամ ինչս իմ բազմ զիրանք եւ շատ անաւթս եկղցյ իմ գերի տարան եւ հայրն սպանին եւ միայն ես մնացի արտասուալից աչուք լալիս ս զամ տարտարոսի մնաց վերջն ած գիտէ. ապա ես մեղաւոր վրդն էրէցս ոսկիանայպատու եկի որ յուխտս դատիվանայ. զայս գիրքս կզմեցի. սակ. մի բան գրեցի. եւ ոտս ձեր անկեալ լացի. եւ բան մի ձեզնից խնդրեցի. որ ժմ կրդյք բանս սակ. ինձ ասէք ած ողորմի. եւ ած մեզ ողորմեսցի»:

Էջմիածնի Գիտական հաստիտուտի Մատենադարան, Խաչիկ վարդ. ձեռագիրներ, Գանձարան, գրուած 1626 թ. Խորավանքում:

## Բ

«Դը ճշէ յիշեցէք՝ ի սը եւ ի մաքրափայլ աղաւթս ձեր զը պրմէլիք բէկն զբարեաց պարունակն զճոխ արմաւենին զքաղցրաճաշակ պտուղն զուրախարար ողկոյզն. ի բարի յիշխանացս բարի շառաւեղն. եւ զհարազատ եւ զնորաբողբոջ եղբարք իւր եւ զզեռաբոյս ծաղկունքն. զվարդաբթիթ երանկաւք բճնաւորեալքն զանուշահոտ եւ զխուռնազարդ. սաղարթախիթ եւ ստեղնաճոխ զկանաչացել եւ զդեռաբոյս տնկունքն եւ զբաղդասար սարկաւագն. եւ զմասիհն, եւ զթուխիկն. եւ զհամեստ մայր նոցա զ պրն շահում աղէն, որք միախորհուրդ եւ միակամ մըտաւք ըստացան զ սբ յաւէտարանս յիշատակ բարի, Հանգուցեալ յիշխանին պ ըոն ատի բէկին, որ տարաժամ մահուամք փոխեցաւ առ ք ս եւ սուք (sic!) անմխիթար եթող. զի էր յոյժ գունովն գեղեցիկ. եւ հասակաւն վայելուչ բանիւն ճարտասան քաջ եւ դաւրեղ իշխան եւ ազդէ յիշխանին որ տիրէր գեղջին որ կոչի մազրա, որք հանդիպիք սմա, կարգալով, կամ աւրինակելով լի բերանով եւ ուղիղ մտաւք ած ողորմի ասացէք պ ըն ատիրէկին եւ հաւրն. պ ըն մէ-

լիք բէկին. եւ մաւրն պ̄ ըն խաթուն ազին. եւ բարի ամուսնոյն իւրոյ պըն շահում աղին. եւ ծաղկեալ որդոցն. մէլիք պ̄ ըն բէկին. եւ բաղդասար ո ըկ ւգին. եւ մըսեհի բէկին. եւ թուխիկ բէկին եւ դըստերն իւրոյ պ̄ ըն հումին եւ զսօլթանին եւ համեստ հարսն իւր եւ զպ̄ ըն զուհար սաւլթանն. եւ զնորաբողբոջ թոռունքն իւր. զպայծառ ծաղիկն զդանկիզն, զբարի շառաւեղն զոսկէ խնծորն եւ զթերաբաց վարդն. եւ զհիւրի խաթունն. եւ զհանգուցեալ դուստրն իւր զգաւզին եւ հասարակ ա մ արեան մերձաւորացն եւ խնդրեցէք ի բարերար փրկչէն կենդանեացն կեանք եւ առողջութիւն. նջելոցն մեղացն թողութիւն հանգիստ եւ արքայութիւն. եւ տ ը ծ զյիշողքդ արքաութ ե արժան առնէ եւ ք ի փառք յաւիտեանս ամէն:

Արդ ես մէլիք բէկս գնեցի զ սը յաւետարանս ի ծարեցի յուհաննէս վարդապետէն եռդ կն ի թ վկն ւես հայոց ո իթ ի դառն եւ ի նեղ ժամանակիս զի ա մ կողմանց արհաւիրք է. միթէ ա ծ խաղաղութ ի շնորհէ. ամէն:

**Գնեցաւ ձեռամբ մը կոս եպսկսին:**  
**Ես յովասափ էրէցս գիրս գրեի եւ քի փոք յւտս ամէն»:**

Լազարեան ճեմարանի մատենադարան, ըստ տպագիր ցուցակի № 1113, գրչագիր Աւետարան, յիշատակարան:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**ԺԳ ԴԱՐԻ ՄԻ ՈՒՂԵԽՈՐԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՑ ՄԱՍԻՆ  
(Էջ 23)**

Գրված է 1914 թ. վերջերին Վաղարշապատում: Տպագրվել է «Արարատ» ամսագրում (1914, № 11, էջ 1013-1016): Լատիներեն բնագրի թարգմանությունը և ծանրագրությունները Ա. Հովհաննիսյանի: Հրապարակումը լույս է տեսել Ա. Հ. ստորագրության ներքո: Արտատպում է այս հրատարակությունից:

**ՆՈՐ ՆԻՒԹԵՐ ՀԱՅ-ՌԻՒՍԻՑՈՐԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ  
(Էջ 28)**

Գրված է 1914 թ. վերջերին Վաղարշապատում: Տպագրվել է «Արարատ» ամսագրում (1914, № 12, էջ 1108-1114: 1915, № 1, էջ 61-69): Արտատպում է այս հրատարակությունից:

**ՅԱԿՈԲ Դ ԶՈՒՂԱՅԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԵՒ ՏԱՇԿԱՀԱՅ  
ՆՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ  
(Էջ 42)**

Գրված է 1915 թ. սկզբներին Վաղարշապատում: Տպագրվել է «Արարատ» ամսագրում (1915, № 2-3, էջ 195-205): Արտատպում է այս հրատարակությունից:

**ՅԱԿՈԲ ԶՈՒՂԱՅԵՑՈՒ ՄԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՍ ԱՐՔՈՒՆԻՔԻՆ  
(Էջ 53)**

Գրված է 1915 թ. Վաղարշապատում: Լույս է տեսել «Արարատ» ամսագրում (1915, № 9-10, էջ 775-781): Արտատպում է այս հրատարակությունից:

**ԳՐԱԽՈՍՍԱԿԱՆ - ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ  
«ՆԻՒԹԵՐ հայ մելիքութեան մասին», Բ պրակ. Դօփեանք եւ Մելիք Շահնա-**

գարեանք. Գրեց Կարապետ Եպիսկոպոս, Ս. Էջմիածին, 1914, հրատ. Ազգ. ընկ.

(էջ 61)

Գրված է 1915 թ. Վաղարշապատում: Լույս է տեսել «Արարատ» ամսագրում (1915, № 9-10, էջ 788-792): Արտատպվում է այս հրատարակությունից:

**ՊԵՏՐՈՍ ԴԻ ՍԱՐԳԻՍ ԳԻԼԱՆԵՆՑ**  
(Պատմական-կենսագրական ակնարկ)  
(էջ 66)

Գրված է 1916 թ. Վաղարշապատում: Նկատի ունենալով ուսումնասիրության մենագրական բնույթը, Մայր արքով տպարանում այն լույս է տեսել առանձին գրքով (Էջմիածին, 1916, 26 էջ): Արտատպվում է այս հրատարակությունից:

**ՀԱՅ-ՌՈՒՍ ՕՐԻԵՆՏԱՑԻԱՑԻ ԾԱԳՄԱՆ ԽՆԴԻՐԸ**  
Պատմական-քննադատական ուսումնասիրութիւն  
(էջ 89)

Գրված է 1915-1917 թթ. Էջմիածնում: Նյութերը քաղել է 1915-1916 թթ. մոսկովյան արխիվներից (տե՛ս սույն ուսումնասիրության առաջարանը, աստ, էջ 59): Լույս է տեսել Հայաստանի Գիտական ինստիտուտի տպագրությամբ (Էջմիածին, 1921, VI+ 68+ L էջ): Այս հրատարակության վերաբերյալ տե՛ս Դավիթ Անանունի գրախոսությունը («Բանքեր Հայաստանի Գիտական ինստիտուտի», Գիրք 1-2, 1921-1922, էջ 254-257):

Արտատպվում է առաջին տպագրությունից:

**ԳԵՂԱՄԱՅ ԵՒ ԾԱՐԱՅ ՄԵԼԻՔՆԵՐԻ ՏՈՂՄԸ**  
(էջ 189)

Գրված է 1916-1917 թթ. Վաղարշապատում: Լույս է տեսել Հայաստանի Գիտական ինստիտուտի Բանքերում (Էջմիածին, 1921-1922, Գիրք 1-2, էջ 105-113): Արտատպվում է այս հրատարակությունից:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>Աշուր Շովիաննիսյանի պարմագիրական ժառանգությունը</b>	
(Պ. Շ Շովիաննիսյան)	5
ԺԳ դարի մի ուղևորի վկայութիւնը Հայոց մասին	23
Նոր նիւթեր հայ-ունիտորական պատմագրութիւնից	28
Յակոր Դ Զուղայեցի կարողիկոսը եւ տաճկահա նուիրակութեան խնդիրը	42
Յակոր Զուղայեցու մի գրութիւնը ոուս արքունիքին	53
Գրախօսական-քննադատական Նիւթեր հայ մելիքութեան մասին, Բ պրակ. Դօփեամբ եւ Մելիք Շահնազարեամբ: Գրեց Կարա- պետ Եպիսկոպոս, Ս. Էջմիածին, 1914, հրատ. Ազգ. ընկ. ....	61
Պետրոս Դի Սարգիս Գիլանեց (Պատմական-կենսագրական ակ- նարկ) .....	66
ա. Գիլանեցի գործունեութեան սկզբնական շրջանը.....	67
բ. Հայ առեւտրականի վերաբերմունքը դէալի Պարսկաստանի քաղաքական շարժումները .....	69
գ. Հետախոյզ խմբակ եւ հայկական էսկադրօն .....	71
դ. Ուուս դիւանագիտութիւնը և հայերի քաղաքական տագնապը .....	74
ե. Գիլանեցի վերջին ջանքերը .....	80
Յաւելուած	
Սինաս վարդապետի զեկուցումը Կատարին. Ա կայսրութուն Գիլանի հայերի մասին .....	83
<b>Տավելվածներ I-2</b>	
1. Հայ-ոուս օրիենտացիայի ծագման խնդիրը. պատմական- քննադատական ուսումնասիրութիւն	
Առաջարան .....	89
ա. Ձեռագրական դիտողութիւններ .....	90
բ. Սինաս վարդապետի կեղծիքը .....	106
գ. Կեղծիքի նշանակութիւնը .....	124
Վերջարան .....	140
Փաստաթերթ ՆոՆ 1-16 .....	143
Լրացումներ .....	183
Նկարներ I-V .....	184
2. Գեղամալ եւ Ծարալ մելիքների տոմսն	
Նիւթեր Ա-Բ .....	189
Ծանոթագրություններ .....	202
Ծանոթագրություններ .....	205

ԱՇՈՏ ԳԱՐԵԳԻՆԻ ՀՈՎՐԱՍՆԻՍՅԱՆ

ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱԾԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխատասիրել և ներսածությունը գրել է

ՊԵՏՐՈՍ Հ ՀՈՎՐԱՆԻՍՅԱՆԸ

Շարլամքը՝ Ս. Ա. Գասպարյանի

Սրբազրիչ՝ Վ. Վ. Դերջան

Համակարգչային

աշխատանքները՝ Ղևոնդ Քահանաս Մայիլյանի

ՄՎՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱՅՑՆԻ ՏՊԱՐԱՆ